Թե չըլինի ու սուտ դուրս գամ,
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...

— Գնա՛նք, ասավ Աղվեսը: Թե կըլինի, շատ լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ: Գնացին: Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի թփում պառկած էր գյուղացու շունը: Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի վրա:

— Ա՛յ, տես. էս թփումն է իմ պահուստը:
Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:
Աղվեսը խեղդվելով սկսավ խռխռալ.
— Ա՜խ, ե՜ս... ա՜խ, ե՜ս...

Զգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ էսպե՜ս...
Ա՜խ, անխրա՛վ
Դու սև Ագռավ...

— Ինչքան էլ որ լինիս զգույշ,
Չարի համար թե վաղ, թե ուշ,
Էգ է պահված, Աղվես աղա,
Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛...
Պատասխանեց Ագռավն ու թռավ:

ՀՍԿԱՆ

(Կովկասյան առասպել)

Լավ չեմ հիշում, թե որ դարում,
Հին ժամանակ, մեր աշխարհում
Ասում են թե՝ կար մի իշխան.
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ,
Որ թե մարդիկ նրա աչքում,
Թե՛ հասարակ ճանճ ու մրժեղ:
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նրա դիմաց:
Ուներ անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,
Երամակներ ձիու, ջորու,
Էս բոլորը ցրված, փռված
Մինչև ծովի ափը հեռու:
Մինչև ուր որ քըշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր.
Ո՞վ էր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նրա դիմաց:
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նըստած էր իրեն տանը,
Լեղապատառ ներս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.
— Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՛, էսպես հրաշք մի բան.

Արածում էր ծովի ափին
Բազմությունը քո հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է գալի։
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք չընչին,
Ծովը մինչև ծունկն է հասնում,
Իսկ գլուխը ամպի միջին։
Եկավ, կանգնեց մեր հանդիման
Ու որոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորե՛ք իսկույն, դուք մարդուկներ,
Ձեռըս քանի չի հասել դեռ...»։
Էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տըվի էսպես.
«Էդ սևակնած, մութ ամպերում
Ջուր ես էդքան բարձըր գոռում.
Ով էլ լինես, ուսկից էլ գաս,
Էս մի բանը լավ իմանաս,
Դու, երկնահաս, ահեղ հըսկա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,
Ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգա նըրա դիմաց»։
Բայց ինձ իսկի չըլսեց էլ
Էն անճոռնի աժդահակը,
Էն ամպերից ցած կըռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,
Դուրս հանեց մի ձուկն ահագին

Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի...» — Հազիվ էսքան
Պատմեց հովիվն իշխանական
Ու վեր ընկավ, շունչը փչեց:
Խիստ զայրացավ իշխանը մեծ.
— Ո՞վ է, ասավ, համարձակվել
Իմ տերության սահմանն եկել
Ու էդպես էլ վրես հաչում...
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
Ես ոչ մի տեղ և ոչ մեկին...
Էսպես ասավ ու զայրացին
Հրամայեց՝ զորքերը գան:
Հրամայեց՝ զորքերն եկան.
— Կեցցե՜ մեր տեր, մեր թագավոր,
Անհաղթ, անմահ, ամենազոր...
— Ապրե՛ք, ասավ իշխանը սեգ,
Ելեք իսկույն ու գնացեք,
Մանուկ ու ծեր
Իմ առյուծներ,
Ո՞վ է, տեսեք, վրես հաչում
Ու իմ ուժը չի ճանաչում:
Ցույց տվեք դուք, որ ոչ մի տեղ
Չկա ոչ ոք ինձնից ուժեղ...
Ասավ՝ զորքերն իրենց կարգին
Փող փչեցին, թմբուկ զարկին,
Շըրըխկոցով, զըրընգոցով
Ճամփա ընկան դեպի մեծ ծով:

Հասան, տեսան — ա՛յ քեզ հըսկա,

Գըլուխն էստեղ, ոտներ չըկա.
Գընա՛, գընա՛, թե որ գըտնես...
Երկար ու մին ձըգված էսպես,
Հըսկայական քընով քընած:
Էստեղ, էնտեղ գիրքեր բացած՝
Դես շըռեցին, դեն պառկեցին,
Հա զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժաժ չի գալի,
Խըռըմփում է զարհուրելի,
Խըռըմփոցից, ինչ-որ խոսում,
Մարդիկ իրար ձեն չեն լըսում:
Մոտ գընացին, էլի՛, էլի՛...
Դարձյալ տեղից ժաժ չի գալի:
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Դողդողալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքստներից,
Ելան վըրեն, դեսից, դենից,
Որը ոտին,
Որը քըթին,
Որը լանջին,
Որն ականջին,
Փորի վըրա, միրքի միջում,
Ձի են քըշում, նիզակ ճոճում,
Զարկում, զարկում,
Ձըգում, թըքում,
Հայհոյում են էսպես, էնպես...

Մին էլ հըսկան էն սարի պես
Վըրա նստեց — մե՛ծ, ահարկու.

Ինչ պատահեց — ոչ տեսներ դու:
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
Որն էլ գլխից, քթից, լանջից,
Կամ ուսերից, կամ ականջից
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Նրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացավ հերեշ հսկան,
Թե, Տեր Աստված, արդյոք էսքան
Մանրը-մունրը ինչ բաներ են,
Որ եկել են թափվել վրեն:
Տեսավ, ինչ որ կենդանի կան
Վազ են տալի, թե ետ գնան.
Բուռն արավ իր բռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց
Գըրպաննածավ
Ու վեր կացավ,
Լընգլընգալեն իրիկունը
Գընաց հասավ իրենց տունը:
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին:
Գընաց հըսկա մորը պատմեց
Թե իրեն հետ ինչ պատահեց,
Ու գըրպանից հանեց բոլոր
Ահից խելառ ձին-ձիավոր:
Բարի կինը հենց որ տեսավ,
— Ամա՜ն, որդի, վա՜յ ինձ, ասավ.
Ինչ ես անում էդ խեղճերին,
Բա չե՞ս տեսնում, թե քո ձեռին

Ոնց են զգում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես:
Մեծ թե փոքր, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծընվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել,
Զըսպարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է չոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ...
Բա՛ց թող, որդիս,
Բա՛ց թող՝ գընան,
Ապրեն ազատ
Ուր կամենան:
Ու, հընազանդ մոր խըրատին,
Իսկույն հանեց հըսկա որդին
Իր գըրպանից ձին-ձիավոր,
Իրար խառնած զորքը բոլոր,
Թողեց գընան՝
Ուր կամենան:

ԷՍՊԵՍ ՉԻ ՄՆԱ

(Հին զրույց)

Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ.
Եվ ի՞նչն է հաստատ աշխարհքի վրա...—
Աշխարհքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա:—
Լինում է՝ իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ:
Ունենում է սա մի խելոք որդի,
Տանում է ծառա տալի մեկի մոտ:

Տարիք են անցնում: Էս խելոք որդին
Էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սրա վարձը շատացնում,
Ինչպես իրենը՝ էնպես է նայում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, հիմի էլ էնպես
Էլ մերկ ու տըկլոր, էլ քաղցած հո չե՞ս:
— Չէ՛, լավ եմ, հայրիկ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

Գընում է հայրը: Տարիք են անցնում:
Առաջ է գընում տըղեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պալատն է հասնում,
Դառնում է ծառա մեծ թագավորին:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ի՞նչ ես ուզում,
Լողում ես առատ էս լիքը ծովում:
— Հա՛, լի եմ, հայրիկ, դու հանգիստ գընա,

Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գըրում է հայրը: Տարիք են անցնում:
Էնքան է սիրում մեր խելոք ծառան,
Որ թագավորը բերում է սըրան
Իրեն տերության երկրորդն է անում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
— Հը՞, ո՞նց ես, որդիս, էլ ինչ է մընում,
Քու խոսքովն են ողջ նըստում — վեր կենում:
— Հա՛, մեծ եմ, հայրիկ, նազիր եմ ահա,
Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գըրում է հայրը: Տարիք են անցնում:
Էս բարի երկրի թագավորը ծեր
Մի օր անժամանակ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարհքը մընում են անտեր:
Ժողովք են կանչում երկրի մեծերին:
Ժողովք են գալի, խորհուրդ են անում,
Բերում են իրենց խելոք նազիրին
Շուքով ու փառքով թագավոր դընում,
Ու մեր գյուղացին լըսում է մի օր՝
Դարձել է իրեն որդին թագավոր:
Գալիս է. — Որդի՛ս, էլ ինչդ է պակաս,
Ամբողջ աշխարհքում մի դու ես, որ կաս...
— Փառք Աստծու, հայրիկ, ունեմ թագ ու գահ,
Բայց ինչ անես որ... էսպես չի մընա...

Գըրում է հայրը: Տարիք են անցնում:
Իր գահին բազմած ինքնակալը նոր
Մահվան ու կյանքի վճիռ է անում՝
Բուռը հավաքած աշխարհքը բոլոր:

Բուրդ հավաքի աշխարհքը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարհքին:
Մեր թագավորն էլ մի անգամ էսպես
Մահիճ է ընկնում, ավանդում հոգին:

Լսում է ծերուկ հայրը մի օր էլ,
Որ իր թագավոր որդին չըմնաց:
Ի՜նչ ասել կուզի — գալիս է վըրեն,
Էլ ի՜նչ մըղկըտոց, էլ ի՜նչ սուգ ու լաց...
Զորքով, աշխարհքով, ծեսով, հանդեսով
Արքային վայել թաղում են անում,
Ու վեր են կենում՝ գըրույց անելով
Ամենքը իրենց տըներն են գնում:
Տարիք են անցնում: Հայրը մի անգամ
Գալիս է որդու շիրիմի վրա:
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,
Բայց վըրեն գրած... «էսպես չի մընա...»:

Գընում է հայրը: Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեզնից հաշիվն իմանա...
Էն օրից էսօր անվերջ, պարեպար
Զրույցն ասում է — «էսպես չի մընա...»
Ու չըկա շըքեղ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարհքի վըրա,
Մերն է աշխարհքը ու կյանքը հիմի,
Բայց մեր աշխարհքն էլ... էսպես չի մընա..

ԱՐՏՈՒՏԻ ԵՐԳԸ

(ժողովրդական ավանդություն)

Մի մարդ տեսավ գարնան մարգում
Վեր ճախրելով,
Ծլվլելով,
Ոնց էր արտուտն անուշ երգում:
«Սա որ, ասավ, էս վայրի տեղ
Երգ է ասում էսքան շքեղ,
Հապա թե մեր տանը լինի
Ի՜նչ դրախտի ձայն կըհանի»:
Ու ներշընչման տենդի միջին
Բռնեց մարգի սիրուն երգչին,
Տարավ փակեց նեղ վանդակում.
— Տեսեք, հիմի ոնց է երգում:
Բայց ի՜նչ. գերի, վանդակի մեջ.
Թռչնակը լուռ նայում էր խեղճ
Հեռո՜ւ-հեռո՜ւ ճոխ մարգերին.
Միտն էր բերում կյանքը նախկին,
Երբ որ ազատ,
Էն ցողապատ
Թարմ արտում,
Թավիշ խոտում
Ման էր գալի,
Սորոլ տալի...
Միտն էր բերում,
Տըխրո՜ւմ, տըխրո՜ւմ,
Ու հառաչում,
Ցավոտ ճըչում

Մաշող կարոտն պատանության.
«Վա՜յ, փաթա՜ն... վա՜յ, փաթա՜ն»:
— Գուցե սրա կուռն է, աղքատ
Կամ թե փայտե վանդակն է վատ,
Որ իր զըվարթ երգը թողեց:
Միտք արավ տերն ու ողջ փոխեց.
Փայտե կոպիտ հին բանտի տեղ
Ոսկի վանդակ շինեց շքեղ
Ու կերակուրն, էն օրից վեր,
Արավ շաքար ու թանկ մրգեր:
Սակայն մարգի քնքուշ գերին
Մըտիկ չարավ թանկ մրգերին:
Ոսկի բանտից՝ նեղ ու խավար,
Սլանում էր միտքն անդադար
Դեպ վե՜ր, դեպ վե՜ր...
Ու հիշում էր,
Թե մայիսի
Արշալույսի
Ջինջ երկնքում
Ո՜նց էր երգում,
Խորո՜ւնկ, անվե՜րջ,
Լույս ծովի մեջ
Անփույթ լողում,
Խընդում, խաղում...
Միտն էր բերում,
Տըխրո՜ւմ, տըխրո՜ւմ,
Ու էն կյանքի հուր կարոտով,
Նեղ վանդակում, կոտրած սըրտով
Հընչում էր ողբն իր գերության.

«Վա՜յ, վաթա՜ն... վա՜յ, վաթա՜ն...»
— Ո՞րն է սրա յավ վաթանը,
Որ չի կենում իր ճոխ տանը,
Ո՜չ մի սրտի երգ է երգում
Էս ոսկեղեն թանկ վանդակում:
Ասավ տերը ու ետ տարավ
Թողեց հանդում: Գերին թռավ,
Կարոտալի մըտավ էն պերճ
Ծաղիկների, խոտերի մեջ:
Ապա վերև,
Դեպի արև
Ճախրեց, խընդաց.
Օդում թընդաց,
Հանեց երգը... Սակայն նորեն
Էլ առաջվա երգը չէր էն...

Ու էն օրից
Ջինջ ալերից
Ջիլ, թրթռուն
Ինչ էլ երգի,—
Արև, գարուն,
Բույրը մարգի,—
Նըրա զըվարթ, հընչուն երգում
Դեռ լալիս է ու հեկեկում
Հիշատակը իր գերության
«Վա՜յ, վաթա՜ն... վա՜յ, վաթա՜ն...»

ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

Ծիտիկն ու Մուկիկն ախպերացան: Գետի ափին բուն շինեցին, մտան մեջը:

Մի օր Ծիտը գնաց քուջուջ անելու, եւ եկավ, տեսավ Մուկիկը մեռել է: Ծնկանը զարկեց.

— Վա՜յ, ախպեր ջան, վա՜յ...

Օխտը ճամփի մեջտեղ նստեց, հողը փորեց, ածավ գլխին.

— Վա՜յ, ախպեր ջան, վա՜յ...

Ձենի վրա Լորիկն եկավ.

— Ծիտիկ-միտիկ, չալփետուրիկ,
Հողն ինչո՞ւ ես տալի գլխիդ:
— Թաո՜ւ, թաո՜ւ,— ասավ Ծիտը,—
Ես որ չտամ, ո՞վ տա հապա.
Մուկիկի պես ախպեր մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր,
Ես որ հողը տամ իմ գլխին,
Մե՞ծ բան է...
— Ափսո՜ս, ափսո՜ս,— ասավ Լորը,—
Մուկիկի պես մարդը մեռավ,—
Ասավ, իրեն էնքան զարկեց,
Թևը կոտրեց, կախ արավ:

Ծառը ասավ.

— Լորիկ քուրիկ, ճըռճըռուրիկ,
Ինչո՞ւ ես մի թևդ կոտրել:
— Բա ի՞նչ անեմ, որ չըկոտրեմ:
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտը գլխին հող է տալի,
Ես որ իմ մի թևը կոտրեմ՝

Մե՜ծ բան է...
— Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ,— կանչեց ծառը,—
Մուկիկի պես մարդը մեռնի՜...
Գընաց եկավ, գընաց եկավ,
Իր ճյուղերը զարկեց իրար,
Ջարդեց, մընաց ճըղնակոտոր:

Քարերն ասին.
— Ծառիկ-մառիկ, կանաչ թառիկ,
Ճյուղերդ ինչո՞ւ վեր թափեցիր:
— Վա՜հ, ձեր տունը Աստված շինի,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մնաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Իմ ճյուղերը ես որ թափեմ՝
Մե՜ծ բան է...

— Հազար ափսո՜ս — քարերն ասին.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Ու գոռալեն, գըռգըռալեն
Գըլորվեցին սարերն ի վար,
Թափվեցին ցած — ջըրերի մեջ:

Ջըրերն ասին.
— Ի՞նչ պատահեց, ա՛յ գիժ քարեր,
Չէ՞ դուք ձեր տեղն անժաժ էիք,
Ի՞նչ եք էդպես ցած գըլորվում:
— Էլ ի՞նչ անժաժ. բա չե՞ք ասիլ,
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտիկն էնտեղ հողը գըլխին,

Լորիկն իրեն թևր կոտրած,
Ծառը մընաց ճըղնակոտոր,
Մենք մեր տեղից որ գըլորվենք՝
Մե՛ծ բան է...

— Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ, ի՛նչ իմացանք,
Մուկիկի պես մարդն էլ մեռնի՞...
Ջրերն ասին. խառնըվեցին,
Ու գընացին պըղտոր-մըղտոր:
Էն կողմերից տըմարմըքայով
Պառավն եկավ: Էս որ տեսավ.
— Ա՛յ գըլգըլան ջրեր,— ասավ,—
Դուք պարզ էիք միշտ ու մարմանդ,
Ինչո՞ւ էսօր պըղտորվեցիք:

— Վա՛յ քու տունը քանդվի, պառա՛վ,
Բա չե՞ս լսել՝ ինչ է եղել.
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր,
Ծիտը էնտեղ հողը գըլխին,
Լորը իրեն թևը կոտրած,
Ծառը էլած ճըղնակոտոր,
Քարերը ցած գըլտոր-մըլտոր,
Մենք պղտորվենք՝ մե՞ծ բան է...

— Հողն իմ գըլխին,— պառավն ասավ,—
Մուկիկի պես մարդը մեռնի՞...
Զարկեց իրեն ու ծըվատեց,
Երեսն արավ արյունըլվիկ,
Մազաքըձուձ՝ գյուղը վազեց:
Գյուղում ասին.
— Պառավ տատիկ, ի՞նչ պատահեց.

Ինչո՞ւ երեսդ արյունլվիկ:
— Վա՜յ, քոռանամ, մի՛ խոսեցնեք:
Մուկիկի պես մարդը մեռավ,
Աշխարհքն էսպես մընաց անտեր.
Ծիտը էնտեղ հողը գրկին,
Լորը իրեն թևը կտրած,
Ծառը եղած ճըգնավոր,
Քարերը ցած գըլոր-մըլոր,
Ես իմ երեսն արյունոտեմ՝
Մե՞ծ բան է...

— Ափսո՛ս, ափսո՛ս, հազար ափսոս,
Որ էն տեսակ մարդը մեռավ...
Ափսոսացին էն գյուղացիք,
Սև կապեցին, սուգ նստեցին.
— Վա՜յ, ո՞վ ասավ, ո՞վ ասավ...
— Հողագըլուխ Ծիտիկն ասավ,
Թևը կտրած Լորիկն ասավ,
Ճըգնավոր Ծառիկն ասավ,
Գըլոր-մըլոր Քարիկն ասավ,
Պըղտոր-մըղտոր Ջըրիկն ասավ,
Մազաքըձուձ Պուլիկն ասավ,
Մեր Մուկիկը մեռե՜լ է...
Էլ ո՞վ մընաց էս աշխարհքում,
Էլ ի՞նչ ապրենք էս աշխարհքում...
Էսպես ասին
Ու միասին
Լացով, կոծով,
Ճիչ-գոռոցով
Հավաքվեցին ու գընացին,
Քարիցն ընկան, կոտորվեցին:

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում։
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ետևից
Ներս է մտնում մի գը՛ռ չոբան.
— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ։
— Ունեմ, ունեմ, չոբան ախպեր.
Աման ո՞ւր է, ամանըդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սըհաթին քաշեմ տամ քեզ։

Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով
Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած։
— Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի։
Ճանճի վըրա, թաքուն-թաքուն,
Էս խանութի տիրոջ կատուն

Դուրս է ցատկում,
Թախծով զարկում…

Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հավքի շունչը իսկույն ևեթ
Հաֆ է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում
Ու շըպըրտում:

— Խեղդե՜ց, խեղդե՜ց, վա՜յ, իմ կատուն,
Ա՜յ սատկես դու, շան որդու շուն,—
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը
Տուր՝ թե կտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին:

— Վա՜յ, ձեզ մատա՜ղ, ասլան շունըս,
Իմ ապրո՜ւստըս, տե՜ղըս, տո՜ւնըս…
Տունըդ քանդվի, ա՜յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆըլան-ֆըստան,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՜ս,
Դե, զարկելը հիմի դու տես…
Գոռում է մեր աժդահակը,
Մեծագլուխ իր մահակը
Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փըռում:

— Ըսպանեցի՜ն… հա՜յ, օգնությո՜ւն…
Ու թաղից թաղ, ու տանից տուն

Ձեն է տալի մեկը մյուսին.
— Հա՛յ, օգնությո՛ւն... ըսպանեցի՛ն...
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վըրից, գործի տեղից,
Ճիչով, լացով,
Հարայ տալով,—
Էլ հերն ու մեր.
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր ազգեք,
Ջոքանչ, աներ,
Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...
Ինչ իմանաս էլ՝ ո՛վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո՛, կապիտ արջ, տո՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձըգում,
Իր շան կողքին երկար ու մեկ:
— Դե՛, ձեր մեռելն եկեք տարեք:
Ու էստեղից բոթը գընում,
Գընում մոտիկ գյուղն է հասնում.
— Հե՛յ, օգնեցե՛ք,
Մեռած հո չեք,
Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շընաճանճի մի բուն

Քանդեն, թաղեն,
Էն ճանճի պես
Ամբողջ գյուղով օրդու* կապում,
«Բո՜ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փետով,
Որը ձիով, որը ոտով,
Որն անդրատակ, որը բոբիկ —
Դեպի դուշման գյուղը մոտիկ:
— Տո՛, էսպես էլ անխրատ գյո՜ւղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ դրնում է ատուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սըրի:
Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ադաթին...
Գընա՛նք, զարկե՛նք,
Ջարդե՛նք, կրակե՛նք...
— Հա՜յ, հո՜ւյ, հառա՜չ, դե՛ ձեզ տեսնե՛մ...

Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՜ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Էնքան ավել կատաղեցին,
Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,

*բանակ, հրոսակախումբ

Կորան, գընացին
Գետնին հավասար:

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից
Էսքան մոտիկ, սահմանակից
Էս գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տերության թագավորը,
Երբ լսում է էս բոլորը,
Արձակում է հրովարտակ
Ժողովրդին իր հըպատակ.
— Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, ազնվական —
Ամեն շարքին
Ու աշխարհքին,
Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Երբ մենք քընած էինք սիրով,
Մեր սահմանը մըտավ զոռով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին:
Արդ, սըրահար ու հըրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
Պատվեր տըվինք մեր բանակին,
Թընդանոթով մեր ավերող
Ու Աստուծով Մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոսոխի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գըրեց զորքին, ժողովրդին.

— Մարդկանց առաջ և Աստծու,
Բողոքում ենք մեր դըրացու
Վարմունքի դեմ և չար, և նենգ,
Որ ոտքելով ամեն օրենք,
Բորբոքում է կըռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած:
Արդ՝ ակամա մենք ըստիպված,
Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն Աստծու և իր փառքի —
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վըրա:
Ու ըսկսեց կըռիվն ահեղ:
Շռինդ, որոտ էստեղ, էնտեղ:
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձըմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,
Դաշտերն անցան,
Ու, կըռիվը չըդադարած,
Սովը եկավ համատարած:
Սովը եկավ — սովի հետ ցավ,
Ծաղկած երկիրն ամայացավ...
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ:

ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ

(Ազգային ավանդություն)

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,
Անօրենն եկավ, եկա՛վ ու եկա՛վ.
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպես վիշապ-օձ,
Կանգնեց Սևանա ափին հովասուն,
Էնտեղ, ուր ուշքը ու միտքն Աստծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զորքին,
Օհաննա վանքը ծովի եզերքին:
Էն վանքում, հայոց ազգին պահապան,
Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան.
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար:
Երբ տեսավ խաղաղ վանքիցը իրեն
Անօրեն մարդու էս գործն անօրեն,
Խռովեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դըժգոհ մարդուց ու կյանքից,
Աղոթքը կիսատ դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ,

Ու քրթմնջալով, միամիտ, անփույթ,
Էն վեր-վեր, ծփուն ջրերի վրա
Ցամաք ոտներով գրում էր ահա:
Տեսավ հրաշքը Լենկթեմուրն ափից,
Տեսավ, սասանեց սեգը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.
— Ե՛տ արի, ասավ, ե՛տ արի, արդա՛ր,
Ե՛տ արի, ասավ, ո՛վ դու աստծու մարդ:
Ետ եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրերի վրով,
Ու առաջն եկավ թաթարը սիրով:
— Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալևոր,
Գա՞նձ, իշխանությո՞ւն, թե կյանք փառավոր...
— Քո փառքն ու գանձը հարկավոր չեն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ գնան ուր կուզեն,
Ու ազատ իրենց կյանքի ձենն ածեն
Էս լեն աշխարհքում, արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին:
— Ժողովուրդ կուզե՞ս... լա՛վ, լինի էդպես:
Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գնա ինձ համար աղոթք արա, ծե՛ր:
Ասավ Լենկթեմուրն ու տվավ պատվեր,
Որ գերի հայոց ազգը մի թևից
Էն վանքը մտնի սուրբի ետևից.
Ինչքան ժողովուրդ մտնի էն վանքը,
Նրան է բաշխում էնքանի կյանքը:
Հրաման արավ իրեն զորքերին,
Ու բաց թողեցին հայ ազգի գերին:

Մըտնում է գերին, մըտնում մի ծերից,
Անցել է թիվը հարյուր հազարից,
Չի լըցվում սակայն հասարակ մի վանք...
Ապշում է թաթարն — արմա՛նք ու զարմանք:
— Թողե՛ք, կանչում է իրեն զորքերին,
Հորձանք է տալի նորից հայ գերին:
Գալիս է գերին, գալիս է նորից,
Անցել է թիվը հազար հազարից,
Չի լըցվում սակայն էն վանքը կըրկին,
Չի կանգնում հայի հոսանքն ահագին:
Երրորդ անգամ է կանչում զորքերին:
Գալիս է անցնում մընացած գերին:
Անցնում է գերին, անցնում շարեշար,
Էլ մարդ չըմնաց, գընա՛ց ինչ որ կար,
Դատարկ է սակայն վանքը տակավին...
Թեմուր զարհուրած դառնում է չորս դին.
— Զարթո՞ւն եմ արդյոք, թե՞ երազ տեսա...
Հայտնեցեք ինձ շո՛ւտ, ինչ հրաշք է սա...
Գըտնում են տեսնում մարդիկն իր ղըրկած —
Մեր հայր Օհանը՝ աղոթքի չոքած,
Աչքերն երկընքին, միրուքն արցունքոտ.
Ով որ հայ ազգից մըտել է իր մոտ,
Իր սուրբ աղոթքով, կամքով վերինի,
Փոխել է իսկույն, դարձրել աղավնի,
Բաց պատուհանից թողել ամենքին,
Թըռցրել դեպ իրենց լեռները կըրկին,
Ու հիմի վանքում էլ չըկա ոչ ոք,
Ինքն է աղոթում մենակ, ծընկաչոք:

ԱՂՋԿԱ ՍԻՐՏԸ

(Արևելյան ավանդություն)

Հին արևելքում, մի հին քաղաքում
Ժուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում:
Հարուստ էր հերը պալում սիրունի,
Անհուն գանձի տեր ու շատ անվանի:
Բայց սիրո համար խեղճ ու շեն չըկան.
Մի աղքատ տըղա սիրեց աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրեց կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

— Չէ՛, որ չէ՛, կանչեց ծընողը փարթամ,
Իմ աղջիկն, ասավ, սև հողին կըտամ
Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ ես:
Ասավ ու կանգնեց էն լեռ քարի պես:
Բայց սիրո համար քար ու սար չըկան.
Սիրում էր գըժված տըղեն աղջըկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.

— Կա թե չկա,
Նա է, որ նա...
Սաստիկ բարկացավ հարուստն անկարում,
Փակեց աղջկան մեծ աշտարակում
Իր սիրած տղից ու կյանքից հեռու.
— Թող էսպես, ասավ, մոռանան իրարու:
Բայց սիրո համար փակ ու բանտ չկան.
Սիրում էր անվերջ տըղեն աղջկան,
Աղջիկն էլ նըրան սիրում կաթոգին,
Եվ ուզում էին լինեն մարդ ու կին.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

Տեսավ իր ձեռքին ոչ մի ճար չըկար,
Համառ հարուստը հերսից խելագար,
Իրեն անընման զավակը միջին,
Կըրակի մատնեց աշտարակն էն հին:
Բայց սերը որտեղ հըրդեհ է ձըգել,
Ի՞նչ անի էնտեղ հըրդեհը մեկ էլ:
Ու թեժ բոցերի սաստկության միջում
Աղջիկն՝ էրվելով ճըչում էր, կանչում.
— Կա թե չըկա,
Նա է, որ նա...

Ու էրվեց հիմքից աշտարակն ահեղ,
Էրվեց նըրա հետ էն սիրունն անմեղ.
Հող-մոխիր դարձավ: Իր սիրտը մենակ
Չէրվեց հըրաշքով ու սառը մոխրի տակ
Մընաց կենդանի... էն մոխրի վըրեն

Արտասուք թափեց սիրահար աղջիկն
Ու կորա՜վ, գնաց, հեռո՜ւ, շատ հեռու,
Իր օրը լալու, նըրան փընտրելու,
Մենա՜կ, օտա՜ր,
Անմխիթար...
Ո՜վ քընքուշ գաղտնիք, ո՜վ սիրուն հրաշք.
Էրված աղջըկա սիրտը մոխրի տակ,
Իրեն մոխրի տակ կենդանի էր դեռ —
Ոչ ոք չըգիտեր, ոչ ոք չըգիտեր...
Ժամանակ անցավ էս տխուր դեպքից,
Արցունքով թըրջված էն մոխրի տակից,
Էն միշտ կենդանի սըրտից թըրթըռուն
Բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն,
Կարմի՜ր, թեթե՜ւ,
Բայց... սիրտը սև...

Սըգավոր աղջան հուսահատ, թըշվառ
Շըրջում էր մոլոր աշխարհից աշխարհ,
Չէր գըտնում սակայն կյանքում էլ նըրան,
Ամեն տեղ նըշան էր սիրածի մահվան,
Որ հար, թե՛ զարթուն, թե՛ քընի միջում.
Տանջում էր նըրան, անդադար տանջում:
Բայց սիրո համար վերջ ու մահ չըկան,
Տըղի հառաչքը հասավ աղջըկան
Անմահ կյանքում
Էն աշխարհքում:

Հասավ, ու շարժված, կարոտ, կարեկից,
Թըռավ աղջիկը անմեռ աշխարհքից,

Սիրով ու բույրով, թարմ, անուշահոտ,
Երազով եկավ սիրած տղի մոտ:
— Լըսիր, իմ սրտվոր, լսի՛ր ինձ, ասավ.
Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ,
Ու էն ծաղկի մեջ իմ սիրտն է, որ կա,
Կարոտ, խենթ սիրտը չահել աղջըկա —
Լիքը սիրով,
Երազներով...
Ուժ ունի իր մեջ նա կախարդական
Ու քաղցր արբեցում էնքա՜ն ու էնքա՜ն...
Քամիր ու խըմիր ուժը էն ծաղկի,
Նա քեզ կըփրկի, նա քեզ կըփրկի...
Մոռացնել կըտա իմ հուր սերն ու ինձ,
Հեռու կըտանի էգ կոպիտ կյանքից,
Ու կապրես անվիշտ և զըվարթ հոգով,
Կըխնդաս ընդմիշտ անթառամ կյանքով
Ազատ հեռվում,
Երազներում...

Ո՜վ սիրուն հըրաշք, ո՜վ քնքուշ գաղանիք.
Տըղան էն օրից դարձավ երջանիկ:
Հարբած նվիրական էն ծաղկի ուժով,
Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,
Իրեն երբեմնի վիշտը մոռացած,
Էս կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած,
Ապրում էր ուրախ, ճոխ վայելքներով.
Լե՜ն ու լի սըրտով, անկաշկանդ սիրով
Ազատ հեռվո՛ւմ —
Երազներում...

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

(Հատված)

Մեծ գոլն ընկավ, ձըմհալն ընկավ,
Հողը շընչեց, զեփյուռն եկավ,
Արևն եկավ վառ ճառագած,
Հարցմունք արավ հողին հակված.

Արևը

— Սիրուն աղջիկ, ի՞նչ զըրկեմ քեզ:

Աղջիկը

— Ես ծաղիկներ կուզեմ պես-պես:

Արևը

— Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
Սառցի ներքև քընա՞ծ եք դեռ.
Դո՛ւրս եկեք, դո՛ւրս,
Շո՛ւտ, դեպի լույս,
Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քընած սիրուններին՝
Ծաղիկներին ու ծիլերին:

Ջրերը

— Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ,
Էս ի՛նչքան, ուշ...
Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
Քանի՞ քընեք, վե՛ր կացեք, վե՛ր.

Խրնկածաղիկ,
Ծրնկածաղիկ,
Արևքուրիկ,
Շար-շարուրիկ,
Հասմիկ, հափրուկ,
Ամանկարուկ,
Հորոտ-մորոտ,
Աղավնարոտ,
Կոճղեղ, ճանդուկ
Քուրդ, ճարճատուկ,
Հարսնածաղիկ,
Ոսկեծաղիկ,
Խաշխաշ, ծրծուկ,
Վարդ, երիցուկ,
Մուշկ-վաղմեռուկ,
Պուտ, փառփրուկ,
Շրրփան, մրրփան,
Շուշան, ռեհան,
Ասպրեմ-չասպրեմ,
Բուրեմ-մարեմ...
Քանի՞ քընեք հողի միջին,
Ելեք էստեղ, սարի լանջին,
Առվի ափին, հով բաղերում,
Ժայռի տակին, հովիտներում,
Կանաչ խոտով,
Անուշ հոտով
Ծիծաղեցեք
Ու ծաղկեցեք։

Ծաղիկները

— Բարև, բարև, կարմիր արև,
Ա՜խ, ի՜նչ լավ է դեպի վերև —
Ազա՜տ, լո՜ւյս, տա՜ք,
Կապո՜ւյտ, հստա՜կ...

Արևը

— Սիրո՞ւմ եք ինձ...

Ծաղիկները

— Ա՜խ էնպես ենք սիրում, էնպե՜ս,
Էլ առանց քեզ չենք ապրիլ ես...
— Ես քեզ հետ եմ ուր որ գնաս...
— Ես կտխրեմ՝ որ հեռանաս...

Արևը

— Ապա եթե ձեզ համբուրեմ...

Ծաղիկները

— Ես հաճույքից կկարմրեմ...
— Ես կբուրեմ...
— Ես կմարեմ...

Արևը

— Ա՜յ անուշներ,
Ա՜յ քնքուշներ,
Ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ.
Բաժակներդ բացեք իմ դեմ,
Հազար գույնի, հազար ձևի,
Պայծառ, ծալլի ու ծարավի,

Լըցնեմ շաղով,
Գոհար ցողով,
Ջերմ եթերով,
Նուրբ թըրթիռով,
Կյանքի հյութով,
Խունկի հոտով,
Ա՜յ անուշներ,
Ա՜յ քնքուշներ...

Աղջիկը

— Էս ի՜նչ անթիվ ծաղիկներ կան.
Ոսկի-դեղին, կարմիր, դեղձան,
Մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
Ալ, նարընջի, մավի, կապույտ,
Բացվել, լըցվել, ծաղկել են վառ,
Ողջ ինձ համա՜ր, ողջ ինձ համա՜ր...

1916

ՄՈԾԱԿՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Գիժ Մոծակի պարի ժամին
Զարկեց հանկարծ աշնան քամին,
Ուժը խըլեց, ուշքը տարավ։
Գիժը մին էլ մըտիկ արավ,
Որ էն արև
Աշխարհքն արդեն պատած ողջ սև,
Լացով, թացով սուգ է անում,
Դողում, պաղում ու դալկանում...
Շուտիկ, շուշտիկ իրեն կինն էլ
Սուսիկ-փուսիկ կողքից կորել,
Ով գիտի՝ ինչ ծակ էր գըտել,
Մինչև գարուն մեջը մըտել։
Սոված, սառած
Ու սալարած
Վեր թըռավ՝ վար, դես ընկավ, դեն,
Ժիր Մըրջյունի տաքուկ ու շեն
Բունը հիշեց, եկավ գընաց,
Դըռան առջև տըխուր տըզզաց.
— Բա՛ց արեք, բա՛ց...
Էս տարաժամ թըշվառ ձենից

Կապիտ, թուխ-թուխ,
Հաստատապրուխ
Մի պահապան զարթնեց քնից,
Ներսի մթնում մի կերպ ապրավ,
Փակած դուռ նեղ ծերպ ապրավ,
Տեսավ՝ սևով, թևով զուգված՝
Դռան առջև մինչ արնկված,
Ոտները թեք,
Ինքը մի գել:
— Հե՛յ, ո՞վ ես դու,
Ա՛խպերացու:
— Տը՛զ-պը՛զզ, ասավ, Մոծակն եմ ես:
Բա չե՞ս ասի՝ կապես, կապես.
Ամառն ամբողջ,
Ուրախ, առողջ,
Պայծառ ու տաք
Արևի տակ
Կինքս աշխույժ սաղ էր ածում,
Ես էլ անհոգ խընդում, ցընծում,
Տեսակ-տեսակ պարեր պարում,
Սըրա նըրա թուշն համբուրում
Ու վայելում ամեն բանից,
Ամեն բարուց ու սեղանից,
Լիքը այգում,
Ճահճոտ մարգում,
Ծոխ արներում,
Պարտեներում...
Մի անգամ էլ, երբ որ կապես
Պարում էի, մինչ անտես

Էնպես զարկեց՝ ուշքըս անցավ:
Ուշքի որ գամ՝ ի՜նչ տեսնեմ լավ,—
Երկինքը թուխպ, երկիրը սև,
Դառը քամի, սառը անձրև,
Արար աշխարհ պաղել, փոխվել,
Կողքիցըս էլ կինս է փախել...
Էլ ի՜նչ ասեմ, ողջը մի-մի
Էն ի՜նչ լեզու կարա պատմի
Կամ ի՜նչ բերան,
Ջրաեսնրվա՛ծ, հըրաշք մի բան...
Հիմի էսպես՝ սոված, մենակ,
Մընացել եմ պատերի տակ,
Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում,
Ես էլ եմ հո շատ մըճըրվում.
Բայց ի՜նչ անեմ, ո՞ւր գընամ էլ,
Երեսս էլի ձեզ եմ արել:
Աստծու սիրուն, մի՛ խընայեք,
Էս մի ձըմեռ շահեք, պահեք,
Մինչև նորից գարուն բացվի,
Աշխարհքն էլ ետ բարով լըցվի:
— Դե լա՛վ, դու կաց, ներս գընամ ես,
Տեսնենք ներսից ինչ կասեն քեզ:
Ասավ պահնորդն ու մեջեմեջ
Կոխ սենյակներն անցավ անվերջ,
Մինչև հասավ ներսի տունը,
Ուր ապրում էր մեծ Մըրջյունը՝
Առատ կյանքով,
Իր համայնքով:
Գընաց իրենց լեզվով հայտնեց,

Մըրջյունը լուռ լըսեց, մըթնեց,
Ու ետ դարձավ
Էսպես ասավ.
— Գիժ Մոծակի համա՞ր եմ ես
Ողջ ամառը արևակեզ՝
Էնքան ջանքով
Ու տանջանքով
Տուն տեղ դըրել, ճամփա հարթել,
Ամբար շինել, պաշար կիտել,
Որ ամառը ծույլ պըտըտի,
Ձմեռը գա նըստի ուտի՞...
Մեր ծույլերին ջարդել ենք մենք,
Ուրիշ ծույլի՞ բերենք պահենք...
Կերթաս կասես էդ անպետքին.
Բանի, գործի ժամանակին
Ով փոխանակ աշխատելու,
Ուշք ու միտքը տա խընդալու,
Պարապ շըրջի, երգի, պարի,
Սըրա նըրա թուշն համբուրի,
Էս կուռ վազի, էն կուռ ցատկի,
Վերջը էդպես պիտի սատկի:

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

(Ջուղայի պաղթից)

— Հե՛յ, լավ մանրո՛ւք,
Ասե՛ղ, հուլո՛ւնք,
Մատնի՛ք, մարջա՛ն,
Ապարանջա՛ն...
Հա՛վ, ձո՛ւ բերեք,
Առե՛ք, տարե՛ք,
Խունջիկ-մունջիկ
Հարսն ու աղջի՛կ,
Էժա՛ն կըտամ,
Լա՛վը կըտամ...
Էսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրև թե չարչի մի թափառական,
Չարչու կերպ մըտած, ինչպես վիշապ օձ,
Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան:
— Հե՛յ, ո՞վ կուզի թել ու ասե՛ղ,
Դուրս եկե՛ք, դո՛ւրս, ինձ մո՛տ, էստե՛ղ...
— Չարչի ախպե՛ր, չարչի ախպե՛ր,
Ասեղ ունի՞ս, էս կողմը բեր:
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,

Ու մոտ գրնաց չարչին կրնկան:
— Օ՜, ի՜նչ ասեղ, խոկն օձի քիստ...
Թափիր մի հաց...
— Վա՜յ, թանկ է խիստ...
— Է՜, մի՜ խոսիր, քուրի՜կ, էդպես,
Տաճի կյանքը թե կրսիրես:
— Ամա՜ն, հողեմ գլուխը Տաճի,
Աստված Տաճից հեռու պահի.
Արեղ ասրի, չարչի ախպեր,
Էդ անունը բերան մի՜ բեր:
— Վա՜հ, էսքան էլ չար լինի մա՜րդ.
Ինչ է արել Տաճը ձեզ վատ:
Գազան Թուրքի սրից փըրկել,
Չոր Ջուղայի քարից պոկել՝
Բերել է ձեզ ստատ Փարիս,
Աչքն էլ քաղցըր միշտ ձեզ վըրա...
— Օ՜ֆ, հերիք է, չարչի ախպե՜ր,
Մի՜ խոսեցնիր ինձ դըրանից:
Երնեկ դըրա ոտը կոտրեր՝
Չըգար հաներ մեզ մեր տանից:
Եկավ վարար հեղեղի պես,
Ջարկեց մեր շեն, մեր լի Ջուղան,
Ոչ Աստըծուն նայեց, ոչ մեզ,
Սըրբեց բերավ ողջ տեղահան:
Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Արազն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Ետ նայեցինք ու կանչեցինք.
«Աստվածածի՜ն Վերին Կաթան,

Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան,
Ուր որ զրկանք մեր վաթանից՝
Մեզ դարձրու գերությունից»:
Աղաչեցինք աղերսելով,
Եվ շատ եկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հրով, սրով՝
Ծով Արագի ափը հասանք:
Արագը ծո՜վ, Արագն եմա՜ն,
Դուրս է եկել իր ափերից.
«Անցե՜ք», եկավ մեզ հրաման.
Շահն է հրաման տալիս վերից...
Ետևը սո՜ւր, առաջը ջո՜ւր,
Սո՜ւգ, վայնասո՜ւն, իրարանցո՜ւմ,
Բառաչում են մեծ ու պուճուր,
Իրար գրկած՝ գետը լցվում...
Էն սև օրը, որ մենք տեսանք,
Քո թըշնամին թող չըտեսնի...
Ա՜խ, երբ պիտի մին էլ տեսնենք՝
Մեր անեծքը երկինք հասնի...
Ու գալիս են չարչու գըլխին
Կիտվում պանդուխտ, գերի հայեր.
«Անե՜ծք Շահին, իրեն գահին»,—
Անիծում են երկինքն ի վեր:
Շուռ են գալիս իրենց բընում
Չարչու աչքերն ըսպառնալի,
Ձեռն ու ոտը դող են լինում,
Ու սևակնած հարց է տալի.
— Շահի առջև հապա էնոր
Գոռում էիք միաբերան,

Թե ապրում եք դուք բախտավոր
Ու օրհնում եք թախտն ու իրա՞ն...
— Սուտ էր, ախպե՛ր: Դու մեզնից մեկն՝
Ի՞նչ թաքցընենք մենք քեզանից,
Բայց մեր սիրտը ո՞նց չըծածկենք
Էն մարդակեր չար գազանից:
Սուտ էր... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ո՛չ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր...
Մռընչաց չարչին, աբեն շըպըրտեց,
Դուրս եկավ տակից Շահ-Աբասն ահեղ,
Նաջաղը ցոլաց, իջավ շեշտակի,
Գերի ծերունին փըռվեց տեղնուտեղ:
Փըռվեց... Ու միշտ, քանի որ կա
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր:

II

1887

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Ասեմ որդեակ և լո՛ւր հուշիկ
Հարց անցելոյն բանք անուշիկ.
Ասէր Ներսէս սէգ ծերունին
Եւ հառաչէր հէգ ծերունին:

Տեղի դիրքը

Դաշտ փոքրադիր և բոլորակ
Ի կենտրոնի չքնաղ բլրակ,
Յերից կողմանցն խորակորք
Պատեն դաշտին զբոլորք.
Ժայռք ամեհիք [հնադարեան]
Բացեալ զկուրծսն յաղթական
Որպես միակ անպարտելի
Ընդիմամարտ ժամանակի.
Վկա անցիցն հինօրեան
Եւ հնութեանցն պահարան

Ի նա յանմերձ վայրի անդ
Են ձեռակերտ ապարանք,
Ուր մին բազէ, սրաթոյչ
Շինէ, ձագուցն իւր զբուն՝
Եւ վայր հանգիստ աշխատանաց
Գտեալ գործէ, ժիր մեղուն
Եւ լերկ կրծքին կատարի
Զարկէ գետ փրփրալի,
Կորուսանէ, զիւրն զթափ
Եւ անկանի ի մրափ.
Ծփան այլք հանդարտացեալ
Եւ ընդ ափունս խաղ առեալ
Սուլայր լռիկ և խռաձայն...

ՉԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Երբոր աշխարհքն ստեղծեց Աստված՝
Ու լիացրեց, բարով լցրեց,
Պետք է, սրան մի տեր, ասաց,
Ինձ պես հզոր, մաքուր ու մեծ:
Գնա, ասաց հրեշտակին.
— Ցուրտ հյուսիսի, տաք հարավի
Ելքից, մուտքից վառ արևի,
Հող բեր խառնենք,
Բարեխառնենք
Մաքուր, անբիծ ու մեզ նման
Մի արարած ստեղծենք բանական...

Ու սլացավ անմեռ ոգին
Դեպի ծայրերն աշխարհքի:

Եվ աշխարհքի չորեք կողմից,
Չորեք կողմի մաքուր հողից
Առավ, իր փեշն ածավ
Ու ետ դեպ Աստված վերադարձավ:

Ճամփին հանկարծ սև սատանան
Դեմը ելավ — կանչեց նրան,
— Ի՞նչ ես տանում: — Հող է, ասաց,
— Ո՞վ է ուզել,— Իմ Տերն՝ Աստված.
— Հապա տեսնեմ — խոսեց կրկին:
Փեշը բացավ անմեղ ոգին
Ու չարն իսկույն մեջը թքեց,
Ու քրքիջով անհետ չքվեց:
Ուշացել էր, էլ ժամանակ չըկար.
Չար սատանի թուքը միջին
Բերեց ոգին հողն Արարչին,
Եվ այն հողից մեր Տերն առավ
Կազմեց մարդուն
Եվ մաքուր, անարատ
Շնչեց նրան մաքուր,
Վսեմ հոգի, միտք ու խորհուրդ,
Բայց հակառակ նյութը չարի
Հենց այն օրից մնաց խառնուրդ...

ԿԱՉԱՂԱԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(Հին զրույց)

Զըրույց կա, թե Պիերուսի
Աղջիկները անըզգամ
Ձեն տըվեցին Ոլիմպոսի
Մուզաներին մի անգամ:

«Եկե՛ք, ասին, թե կարող եք,
Մեզ հետ երգի մըրցության...»
Ու էնքան էր [լիրբ, համարձակ]
Նըրանց կոչը մարտական,

Որ անմահներն՝ առած իրենց
Քընարները ոսկելար՝
Ցած ճախրեցին Ոլիմպոսի
Բարձունքներից վեհափառ:

Ծավալվեցին վեհ երգերը...
Ու, ճըգնելով, նրանց մոտ
Պիերուսի աղջիկները

Ծըղճըղային անամոթ:
Ծըղճըղային՝ ինչպես /անմիտ/
Կաչաղակներ լեզվագար.
Եվ երբ լռեց երգն ու ճիչը,
Հանդարտ վեճը ու պայքար,

Դարձել էին նրանք արդեն
Կաչաղակներ լեզվանի,
Որ անշնորհք գրչակներին
Ահեղ խրատ միշտ լինի.
Չըհանդըգնեն մտնել վեճի
Ծըղճըղալով՝ նրանց հետ,
Որոնց աստված ավել երգչի
Ձիրք ու քնար առհավետ:

Հանդես էր կազմել Հերովդես արքան
<1 անընթ.> հովտում:
[Եվ թռչում էր նա] նժույգը հեծած թագակիր, գոչում,
[ձայն էր] տալիս.
և [գոչում էր նա]... ձայնով —
— Լսի՛ր, լեգեոն, Կեսարի ծառա,
աստվածային նորա հրամանով
արձակում եմ քեզ ազգերի վրա:
Գնացեք, ինչպես [հզոր] առյուծներ,
ուր... ոչխար անարգ հոտի մեջ,
ջարդեցեք և մանուկ, և ծեր:
Եվ թող Հռոմի փառք հավերժական
[փայլի] [սարսափով], տիրի արևի ելքից
մինչև մուտ...
Գոչում էր այսպես Հերովդես արքան:

Դուք մի՛ խռովեք, և թող ձեր հոգուն
չըտիրեն բնավ երկյուղ ու կասկած,
Տալիս եմ ահա ձեզ խաղաղություն,
որ չի ճանաչել աշխարհքը [երբեք]:
Ժամանակն հասավ — շուտով ես կերթամ,
Աշխարհքն այլևս տեսնելու չէ ինձ,
բայց դուք կըտեսնեք — մինչև [հավիտյան]
ես չեմ բաժանվիլ երբեք ձեզանից:
Այժմ գնացեք <1 անընթ.> ազգերին,
ասացեք ինչ որ հայտնեցի ես ձեզ,
իր անձի պես սիրել ընկերին...
Ուղարկում եմ ձեզ Աստծո անունով,
Ինչպես հեզ գառներ գազանների մեջ,
Նրանք ձեզ կատեն, կըսպանեն մարմնով,
բայց հոգի եք դուք և չըկա ձեզ վերջ...

ԹՌՉՈՒՆՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Թռչունն իջավ խոր ծըմակից,
Մուկը ելավ գետնի տակից,
Պատահեցին ու սեր արին.
— Ո՛հ, առանց քեզ
Չեմ ապրիլ ես,
Ասավ մուկը սիրահարին:
Թռչնի քնքուշ սիրտը մարեց.
Ու շշնջաց ընդարմացած.
— Ես հավիտյան քոնն եմ, հոգիս,
Տար, ուր կուզես, տիրիր կյանքիս...
Բայց, ա՛խ, թե ինձ դավաճանես,
Էն ժամանակ ի՞նչ անեմ ես...
— Ինչ ես ասո՛ւմ... դավաճանե՛մ...
Էն էլ ես քեզ... ա՛խ, ի՞նչ անեմ,
Էրվում եմ ես — չես հավատում...
Ո՛հ, գութ չունես դու քո սրտում —
Ջուր եմ փնտրում, Աստված վկա,
Էս կյանքում սեր — չըկա, չըկա...

Ա՜խ, տեր Աստված, իմ սրտի մեջ
Ինչո՞ւ դրիր այս հուրն անշեջ:
Լացեց մուկիկն այս ասելով,
Ու գրկվեցին արտասվելով.
— Ով իմ մուկիկ, մեռնե՜լ եմ ես,
Որ [թող անեմ] դու արտասվես...
Ահա
(Ու ճաշակեցին սիրո քաղցրությունը):
Բայց մուկը ով, թռչունը ով,
Որ իրար հետ ապրեն սիրով:
— Դե ե՜կ, թռչունն ասավ յարին,
Թռչենք նստենք մոտիկ ծառին,
Անհոգ [տարփենք] ճյուղի վրա,
Վերից շողա կարմիր արև,
Սեր սոսափե ամեն տերև,
Ու մենք սիրենք, սիրենք անվերջ...
Չէ՜, եկ մտնենք իմ բընի մեջ,
Մութն, առանձին գետնի ծոցում
Սեր վայելենք իմ փափկոցում.
— Չէ՜, ծըմակում,
— Չէ՜, իմ բընում,
Մեկը էսպես,
Մյուսը էնպես
Ծվծվացին,
Գվգվացին —
Այնինչ ժամերն անց են կենում,
Բայց [վեճը] դեռ չի վերջանում.
Հո չի լինիլ ընդմիշտ վիճել,
Պետք է մի կերպ վճռել,

Դու պետք է ինձ լսես, Թալոն

. . . .

— Չէ, ասացիր ինձ սիրում ես,
Դու պետք է իմ կամքը անես,
— Ոչ, մի անխելք թռչուն ես դու,
— Դու ինչ գիտես, խելք չունես դու.
— Վա՜յ, խելք չունեմ, ա՜խ, խաբեբա,
Այդպես չէիր խոսում հապա.
Թռար եկար մութ ծրմակից
Ինձ հանեցիր գետնի տակից —
— [Չէ՞ դու եկար ինձ մոտ]
Լիրբ անամոթ,

. . . .

[Բայց չի լինի ընդմիշտ վիճել,
Պետք էր մի կերպ կողմ վճռել —]
Եվ, համբերությունը գուցե հատավ,
Մուկը իրեն բունը մտավ.
Խեղճ թռչնակը ապուշ մնաց
Բընի առաջ մենակ կանգնած,
Սկիզբը դեռ կատակ թվաց,
Ապա տխուր գվգվաց.

. . . .

Երբ որ տեսավ դուրս չի գալիս

. . . .

Ախ, դու խաբեբա, անգութ, դաժան,
Կեղծավոր, լիրբ, դավաճան,
Այդ էր երդումդ, այդ՝ քո սերը,
Խաբեբա են ողջ մկները,
Վայ իմ ծաղիկ հասակին,

[Ու սկսեց վերև թռչել,
Բախտն անիծել ու հառաչել.]
— Ափսո՛ս, խաբվեցի,
— Ափսոս, կապվեցի,
— Ա՛խ...
Եվ թռչնակի քնքուշ սրտում
Անբույժ մնաց այն խոր վերքը,
Եվ այսօր էլ [թռչնակը] լուռ ու տրտում
Իրա անբախտ սիրո երգը
[Խոր] անտառի թավ տեղերում
Երգում է դեռ ու հառաչում.
— Ափսոս, խաբվեցի,
— Ափսոս, կապվեցի,
— Ա՛խ...

ԶԻ ԱՍՏՈՒԱԾ ԸՆԴ ՄԵԶ Է...

(Ազգային ավանդություն)

Ահա եկել պաշարել են
Լեզգիները մեր Սևան,
Բայց չեն կարող կըղզին մըտնել,
Կապտեն զարդերն Աստծո տան՝
Զի Աստուած ընդ մեզ է...

[Հանդի սոված գելերի պես
Վեր են թափել եզերքին,
Իսկ մենք խաղաղ, ահա էսպես
Երգում ենք մեր մեղեդին.]
Զի Աստուած ընդ մեզ է...

Կապուտակ, ժըպտուն ջըրերի միջից
Բարձրանում է վեր վանքը Սևանա.
Բարձըր ու խաղաղ էն լըճից
Խաչը վեր բըռնած՝ աղոթում է նա —
«Շնորհեա մեզ, Տէ՛ր, ի գիշերի
Զխաղաղութիւն Քո զերկնային...»
Ու խաղաղ է ծուփքը ջըրի,
Զի Աստուած ընդ մեզ է...
Լեզգու սարսափից հալածված հայեր

Լրցվել են էն սուրբ, ամուր օթևան,
Չի հասնում էնտեղ լեզգին տընավեր,
Ու խաղաղ երգով թընդում է Սևան.
«Ահաւասիկ ես և մանկունք,
Զոր ետ Աստուած, այելուեա,
Յահէ ձերմէ ո՛չ երկիցուք»...

Իրիկուն է լուռ: Մըշուշի միջում
Հածում է նավը ժայռերի տակին,
Սովդաքար մարդիկ տեղ են աղաչում.
— Ղոնախ ենք գալիս Սևանա վանքին:
«Տե՛ր, արժանի արա անհոգ
Զերեկս զայս խաղաղութեամբ
Եւ անփորձ անցո զմեօք...»
Եկեք հիւրեր օտարական...
Զի Աստուած ընդ մեզ է...

— Եկե՛ք, անկասկած, թեպետև լեզգի,
Աստծու տունն է սա, հանգեք դուք խաղաղ,
Էսպես է կարգը մեր հայոց ազգի,
Եկեք մեր օտար եղբայրներ անվախ.
«Մեք երգեսցուք զբան բարի,
Զբան բարի հանապազօր,
Եւ որ նըստիք ի խաւարի՝
Լոյս ծագեսցի առ ձեզ հըզօր»:
Զի Աստուած ընդ մեզ է...
Դիզված են վանքի պատերի տակին
Եկվոր հյուրերի արկղները փակ,
Հայի մանուկը խաղում է կողքին,

Լսում է արկղից [զսպված] աղաղակ...
«Եւ առաքեա առ մեզ, Աստուած,
Զհրեշտակ մեծի քո խորհրդոյ»:
Ճչում է [անմեղ] մանուկն երկնքից.
Ոտքի է ելնում բովանդակ կրոգին.
Քանդում են արագ, և ահա արկղից
Ելնում է դաժան զինավոր լեզգին.
«Պահեա զմեզ, Տէ՛ր, ի պատրանաց
Նենգ թշնամոյն»:

Գիշերվա մթնում վառվում են ջահեր,
Սևանա սեպ-սեպ ժայռերի գլխին,
Հավաքվում են հայեր և երգում են.
«Եւ զխորհուրդն զոր դուք խորհիք
Խափանէ, Տէ՛ր, աջովն անանե
Եւ զբանն զոր դուք խօսիք
Մի՛ մնասցէ ծածուկ առ ձեզ,
Զի Աստուած ընդ մեզ է...»:

Ցած են գլորում բարձր քարափից
Իրար ետևից արկղները փակ,
Նայում են լեզգիքն հանդեպի ափից,
Ու լսում հայոց երգն ու աղաղակ.
«Յահէ ձերմէ ոչ երկիցուք,

. . . .

Եւ դարձեալ զօրանայցէք,
Դարձեալ մատնիք ի պարտութիւն,
Զի Աստուած ընդ մեզ է...»:

1922

ԱՆԲՈՒՆ ԿԸԿՈՒՆ

<Առաջին մաս>

«Թագավորությունը — էդ ես եմ»

I

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փըչակ,
Փըչակում մի բուն,
Բընում երեք ձագ
Ու վըրեն կըկուն:
— Կուկո՛ւ, կուկո՛ւ, իմ կուկուներ,
Երբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՛ք, գընա՛ք,
Ուրախանաք...
Միշտ առավոտ ու իրիկուն
Ձեն էր ածում մարիկ կըկուն:
Մին էլ, ը՞ը՛, սոված-սոված
Գելը եկավ ըռեխը բաց:

— Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է.
Ծառում փչակ կա,
Փչակում մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Հա՛յ դու կըկո՛ւ, տըխմար կըկու,
Քանի տըկլոր ձագ ունես դու:
— Երեք հատ ձագ, ծառա եմ ես:
— Երեք հատ ձագ ցույց կըտամ քեզ...
Ու չես ասել դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ...
Չես իմացել դու տակավին
Էս աշխարհքի օրենքը հին,
Որ էս երկրում ամենն, ինչ կան,
Ինձ համար են, իմ սեփական.
[Ու բարիքը հանուր կյանքի
Ամեն մեկի ու ամենքի
Էն է, որ ողջ լոկ ինձ նայեն
Ու անձնըվեր ինձ ծառայեն...]
Ընդդե՛մ ես դու մեր աշխարհքին,
Աստծու կամքին, նըրա կարգին,
Ու, ո՛վ սարսափ՝ ընդդե՛մ ես ինձ,
Քու էդ հոտած, փոքրիկ բնի՛ց...
Չըգի՛ր շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, չըկտրես,
Աստված սիրես.
Էս մինն, ահա,
Տար քեզ ծառա,

Միայն թե էդպես
Մի՛ ջընջիր մեզ
Բընով-տեղով,
Ամբողջ ցեղով:
Ասավ, ձըգեց մի հառը ցած,
Ու գելը, հա՜փ, առավ գընաց:

II

— Վա՜յ-վա՜յ, դու-դո՜ւ
Իմ լավ կուկու,
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում
Ո՞ր թըփի տակ
Կորար մենակ...
Վա՜յ-վա՜յ, դու-դո՜ւ,
Իմ խեղճ կուկու...
Էսպես կըկուն իրեն բընում
Բերան-բերան լաց էր լինում:
Մին էլ տեսավ՝ ցինգիր տալով,
Մառ ու մըռայլ, հե՜թեթալով,
Ո՜ր սև սարից, ո՜ր խոր ձորից,
Եկավ դաժան գելը նորից:
— Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փըչակ կա,
Փըչակում մի բուն
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն...
Հա՜յ դու կըկո՜ւ, տըխմար կըկու,
Քանի տըկլոր ձագ ունես դու:
— Երկու հատ ձագ, գերիդ եմ ես...

— Երկու հատ ձագ ցույց կըտամ քեզ.
Ինչ ես ասում էս աշխարհքին,
Աստվածադիր նրա կարգին,
Որ աշկարա դեմ ես գընում —
Քեզ ու գլխու ձագ ես հանում...
Չե՞ս իմանում, որ առանց ինձ
Ձագ չըպիտի դուրս գա ձըվի՞ց...
Հա՛յ չարամիտ դու ավազակ.
Ի՛նչ է միտքըդ — երկու հատ ձա՛գ...
Ի՛նչ, ուզում ես էստեղ, գառավ
Լըցնես քեզ պես կըկուններո՞վ...
[Ասա էլի՛... հետո... հետո...
Հասկանո՞ւմ եք սրան դուք, տո՛...]
Ձըգի՛ր շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, չըկտրես,
Աստված սիրես:
Էս էլ ա՛ռ, տա՛ր,
Թող մինուճար
Վերջինը գեթ
Մընա ինձ հետ...

Աղաչ-պաղատ մարիկը սև
Երկրորդ ձագն էլ ձըգեց ներքև,
Ու ահաբեկ, մենակ ու խեղճ,
[Նըստեց], սըգաց պաղ բընի մեջ:

Վա՛յ, վա՛յ
Վո՛ւյ, վո՛ւյ.
Ընչի՞ համար

Ես, ջրատար,
Բուն շինեցի,
Ձագ հանեցի...
Գետը տարավ,
Տարա՜վ, կերա՜վ.
Երկո՜ւ, երկո՜ւ,
Կուկո՜ւ, կուկո՜ւ...

III

Էս միջոցին, կեռիկ-մեռիկ,
Նազով-մազով սանամերիկ
Աղվեսն
Անց էր կենում էն կողմերով:
Կըկվի ձենը որ լսեց՝
Տեղն ու տեղը ետ պըպըզեց:
— Էդպես [տխուր] ու զարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, Կըկու քուրի՛կ:
— Ինչպե՞ս չըլամ, ա՛յ սանամեր.
Գետը եկավ էն սըրտամեռ,
Գըլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներըս տարավ, կերավ:
— Վո՜ւյ իմ աչքին, անխելք Կըկու,
Էդ ի՞նչ խաբվել ես դու...
Գիլի խոսքին մարդ էլ լըսի՞.
Ո՞նց թե սարը իմն է՝ կասի.
Ո՞վ է տըվել էն լըրբին սար...
Սարն ամենքիս է հավասար...
Ո՞վ թող կանի՝ վեր կենա նա՝
Ամբողջ սարին գա տիրանա,
Անունը տա սըրած կացնի,
Սըրան-նըրան սուտ վախեցնի,

Ու մինն էսօր, մյուսը՝ երեկ,
Զարկեր տանի, ուտի մեկ-մեկ:
Սև գըրողի էն տարածին
Ո՞վ է տըվել սրած կացին:
Մին էլ որ գա ու ըսպանի՝
Մի՛ վախենար՝ քըշի գընա:

IV

Ասավ՝ իրեն ճամփեն գընաց:
Կըկուն մընաց, մընաց, մընաց,
Մինչև, ահա, եկավ էլի,
Գելը արնոտ, զարհուրելի:
— էս սարը իմն է,
էս ծառը իմն է...
Խոսքը կիսատ բերնումն էր հենց՝
Կըկուն բընից կուճին հանեց.
— Սուտ ես ասում, դու խաբեբա,
Անխիղճ գազան, անկուշտ, ագահ,
Ո՞վ է տըվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքինս է հավասար:
Ի՞նչ ես եկել սուտ տեր դարձել,
Ես էլ, հիմար, ճիշտ եմ կարծել,
Ձագուկներըս տըվել եմ քեզ...
Կորի՛ գընա, չար աներես.
Հերի՛ք՝ ինչքան լաց եմ եղել,
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ,
Կացին չունես՝ ծառը կըտրես:
— Ո՞վ ասավ քեզ:
— Աղվեսն ասավ:
— Աղվեսը՞... լա՛վ...

V

Ու աղվեսի վրա....
Դառն ու դատարկ Գելը գընաց:
Գընաց էնքան
Ման եկավ, մա՜ն,
Մինչև տեսավ մի ծըմակից,
Մի հաճարի ծառի տակից,
Կեռիկ-մեռիկ,
Սանամերիկ,
Իր սուր գընչով,
Թուխլիկ պընչով
Դուրս եկավ էն ոչ ու փուշը,
Ետևիցն էլ երկար պոչը:
— Հը՛, ճանկս ընկա՛ր, լի՛րբ ապըստամբ.
Ոռնաց Գելը կատաղությամբ:
— Հա՛յ անըզգամ, չարալեզու,
Ո՜նց թե Կըկվին ասել ես դու,
Թե ես կացին չունեմ սըրա՛ծ...
Կացին չունե՞մ... դե հիմի կա՛ց...
Ու բաց արավ նըրա վըրա
Ըռեխն, ինչպես մի մաղարա:
— Կա՛ց, ըսպասի՛ր, ո՛վ ծաղկակոխ,
Մարդավարի լըսենք մի թող.
Ի՞նչ ես ասում, ներողություն,
Չեմ հասկանում... ո՞վ է Կըկուն...
Ես նոր մարդ եմ, էստեղ ոչում
Էդ անունով չեմ ճանաչում...
— Չե՞ս ճանաչում, դո՛ւ խաբեբա՛,
Էդ ո՞ւմ մոտ ես վազում հապա
Էսպես մենակ
Անժամանակ...

— Ա՛յ անկարգ հա՛րց, քեզ ինչ՝ ում մաս...
Սակայն, թեև մենք անծանոթ,
Թաքցնելու բան չունեմ ես,
Իսկույն ևեթ պատմեմ ու տես:
Էստեղ մոտիկ կա մի ծըմակ,
Էն ծըմակում մի գեր գըմակ
Ունեմ ծածկած,
Բայց անիծած
Մի բնություն ունեմ Լալեն՝
Երբ որ մենակ ես եմ լինում,
Կախարդիցս կույր չի գընում.
Ուզում էի ընկեր գըտնեմ,
Եվ հանկարծ դու եկար իմ դեմ:
Եթե կըգաս, աչքիս վըրա,
Արի՛ գընանք՝ անուշ արա
Գեր գըմակը՝ ինչքան կուզես,
Թե չէ Լալես...
Ի՛նչ կարգ է սա,
Ի՛նչ բարք է սա,
Անմեղ մարդու
Բռնել, թե՝ դու...
Գեր գըմակը որ չըկեց՝
Գիլի բերնի ջուրը վազեց:
Գը՛մ... գը՛մ... գըմա՛կ... ների՛ր, խնդրեմ,
Հանցավոր եմ, ասավ, քո դեմ,
Մեղք գործեցի...
Ես կարծեցի՝
Էն անպիտան Աղվեսն ես դու...
Ներողություն, ի սեր աստծու,
Ներիր ու եկ, շուտով գընանք,
Ուտենք, ուտենք, մի լիանանք:
Ծըխում է, սիրտս ու թրթռում,

Թե իմանաս՝ ո՛նց եմ սիրում
Ծրմա՛կ,
Գրմա՛կ...
— Ա՛յ, էդ խոսք է: Էս մի անգամ
Ներում եմ քեզ, նոր բարեկամ:
Բնությունն էլ էսպես է միշտ.
Ինչքան ցավ եմ կրել ու վիշտ,
Զանց եմ արել մեծահոգի
Սխալանքը ամեն մեկի:
Եվ դու տես, հոգիդ սիրես,
Եթե բարի չլինենք էսպես,
Էս աշխարհքից ինչ տի տանենք:
Լավ էն է՝ բարի լինենք.
Սիրենք իրար,
Ներենք իրար,
Մի-մի բան էլ եթե ճարվի,
Ուտենք էսպես ընկերովի:
— Բարությո՞ւնը... հա՛, էդ հարցում
Հենց ես էլ եմ էդպես կարծում,
Եվ պատրաստ եմ ուտեմ էնքա՛ն,
Որ ինչ նոթի ու սոված կան,
Ոչ լիանան...
Ո՛ւֆ, շո՛ւտ արա՝ գընա՛նք, գընա՛նք...
Բայց որ շըները դուրս գան հանկա՞րծ...
— Շընե՞ր... հը՛ հը՛... դու անհո՛գ կաց.
Էնպես մի թուղթ ունեմ մոտըս,
Որ, ինչ տեղ էլ գընեմ ոտըս,
Շըներն էլ չըհամարձակվեն
Վրես հաչեն կամ հարձակվեն:
Զարմացնում է գուցե քեզ սա,
Բայց՝ ինչ անես, ախպեր, տես...
Էս աշխարհքում քանի որ կաս,

Աշխարհքի հետ պիտի գընաս.
Առանց մեծի հըրամանի
Մարդ չի կարող մի քայլ անի:

VI

Էսպես՝ խաղաղ, պարզ գիշերով,
[Գեր գըմակը] միշտ հիշելով
Հասան,
Տեսան՝
Ճըշմարիտ որ, մի ծառի տակ.
Հարդի վըրա մի գեր գըմակ:
Գելի աչքերն հենց որ առան,
Ասես մի-մի կըրակ դառան.
Իսկ Աղվեսը նըրանց հեռու:
— Ինչո՞ւ էդպես ես կացար դու:
— Բա՛, հենց հիմի հիշեցի ես,
Որ էս շաբաթ մեծ պաս է մեզ:
Ա՜խ-վա՜խ, էս մեր ադաթը հին,
Խըռով կենա սահմանողին:
Մըտիկ մի՛ տալ էլ ինձ վրա,
Դու, համեցե՛ք, անուշ արա:
Ասավ՝ Գելը ագահ ցատկեց
Ու գըմակին էնպես զարկեց,
Որ շաղ անցավ [ամբողջ] հարդը,
Տըրա՛ք, զարկեց մեծ թակարդը
[Բացվեց ու պինդ] վիզը կալավ:

Գելն սկսեց գլուխը թափ տալ, ձիգ տալ և այլն:*

**281-285 տողերը բանաստեղծն ինքնագրում առանձնացրել է, ըստ երևույթին հետագայում մշակելու համար (խմբ.):*

Աղվեսը՝ ես էլ եմ ընկել
Ու էդպես արել և այլն.
— Վա՜յ.— վայը քեզ հետո կասեմ.
Եվ սկսեց ուտել առաջն ընկած դմակը:
— Ի՞նչ ես անում, [ընկեր] աղվես.
Չէ՞ որ էսօր մեծ պաս է ձեզ:
Իսկ Աղվեսը հանգիստ ուտում,
Եվ ուտում էր և խըրատում:
— Դըմակն երբեք պաս չի, ո՜վ Գել,
Պասն էդ է, որ վիզդ է ընկել:
Եվ էսօրից, եթե ապրես,
Ինձնից խըրատ լինի թող քեզ.
Եթե երբեք դըմակ ճարվի
Ու Աղվեսը հըրաժարվի,
Ասի՝ պաս եմ, լի եմ, կամ կուշտ,
Մի փորձանք կա տակին անշուշտ.
Լա՜վ իմացիր,
Ըզգույշ կացիր...
— Վա՜յ անհոգի.

. . . .

Դըրա համա՞ր հեռու կացար,
Դըրա համա՞ր սուրբ ձևացար.
— Այո՛, այո՛, դըրա համար:
Եվ լսի՛ր ինձ, պարո՛ն հիմար
Էսօրվանից, եթե ապրես,
Ինձնից խըրատ լինի թող քեզ.
Եթե երբեք տեսնես դու բաց
Մի անտառում հարդ կա թափած
Ու վըրեն էլ մի գեր դըմակ,
Գիտցի՛ր — չար բան կա դրա տակ:
Էսպես տեղում հարդն ի՞նչ ունի.
Հարդը հարդ է ու կըլինի

Կամ մարագում, կամ ախոռում,
Ոչ թե թաղած խոր անտառում,
Ու գրմակն էլ իրեն կարգին
Կըլնի ախրոչ տան թարեքին,
Կամ ոչխարի մըրից կախված,
Ոչ թե էստեղ՝ հարգում թաղված:
Ինչ էլ լինի՝ գրմակն, ահա,
Ե՛վ համով է, և՛ փորին շահ.
Լինի հարգում
Թե թակարդում —
Պետք է հանել մի հնարքով,
Քեզ պես ալխմար մեկի ձեռքով…
Մինչ Ազվեսը հանդարտ ուտում,
Եվ ուտում էր, և խորատում՝
Սարի ուսից լուր բացվեց,
Հանդ ու անտառ [կյանքով] լցվեց,
Հազար-հազար կանչ, ձեն ու ձուն.
Մին էլ տեսան էլ մարդ, էլ շուն
Վեր են կացել,
Իրար անցել
Ու գալիս են մոտիկ գյուղից:
Ազվեսն ելավ իր երկյուղից,
Դարձավ Գելին վերջին անգամ.
— Լըսի՛ր, ասավ, Գել բարեկամ.
Էսօրվանից, եթե ապրես,
Ինձնից խըրատ լինի թող քեզ:
. . . .
. . . .
. . . .
. . . .
Ասավ՝ կըրունկն արավ Գելիս,
Ո՞ւր եք, սարեր, ձեզ եմ գալիս:

— Ազիզս ախպե՛ր, Ազիզս ախպե՛ր,
Գոնե ծոցիդ էն թուղթը բեր,
Հրամանք բեր շիների.
Ոնանց Գելը ողորմելի:
— Ի՞նչ թուղթ, ի՞նչ բան,
Ի՞նչ հրաման
Կըհարցնի էս թըշնամին,
Կամ թե խառնակ էս նեղ ժամին
Կարդացող կա՞,
Հասկացող կա՞...
— Ես անտեր եմ թողնում, գընում:
— Վա՜հ, ինչո՞ւ ես անտեր մընում.
Ինչքա՞ն տեր է գալիս քեզ, տե՛ս...
Անտերն ես եմ, որ, ա՛յ էսպես,
Առանց ընկեր ու առանց տեր
Պիտի գընամ ընկնեմ հանդեր...

VII

Էնքան թակից ու մահակից,
Էնքան մարդկանց ու շան տակից՝
Չեմ իմանում ինչ հըրաշքով,
Պոչատ ու կաղ, մի հատ աչքով
. . . .
. . . .
Թե չորս ոտը ուներ մորից,
Մի չորսն էլ փոխ առավ նորից
Ու շունչն էնտեղ քաշեց մին էլ,
Որ [էն եկող] մարդն էլ, շունն էլ
Մընացել են՝ ով գիտի ուր:
Ջարդված, հոգնած, տըխուր-տըխուր
Նըստեց, մի քիչ հանգիստ առավ.

Ուշքի եկավ ու միտք արավ.
— Էս էլ կյանքը՝ բարով-խերով,
Լիքը մարդով ու շըներով,
Սոված անգըղ մի կտոր բան
Չեն թող անում՝ տանես բերան.
Բարեկամդ էլ Աղվեսի պես...
Էլ ո՞ւր գնաս, էլ ո՞նց ապրես...
Ա՜խ, տըմարդի. ա՜խ, անիրավ.
[Իսկի] տեսա՞ր, թե ինչ արավ:
Հայա դեռ կաց, Գել կասեն ինձ,
Թե մի ճանկըս կընկնես նորի՜ց,
Է՜ն բանն անեմ, [փորըս] վըկա
Մորըդ կաթը քըթիցդ գա:
    Ասավ, պըրծավ,
    Ու վեր կացավ,
Երկար սովից ծունկը կըտրած,
Սաստիկ ցավից հանգած, հատած,
    Կաղին տալով,
    Ժընգժընգալով
Գընաց՝ էնքան ման գա կըրկին,
Մինչև էլ եղ էն
Ճանկը գըցի
Ու քըձըձի:
Էլ քար ու [քոլ], էլ սար ու ձոր,
Ման եկավ ման, օրվան մի օր
Մի բացատում՝ մին էլ տեսավ —
    Կեռիկ-մեռիկ
    Սանամերիկ,
    Իր սուր դընչով,
    Թուխլիկ պընչով
Աղվեսն, ասես, գետնից բուսավ.
— Հա՜, վերջապես,

Գիտել եմ քեզ,
Կանչեց Գելը ճամփեն բռնած
Ու իր հերսից էնպես ոռնաց,
Որ ով լսեց, գազան թե մարդ,
Հոգին դարձավ կորեկի հատ:
Բայց Աղվեսը [հանդարտ] ու պաղ,
[Գիլին էնպես դարձավ խաղաղ.]
— Դու մի խելոք մարդ ես, կարծես,
Բայց խոսքերդ վայել չեն քեզ.
Մի նոր մարդի որ պատահեն,
Բարև կըտան, բարև կառնեն,
    Հետո կասեն՝
    Ինչ որ կուզեն:
    Ի՛նչ բան է սա,
    Որ ես տեսա...
    Էսքան անկիրթ,
    Կոպիտ ու բիրտ...
    Արդյոք գիտե՞ս,
    Թե ով եմ ես,
    Ինչ ցեղից եմ,
    Ինչ տեղից եմ,
    Ուր եմ գընում,
    Ինչ եմ անում...
— Գիտեմ, գիտեմ ինչ ցեխից ես,
Ցեխում հիմի թաղեմ մի քեզ,
Որ իմանաս, թե ոնց գիտեմ...
Հիշի՛ր, ինչ ես արել իմ դեմ.
Մըտիկ արա, արարքըդ տես,
Դու [անըզգամ, խաբլան] աղվես,
Որ ինչ պատիժ տամ քեզ հիմի,
Ինքդ էլ ասես՝ հորդ ողորմի.
    Ոտքս կոտրած,

Պաչիս կըրակած,
. . . .
Աչքըս հանած...
— Այո՛, այո՛, աչքըդ հանած.
Դըրանից էլ դեմըդ կանգնած
Ով է, ով չի՝ չես ճանաչում,
Բերնից խոսքից չես ամաչում...
Ո՛նց թե Սովես... ո՞վ է Սովես...
Հընդու եկած բըժիշկ եմ ես.
Իմ արվեստի սիրուց հարբած՝
Ոտըս բոբիկ, գըլուխըս բաց
Երկրե երկիր ման եմ գալի,
Թե որտեղ կա անճար հիվանդ.
Կաղին առողջ ման եմ տալի,
Համրին լեզու, կույրին աչքը...
Ո՞վ չի լսել իմ հըրաշքը...
— Կաց... կարծես թե... մի օր... ես էլ...
Մի տեղ էդպես բան եմ լսել...
Հընդո՛ւ... Հընդո՛ւ...
Հա՛, էն ես դու...
— Էս ամենք անփող, անվարձ,
Հոգուս խաթեր... և դու... հանկարծ...
Էդպես կապիտ... սրտով... շառով...
Բավական էր... մընա՛ս բարով...
— Ո՛չ, կա՛ց, վարպետ, ի սեր աստծու,
Վերջին դըժբախտ դեպքից հետո,
Երբ փըչացան աչքերս էսպես,
Լավ չեմ տեսնում առաջըս ես,
Դու բժիշկ ես, լավ կիմանաս,
Մեզ կընկերես ու կըմնաս
Մեր հանդերում, որտեղ կուզես,
Առատ կապրես, համով կուտես

Կրիվի ձագեր, լոր, սագ ու բադ,

. . . .

Մենակ թե [ազատիր] ինձ էս ցավերից
Տուր լուս աչքըս, առույգ ոտըս,
Երկար պոչըս, փայլուն [բուրդըս].
Հողում էլ է,
Օդում էլ է.

. . . .

. . . .

. . . .

. . . .

Որ բժշկի համար չկան
Էս աշխարհքում արքա, իշխան,
Ստրուկ ու տեր, խենթ ու խելոք,
Ողջ համասար հիվանդ են լոկ...
Եվ դու քանի հիվանդ ես դեռ,
Ես եմ մեր մեջ իշխան ու տեր.—
Ինչ որ ասեմ — պիտի լսես,
Այլ կերպ՝ բուժել չեմ կարող ես...
— Վարպետ, և էդ հարցում
Ինչո՞ւ ես մեզ աղքատ կարծում,
Ի՞նչ խոսք ունեմ ես դրա դեմ.
Թույն էլ որ տաս՝ պիտի խմեմ.

. . . .

. . . .

. . . .

— Դեղի միջին թաքցնեմ,
Կրակի շապիկ հագցնեմ,
[Քրտընես ու պըրծընես] թող դառնաս,
Հող էիր՝ ետ հող դառնաս:
[Հոպլա], բժի՛շկ, պար արի,
Էս ինչ խելոք ճար արի...

. . . .
— Ի՞նչ ես ասում, վարպետ ախպեր.
— Քեզ եմ ասում, քիչ էլ կաց դեռ:
. . . .
Սար ու ձոր ու գիլի փոր.
Դըրա վերջն էլ կա մի օր:
Էսօր դու ես, էգուց՝ ես,
Անհաստատ է կյանքն էսպես:
Հոպլա, բժիշկ, պար արի,
Էս ինչ խելոք ճար արի...
. . . .
. . . .
. . . .
Կապրես, վա՜յ էն ապրելուն,
Կըկուն կերթա՝ շինի բուն,
Բունը շինի, ձագ հանի,
Աղվեսն երթա, հա՜փ անի:
Հոպլա, բժիշկ, պար արի,
Էս ինչ խելոք ճար արի...
Վարպե՛տ, շո՛ւնչըս... վարպե՛տ, մեռա՜...
Դուրս արի տե՛ս... վարպետն ո՞ւր ա...
(Ծլկում է. Գելը դուրս է գալիս էրվելով,
Ծխի մեջ — ուշքի է գալիս, որ վարպետը — չըկա):

<Երկրորդ մաս>

I

Աղվեսը գելի մոտից փախած, Կըկվին ղրկում է, թե գնա հավար գցի, բոլոր կենդանիներին հավաքի, հայտարարիր գիլի անկումը, ես էլ գալիս եմ:

Բոլոր կենդանիներից հավաքված են հրապարակում ու մի կողմից էլ գալիս են: Աղմուկ, հուզում, իրարանցում: Կըկուն մեջտեղն է բաց արել:

— Կուկու, կուկու,
Բոլոր կըկուներ,
Բոլոր նըկուներ,
[մա՜հ] [անխիղճ] Վե՛րջ, վե՛րջ գիլին,
Բըռնակալին,
Գետին զարկեց
Աղվեսը մեծ.
Կեցցե՛ աղվես:
Կուկու, կուկու,
Բոլոր կըկուներ,
Բոլոր նըկուներ,
Եկեք միանանք,
Սարին տիրանանք.
Սարը մերն ա,
Դարը մերն ա,
Տարա-րի՛-րա՛,
Տարա-րի՛-րա՛,
Ի՜նչ լավ դար ա,
Ի՜նչ լավ սար ա:

Հավերը կչկչում են, բադերը կռկռում ու ճղղում, խոզերը մրթմրթում զարմացած և վախեցած, և այլն, և այլն: Էշերը պոչները տնկած, դրոշակ արած վազվզում են դես ու դեն ու գռռում — ուռա՛, ուռա՛... Երգ, աղմուկ, իրարանցում մոտ ու հեռու:

(Օրկեստր ու երգ):

Էս ժամանակ ոմանք պատմում են աղվեսից՝ թե մեր գիտցած աղվեսն է դա:

(Պատմություններ):

Հետզհետե հեռու աղմուկը սաստկանում է ու մոտենում:

Իրար ետևից ծանր ու հանդիսավոր բերում են դրոշակներ լոզունգներով ու պլակատներ —

— Կորչի՛ մահապատիժը,
— Կեցցե՛ ազատությունը,
— Կորչի՛ բռնակալությունը,
— Կեցցե՛ եղբայրությունը,
հավասարությունը...

Հայտնվում է և ինքը — Աղվեսը:

— Նա ինքն է, — ես հիշում եմ.

«Կեցցե» և աղմուկ:

Բարձրանում է իշի մեջքին ու բռնում կաղքի լապտերի սյունից:

— Կեցցե՛...
— Սո՛ւս...

(Քեզ ասում եմ լսիր, գոռում է մեկին ու մյուսին...)

Հավը — *Դա ինչ նոր գել է,*
Որ խոսելն էլ ափի արգելե...
Զարհուրելի գիլից արծանք
Հիմի էլ ընդհանուրին գերի դարձանք...
— Դու ընդհանուրին գե՞լ ես կանչում
Հե՛յ, լսեցե՛ք...
Սա ձեզ գել է անխանում:
(Աղմուկ, շփոթ, պայրույթ և այլն)

[Հավը] Աքաղաղը — *Ե՛ս... ե՛ս... ե՛ս...*
(Չեն թողնում խոսի — սպանում են)
Մա՛հ ազատության թշնամիներին —
գիլի կուսակիցներին,
կեցցե՛ աղվեսը:

Աղվեսը — *Ո՛չ, ասացեք՝ կեցցե՛ ազատությունը:*
Ձեներ — *Կեցցե՛ ազատությունը:*
Աղվեսը — *Եվ կեցցե՛ գիտակցությունը:*
Մի մասը — *Կեցցե՛ գիտակցությունը:*

Գեղը հիմնված էր ժողովրդի ազատության վրա, առանց օրենքի, իրեն քմահաճույքով... Բայց այժմ գիտակցությունը...

Մյուս մասը — *Էդ ով է...*

Մի ուրիշը — *Գիտակցությունն է, էլի... Մինչև դու չգիտես գիտակցությունը...*

Աղվեսը — *Բանը գեղը հո չի,*
Այդ գիտության կոպիտ կարգը,
Որ քանդում է մեր աշխարհքը,
Գիտությունը թե չէր եղել,
Գեղն էլ երբեք չէր լինի գեղ...

Ոսխարը իշխն — *Էդ մինը ես չեմ հասկանում.*

Էշը — *Էստեղ ինչ կա չհասկանալու:*

Աղվեսը — *[Թող կորչի]*
Եթե կորչի էս մի գեղը,
Դուրս պիտի գա էն մեկելը,
Թող [կորչի միանգամից] վերանա մեր
սահմանից

Գիտությունը միանգամից.

(Աղմուկ — կորչի [գիտությունը]):
Մինը փիլիսոփայում է,
Թե ոչինչ չի դուրս գալ —
Իշխանության խնդիր է.
Հիմի էլ սա է ուզում տիրի:
Ինչ ուզում է, թող անի,
Ով ուզում է թող լինի.
Սա [էլ] նրա պես,
Նա [էլ] սրա պես,
Երկուսն էլ մեկ
Աղվես թե գել.
Ծունչ կենդանի,
Փուչ կենդանի

Ու կրտանեք —
Ուր կտանի...

Խոզին բռնել է տալիս:

Խոզը — *Ես ինչ եմ արել:*

Աղվեսը — *դու շատ ես կերել,*
հիմի էլ քեզ պիտի ուտեն:

(Ծղղոցն է լսվում):

Նապաստակը — *Ճագարին. [Գիտես] Երբ սա բերանը բաց արավ ճառ ասելու, ես նկատեցի, որ սա էլ սուր-սուր ատամներ ունի... որ... դու չտեսա՞ր...*

*[*Մի ուրիշը*]* — *Ես կարծում եմ...*

Մի ուրիշը — *Սո՛ւս, տըխմար, մյուս անգամ էլ չհամարձակվես կարծել: Էդ էր մնացել, դու էլ կարծեիր...*

— Ինչո՞ւ չեմ կարող ես կարծել... Ես կարող եմ սխալվել: Էդ ուրիշ բան է... բայց կարող եմ կարծել... Միթե այժմ կարծիքի ազատություն չի...

Ազատություն է, բայց ոչ քեզ համար... ազատություն է ամենքի համար... Եթե քեզ պես ամեն մեկն էլ իրեն զգա ազատ — ո՞ւր կհասնի...

(Հե՛յ, մի՛ աղմկեք էդտեղ — լռեցե՛ք, բանտարկեցե՛ք, և այլն):

Գելը երևում է:

Աղվեսը ցույց տալով գելի նրան — բորբոքվում է ամեն կատաղությամբ: Հարձակվում են, փչացնում և աղվեսին հրատ < . . . >

Այժմ մենք պիտի կազմակերպվենք և կազմակերպենք մեր նոր պետությունը:

— Կեցցե՛...

Մենք ամեն կողմից շրջապատված ենք թշնամիներով, պետք է մեզ ապահովենք թե արտաքին, թե ներքին թշնամիներից...

Ուռռա...

Այո՛, մանավանդ ներքին թշնամիներից...

Ո՞վ գիտի այժմ ամեն մեկիդ կողքի կանգնածը ինչ է մտածում. տեսա՞ք հավին:

[(Մի քանիսը վախեցած՝ ոնց են)]

— Այո՛, այո՛, ճշմարիտ է, էս րոպեիս էլ իմ կողքի կանգնած էս խոզը. (Խոզը ուզում է դուրս պրծնի):

— Ո՛չ, արի էստեղ...

Աղմուկ, աղաղակ, բռնում են, մի քանիսը ուզում են հեռանան...

Աղվեսը — *Այո՛, որոնց խղճմտանքը մաքուր չի՝ նրանք պետք է հեռանան... Վտանգ, ամեն կողմից վտանգ... Եվ մենք ստիպված ենք մահվան պատիժ սահմանել...*

Առաջ է գալիս մինը — *Բայց, ընկեր Աղվես, չէ՞ որ մենք վերացրինք մահապատիժը, դա գիլի օրով էր ընդունված:*

Աղվես — *Բայց դուք մոռանում եք, որ գիլի օրով դա միայն գիլի քմահաճույքն էր և անիրավություն, իսկ այժմ ընդհանուրի կամքն է և սուրբ է և ինքնապաշտպանություն է միայն...*

(Խոսողի դեմ՝ կանգնիր — պրովակատոր և այլն)

Նույն խոսողը — *Ես կարծում եմ, մենք օրենք պիտի ունենանք...*

Աղվես — *Ո՛չ, մեր օրենքը մեր խիղճն է... ահա ես ամենքիդ խիղճը. և երբ ամենքը մեզ հետ են — մեր խիղճն է...*

Ձեռներ խոսողի հասցեին — *Բավական էր.*

— Բայց մենք ազատ ենք խոսել և այլն...

(Ամբոխին է պատկանում):

Աղվես — *Ազատությունը, ընկեր, ընդհանուրինն է, ոչ թե ամեն մեկին առանձին. եթե ամեն մեկն իրեն առանձին ազատ համարի — էլ ինչ եք ինձ ընտրել, էլ ես ինչ եմ — ինչ կասեք, ընկերներ:*

Ամբոխը — *Այո՛, այո՛, ճիշտ եք ասում, կեցցե՛...*

Աղվես – *Այժմ գնացեք ազատ ապրեցեք,*
Ամենքդ ձեր բնում
Ձագ հանեցեք,
Երգեցեք... և այլն:

Երբ ասում է մաքրենք, [մինը] չախկալը սկսում է նշան դնել բոլոր [չախկալների] բորենիների վրա:

– Ինչ ես անում...

– Սրանց բոլորին սպանի մաքրել:

([չախկալներից] Բորենիներից որը սարսափած փախչում է, որը ոտի տակ ընկնում, փչանում):

Աղվեսի ճառի ժամանակ կկուն միշտ հրճվանքի մեջ է, և անհանգիստ. իբրև նրա հետ և անդադար կանչում է –

Կուկու, կուկու,
Բոլոր կըկուներ,
Բոլոր նըկուներ,
Եկեք միանանք
Ապրենք, լիանանք,
Դարը մերն ա,
Սարը մերն ա,
Տարա-րի՛-րա՛,
Տարա-րի՛-րա՛,
Ի՛նչ լավ դար ա,
Ի՛նչ լավ սար ա:

(Ու կտցահարում է կողքին կուչ եկած կատվի գլուխը):

Կատուն – *Քեզ ինչ եմ արել:*

Կըկուն – *Ամառը սրահի շվաքում, ձմեռը թոնրատան տաքում, ամառը հով կոճի տակին, ձմեռը տաք թոնրի կողքին...*

մաքո՛ւր, խատա՛կ
հագին մուշտակ,
նազով-մազով,

արև չես տեսել,
անձրև չի ծեծել,
անձրև չըկա,
արև չըկա,
ձմեռ-ամառ
տաքուկ, հարմար
կաս քեզ համար...

(Կատուն զգում է, որ վտանգված է — սարսափած խեթ-խեթ նայում է, հեռանում):

Կարգադրում է վտանգի դեմ կռվելու... հանձնում XX-ին опрос... ամենքին, որ շարժվում են, մանրամասն քննեն.

— Ինչու ընկնենք էլ պատեպատ.
ունեցել է տակետակ
ինչ էր մտածում նա մեր մասին —
ո՞ւր է գնացել և ինչո՞ւ,
թե չի գնացել — ինչո՞ւ...
Գնացել է — ինչո՞ւ,
Մնացել է — ինչո՞ւ...

Բոլոր ջահել տիկինների և օրիորդների համար էլ, որոնց նյարդերը թույլ են, սանատորիա է շինում իրենց ընկի մոտ..., որ ունենան հանգիստ, անուշ, մաքուր օդ:

Զանազան կողմերից, ամբոխի միջից լսվում են ջահել տիկնանց և օրիորդների ձեներ — Ա՜խ, նյարդերըս... ա՜խ, էլ տանել չեմ կարող...

Սեփականությունը սուրբ է:

II

Պատկեր

(Կառ<ավարությունն> իրեն անցնելուց հետո)
— Իմ ընկերներ
Բուսակերներ,
Մսակերներ,
Երկնաճեմ հավքեր և այլն:

Շնորհակալ եմ ձեր ցույց տված պատվի [հավատի] և վստահության համար (մերժում է):

Ես ստիպված եմ ընդունելու էդ ծանրությունը, որ դնում եք իմ թույլ ուսերին:

Ամբոխը — *Այո՛, և դուք պիտի ընդունեք, ինքներդ էիք ասում, որ ոչ ոք իրավունք չունի հրաժարվելու:*

Աղվեսը — *Այո՛, ընդունեմ...*

(Ծափեր և աղմուկ):

Աղվեսը — *Այժմ լսեցեք, թե ինչ եմ ասում:*

Մինը — *Հրամայի՛ր...*

Աղվեսը — *Ո՛չ, հրամայել էլ չըկա... Այժմ մենք հավասար ընկերներ ենք. սակայն երբ ինձ ընտրել եք, և երբ ձեր շահը հրամայի, որ ես հրամայեմ — կհրամայեմ ձեր անունով:*

(Աղմուկ.— Այո՛, այո՛, հրամայի՛ր, մենք պատրաստ ենք):

Աղվեսը — *Այժմ ձեր փրկությունը մեր հեղ<ափոխական> նոր կարգի պաշտպանությունն է հեղ<ափոխությունը>. և երբ էդ հեղ<ափոխությունը> դրել եք ինձ վրա, ես խնդրում եմ, որ ամենքդ երդվեք ինձ պաշտպանելու, որ կարողանամ ձեզ պաշտպանել...*

Ամբոխը — *Երդվում ենք... քո պոչով:*

Ամենքի համար չի, միայն պոչավորների.

(Ոչխարը — ես էլ պոչ ունեմ):

Դեռ էղ վեճ է,
Պոչ է, թե չէ:
— Կարճ է:
— Կաճե՛ :

Երբ խոսում են բոլորի եղբայրությունից, սկսում են համբուրվել. շունը նապաստակի հետ, կատուն մկան և այլն: (Մեկի գլուխը մնում է մյուսի բերնում):

Մի տեղ աղմուկ — շունը նապաստակին խեղդում է, ասում է — համբուրվելիս շրթունքս կծեց, մյուս տեղ ուրուրը հավին և այլն:

(Դրանց դասը հետո):

Առաջ է գալիս գիշատ. (?) — Մենք այժմ մի նպատակ պիտի ունենանք — մեր ամենքիս սրբազան պարտականությունն է պաշտպանել քեզ մեր կյանքով —

(Դիմում է ամբոխին) — Համաձայն եք, ընկերներ…

Ամբոխը — *Համաձայն ենք, ուռա՛, կեցցե՛ աղվեսը…*

Ամենքիս ապահովությունը պահանջում է, որ դու ապահով լինես, ամենքիս երջանկությունը պահանջում է, որ դու երջանիկ լինես, ամենքիս հզորությունը <պահանջում է>, որ դու հզոր լինես, և այլն:

Մեկը — *էդ հո գելը դարձավ —*

Провакатор — ոռքում է:

Աղ<վեսը> — *Տեսնում եք նույնիսկ էս հանդիսավոր պահին մեր ընկերների մեջ ինչ ձեն է լսվում, [ես կարծում եմ այժմ] ոչ ոք չպիտի խառնվի կառ<ավարության> գործին, վախենում եմ վտանգենք մեր նոր ազատությունը, ես չեմ հավատում ոչ ոքի:*

Ամբոխ — *Այո՛, այո՛, մի հավատալ, ինքդ, միայն ինքդ:*

Աղվեսը — *Շնորհակալ եմ, ընկերներ, ձեր անսահման հավատի համար և հույս ունեմ ամոթով չեմ մնա ձեր առաջ ապագայում:*

(Բրավո՛, կեցցե՛):

Բայց իմացած եղեք, որ խիստ եմ լինելու [ամեն մի ձեր] ընդհանուրի թշնամիների դեմ, ձեր թշնամիների դեմ, ձեր ազատության թշնամիների դեմ, թո՛ղ կորչեն մի քանի փառքը, քան [մեր] ընդհանուրի ազատությունը վտանգվի...

— Կեցցե՛, բրավո՛:

Էստեղ առաջին տեսարանի պլակատն երբ դուրս են բերում. բռնում են բռնաբարկում.

— Մենք երբ ասում ենք ազատություն եղավ, այժմ ուզում ենք ազատությունից ազատվենք:

— Բրավո՛, կեցցե՛:

Պաուզա = [քաղաքացիներ] վայրենիներ և ընկերներ

[Խոտակերներ]
Մըսակերներ,
Բուսակերներ,
Թևավորներ,
Սևավորներ,
Եվ դուք անոտ
. . . միջատ,
Որ սողում եք,
Որ դողում եք.
Սարին եք ապրում՝
Սարի տերը չեք,
Ծառին եք թառում՝
Ծառի տերը չեք,
Գիշեր ու ցերեկ,
Թե քուն, թե արոտ,
Մի հանգիստ ժամի
Մնում եք կարոտ:
Դողդողում եք

Ու սողում էք
[Ամբողջ] Ձեր ողջ կյանքում
Գիլի ճանկում: (— Կեցցե՛... —
Սը՛սս...)
Սար է — նրանն է,
Ծառ է — նրանն է:

. . . .

. . . .

Ձագ եք հանում՝
Նա է տանում:
(Ձայներ — Ճշմարիտ է)
Շարժում: — Սը՛սս, մի խանգարեք):
— Ահա Կըկուն,
Աղքատ, անքուն —
Լաց է լինում
[իրեն] Դատարկ բընում.
Ընչի՞ համար, ասեք խնդրեմ,
Ինչ է արել, երբ և ում դեմ... [լացը]
Որովհետև մեր սարերում [աշխարհում]
Էնպես դաժան կարգ է տիրում,
Որ դու իրավունք չունես
քո բնումը ձու ածես, ձագ հանես,
ձագեր՝ հանելու
մի օր մի գել
կարող է զըրկել...

Կըկուն սկսում է լաց լինել (ձենը կերկերում է, աչքերում արցունքներ են երևում: Հանդիսականներից ոմանք աչքերը սրբում են):

Նա լա՛ց է [եղա՛վ] լինում...
Կըկուն սկսում է հեկեկալ և կանչել.
— Վա՛յ, վա՛յ, դու-դու,
Իմ խեղճ Կըկու,

Ո՞ր սև սարում...
— Սո՛ւս, մի՛ խանգարիր —
Աղվեսը — Ո՛չ, թողեք լաց լինի.
Նրան էլ ուրիշ բան չի մնացել, բացի արտասուքը...
Բայց ես ասում եմ — բախտական էր...
Բախտական էր.
[Մի լար ընկեր]
Իմ խեղճ ընկեր
լացով երջանիկ կյանք չես ձեռք բերել
Միայն քո ձեռքով,
Միայն քո զարկով...
լցվեց արդեն [լցվել է բաժակը] համբերության բաժակը, ես տեսնում եմ. ամենքի աչքերը արդեն վառվում են և ամենքի աչքերի մեջ ես տեսնում եմ նոր կյանքի արշալույսը:

հավասարության մասին խոսելիս — խոսքերը իրարով են անցնում — սա ինչ բան է, ուրեմն ամենքս հավասար ենք ուտելո՞ւ... ուրեմն մենք մյուսների հետ հավասար... սովամահ կընկնենք...
— չախկալներն ու բորենիները — սա ինչ բան է
— ափսոս չէր գիլի ժամանակ, ինչքան կարող ես խեղդիր ու կեր —
ագռավ — Օ՛, ես լավ եմ ճանաչում,
դա տեսնում ես, ինչ է երգում,
Բայց իրեն պես էս մեջերքում
Խիստ արնեկեր, նենգ ու ագահ
մինը [կըգա] չըկա:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I

1889

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ԻՂՁ

Ինչո՞ւ չեմ թռչուն, վայրենի մի հավ,
Որ հիմա գլխիս վերևից թռավ.
Ինչո՞ւ չեմ կարող երկնքում ճախրել
Եվ ազատությունն միմիայն սիրել:

Ես դեպի Տարոն կըսլանայի,
Ուր ծաղկում են դաշտերն իմ պապերի,
Դատարկ ամրոցում միգապատ լերանց
Հանգչում են մոռացված աճյունքը նրանց:

Այնտեղ հին պատից մնում են կախված
Նրանց լայն վահանն ու սուրը ժանգոտած,
Կըթռչեի սրի, վահանի վրայով,
Եվ կըսրբեի փոշին թևերով:

Եվ պարթևական լռած քնարի
Ժանգոտ լարերին ես կըզարկեի,

Որ նրա ձայնը դարձյալ հոգենվաղ
Հնչեր մշտալուռ կամարների տակ:

Ճակատագրի խիստ օրենքների դեմ
Իզուր է խնդիրս,— ես այդ լավ գիտեմ
Իմ և բլուրների միջև հայրական
Սարեր ու ձորեր, կապույտ ծովեր կան:

Վերջին շառավիղը դյուցազունների
Ահա տարագիր, ցախ կյանքի գերի.
Այստեղ ծնվեցա, բայց ուրիշ հողում...
Ա՜խ, ինչո՞ւ չեմ ես Թռչուն վայրենի:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

* * *

Եթե իրավ է, որ գիշերները,
Երբ որ հանգչում են մարդիկ ներքևում,
Երկնքից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վրա դողդողում.

Եթե իրավ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուռ գերեզմանները,
Օ՜, ես կըկանչեմ իմ սիրելիին,
Կըկանչեմ նրա նըսեմ ըստվերը:

— Արի՛, հայտնվի՛ր, սիրելի պատկեր,
Ինչպես և էիր անջատման ժամին,
Սառն ու դալկադեմ, ինչպես ձմռան օր,
Խանգարած, խեղված տանջանքով վերջին:

— Ախ, արի՛, ինչպես աստղիկ հեռավոր,
Ինչպես թույլ հընչյուն թեթև զեփյուռի,
Կամ թեկուզ ինչպես տեսիլ ահավոր,
Ինձ համար մին է, արի՛, միայն արի՛...

1892

ԴԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ

Եվ խայտաճամուկ միմոսի շորով՝ Կեսարի կանչին
Լաբերիոսն ահա կանգնել կըրկեսում, Հռոմի առաջին։
Թընդաց Հըռոմը, և աթոռներից վեր կացան հանկարծ
Ազնըվականներն ու ժողովուրդը ահից սարսափած.
Ու դըղըրդացին արձակ կըրկեսում շըփոթ ու շըշունջ,
Հազիվ լսելի խառնակ աղաղակ ու դըժգոհ տըրտունջ.
«Լաբերիոսն այստե՞ղ... և ինչպես միմո՜ս... Այստեղ օրենքով
Գերիներն իրենց կուռ շըղթաների շըռընչյուններով,
Սըրի շաչյունով անմահ Հըռոմի հըրճվանքի համար
Ծըղնում են ըմբշի և կամ միմոսի պըսակ ստանալ...
Լաբերիոսն այստե՞ղ... բայց չի մոռացել Հըռոմը նըրան.
Հին քաղաքացի, ծեր, հըռչակավոր պոետ անըման,
Եվ արդ, կըրկեսում, ամբոխի առջև այսպես նա կանգնած,
Լուռ ու գըլխակոր գետնին է նայում ամոթից շիկնած...»
Եվ տըրտունջների ձայներն անորոշ նըրան են հասնում.
Բայց իր աչքերը Հըռոմի վըրա նա չի կամենում
Բարձրացընել այժմ՝ նըրա բացահայտ վըճռի ժամանակ.
Եվ անարգանքին ինքնաբավական հայացքով մենակ
Կեսարն է նայում։ Նըշան տըվավ նա հրամայող ձեռքով։
Լըռեց վերըստին հըպարտ Հըռոմը։ Գետնակոր գըլխով,
Ինչպես աղոթող ծանըր փորձանքի ահավոր ժամին,

Կանգնած է հուզված հանդիսի առջև երգիչ ծերունին:
Բայց դեմքը ահա աստղի նման փայլեցավ վառ-վառ,
Մռայլ ճակատը դարձավ վերստին հանգիստ ու
պայծառ,
Խոհուն աչքերը դըժգոհ ժողովին նայեցին կըրկին,
Ու նորից երգի, բանաստեղծության համարձակ հոգին
Հասավ սըտերին, սիրտ տըվավ նըրան: Նա զըվարթացավ
Պաղ-պաղ սարսուռ սըրտիցը մինչև մատները անցավ...
Այլակերպված է նա բոլորովին: Մի ակընթարթում
Նա ոգևորվեց: Վառված աչքերը կըրակ են ցայտում:
Ընկճող հայացքով իր շուրջն է նայում: Տարածեց ահա
Անզուսպ խըռովքից դողացող աջը քընարի վրա...
Ժողովը լուռ է: Բոլոր աչքերը խոնարհված են ցած:
Ազնըվականները մըթին գիշերից մըռայլ են նստած,
Եվ սպասները նըստած են խըրոխտ դեմքով կընճռալի.
Ուրախությունից փայլում է դեմքը ահեղ տիրոջի:
Նոր նըշան տըվավ: Եվ ահա երկչոտ ու անհամարձակ
Բարձրացավ ձայնը... ծերի դողդոջուն, չոր մատների
տակ
Գովված քընարի ոսկի լարերը հընչեցին հանկարծ.
Խորին լռության ժամին առաջին երգը որոտաց:
Եվ սթափվեցավ Հըռոմը նորից. մարդիկ շարժվեցին.
Եվ աշխատում են պարզորոշ լըսել զայրացած երգչին:
Իսկ ալևորը, անխիղճ անպատված հին քաղաքացին,
Տակավին հըպարտ, արհամարհանքով նայում է Հռոմին:
Նա երգում է անբավ փառքը, մեծությունը Կեսարի,
Բարձըր խելքն ու տերությունը, իշխանությունը բարի:
Երգում է փայլը նրա հաղթության և մաղթում է կյանք
Եվ ուղարկում է հըզոր Կեսարին հարգ ու մեծարանք:

Փառաբանում է նա ճոխությունը ու փառքը Հռոմի,
Եվ աղաչում է, որ բաժին անեն... խինդը միմոսի...
Թախանձում է նա, որ ողջ մտածեն, ինչպես որ ինքը,
Կեսարի շրթան վրա ճանաչեն իրենց օրենքը,
Որ հին օրերի ազատ երգերը ընդմիշտ լռեին,
Ու միշտ Կեսարի թըշնամու ջանքերն իզուր ցրվեին.
Հայրերի գոռոզ Հըռոմը գլուխ խոնարհի նըրան,
Հըռոմում մարդիկ մըտածեն այնպե՜ս... միմոսի նըման...
Հանկարծ վիրավոր պոետը ցընցեց գըլուխն ալեզարդ,
Հընչող լարերին կատաղի ձեռքով զարկեց հուսահատ,
Քընարը ձըգեց ու գոռաց ցասկոտ ձայնով ահարկու.
— Բարձրացի՛ր, Հըռո՛մ, իրավունքներդ կորցնում ես դու:

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

* * *

Ես չեմ ուզում մարդ իմանա
Իմ անցքերը խորհրդավոր —
Սերս ու վիշտս, որոնց վերա
Խիղճն և Աստված են դատավոր:

Նրանց կըտա սիրտս հաշիվ
Եվ նրանցից կըհայցե գութ,
Եվ թող ինձ նա միայն պատժի,
Ով ցավերիս տվեց սնունդ:

Նախատինքը անմիտների
Չի խռովիլ բարձըր հոգին,—
Որքան ծովը գոռա, փրփրի:
Ժայռը կանգնած է վերստին:

Նրա ճակատը, բարձրացած,
Ամպերումն է մշտամռայլ,
Եվ մրրկից, որոտից զատ
Միտքը ոչում չի հավատալ:

ՌՈՄԱՆՍ

Մի աշնանային մռայլ իրիկուն
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,
Յուր անբախտ սիրո ծնունդը թաքուն
Բռնած դողդոջուն, քնքուշ ձեռքերով:
Բոլորը լուռ էր. հոգնած աշխարհքը
Հանգստանում էր գիշերվա մթնում,
Այնինչ ուշադիր աղջիկն յուր աչքը
Երկչոտ հայացքով չորս կողմն էր ածում:

Եվ, հառաչելով անմխիթարանք,
Նա նայեց անմեղ այն արարածին.
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...
Եվ անտեղյակ ես իմ սրտի վշտին...
Աչքդ բաց կանես բարձրականչ լալով,
Սակայն իմ կրծքին էլ չես կպչիլ դու.
Վաղ-առավոտյան տարաբախտ քո մոր
Ջերմ համբույրներին չես հանդիպելու:—

Ճչալով իզուր կըկանչես նրան.
Ավա՜ղ, ամոթ ինձ,— ես եմ մեղավոր.
Դու կըմոռանաս մորըդ հավիտյան,
Բայց պիտի հիշեմ ես քեզ ամեն օր:
Ուրիշ ծնողներ կըխնամեն քեզ,
Եվ կասեն — դու օտար ես մեզ համար.
Իմ ծնողները ո՞ւր են, կըհարցնես,
Սակայն չես գտնիլ ոչ հայր և ոչ մայր:

Թշվա՛ռ երեխա, մտքով տխրագին
Կըտանջվես օտար մանուկների մեջ,
Կընայես նրանց մոր փաղաքշանքին
Մռայլուն հոգով մինչև կյանքիդ վերջ.
Ամեն ժամանակ բախտըդ կանիծես,
Ամեն տեղ ատված, օտար ու մենակ,
Եվ միշտ նախատինք ու ծաղր կըլսես...
Օ՜, ների՛ր, ներիր ինձ այն ժամանակ։

Դեռ քնած ես դու... Թող քեզ, խեղճ մանուկ,
Այս վերջին անգամ իմ կրծքին սեղմեմ,
Օրենքն անիրավ, խիստ և անողոք
Մի դատավճիռ ունի մեր ընդդեմ։
Մինչև քո անմեղ ուրախությունը
Տարիները չեն քշել տակավին,
Քնի՛ր, սիրելի, սև թախիծները
Խորթ են՝ մանկության խաղաղ օրերին»։

Լուսինն անտառի ետևից հանկարծ
Երևաց, մոտիկ մի խրճիթ տեսավ,
Դողալով, գունատ և սաստիկ լքած
Նրա դուռը ահա մոտեցավ,
Զգույշ կորացավ ու կամաց դրեց
Յուր երեխային օտարի շեմքում,
Իսկույն սարսափով երեսը դարձրեց
Եվ անհայտացավ գիշերվա մթնում։

1893

Պ. Բ. ՇԵԼԻ

«ԲԱՐԻ ԳԻՇԵՐ»

Բարի գիշե՛ր.— օ՛, ո՛չ, երբեք, իմ անգին,
Նա բարի չէ, երբ սերս հեռու կըվանի.
Թող անցկացնեմ նրան քեզ հետ ես անքուն,
Այն ժամանակ բարի գիշեր կըլինի:

Մի՞թե կլինի բարի գիշեր առանց քեզ,
Եվ կարո՞ղ եմ քո կարոտը ես տանել.
Ողջ մոռացած, դողալ, սիրել կուզեմ ես,
Նրան պիտի բարի գիշեր անվանել:

Լավ է գիշերն, որ գիշերով քնքուշ ենք,
Սիրող սրտից վիշտը փախչում է հեռի,
Բայց մենք նրան բոլորովին չըհիշենք —
Այն ժամանակ բարի գիշեր կըլինի:

1894

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ

ՄԱՅՐԸ

Լսելով կռվի արհավիրքների,
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,
Ես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,
Եվ ոչ էլ նույնիսկ իրան՝ հերոսին...
Կըմխիթարվի, ո՜հ, կինը մի օր,
Ընկերն ընկերին կանի մտահան.
Բայց մի հոգի կա մի տեղ սգավոր —
Նա հիշելու է մինչև գերեզման...
Այս մեր կեղծավոր, ստոր աշխարքում,
Այսքան գարշելի գործերի շարքում
Ես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն —
Թշվառ մայրերի արտասուքն է այն:
Նրանք չեն մոռանալ իրանց զավակին,
Որ խորտակվել է արյունոտ արտում,
Որպես սգավոր ուռենին կրկին
Չի բարձրացնելու ճյուղերը արտում:

Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

ՀՐԵՇՏԱԿ

Կեսգիշերային լուռ երկնքում
Թռչում էր հրեշտակն և խաղաղ երգում.
Եվ լուսինն, աստղերն, ամպեր խմբովին,
Ունկնդիր էին նրա սուրբ երգին:

Նա արդարների վայելքն էր երգում
Ծառերի տակին-դրախտի այգում.
Երգում էր նա մեծ Աստուծո վերա.
Եվ սրտալի էր գովեստը նրա:

Նա գրկում բռնած մի մատաղ հոգի
Բերում էր երկիրն վշտի, արցունքի,
Եվ մատաղ հոգում հնչյունքն երկնային
Թեև անբառբառ, կենդանի մնացին:

Եվ անպատմելի մի տենչանք հոգում,
Նա շատ տառապեց, տանջվեց աշխարհքում.
Եվ չըկարացին երգին երկնալուր
Փոխարինել երկրի երգերը տխուր:

Ս. ՆԱԴՍՈՆ

* * *

Մեռավ իմ մուսան... սակավ ժամանակ
Նա լուսավորեց օրերըս մենակ.
Ծաղկունքըս ընկան, հուրերըս հանգան,
Անթափա՛նց գիշեր, ինչպես գերեզման:
Ցավից, տանջանքից հոգնած սըրտիս մեջ
Իզուր եմ զըվարթ ձայներ ես փընտրում.
Ճըմլած է, ոտքած իմ պըսակը պերճ,
Կրովում եմ աներգ ու աներգ տըրտմում:
Բայց իմ սենյակում — կար մի ժամանակ —
Որքա՛ն հըրաշքներ էին կատարվում.
Ուզեի թե չէ՝ գըմբեթն երկընքի
Բացվում էր գըլխիս լույսերի ծովում,
Զըգվում էր հեռու լըճակն արծաթի,
Փայլում էր շըքեղ պալատ սյունազարդ,
Ու վեր բարձրանում ծոցում կապույտի
Սուր ժանիքներով լեռներ ձյունապատ...
Այժըմ մենակ եմ: Դատարկ ու մութը
Տըխուր անկյուններս աչքիս է նայում.
Բըքոտ գիշերը՝ իմ լուսամուտը,
Ինչպես սև թըռչուն, երկյուղով բախում:

Պերճ պալատներըս ցրնդեցին օդում,
Վեհապանծ լեռներն աճյուն կրարեցին,
Վիշտ ու վերքեր են սիրտս կեղեքում,
Ու թույլ արցունքներ աչքերիս միջին...
Մեռավ իմ մուսան... սակայն ժամանակ
Նա լուսավորեց օրերըս մենակ.
Ծաղկունքըս ընկան, հույսերըս հանգան,
Խավարչտին գիշեր, ինչպես գերեզման...

ԹԱՓԱՌԻ՛Ր

Երբ որ կինը քեզ կըթողնի,
Շուտով մյուսին դու սիրիր...
Բայց ավելի լավ կըլինի,
Մախաղն ուսիդ թափառիր:

Կըհանդիպես կապույտ լճի,
Վերան ծառեր են թեքվել...
Կարող ես քո հոգուդ միջի
Վիշտը այնտեղ դու թափել:

Կըբարձրանաս սեպ-սեպ լեռներ
Հառաչելով ծերի պես,
Բայց երբ հասնես գագաթն ի վեր,
Արծըվի ձայն կըլսես:

Դու էլ իսկույն, արծիվ կտրած,
Կըզգաս — հզոր ես դարձել,
Որ ազատ ես, և այնտեղ — ցած
Շատ քիչ բան ես կորցրել:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

Ելնում է ահա հըզոր Օլեգը
Խենթ խազարներից վըրեժ առնելու,
Նրանց համարձակ հարձակման համար
Գյուղերը սըրի-հըրի մատնելու:
Եվ իր համհարզով, հագած կուռ զրահ,
Գընում է նա սեգ նժույգի վըրա:

Մըթին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վըհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հըման,
Կյանքում հընազանդ միայն Պերունին,
Աղոթք ու հմայքով ողջ դար անցկացրած:
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գընաց:

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների,
Կյանքիս մեջ ինձ հետ ինչ է լինելու,
Եվ, ի խընդություն չար ոսոխների,
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու:
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշվես,
Վարձըդ՝ քու սիրած ձին կըտամ ես քեզ:

— Չեն վախում գետերն երկրի մեծերից,
Եվ պետք չի նըրանց պարգևն իշխանի,

Նրանց իմաստուն լեզուն՝ վերևից
Ազդված՝ խոսում է կամքը երկընքի.—
Անհայտ են գալոց տարիքն ու մըթին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու ճակատին:

Դե՛ միտքըդ պահիր իմ խոսքն այսօրից:
Փառքն է կյանքի մեջ խընդում հերոսին.
Հաղթության փառքով հըռչակված ես դու,
Վահանդ՝ Բյուզանդիո բարձր դարբասին:
Հընազանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է աստղդ բախտիդ նախանձով:

Ե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,
Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշույն,
Խընայում են միշտ կյանքը հաղթողի:
Վերք չես առնիլ դու քո կուռ զըրահում,
Հըզորին անտես ոգի է պահում:

Ոչ մի վըտանգից չի վախում քու ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է նա.
Մերթ կանգնում է հեզ՝ նետերի տակին,
Մերթ թըռչում ռազմի դաշտերի վըրա.
Ե՛վ ցուրտ, և՛ կըռիվ ոչինչ են դըրան,
Բայց... նա կըլինի պատճառ քու մահվան:

Օլեգը խնդաց. և սակայն մըթնեց,
Մըռայլեց հանկարծ չարագույժ մըտքից.
Լուռ ու մըռախոհ՝ թամբիցը բըռնեց,
Ներքև է իջնում սիրած նըժույգից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վըզին:

— Դե՛հ, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկավ մեր բաժանվելու.
Հանգիստ կաց հիմա, էլ ոտքս բընավ
Քու ասպանդակի մեջ չեմ դընելու:
Դե՛հ, գընա՛, բայց միշտ հիշիր Օլեգին:
Է՛յ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին:

— Ծածկեցե՛ք սըրան թավարծի գորգով,
Սանձիցը բըռնած մարգերը տարե՛ք,
Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,
Աղբյուրի վըճիտ ջըրով ջըրեցեք:
Եվ մանկլավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան:

Ցընծում է խմբով անմահ Օլեգը
Զըվարթ ձայներով լիք բաժակների.
Ճերմակ է նըրանց գըլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...
Հիշում են նըրանք օրերն անցկացրած,
Եվ կըռիվները միասին վարած:

— Բայց իմ ընկե՛րը, գոչեց Օլեգը.
Ո՞ւր է, ինձ ասեք, սիգապանծ իմ ձին.
Առո՞ղջ է արդյոք, այնպես սըրնթաց,
Այնպես կըրակոտ, աշխույժ տակավին...
Եվ լըսում է, որ սեպ բըլրի վըրա
Մահու սև քընով վաղ է քնել նա:

Խոնարհեց գըլուխն Օլեգը հըզոր,
Եվ միտք է անում.— Ի՞նչ եղավ հըման.
Սըտախոս կախա՛րդ, անխե՛լք ալևոր,
Թե չէի լսել ես քու սըտության,

Կարելի մինչ օրս իմ ձին ես հեծնել:
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել:

Գնում է Օլեգն ահա պալատից,
Նրա հետ Իգորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը թափված
Բլուրի վրա, Դընեպրի ափին:
Փոշին ծածկում է, անձրևն ողողում,
Ու սեզը վրեն քամին օրորում:

Ոտն զգույշ դըրավ իշխանը գանգին
Ու կանչեց.— քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերն ալևոր.
Թարմ շիրմիս վրա դու չես մահաբեր
Տապարի տակին սեզը ներկելու,
Քու տաք արյունով աճյունս հարգելու...

— Ահա՛ թե ուր էր օրհասըս պահված.
Այս չոր ոսկո՛րն էր ինձ մահ սպառնում:
Այնինչ՝ անկենդան գանգից հանկարծ
Ֆըշշալով սողաց մի օձ չարաթույն,
Սև թոկի նըման փաթաթվեց ոտքին,
Իշխանն օձահար գոռաց ցավագին:

Փըրփրուն թասերը շըրջան են առնում
Օլեգի մահվան տըխուր հարկինքին,
Իգորն ու Օլգան բըլուրի վրա,
Նըստած է խումբը Դընեպրի ափին —
Հիշում են քաջերն օրերն անցկացրած
Եվ կռիվները միասին վարած:

ՋՐԱՀԵՂՁԸ

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հորն ըշտապ.
— Ա՛պի, ա՛պի, ե՛կ, մեր թոռը
Մեռել հանեց գետի ափ:
— Սուտ եք ասում, շա՛ն լակոտներ,
Գոռաց հայրը ահարեկ.
Ըսպասեցեք դուք հապա դեռ,
Մեռելն հետո կտանենք:

— Դիվան կըգա — պատասխան տուր,
Ցավի միջում կըմընամ.—
Հընար չըկա, բե՛ր, ա՛յ կընիկ,
Շորերըս տուր, մի գընամ:
— Ո՞ւր է մեռելն: — Ա՛յ, ա՛պի, ա՛յ:
Ճիշտ որ գետի եզերքին,
Թաց թոռի մոտ, գետնի վըրա
Տարածված էր մի մարմին:

Զարհուրելի դիակն ուռել,
Կապտըտել էր այլանդակ:
Արդյոք տանջված մի թշվա՞ռ էր
Հանգիստ գըտած ջըրի տակ,
Մի գետակուր ձըկնո՞րս էր էն,
Թե՞ գինեմոլ մի չահել,

Թե՞ անզգույշ փախստական
Հարամու էր պատահել...

Ընչի՞ն է պետք... Աչք ածելով
Շտապում է գյուղացին,
Ոտից բռնած, ետ քարշ տալով
Ջուրն է տանում խեղդվածին:
Ու թիակով գետի եզրից
Ջուրը հրեց նա նրան,
Ու գիակը գնաց՝ նորից
Փնտրի խաչ ու գերեզման:

Մեռելն երկար ջրի միջին
Ցած էր իջնում ճոճվելով,
Աչքով ճամփեց մեր գյուղացին
Ու տուն դարձավ կանչելով.
— Դեսը կորեք, ա՛յ լակոտներ,
Եկե՛ք, բան տամ ձեզ — տանեմ,
Ամա թե որ ձեն եք հանել,
Հոգիներդ կըհանեմ:

Գիշերն ուժգին բուք վեր կացավ,
Գետն ելնում է, որոտում...
Մարխը արդեն էրվեց, հանգավ
Լուռ ու ծըխոտ խըրճիթում:
Ողջ քընած են: Անքուն պառկած
Միտք է անում գյուղացին...
Բուքն ոռնում է... մին էլ հանկարծ
Լուսամուտը բախեցին...

— Ո՞վ ես: — Ներս թող, ա՛յ տանտեր, նե՛րս...
— Ա՛յ, ներս ու քեզ չոռ ու ցավ.
Ինչ ես շրջում Կայենի պես,

Ո՞ր սատանեն քեզ բերավ:
Ինչ անեմ քեզ, սա՛ս, հիմի.
Տեղըս նեղ է, տունըս մութ:
Ու ծույլ ձեռքով, տրտընջալով՝
Բաց է անում լուսամուտ:

Ցոլում է լույսն ամպի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է հոսում նրա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ:
Կախ են ընկած բազուկները,
Ողջ կարկամած սոսկալի,
Ուռած մարմնին քառշանգները
Կըպած՝ սևին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հյուրին նա հանկարծ
Փեղկը խփեց ու դողալով՝
— Ա՛յ դու ճաքես, քրթմընջաց:
Ամբոխվեցին մըտքերը մութ.
Մինչև լույսը նա դողում,
Մինչև լույսը լուսամուտը
Բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զրույց ունի,
Թե այս դեպքից գյուղացին
Ըսպասում է ամեն տարի
Միշտ նույն օրը խեղդվածին:
Խավարվում է օրն առավոտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդվածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ:

Ա. ՄԻՑԿԵՎԻՉ

ԱՔԵՐՄԱՆԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Լողում եմ գարնան դալարի ծովում:
Մթնում է օրը... ոչ ձայն, ոչ շշուկ:
Ես լսում եմ օձն ինչպես է սողում,
Թիթեռը խոտում շարժվում կամացուկ...
Այնպե՛ս հանգիստ է, կարող էի ես
Լսել ըղձալի կանչը Լիտվայից...
Բայց... հառա՛ջ... այնտեղ հանգիստ է նույնպես...
Ձայն չէ տալիս ինձ ոչ ոք այնտեղից...

1900

Ա.ԿՈԼՑՈՎ

ԳԵՂՋՈՒԿԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Նըստել եմ շըվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում։
Ոչ ջահիլ կընիկ
Ունեմ իմ կողքին,
Ոչ թև ու թիկունք
Մըտերիմ ընկեր,
Ոչ մի տաք անկյուն,
Ոչ արծաթ ոսկի,
Ոչ սարքած գութան,
Ոչ նըժույգ մի ձի...
Պակաս օրի հետ
Միմիայն մի գանձ՝
Քարի նըման ուժ
Տըվավ ինձ հերըս.
Բայց, ա՛խ, հենց էն է։
Օտար գըռներում
Կերան, մաշեցին
Դարդ ու ցավերըս...
Նըստել եմ շըվար
Ու միտք եմ անում,
Թե ինչպես մենակ
Ապրեմ աշխարհում...

ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՄԱՅՐԻ՛Կ

Հիվանդ եմ, մայրի՛կ, նանիկ ասա՛ ինձ,
Որ ասում էիր երբեմն օրրանում,
Իմ մաշված կըրծքին խաչ քաշիր նորից
Ու նանիկ ասա, քունըս չի տանում:

Թող վայր ընկնեմ ես գըլուխս հոգնած.
Գիշեր է արդեն, ծաղիկը հանգչում,
Վաղուց է անտուն պանդուխտն էլ քընած
Մենակ քո հիվանդ զավակն է տանջվում:

Քո հեզ թըռչնակը վախցած է բույնից...
Ա՛խ, ես դեռ մանկուց շատ ցավեր տեսա,
Քունն էլ, հանգիստն էլ փախան իմ աչքից...
Մայրի՛կ ջան, մայրի՛կ, ինձ նանիկ ասա...

ԱՆՁՈՒԿ

Ա՛խ, վայրենի, սառն ու խավար
Էս անդունդի խորքերից
Թե գտնե՛ի մի ճանապարհ
Ու ապրե՛ի ես նորից...

Ահա հեռվում ճոխ բլուրներ
Մըշտադալար, ծաղկազարդ։
Ինչո՞ւ, ինչո՞ւ չունիմ թևեր,
Այնտեղ թռչեմ ես ազատ։

Քընարն այնտեղ ուրախ հընչում,
Խոսում է ձայնն երկընքի,
Զեփյուռները մեղմով շընչում,
Բույր են խընկում գարունքի։

Պերճ սաղարթում շողշողում են
Պտուղները ոսկեվառ,
Չըկան այնտեղ բուք ու ձըմեռ
Ու ծաղկունքը միշտ դալար։

Ա՛խ, ինչ լավ է՝ այն անխըռով
Ջինջ օրերի լուսի մեջ,
Այն անթառամ ծաղկանց բույրով
Հարբել անվե՛րջ ու անվե՛րջ...

1903

Ա. ՊՈՒՇԿԻՆ

* * *

Ատում եմ քեզ և քո գահը.
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

ԱՄՄԱՐ

* * *

Կուզեի հալվել, ձուլվել իմ երգին
Ու այս տողերում թաքնվել ծածուկ.
Որ երբ կարդայիր մի օր, իմ անգի՛ն,
Կարող լինեի անտես, կամացուկ,
Ամեն հընչյունի, ամեն խոսքի մեջ
Դիպչել շուրթերիդ, համբուրել անվերջ...

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Եկե՛ք, սիրուն իմ մանուկներ,
Վազե՛ք, եկեք շուտ ինձ մոտ,
Վիշտ ու կասկած դուրս վանեցեք
Իմ ծեր լանջից հիվանդոտ։

Ձեր սըրտերում՝ շող ու թըռչուն,
Ձեր մըտքերում՝ վըտակներ,
Ինձ տիրում է արդեն աշուն,
Շուտով կըգա և ձըմեռ։

Տաղ կանչեցեք, սիրունիկնե՛րս,
Էն տաղերը խընդագին,
Որ թըռչուններն երգում են ձեզ
Գարնան պայծառ օրերին։

Ոչինչ բան է խելքը մարդի,
Եվ դատարկ է, և չընչին
Ձեր մանկական անմեղ շուրթի
Ժըպիտների առաջին։

Ձեզանից լավ՝ երգ չի տեսել
Գարնան օրը ոսկեփայլ,
Դուք եք երգն էլ, խաղն էլ, լույսն էլ,
Ու առանց ձեզ՝ ողջ մըռայլ։

1904

ԷԺԵՆ ՊՈՏՅԵ

* * *

Ոչ ոք չի կարող — ոչ ցար, ոչ աստված,
Նույնիսկ հերոսը տալ ձեզ փրկություն.
Միայն սեփական ձեռքով կոշտացած
Մենք կնվաճենք սուրբ ազատություն:

Մ. ԳՈՐԿԻ

ՎԱԼԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Դունայի ափին ապրում էր Փերին։
Հաճախ գետի մեջ լողանում էր նա։
Մի օր էլ անփույթ, անզգույշ Փերին
Ընկավ ձկնորսի ուռկանը ահա։
Սաստիկ վախեցան ձկնորսները խեղճ...
Նրանց հետ էր բայց Մարկո պատանին,
Գեղեցիկ Փերուն սեղմեց գըրկի մեջ,
Ու համբուրում էր, գըգվում սիրունին։
Փերին, մի ճըկուն ոստիկի նըման,
Խայտում էր գըրկում, ոլորվում, խաղում,
Մըտիկ էր տալի տըղի աչքերին
Ու մըտքի միջին բարակ ծիծաղում...
Փայփայեց Փերին տըղին ամբողջ օր,
Բայց հենց գիշերը հասավ մըթագին,
Հանկարծ չըքացավ, կորավ նորից նոր,
Ու սաստիկ տըխրեց Մարկոյի հոգին։
Գիշեր ու ցերեկ գետի ափերին
Շըրջում է Մարկոն, հոգոց է հանում,
Փնտրում է, կանչում. «Ո՞ւր է իմ Փերին...»
Կըկչում են ալիք — «Մենք չենք իմանում»։
— Օ՜, սուտ ալիքներ, դուք խաբում եք ինձ,
Ինքներդ եք խաղում նրա հետ թաքուն.

Ճըչաց պատանին ու թռավ ափից,
Թըռավ՝ գետի մեջ գտնի իր Փերուն...
Դունայի ափին ապրում է Փերին
Ու, ինչպես առաջ, այժմ էլ լողանում,
Իսկ Մարկոն չըկա... Բայց նրա մասին...
Բայց նրա մասին գեթ երգ է մընում:

. . . .

Իսկ դուք ապրում եք աշխարհքի վրա
Ինչպես կույր, անսիրտ, չընչին սողուններ.
Ոչ ձեզնից հետո գըրույց կը մընա,
Եվ ոչ ձեր մասին երգ կասեն անմեռ:

1907

Ի. ՃԱՎՃԱՎԱՁԵ

ԷԼԵԳԻԱ

Լուսինն աղոտ լույս է փռում
Իմ աշխարհին մայրենի
Կուլ է գընում կապույտ հեռվում
Ճերմակ շարքը լեռների։

Ձեն չի գալիս ոչ մի կողմից,
Վըրաստանը մութն ու լուռ.
Վըրացին է հաղթված քընից,
Տընքում տանջված ու տխուր։

Մենակ եմ ես։ Քընած է նա,
Քընած շուրջըս ու հեռու...
Ա՜խ, Աստված իմ, քընա՜ծ, քընա՜ծ,
Երբ է արդյոք զարթնելու...

ԳԱՐՈՒՆ

Կանաչ է նորից.
Ծիծառը երգում,
Վազը հրճվանքից
Լալիս է այգում:

Հովիտ ու լերինք
Ծաղկել են պես պես,—
Իսկ դո՛ւ, հայրենի՛ք,
Երբ պիտի ծաղկես...

ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ. — Քեզ կըպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասավ. — Տե՛ս, կըծակեմ,
Որ չըմոռնաս փըշոտ վարդին.
Փըշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տըղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նըրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քընքուշ վարդին.
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ֆ. ՇԻԼԼԵՐ

ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաք բարով, դո՛ւք, արտանե՛ր սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:

Մենք ետ կըգանք ձեզ նորեկ գարունքին,
Երբ զարթնեն ուրախ երգերը կըրկին,
Երբ որ սարերը զուգվեն կանաչով,
Երբ որ ջըրերը վազեն կարկաչով:

Մնաք բարով, դո՛ւք, արտանե՛ր սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է զերթ գազան.
Մին՝ փայրենի սուլում պես-պես,
Աղմըկում է տանիքում,
Մին՝ ուշացած ճամփորդ, ասես,
Լուսամուտն է նա թակում:

Մեր խըրճիթը աղքատ ու հին,
Ե՛վ մըթին է, և՛ տըխուր.
— Ի՞նչ ես նըստել պատի տակին,
Իմ պառավըս, էդպես լուռ:
Հոգնե՞լ ես դու փոթորիկի
Ոռնոցներից խելագար,
Թե՞ նիրհում ես քո իլիկի
Բզզոցի տակ միալար:

Արի խըմենք, բարի ընկեր
Իմ սև, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր,
Սիրտներըս բաց կըլինի։
Երգի՛ր, ո՞նց էր սարում խաղաղ
Հավքը ծովի էն ափին,
Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ ափին։

Հողմը մեգով երկինքն առնում,
Գալարում է բուքը ձյուն,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ ոռնում է գերթ գազան։
— Արի խմենք, բարի ընկեր
Իմ սև՛, ջահել օրերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բեր,
Սիրտներըս բաց կըլինի։

ԿՈՐՍԱԿ

* * *

Ամբողջ գիշերը խոսեց անդադար
Սոխակն հասմիկի թփում բուրավետ,
Ու հենց արշալույս բացվեց ոսկեվառ,
Թռավ առաջին պայծառ շողի հետ:

Ողբում են հակված ճյուղերը թափուր
Անցած գնացած ժամերն աննըման,
Մով ծաղիկներից թափվում են լուռ-լուռ
Գոհար ցողերը — արցունքն անջատման:

* * *

Մի երգ կա մանկուց, մի երգ կա մանկուց
Դեռ իմ ականջում.
Ա՜խ, ինչքան հիմի, ա՜խ, ինչքան հիմի
Հեռու է հնչում:

Ճախրում էր ծիծառ, ճախրում էր ծիծառ՝
Գարունը բերում,
Աշխարհքը պայծառ, աշխարհքը պայծառ
Ծաղկում էր, բուրում:

Հայրենի դաշտե՜ր, հայրենի դաշտե՜ր,
Ա՜խ, ո՜նց եմ ուզում,
Ձեր գրկում մին էլ, ձեր գրկում մին էլ
Թռչեմ երազում:

Երբ որ հեռացա, երբ որ հեռացա՝
Լիքն էր ողջ ու շեն,
Երբ որ ետ դարձա, երբ որ ետ դարձա՝
Դատարկ էր արդեն:

Գալու է գարուն, գալու է գարուն —
Աշխարհ լցվելու,
Բայց իմ սիրտն, ավա՜ղ, բայց իմ սիրտն, ավա՜ղ,
Էլ չի բացվելու:

Եվ ոչ մի ծիծառ, և ոչ մի ծիծառ
Չի բերի իր հետ,
Ինչ որ կորցրի, անդարձ կորցրի
Անցած երգի հետ:

Հ. ՀԱՅՆԵ

* * *

Հեռո՛ւ, հեռու կթըռցընեմ
Քեզ իմ երգի թևերին,
Սքանչելի մի տեղ գիտեմ
Ես Գանգեսի ափերին:

Պարտեզն այնտեղ ծաղկում է ճոխ
Լուսնի խաղաղ լույսի տակ,
Իրենց քըրոջն ըսպասում են
Լոտոսները ըսպիտակ:

Մանուշակներն աստղերի դեմ
Աչք են անում ու խընդում,
Իրար հակված թոթովում են
Վարդերն անուշ հեքիաթում:

Վիթերն երկչոտ ցատքըտում են,
Խըրտնած պըշնում իրարու.
Գանգեսը լա՛յն, հանդիսավոր,
Հոսում հանդարտ ու հեռու:

Այնտեղ պիտի անհոգ պառկենք
Արմավենու ըստվերում,
Սեր վայելենք, ուզվե՛նք, ապրե՛նք
Երազների աշխարհում:

ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵ

ԼՅՈՒՍԻՆ

Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Նըրա դալուկն ես կըսիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի:
Նրա շուքը թեթև կըգա
Իմ հանգստյան հողի վրա:
Մի երեկո մենակ էինք: Նստած էի իր կողքին:
Նա, գլուխը թեքած դեպ ինձ ու անձնատուր ցընորքին,
Սահեցնում էր դաշնամուրին թաթը ճերմակ, ձյունի պես.
Թևի փափուկ հարված էր էն, հովի շըշուկ էր, ասես,
Որ վախում է՝ չըզարթեցնի անուշ քընած հավքերին,
Ու անցնում է եղեգնուտով թեթևասահ ու լըռին:
Մելամաղձոտ գիշերների տաք հեշտանքներ ու տենչեր
Ելնում էին ծաղիկների բաժակներից դեպի վեր.
Շագանակի պուրակները ու կաղնիներն ալևոր

Թախծում էին գլուխները տատանելով մեղմօրոր:
Լռում էինք մենք գիշերին: Պատուհանը կիսաբաց.
Ներս էր հոսում զով գիշերը գարնան բույրով արբեցած:
Դաշտն ամայի, դուրսը հանդարտ, հանդարտ էնքա՜ն ու էնքա՜ն:
Ու մենք մենակ, մենք մտածկոտ, մենք տասնուհինգ տարեկան...
Նայում էի ես Լյուսիին: Նա գունատ էր ու դալուկ:
Աչքերն երբեք ոչ մի անգամ էնքան անուշ, գեղաշուք
Չեն ցոլացրած ջինջ երկինքի լազուրն իրենց խորքերում:
Հարբած էի ես նրանով, նրան էի ես սիրում:
Եվ էնքա՜ն էր նա ամոթխած, էնքա՜ն մաքուր, էնքա՜ն հեզ
Որ թվում էր՝ եղբոր նման էի սիրում նրան ես:
Մենք լուռ էինք: Իմ ձեռքը նա պահած իրեն ձեռքերում.
Ու գեղանի իր ճակատը մըռայլում էր, ցընորում:
Ու ես էն ժամ զգում էի — ի՜նչ թովիչ է ու կարող
Թարմ ու չքնաղ ջահելության հրապույրը մեզ գերող:
Լուսինն ելավ ջինջ երկնքում. լուսնի դալուկ լույսի տակ
Ժըպտաց նա ինձ, ապա երգեց, որպես տխուր մի հրեշտակ:
Մենք մեն-մենա՜կ, մենք մտածկոտ, ես ակնապիշ Լյուսիին...
Նա երգում էր դողդոջելով՝ տրտում հենված իմ ուսին:
Խե՜ղճ երեխա, լալիս էիր: Քնքուշ, մատաղ քո հոգում

Գուցե անբախտ Գեթսեմանի կսկիծն էիր դու
զգում...
Համբուրեցի ես խոնարհած քո գլուխը հուսահատ...
Երբ մյուս անգամ համբուրեցի — դու սառն էիր ու
գունատ...
Սառն ու գունատ դրած էիր մահվան տխուր
դագաղում...
Էսպես անցա՛ր, քնքո՛ւշ ծաղիկ, անցա՛ր կորար սև
հողում:

Իմ սիրելիք, երբ կըմեռնեմ,
Շիրմիս տընկեք լացող ուռի,
Նըրա դալուկն ես կըսիրեմ,
Ու սաղարթը թախիծով լի.
Գերեզմանիս հողի վըրա
Թեթև կըգա շուքը նըրա:

ՊԱՐԻԶԻ ԵՐԳԸ

Մեր ինչի՞ն է պետք, թե արևն անման
Անդրբատեղյան լազուր աշխարհում
Անում է շրջանն իր հավերժական,
Թե ցած է հոսում ճոխ ալիքներով
Իր ակնախըտիղ շողերն անարատ:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Մեր ինչի՞ն է պետք — կինը նորատի
Ըստանում է թանկ իրեն ամուսնուց
Քընքուշ գրավը տարփալի սիրո.
Սեր ու զավակներ ո՛վ է տվել մեզ...
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Մեր ինչի՞ն է պետք, թե ամենազոր
Կա աստվածային սուրբ երրորդություն
Եվ արարչական, և միշտ պահպանող,
Եվ միշտ նորոգող համայն աշխարհի
Չի փայլում, ավա՛ղ, նրանց փառքը մեզ:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Մեր խնջին է պետք, թե հաշտ ու զոհի
Ծուխն ու ճենճերը երկինք է ելնում,
Թե՛ ծիլ ու ծաղիկ գետինն են ծածկում,
Թե՛ բար ու պտուղ ծառերն են զուգում,
Եվ կամ սրբազան ջուրը Գանգեսի
Թավալում է պարզ խաղաղ հովիտում:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Քե՛զ, անմահ Ինդրա, ո՛վ աչքի խընդում,*
Ամենքից պաշտված դու գանձ երկնային,
Չենք կարող, Աստվա՛ծ, մենք քեզ աղոթել
Որ մեր խորհրդով չանարգենք բնավ
Քո աստվածային լըսելիքը սուրբ:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Իզուր մերժեցի ես մահը դաժան
Եվ անտառների խորքերումը խուլ
Սրբազան հեղումն արի լիասիրտ,
Որ աստվածների սրտերը մեղմեմ,
Ո՛հ, նրանք փախան իմ մոտենալիս:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Ինդրան հնդկական դիցաբանության վեդայական շրջանի Արամազդն է (գլխավոր Աստվածը) - (հեղ.)

Ո՞ւր են ակները էն պարզ ջրերի,
Որ մեր ծարավը կոտրել կարենանք,
Լոկ անասունի ոտքի տեղերի
Հոտած ջուրն է մեր ըմպելին միակ:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Ո՞ւր են դաշտերը, ուր որ մեզ համար
Աճում են բրինձն ու այլ բարիքներ.
Չըկա աշխարհքում ցորնի մի ցողուն
Մի խոտ, մի ծաղիկ, որ մեզ պատկաներ:
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

Երբ հովիտներից սավերը ծնում
Վե՛ր, անտառների բարձունքն է ելնում,
Երբ հովիվն երգով թողնում է հանդը,
Աղջիկը տանը ընթրիք պատրաստում,
Երբ շանն են տալի թերմացքն խրիկվան —
Ի՛նչ ուտի արդյոք և ո՛ւր էն ժամին,
Ո՛ւր գնա պարիան, ո՛ւր հանգստանա...
Երկի՛նք ու երկիր, մե՛զ մըտիկ արեք,
Ի՛նչ ենք մենք...

ԱՄԱՌՎԱ ԳԻՇԵՐՈՎ

Գիշեր է խոր։
Մենակ բոլոր
Լուսնյակը չի դեռ քընած.
Հետը գընում, հետը ցած
Նա տեսնում է մութ ծըմակ,
Մութ ծըմակում, կոճղի տակ,
Չոր տերևը ժաժ տալի —
Սունկն աշխարհ՛ք է դուրս գալի։

ՎԻԼՍՈՆԻ «ԺԱՆՏԱԽՏԻ ՔԱՂԱՔԸ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Կար ժամանակ, որ ծաղկում էր
Մեր աշխարհքը անխռով,
Աստծո տաճարն որոտում էր,
Թնդում էր տոն օրերով:
Աղմըկալի մեր դպրոցում
Երգում մանկունք մեր մատաղ,
Շողում էին լիքը հանդում
Սուր գերանդին ու մանգաղ:

Այժմ թափուր եկեղեցին,
Դպրոցը փակ, խըլացած,
Արտը կըծղած հանդի միջին,
Թավ պուրակը դատարկված.
Ու գյուղն էրված մի տան նըման
Կանգնած ավեր, ամայի,
Ո՛ղջ պապանձված, լուռ չի միայն
Գամբարանը ահռելի:

Մեռե՛լ, մեռե՛լ ամեն վայրկյան,
Ու ապրողներն Աստըծուն
Աղոթում են միաբերան

Նրանց հոգուն փրկություն:
Մեռե՜լ, մեռե՜լ ամեն վայրկյան,
Ու շիրիմներն իրար քով
Սարսափահար հոտի նման
Սեղմըվում են խիտ շարքով:

Գարուն կյանքիս եթե նույնպես
Վիճակված է վաղ շիրիմ,
Ով դո՜ւ, ում որ սիրել եմ ես,
Հոգուս անզույգ մըտերիմ,
Չըմոռանաս իմ շրթունքին
Քո համբույրով կենսաձիր,
Չըմոռանաս իմ դիակին,
Հեռվից հեռու հսկիր...

Ապա ձըգիր դու մեր գյուղը,
Փախիր այլուր, հեռացիր,
Հոգուդ տանջանքն ու երկյուղը
Վանիր էնտեղ ու կացիր:
Ու երբ կանցնեն էս օրերը,
Այց եկ շիրմիս գեթ մի հեղ,
Իսկ ես ոչ քեզ, ոչ քո սերը
Չեմ մոռանա և էնտեղ...

1911

ԹՈՄԱՍ ՀՈՒԴ

ՓՈԹՈՐԻԿ

Ծովը խառնըված,
Շանթ, հողմ ու կարկուտ.
Երկինքը բըռնած
Մեգ, մըռայլ ու մութ:

Խըռոված տարերք
Իրար են եկել,
Երկինք ու եզերք
Փակել, մթագնել:

Ծովի ահագին
Խորքերն հիմն ի վեր,
Ավազն ալիքին
Խառնող դուք ուժեր,—

Ի՞նչ եք շըպըրտում
Ցայտերն ամպերին,
Ի՞նչ եք ըսպառնում
Ձըկնորսի նավին:

Կըռվում տըրորված,
Դալկացած հեգին

Մի տաք փրփըրած
Ջրի հորձանքին։
Կայծակի փայլով
Թողեք խեղճ մարդուն,
Թողեք ապահով
Հասնի իրեն տուն։

Էնտեղ ձեռները
Մեկնած երկնքին՝
Մրնում են փոքրերն
Իրենց հայրիկին։

Կինն էնտեղ լալով
Աղոթք է անում…
Ինչ եք աղքատի
Նավին սպառնում։

Օ՛, հասի՛ր շուտով,
Աստված բարեբար,
Հուզված է ծովը,
Երկինքը՝ խավար…

Ն. ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ

ՄՏՈՐՄՈՒՆՔ ՔԸՌԻ ԱՓԻՆ

Գընացի գետափ, որ ցըրեմ մաշող իմ մտքերն աննինջ,
Փընտրեցի իմ հին, իմ ծանոթ տեղը, որ հանգչեմ մի քիչ:
Ափին թիկնեցի, փուլ եկավ սիրտըս ու լաց եղա ես,
Իմ շուրջն էլ թախծոտ, իմ շուրջն էլ համակ տխուր էր ինձ պես:
Ծանըր հուզվում է ու քրթմընջում է Քուռ գետը անվերջ,
Դողում է, խաղում երկընքի լազուրն ալիքների մեջ:
Ու հեռվում մարող վառ վերջալուսի շողերի տակին,
Գետափին, մենակ, ականջ եմ դընում նըրա աղմուկին:
— Քո՛ւռ, մա՛յր, դարերի անբարբառ վկա, հոսում ես՝ հուզվում,
Ո՛վ գիտի թե ո՛ւմ ինչ ես շըշընջում, ինչե՛ր ես ասում...

1917

Ռ. ԲՅՈՐՆՍ

ԹԵ ԼԻՆԵԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ...

Թե լինեի անապատում մեռած հավետ,
Մեռած հավետ,
Բախտ կըլիներ ինձ անապատում, միայն թե քեզ հետ,
Միայն թե քեզ հետ...
Իսկ թե լինեի միահեծան տերն աշխարհքի,
Տերն աշխարհքի,
Դու կըլնեիր ամենաթանկ զարդն իմ թագի,
Զարդն իմ թագի:

Վ. ԳՅՈԹԵ

* * *

Լեռանց շարքերը
Նիրհում են մըթնում,
Խաղաղ մարգերը
Մըշուշ է պատում.
Ճամփեն հանդարտվել,
Չի շարժվում քամի,
Ուր որ է՝ դու էլ
Կըքընես հիմի:

ԱԼ. ԲԼՈԿ

ԾՈՎԻ ԵՐԳԸ

Ծովն ինձ նըշանի մատանի բերեց,
Ծովն իմ արևոտ երեսն համբուրեց:

Հարսնևորվեց խռովքը ծովի,
Անհարսնացու խորքը ծովի:

Կյանքն անհատ է նըրա հետ,
Մահը անհայտ՝ նըրա հետ,
Պաղ ու ազատ նա հավետ:

Ու ճեմում ենք բացերն անցած,—
Կապույտ ջրե՛ր, վարդ լուսաբաց...

Շընչի՛ր, աղի ու կատաղի դու քամի,
Հերքը խըռիվ, երգը ցըրիվ տուր, քամի՛,
Իրար խառնի՛ր, քըշի՛ր նավ ու ջուր, քամի՛:

ԽԱՔԱՆԻ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

1

Անցա՛ քարը սրտիս վրա՛ ջրի պես.
Մենակ տատասկ ու փուշ տարա՛ ջրի պես.
Իմ աշխարհքում հանգիստ չառա՛ ջրի պես,
Ու գնացի, ետ չդառա՛ ջրի պես:

2

Ծուխըդ կելնի պատուհանից երբևէ.
Հավքըդ կերթա իրեն բնից երբևէ.
Թեկուզ մի դար ապրես սրտով մրտերմիդ,
Չարի սրտով կելնես տանից երբևէ:

3

Ասում են՝ թե հազար տարին մի անգամ
Մի փրկիչ է աշխարհ գալիս,— մի պատգամ.
Մին, երբ եկավ, ծընված չէինք մենք մորից,
Մին էլ, երբ գա, մեռած կըլնենք ցավերից:

4

Ե՜կ, խաքանի, ու հեռացիր էս չարության զընդանից,
Շեն ու շենսիրտ, անցի՛ր, գնա ցավ ու հոգսի էս տանից.
Կյանք ես առել երկինքիցը, դա շըղթա է դառել քեզ,
Ետ տուր իրեն տըված կյանքը, թըռիր ազատ ամենից:

5

Նա որ գընաց՝ սիրտս էլ գընաց ու ետ չեկավ իր մոտից,
Աչքըս ճամփին ու ականջըս միշտ դըռանն է կարոտից.
Աչքս է դառնում մին ականջիս, թե լուր չունե՞ս էն օրից,
Մին ականջս է դիմում աչքիս, թե չե՞ս տեսել դու նորից...

6

Հոգուդ հավքը հանկարծ թըռավ՝ ի՞նչ ես դու.
Ճամփից կիսում ձիդ որ կորավ՝ ի՞նչ ես դու.
Եթե մարդ ես — կյանքը փոխ է տըված քեզ,
Փոխ տըվողը որ ետ տարավ՝ ի՞նչ ես դու:

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1907

ԻՐԻԿՈՒՆ

Արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը.
«Հերիք է, ասավ,
Գնամ պառկեմ ու քնեմ»:
Տերևը ուրախ սրվսրվում էր, որ կանգ առավ.
«Էս ինչ է, ասավ,
Արևն էլ չի երևում.
Ես էլ պառկեմ ու քնեմ»:
Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց.
«Էս ինչ է, ասավ,
Ո՛չ տերև է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»:
Նապաստակը ոստոստում էր թփերի տակ, որ ականջը սրեց.
«Էս ինչ է, ասավ,
Ո՛չ թռչնակ է ծլվլում,
Ո՛չ տերև է սրվսրվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»:
Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց.
«Էս ինչ է, ասավ,
Ո՛չ նապաստակ է վազ տալի,

Ո՛չ թռչնակ է ծըլվըլում,
Ո՛չ տերև է սըվսըվում,
Ո՛չ արևն է երևում.
Ես էլ գնամ ու քնեմ»։
Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.
«Ի՛նչ լավ է, ասավ,
Ո՛չ որսորդ է ման գալի,
Ո՛չ նապաստակ վազ տալի,
Ո՛չ թռչնակ է ծըլվըլում,
Ո՛չ տերև է սըվսըվում,
Ո՛չ արևն է երևում.
Մենակ ես եմ որ անքուն
Քեֆ եմ անում երկնքում»։

ԳՐԻՉ

Ի՞նչ կըլինի, տատ՛, գրիչ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին.
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
Սև ագռավի ճանկերի պես:
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
Ե՛կ, խնդրում եմ՝ ինձ համար էլ
Գրի էնպես արագ-արագ,
Էնպես ուղիղ, սիրուն, բարակ:
Գրիչը լուռ լըսում, լըսում,
Ծըռճըռում է ու խազմըզում,
Բայց այս անգամ արդեն կարծես,
Փոքրիկ ծտի ճանկերի պես:

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

— Վա՛յ, մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ինչքա՛ն սպիտակ
Թիթեռ է գալի…
Էսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:
— Չէ՛, իմ անուշիկ,
Թիթեռներ չեն էտ.
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ:
Էտ ձյունն է գալի,
Փաթիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի:

ԾԻՏԻԿԻ ՕՐՈՐՔԸ

Կախված է ճյուղքից ճոճը ծիտիկի.
Փըչի՛, հովիկ, փըչի՛,
Ճոճն օրորվի, տանի բերի
Նանի՛, ծիտիկ, նանի՛։

Ծիտիկը անուշ երազ է տեսնում.
Փըչի՛, հովիկ, փըչի՛,
Ճոճն օրորվի, տանի բերի.
Նանի՛, ծիտիկ, նանի՛։

Բայց տես, ծիտիկը քընից չըզարթնի.
Կամա՛ց փըչի, կամա՛ց,
Ճոճն էլ զգույշ տանի բերի,
Նանի՛, ծիտիկ, նանի՛։

ՇՈՒՆԸ

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես,
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ.
Ու տունն այսպես
Պահում եմ ես:
Թե գա մեզ մոտ
Մի հին ծանոթ,
Մոտն եմ վազում,
Պոչըս շարժում:
Բայց թե մի գող,
Չար կամեցող
Ուզի թաքուն
Մտնի մեր տուն,—
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:

1908

ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ

Փիսիկը նստել
Մի մութ անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:
Մոտիկ է գալիս
Մի ուրիշ կատու.
— Ինչո՞ւ ես լալիս,
Ա՜յ փիսիկ ջան, դու...
— Հապա ի՞նչ անեմ,
Որ լաց չլինեմ.—
Գանգատ է անում
Փիսոն ախպըրեմ:
Էն Համոն թաքուն
Մածունը կերավ,
Գնաց տատի մոտ
Ինձ վրա դրավ:
Հիմի տատիկի
Ետևից ընկած,
Ինձ են ման գալի
Մի-մի փետ առած
Էն քոթոթ Սուրենն,
Անոն ու Մոսոն:

Ո՞ւր է, ասում են,
Ո՞ւր է գող Փիսոն,
Ա՜խ, թե մի գըտա՜նք,
Մածուն ցույց կըտա՜նք.
Էսպես բան սարքեց
Էն Համոն իմ դեմ.
Ի՞նչ անեմ հապա,
Որ լաց չըլինեմ...
Ու Փիսոն նըստել
Մի մութ անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:

ՄԱՐՏ

Ա՜խ, է՜սպես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս:
Էսօր արևի օր կանի,
Վաղը անձրև ու քամի.
Առավոտը պայծառ օդ,
Կեսօրը մութ ու ամպոտ:
Մին հագնում է սպիտակ,
Մին կանաչին է տալիս.
Մի օր ցուրտ է, մի օր տաք,
Մին խնդում է, մին լալիս...
Ա՜խ, է՜սպես էլ գիժ ամիս:

ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները…
— Սո՛ւս. քնած են հողի տակ,
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ:

Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կըտանի:

«Ելե՛ք, կասի, իմ մանուկնե՛ր»,
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կըհանեն գլխիկները,
Աչիկները կըբանան:

* * *

Երեք խելոք մի հին տաշտով,
Ավելն առան մըտան մեծ ծով:
Թե տաշտակը շատ դիմանար,
Իմ հեքիաթն էլ կըլներ երկար:

ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ
Առատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը կապույտ:

Նրանից հետո աչքըս բաց արի
Մի փոքրիկ բընում,
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բընից գըլուխս հանած,
Նայում եմ դես-դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած,
Մեր բունը վըրեն:

Հիմի թըռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,
Ամեն տեղ գընում,
Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած —
Էլ չեմ հասկանում:

ԱՇՈՒՆ

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Թո՛ղ գընամ շրջեմ աշխարհից աշխարհ,

Ճամփորդեմ լավ-լավ տըներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ տանեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խըրճիթից,
Էս հին խըրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տըղան,
Մեծ ու հոյակապ շատ տըներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...
Ու հառաչելով ետ վերադարձավ
Էն գորշ խըրճիթը,
Էն հին խըրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Գըտա՞ր, զավա՛կըս», հարցըրեց մայրը,
Ուրախ, նայելով իր տըղի վըրա:
«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խըրճիթն է,
Էս հին խըրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

1909

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան
Ծածկըվել է մի թիզ ձյունով.
Էլ չի ճարվում ուտելու բան,
Ո՞վ է տեսել էս տեսակ սով.
Ոչ մի ցորեն, ոչ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,
Աստծու սիրուն, մի կըտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված։

Շուտով կըգան օրեր գարնան,
Մենք ձեզ համար կերգենք զըվարթ,
Ու փոխարեն ձեր լավության
Ձեր պարտեզը, այգին ու արտ
Կըմաքրենք մենք թըրթուրներից,
Ճիճուներից ու որդերից.
Միայն թե հիմի մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված։

Մի խումբ ծտերի կողմից՝
Ծիտիկ Ճնճղուկյան

ՏԵՐԵՎԱԹԱՓ

Ա՜յ փոքրիկներ, ա՜յ սիրուններ,—
Ասավ քամին տերևներին,—
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...
Եկե՛ք տանեմ հեշտ ու անթև,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այսուհետև
Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...

Տերևները հենց լսեցին,
Նախշուն, նախշուն գույներ հագան,
Սըվսըվալով տխուր երգեր
Քամու թևին թռան, փախան:

ԿՈՒՅՐԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

(Արևելքի առակներից)

Օրը ցերեկով
Երեք-չորս հոգով
Կույրերը եկան
Փըղին դեմ ընկան։
Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,
— Հե՛յ, զգո՛ւյշ, կանչեց, մի պատ կա էստեղ։
Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝
— Ի՞նչ պատ, ծիծաղեց, էս կոճղ է կարծեմ։
Երրորդի ձեռը կընճիթն էր ընկել.
— Օձ է, օ՛ձ, գոռաց, էլ ի՞նչ եք կանգնել։
Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած
Քաշ-քաշ խնդալով ծաղրում էր նրանց.
— Վա՛հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք։
Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ։
Չէ՛, պատ է,— չէ, կոճղ — չէ, օձ է,— չէ, թոկ...
Ու աղմըկելով ամեն մինը ջոկ,
Ինչպես որ եկել
Դեմ էին ընկել,
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կըրկին —
Սարի պես փիղը պարզ լուսի տակին։

ԷՍ ԷՆ Է

1.

Էս էն տունն է, որ շինել է վարպետ Օհանը:

2.

Էս էն ցորենն է, որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

3.

Էս էն մուկն է, որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

4.

Էս էն կատուն է, որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

5.

Էս էն շունն է, որ գզգել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

6.

Էս էն կովն է՝ կեռ պոզավոր,
որ հարու է տվել էն շանը,
որ գզգել է էն կատվին,

որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

7.

էս էն աղջիկն է, որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գըզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

8.

էս էն տղան է, որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

9.

էս էն տերտերն է, որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,

որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

10.

Էս էն աքլորն է, որ զարթեցրել է էն տերտերին,
որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

11.

Էս էլ էն վարպետ Օհանը,
որ մորթել է էն աքլորին,
որ զարթեցրել է էն տերտերին,
որ պսակել է էն տղին,
որ ուզել է էն աղջկանը,
որ կթել է էն կովը,
որ հարու է տվել էն շանը,
որ գզել է էն կատվին,
որ բռնել է էն մկանը,
որ կերել է էն ցորենը,
որ պահած է էն տանը,
որ շինել է վարպետ Օհանը:

ԲԶԵԶԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բըզեզն ամռան մի օր
Դըպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ...

— Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովրեք, սովրեք էնքան,
Մինչև դառնաք ինձ պես վարպետ:
Դե նըստեցեք հիմի հանդարտ,
Ինչ որ կասեմ՝ կըրկնեք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.
Գ. Գաղտիկուռ, Դ. Դըդում...
Է՛յ, դու մորե՛խ, դեսն ականջ դիր,
Ի՞նչ ես էդտեղ կըտըրտում:

Ե. Երիցուկ, Զ. Զանազան,
Է. Էշխըրտուկ, Ը. Ընկուզ...

Մի՛ աղմըկեք, հանաք հո չի.
Թիթե՛ռ, հանդի՛ստ, մոծակ, սո՛ւս:
Մի՛ խառնըվեք, չեմ սիրում ես
Էդպես աղմուկ, աղաղակ:
Թ. Թըրթընչուկ, Ժ. Ժախ ու բոխ,
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ:

Խ. Խընձորուկ, Ծ. Ծիրան,
Կ. Կըռոթուկ, Հ. Հաղարջ...
— Տե՛ս, վարժապետ, էս մըլակին,
Ինձ ասում է՝ սարի արջ:

— Ա՛յ տղա, է՛յ, չեն հայհոյիլ:
Տըզզան հիմար անասուն...
Ձ. Ձըմերուկ, Ղ. Ղանձլամեր,
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր:

Դու, է՛յ ծըղրիդ, ո՞նց ես նըստել.
Գըլուխդ — ետ, մեջքըդ — դուրս:
Յ. Յունապի, Ն. Նունուփար,
Շ. Շագանակ, Ո. Ողկույզ:

— Վա՛յ, էս ինչե՛ր կան դասերում.
Ողկույզը ես շատ եմ սիրում...
— Իսկ ես կաղամբ կուտե՛մ, կուտե՛մ...
— Իսկ ես՝ ծիրան... — իսկ ես՝ կոտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՛նչ կուտեք դուք
Քընաթաթախ՝ առտեհան:

Չ. Չինարի, Պ. Պատատուկ
Ջ. Ջըրկոտեմ, Ռ. Ռեհան։

Ս. Սերկևիլ, Վ. Վարդենի,
Տ. Տերեփուկ, Ց. Ցաքի...
Ո՛ւհ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գլուխ կըճաքի։

Փ. Փըրփըրրուկ. Ք. Քարասոխ,
Օ. Օֆ, պըրծանք վերջապես...
Դե գնացեք, վաղը կգաք
Անգիր արած ջըրի պես։—

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ,
Վարպետ Բըզեզն՝ ամառն էսպես
Դաս էր տալիս մի ծառի տակ։

II

1890-ական թվականներ

Ջ. ԲԱՅՐՈՆ

ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ

Մնաս բարյավ, և թե կուզես՝
Դե հավիտյան մնաս բարյավ.
Որքան լինիս դու անիրավ
Վեր չի կենալ սիրտս քո դեմ։
Օ՜, թե կուրծքս ես բանայի,
Ուր գլուխդ դրել ես դու՝
Այժմ արդեն անդառնալի
Կորած քնով՝ հանգել ես դու —

Նորա ներքև կարենայիր
Գաղտնի մտքերըս որոշել,
Այն ժամանակ կիմանայիր,
Որ շատ խիստ ես դու ինձ պատժել։

Աշխարհքն, այո՜, գովում է քեզ,
Ծափ է հարում քո արարքին,
Բայց այդ գովքը պարսավ է քեզ
[Բայց այդ] ծաղր է իմ տանջանքին։

Իմ մեղքն, [իրավ], ինձ խորտակեց,
Սակայն մի՛թե այլ զենք չըկար.
Եվ այն ձեռքը, որ ինձ զըգվեց,
Նա պետք է այս հարվածը տար:

Ոհ, մի՛ խաբվիր ունայն հուսով —
Կըթարշամի սերը կամաց,
Բայց դժվար է կամքի ուժով
Սիրտը սրտից պոկել հանկարծ:

Քո սիրտն [այնպես] զարկում է դեռ,
Իմն էլ թեև [միշտ] ցավատանջ,
Խոր կեղեքված ու կարեվեր —
Դողում է դեռ ինչպես առաջ...

Էս խոսքերը վիշտ են ամբողջ
Մեծ, քան վիշտը սգավորի,
Մենք երկուս էլ կենդան ու ողջ
Ու ապրում ենք — ինչպես այրի:

Արդյոք երբ դու ուզես հրճվել
Թոթովանքով մեր աղջըկա,
Կըսովորցնե՞ս «հայրիկ» կանչել,
Երբ նրա մոտ հայրիկ չըկա:

Կամ նա երբ որ քեզ համբուրի,
Փարի քնքուշ թաթիկներով —
Պիտի հիշե՞ս — ով էր գերի
Ու երջանիկ լոկ քո սիրով:

Գուցե հանկարծ հիշես մեկին
Քեզնից հեռո՛ւ, արհամարհված
Ու տրտոփե սիրտըդ կրկին.
Ինչպես երբեմն — ինձ նվիրված:
Իմ հանցանքն էլ գուցե հիշես —
Որոնք միայն քեզ են հայտնի,
Տանջանքներս էլ հիշիր նույնպես,
Եվ հույսերըս [անդառնալի]:

[Զգացմունքներս ողջ խորտակված
Գոռոզությունս, որ ընկճեցիր,
Նույնիսկ հոգիս քեզնից լքված
Թողնում է ինձ — անշունչ մի իր...]

Ողջ անցել է: Ջուր են խոսքերն,
Եվ իմ խոսքից զուրը — չըկա.
Բայց [վրդովված միտքն՝ ապստամբ]
Դուրս է հորդում նա ակամա:

Մնաս բարյավ: Այսպես կտրած
Իմ հարազատ կապերն ամեն,
Մերժված, մենակ, սիրտըս կոտրած,
Էլ ի՞նչ մահ է ինձ [հարկավոր]:

ՎԱՅՐԵՆԻ ՊԱՊՈՒԱՍՆԵՐԻ ԵՐԳԸ ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԻ ՎՐԱ։ ԻԴԱՐԱ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆ ԵՐԳՈՒՄ Է ԵՂԵԳՆԻ ՁԱՅՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Երգ սիպտակների վրա

Երբ մեծ նավերով սիպտակներն եկան,
Մենք ընդունեցինք մեր եղբարց նման։
Մեր հին ծառերը նրանք կտրեցին
Իրանց նավերը ափից կապեցին.
Բայց այդ ոչ մի բան չարժեր մեզ համար։
Նրանք, համայնքի պղնձումն ինչ կար,
Բոլոր հատիկը կերան < . . . . >
Դրանով էլ էինք մենք դեռ բավական։
Բայց մեր լավ հողերն սկսեցին խլել,
Որ պտղում էին առանց հերկելու.
Ծառա շինեցին տղամարդ ու կին,
Ինչ որ ունեինք՝ ողջը խլեցին։
Նրանք մեզ երկինք-երկիր խոստացան,
Ու բացի վշտից չտվին այլ բան։
Մեր նավակները ուր կանգնած էին։
Բոլոր ծոցերը նրանք բռնեցին՝
Գետերի ափին — ծառի հովանում,

Ուր մեր խրճիթներն էինք մենք [շինում],
Նրանք շինեցին իրանց գյուղերը,
Հափշտակեցին մեր հին տեղերը:
Արդ՝ ոտքում են մեր դաշտն ու մեզ քամահրում:
Մենք հնավանդի փայտով ենք փորում,
Ուրիշ բան չունենք նրանից ավել,
Եվ այդ էլ սակայն ուզում են խլել:
Եվ անշուշտ նրանք անբախտ են եղել,
Որ մեր համայնքի կողմերն են եկել
Հեռու աշխարհից —
Ծովի էն ափից.
Սպիտակ մարդի՛կ, ինչն է ձեզ քաշում,
Ի՞նչ քամի է ձեզ մեր կողմը քըշում,
Սև տենչանքներին զոհ ու կերակուր...
Բայց թե հերիք չեն այդ բոլորը ձեզ,
Ահա սրտերի սիրտը վշտակեզ...

. . . .

. . . .

. . . .

Եվ մի՞թե սրտի գեղեցիկ մի օր
Ծովերը անցնեն ցեղերը բոլոր...
Լո՛ւռ կաց, իմ սրինգ, յուր վըշտի վըրան
Արդեն բավական խոսեց Իդարան:

Վեճ

Սիզիֆն ու Պրոմ<եթեոսը> զրույց էին անում.

Սիզիֆ

Բախտավո՞ր է քո ցեղը:

Պրոմ.

Օ՜, ո՜չ. անբախտ է իմ ցեղը:

Սիզիֆ

Նա էլ է քարեր շպրտում դեպի բարձր:

Պրոմ.

Քարերից էլ վատ: Նա յուր մտքերն է ձգում դեպի բարձր, իսկ այն մտքերն գլորվում են ցած. նա բարձր է ձգում յուր կամքը, և կամքը գլորվում է ցած, նա բարձր է ձգում յուր հոգին, և հոգին գլորվում է ցած:

Սիզիֆ

Եվ չի՞ հոգնում:

Պրոմ.

Չի հոգնում:

Սիզիֆ

Ուրեմն նրանք մարդիկ չեն, նրանք հսկաներ են:

Արձագանք

Հսկանե՜ր...

Ֆ. ՇԻԼԼԵՐ

ԼՈՂՎՈՐ

Ո՞վ ձեզնից՝ ասպետ կամ թե զինակիր
Կընկնի այստեղից անտակ ծովի մեջ,
Ձգում եմ ահա գավաթն իմ ոսկի,
Այս գավաթն, ով որ անդունդի անվերջ
Խավարում գտնի ու անփորձ հանի,
Նրան հաղթության պարգև թող լինի։

Կանչեց թագավորն ու բարձր ժայռից,
Որ հակված է սև անդունդի վըրա,
Էն բարձր ժայռի <. . . . . .> ծայրից
Շըպըրտեց ներքև գավաթն իր ոսկյա.
— Ո՞վ է այն խիզախ, համարձակ հոգին,
Որ իմ գավաթը ետ բերի կըրկին։

Կանգնած են անշարժ զինակիր, ասպետ,
Լուռ են արքայի կոչին [խելագար],
Նայում են ահով ահռելի ծովին,
Չըկա խիզախող գավաթի համար,
Ու երրորդ անգամ կանչում է արքան —
Մի՞թե ոչ մինը սիրտ չունի այնքան։

Լուռ են ամենքը: Եվ հանկարծ մի քաջ
Համարձակ ահեղ գալիս է առաջ...
Քանդում է իրան թիկնոցն ու գոտին
Անմռունչ, հանդարտ դընում է գետին...
Տիկնայք, ասպետներ սարսափում են լուռ.
— Ա՜հ, ո՞վ ես, ջահել, ո՞ւր ես գնում, ո՞ւր...

Մոտենում է նա ժայռին սեպացած,
Ներքև սևեռում հայացքն անվեհեր:
Անդունդքի ծոցից հորձանքը պրծած
Խուլ որոտալով լեռնանում է վեր,
Կուտակում ալիք, ու փրփուրն եռում,
Ասես թե մըթնած երկինքն է գոռում:

Ոռնում է, շաչում, ծեծում, շառաչում
Հուրն ու ջուրն ասես մրցում են այնտեղ,
Սյունաձև շոգին երկինքն է թըռչում,
Ալիքն ալիքին ճնշում է անվերջ,
Ոչինչ չի հատնում, ոչինչ չի անցնում,
Ծովը իրենից նոր ծով է ծնում:

Ետ քաշվեց հանկարծ տարերքը հուզված.
Ճերմակ փրփուրը միջից պատռելով,
Մինչև դժոխքի հատակը [ասես]
Բաց արավ ծովը կոկորդը սև սև,
Եվ պըտըտվելով ջըրերը թընդում
Ու կուլ են գընում էն սև անդըընդում...

ՍԵՐԵՆԱԴ

Մեր շուրջն ահավոր մըռայլ է ու սև,
Երկընքից կախված կապարի ամպեր.
Լալիս են, հեծծում ծառերն անտերև...
Մի՛ զարթիր, հոգիս, մի՛ զարթիր, ընկեր.
Մի՛ բանար աչերդ ու մի՛ հալածիր
Պայծառ երազի տեսիլն ըղձալի.
Ավա՛ղ, երազներ,
Ուրախ երազներ
Մի գամ* են գալի:
Երանի նըրան, որ աշնան ցըրտում
Քընած՝ կերազե արևը գարնան.
Երանի նըրան, որ անձուկ բանտում
Քընած՝ կերազե օրն ազատության:
Վա՛յ զարթածներին [անհույս ու տրտում]
Տանջվում են անքուն մըթնում սոսկալի...
Ավա՛ղ, երազներ,
Ուրախ երազներ
Մի գամ են գալի:

*անգամ

ԿՈՒՄԻԿՆԵՐԻ ՈՂԲԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՎՐԱ

Գեղը գեղ չի, թե նման է մեր գեղին,
Ցեղը ցեղ չի, թե նման է մեր ցեղին.
Աստված էսպես երբ որ պատիժ ուզեց մեզ
Մեզնից հանեց առաջնորդներ սևերես,
Գնան բերեն օտարներին մեր աշխարհ,
Որ չափեին մեր հանդերը ծաղկավառ,
Մեր հողերի պլանները հանեին,
Մեր սարերում սիպտակ բերդեր շինեին:
Մեր սարերում սիպտակ բերդեր շինեցին,
Մեր հողերի պըլանները հանեցին,
Հիմի բացվեն կոկոնները ծառերի
Պիտի տեսնի նոր գարունը մեզ գերի:

ՀՆԴԿԱԿԱՆ ՎԵԴԱՆԵՐԻՑ

Գոյությունն ու անգոյությունն էն ժամանակ չըկային,
Ու չըկային էն ժամանակ ոչ երկինքը և ոչ օդ։
Ի՞նչ էր շրջում, ո՞ւր էր շրջում, և կամ ընչի՞ հովանու տակ,
Կամ կա՞ր արդյոք էս ջըրերի սև անդունդքը անհատակ։
Անմահություն չըկար այնժամ և ոչ մահ,
Եվ ոչ խտիր օրի մեջ ու գիշերվա.
Ինքը միայն էն էր շընչում առանց հողմ,
Եվ ուրիշ կյանք էն ժամանակ էլ չըկար։

Ի սկզբանե մութը ծածկված էր մութով,
Եվ աշխարհքը ողջ մի վիհ էր խավարչտին
Բայց, начало, որ ծածկված էր մութի տակ,
Ջերմի ուժից ծնունդ առավ նախ մենակ։

Ի սկզբանե սկիզբըն էր նա սիրու,
Ի սկզբանե սերմըն էր նա հոգու,
Ու փնտրելով բանականությունը, պոետները
Գոյության ու անգոյության կապը գտան սրտի մեջ։

Ու ամեն կողմ տարածվում է շողը նրանց մտքի.
Ու փայլում է վերև ներքև ճառագայթը բանական...

Նրանք եղան և ստեղծող, և մեծ եղան և հարուստ,
Նրանց կամքը երկրի վրա, նրանց ուժը ի վերուստ:
Ո՞վ գիտի էդ կամ ո՞վ կասի մեզ հիմի,
Թե որտեղից ելավ կազմը աշխարհքի
Ու որտեղից հայտնվեցին աստվածները իրեն հետ:
Բայց ո՞վ կասի, էս աշխարհքում, թե ինչպես է ծագել էդ:

Ո՞րտեղից է ծագել արդյոք կազմը էս երկրի,
Ստեղծա՞ծ է բնությունը թե չէ.
Իր պահապանը գիտի միայն երկնքում,
Կամ, թերևս, նա ինքն անգամ չըգիտի:

Լո՛ւյս, ո՛վ լույս, աշխարհքը
լցնող լույս, հայացքները փայփայող
լույս, սիրտ [քաղցր] услажд. *ուրախացնող լույս:*
Ա՛խ, իմ անուշիկս, լույսը [պատում] խաղում է
իմ կյանքի սրտում.
Ա՛խ, իմ անուշիկս, լույսը զարկում է
իմ սիրո լարերին.
Երկինքը բացվում է, հողմը [շառաչում],
Ծիծաղը ծավալվում երկրի երեսով:
Թիթեռները [բաց են անում] բարձրացնում են
իրենց առագաստները
լույսի ծովի մեջ: Շուշաններն ու
հասմիկները բացվում են լույսի ալիքներում:
Լույսը [ցրվում է] разсыпа. *ոսկու պես ամեն մի*
ամպի մեջ, իմ անուշիկս և <>
թափվում են առատորեն:
[Ուրախությունը] խնդությունը հոսում է տերևից
տերև, իմ անուշիկս, և [ցնծությունը]
հրճվանքը [չափ] սահման չունի:
Երկնային գետը դուրս է հորդել
իր ափերից, և ուրախությունը հեղեղել է ամեն ինչ:

* * *

Ծեր, անատամ փիլիսոփի բերնի պես
Բացվել է դուռն ու պատմում է մեզ կարծես —
Եկան-ելան, կգան-կելնեն, ու էսպես
Միշտ նույն կյանքը նոր հոսանքով — դուրս ու ներս:

* * *

Կար ժամանակ – մռայլ ու մութ անմատչելի
ամրոցներում,
Պատած պարիսպն աշտարակներով, դարան մտած,
Որոնք պատած գերիների ու ստրուկների գանգերով
Ու պատերը ծածկված նրանց մարմիններով, մահվան
ահով ու սարսափով։

1916

ԼԻ-ԹԱՅ-ՊՈ

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

Տըխուր նըստած լուսամուտի առաջին
Կարում էի մետաքս բարձին խոնարհած։
Ծակեց ասեղն — արյուն ծորեց իմ մատից,
Սիպտակ, սիպտակ վարդի վրա ասղարուր։
Խոշոր, խոշոր սիպտակ վարդը կարմըրեց։

Քեզ վրա էր միտքս դառնում հենց անվերջ...
Դու հեռու ես, հեռո՛ւ, հեռո՛ւ կըռվի մեջ...
Այժմ էնտեղ քո արյունն է՞լ չի ծորում...
Ու լճացան արցունքները իմ կարոտած
աչքերում...

[Երկար, երկար լալիս էի ու կարում։]
Տըրոփ, տըրոփ...
Ձիու ոտքի տըրոփյուն չէ՞ր արդյոք էս...
Թըռա տեղից... նա է... եկավ վերջապես...
Բայց, ա՛խ, էն լոկ խեղճ իմ սիրտն էր տըրոփում։
Նորից նստած լուսամուտի առաջին,
Թափվում էին արցունքներըս [էն բարձին]
Ու ջինջ, որպես մարգարիտներ ցոլցըլուն
Կարմիր կարմիր վարդի շուրջը ցոլցըլում։

ՄԵՐԺՎԱԾԸ

Տանձենու ծաղկից պսակ հյուսեցի,
Պատուհանի մեջ դըրի դիցուհուս:
Ապրիլ ամիսն էր:
Լուսին գիշեր էր:

Ու հոգնած ձեռով, քնարիս վրա
Կարոտն երգեցի, կարոտն ինձ տանջող:
Էդ էլ էն գիշեր,
Նրանց տան առջև:

Մյուս օրը — սիրունի կրծքին
Մեխակ տեսա ես
Կարմիր մեխակ՝
Հարևան ծաղկոցից:

Մտա սենյակըս, դուռը փակեցի,
Ու երկար լացի.
Ինչու՞, ա՜խ, ինչու՞ նա ինձ վշտացրեց:

Էն օրից նզովեցի մեխակները ողջ:
Անքուն տանջվում եմ գիշերներն ամբողջ
Կտոր-կտոր ջարդեցի իմ քնարը...

ԿՈՆՖՈՒՑԻՈՒՍ

ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ամրան տոթն անցավ — աշնան հովն եկավ:
Զմրան ձյունից հետ — ծաղկոցը գարնան
Արևն ելնում է վառ
Ու դեմքը շիկնած՝ ընթացքի մեջ:
Վըտակները ողջ ծովն են դառնում ետ,
դարը նորոգվում
ամեն առավոտ,
աշխարհքին երևում նորափայլ արև,
հուներով հոսում անվերջ նոր ջրեր...
մարդն է մենակ — ապրում մի անգամ
Ետ չի դառնում երբե՛ք, երբե՛ք:
Նրա կյանքը —
Օդի հունչ է...
Կյանքի վերջը (հանգը)
Փխրուն բլուր դամբանին,
Միջից [բուսնում է] пробивается *կռոթուկ:*

* * *

(Թուրքերենից)

Մի հավք թըռավ էն ձորից,
խաբար տըվավ աստվորից.
— Մահը թե կար աշխարհքում՝
Ինչո՞ւ ծընա ես մորից:

* * *

Ի՞նչ կա երկընքից բարձըր ու ազատ.—
Կանգնում եմ տակին՝ ճընշում է հոգիս։
Ի՞նչ կա գետընքից ամուր ու հաստատ,
Ոտըս դընում եմ՝ դողում է տակիս։

ՔՅԱՐԱՄԻ ՀՐԱԺԵՇՏԸ

(Թուրքերենից)

Գընում եմ ես՝ մոտիկներիս վիշտ ու ցավ.
[Աիքը մընա վարն ու բարը] աշխարհի.
Էսօրվանից իմ հաշիվը վերջացավ,
Թող ծարուրվի . . . .

Չեն դադարիլ ճամփաները մեր անցած,
. . . .
Չեն պակասիլ ազգ ու ցեղերն
Լալ ու դոհար դառնա քարը աշխարհի:

Եղ ու մեղրը հոսեն դաշտ ու հանդերով,
Խոր ձորերը կըտրեն անուշ կաթնի ծով,
Բար ու պըտուղ՝ ծըմակներով, սարերով,—
Գարուն բացվի ձըմռան սառը աշխարհի:

Քյարամն ասավ՝ սուտ է աշխարհքն անցավոր,
Քանի մարդու արավ էսպես խելացնոր,
Ո՞վ իմանա՝ ինչ օրից կա մինչ էսօր,
Չի իմացվում թիվն ու դարը աշխարհի:

* * *

(Сонеты)

1.

Հպարտ հայացքդ ոչ ոք չի գրավում –
- և այնտեղ սով ես տարածում, ուր լիություն էր լինելու:

3.

Բնությունը չի ընծայում, այլ փոխ է տալիս:

6.

Քո զավակներով դու երկնում ես քեզ:

12.

Երբ որ տեսնում եմ, թե ոնց է մանիշակը հող դառնում և մազերում ալեույթն երևում,
հիշում եմ քո գեղեցկությունը, որ թառամելու է և մեռնելու:

14.

Իսկ իմ գիտությունը ես աստղերից չեմ առել (վեր բերել) – այլ փորձից:

Իմ տողերը տխուր են ու մռայլ – ինչպես առաջին կնճիռները
գեղեցկուհու ճակատին:

25.

Նրանց փառքերը թաղված են իրանց մեջ, ինչպես գերեզմանում:

27.

Եվ մտքերս այստեղից
ինձ ուխտավոր են շինում —
քեզ մոտ են բերում:
և ինչպես հանգստանամ
երբ օրը գիշերին է նեղում
գիշերը օրին տանջում:

28.

Իմ օրհներգությունը երկրին
սկսում եմ արշալույսին
երկնքի դռների առաջ:

30.,
32.

Օ՜ անջատում — դու մեզ սովորեցնում ես մոռանալ:

50.

Նա ձեզ էլ ասաց, որ բախտն ետև է մնացել —
վիշտն է սավառնում-

54.

Ո՜վ գեղեցկություն,
ավելի գեղեցիկ է լինում, երբ խոսքի հուրը
հայտնվում է
искренность — անկեղծություն նրա մեջ:

Գեղեցիկ է վարդի տեսքը — բայց
ավելի մեզ քաշում է բույրը,
որ կա նրա մեջ:

55. 57.

66.

Իսկ այն սերը — որը յուր սիրո գինը բարձրացնում է,
նրան դարձնում է ապրանք (վաճառելի)...

առագաստ տվի նրանց -
հովերին-
սրտիս վրա գրած են նրանց արարքները-

CXXI

Ես կանգնում եմ <1 անընթ.> ապագայում
նրա համար չեմ երևում նրանց աչքերին — որոնք
նայում են միայն այս օրերին:

[բանաստեղծները] ես որ ծնվեցի — խմեցի
տանջանքի աղբյուրից

Սիրտս պատռվում է, երբ մտածում եմ, թե ես էլ, որ
դրախտն ընկնեմ — պետք է այնուհետև այնտեղ մնամ
հավիտյան, առանց փոփոխության մի տեղ, միևնույն
դեմքերը, նույն ձայները, նույն լույսերն ու բույսերը:

... միշտ ճշմարիտ ստեղծագործող և կազմակերպող- ծնող խելքերը դուրս են գալիս այն շրջաններից, որոնք չեն գնում մեծ ճանապարհի ծեծված շավիղով — արահետով: Այդպիսիների համար ընդունված դրական ոչինչ չկա- նրանք ամեն բանի վերաբերում են հարցով ու կասկածով:
Այդպիսի բնությունները անլուր հանդգնությամբ իրանց անձը դնում են ամբողջ մարդկության հակառակ, և ոչինչ չեն ճանաչում, ընդունում — ինչ որ էդ ույժն ու իրավունքը ցույց չի տալիս, այդ անձանց առաջ:

սիրում եմ այն ամենը, ինչ որ չի արատավորված մարդկային ոչնչությամբ:

Շելլի -244 Брандесъ

Հնացած հաստատություններ և օրենքներ միացած մարդկային չարության հետ — ահա [կյանքի տանջանքը] — բոլոր տառապանքների աղբյուրը:

Եթե նա [դու] երես ունենա[յի]ր, ես նրան կապտակեի:

Էնպես մարդիկ և դեմքեր կան (մեծ մասամբ վաղածանոթ) որ երբ որ տեսնում են — բոլորովին հիմարանում են:

Մինչև կմեռնի անվերջ սիրելով
Կրքից դալկացած:

Ավելի քնքույշ, քան շուշանի բույրը:

Օդը սիրահարված նրան <1 անրնթ.> - ետևից
վազում <1 անրնթ.> ալիքների հետ:

Ծաղիկների թերթիկներն ինչպես արտասուքներ
Թափվում էին...

Այդ երևույթը ոչ թե ավետաբերի նոր բախտ է, այլ
վերջին նշան անցած անբախտության,
Ոչ թե արշալույս նոր օրվան,
Այլ վերջալույս անցած օրվան:

Որովհետև հանցանքն էլ իր տեղով թուլություն է —
ապա թուլությունն ամենամեծ հանցանքն է:

Նրանց լրբությունն ավելի մեծ եղավ,
քան իմ համբերությունը:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

I

1916

«ՀԻՄԻ ԲԱՑԵԼ ԵՆ ՀԱՆԴԵՍ»
(էջ 11)

4 տող. Ա, Բ, Քռ	Ո՞վ է արդյոք լքում ձեզ:
Ժձ (Թ)	Ո՛վ է լքում արդյոք ձեզ...

«ԵՏ ՉԵԿԱ՛Վ...»
(էջ 12)

3 տող. Ա	[Ո՛ր աշխարհքում, ինչ կապով]
տող. Բ, Գձ	Անդարձ կապով սև հողում
տող. Գ	Անդարձ կապով սև հողին
տող. Գ	Լավ աշխարհքում լույս կապով
տող. Ե	Անկուշտ հողին, սև հողին
4 տող. Ա, Բ	[Կապվեց մնաց, ետ չեկավ]:
տող. Գ	Կապված մնաց, ետ չեկավ:
տող. Ե	Գերվեց մնաց, ետ չեկավ
Գձ	Կապվեց մնաց, ետ չեկավ:

«Ո՞ՒՐ ԿՈՐԱ՛Ն...»
(էջ 13)

2-րդ տողից հետո՝ տող. Ա	[Անլուր կորան, զուր կորան,]
	[Անկուշտ մահին ու հողին]
տող. Գ	Անհետ կորան, զուր կորան
տող. Գ	Անլուր կորան, զուր կորան
3 տող. Գ ա	Վերջին անգամ ետևներից կանչեցի
բ	[Ետևներից կանչեցի] լացիս, կոծիս
4 տող. Գ	Անցան, կորան, զուր կորան:

1917

«ՔԱՆԻ՜ ՄԱՀ ԿԱ ԻՄ ՍՐՏՈՒՄ»
(էջ 16)

1 ինք. Ա, արտագր.	[Ինչքան] մահ կա իմ սրտում
3 ինք. Ա	Չէ՞ դու էլ ես [անցավոր]
4	[Անքուն] մահի ահ կա իմ սրտում:
4 արտագր.	Անքուն ահ կա իմ սրտում:

«ՀԻՆ ԱՇԽԱՐՀՔԸ ԱՄԵՆ ՕՐ»
(էջ 19)

2 ինք. Ա	Նոր է կարծում ամեն նոր
ինք. Գ ա	[Ադամներ են գալիս նոր]
բ	[Բյուր] է մտնում նոր
4	Կըրկընվում է նորից նոր:
ինք. Դ ա	Ըսկրավում է նորից նոր:
բ	Կրկնվում է ամեն օր
ժձ (Թ)	Կըրկընվում է ամեն օր:

«ՋՈՒՐ ԵՄ ՓԱԽՉՈՒՄ, ԻՆՁ ԽԱԲՈՒՄ»
(էջ 20)

4 ինք. Ա, արտագր.	Ամենքի հետ տառապում

«Ո՞Վ ԻՄԱՆԱ՝ ՈՒՐ ԸՆԿԱՆՔ»
(էջ 21)

1-4 ինք. Ա	[Ո՞վ իմանա՝ ուր եկանք Քանի օրվա հյուր եկանք Սերն ու սիրտն էլ երբ չըկան՝ Ցավի եկանք՝ զուր եկանք]:
4 ինք. Բ, Գ ա	[Կըրակ ընկանք], հուր ընկանք:

ր	անմար հուր ընկանք:
գ	Անշեջ, անվերջ հուր ընկանք:
գ	Անմար, վառման հուր ընկանք:
ժձ (Թ)	Կըրակ ընկանք, հուր ընկանք:

«Ի՜ՆՉՔԱՆ ՑԱՎ ԵՄ ՏԵՍԵԼ ԵՍ»
(էջ 23)

1-2 ինք. Ա	Ինչքա՜ն ցավ եմ ես տեսել,
	Նենգ ու դավ եմ ես տեսել:
4	Վատը լավ եմ ես տեսել:

«ԵՐԱԶՈՒՄԸՍ ՄԻ ՄԱՔԻ»
(էջ 24)

4 ինք. Ա	Ո՜նց էր միտը իմ ձագի:

«ՀՈԳԻ՛Ս ՏԱՆԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ»
(էջ 26)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա	Հոգիս [էստեղ] հաստատվել
ր	Հոգիս՝ տանը հաստատվել
4 ա	Ոչ ոք դեռ չի նկատել:
ր	Ո՞վ է արդյոք նկատել:

1918

«ԼԻՆԵ՜Ր ՀԵՌՈՒ ՄԻ ԱՆԿՅՈՒՆ»
(էջ 30)

1-4 ժձ (Թ)	Լինե՜ր գալար մի անկյուն,
	Ու մանկական արդար քուն,
	Երազի մեջ լուսավոր,

	Ու երջանիկ մարդկություն:
3 ինք. Ա, Բ	Երազի մեջ [լուսավոր],

«ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ ԻՐԱՐ ԿԻՑ»
(էջ 32)

Սևագիրը՝ Ահա երկու գերեզման լուռ, տխուր մամուռներ հին – թշվառները իրար սիրտ մաշեցին, կյանքում քաղցրություն չտեսան – իրար կյանք մաշեցին և ահա այժմ – երկու գերեզման լուռ ու տխուր:

«Ո՞Վ Է ՁԵՌՔՈՎ ԱՆՈՒՄ, Ո՞Վ»
(էջ 33)

3 ինք. Ա	Հե՜յ, հայրենի անտառներ,

«ԱՇՆԱՆ ԱՄՊԻՆ ՈՒ ՁԱՄՊԻՆ»
(էջ 34)

3 ինք. Ա	Ցրցունազարդ մի արտում
Մբ	Էնտեղ, Լոռի, մի արտում
4 ինք. Ա, Մբ, Քռ	Նայում է դեռ իմ ճամփին

«ԿԸԼԹԱՅՆՈՒՄ ԵՆ, ԱՐՏՈՐՈՒՄ»
(էջ 35)

3 ինք. Ա ա	Իմ մանկական հոգու հետ
բ	Ճախրում մանուկ հոգուս հետ
ինք. Գ	Իմ մանկական հոգու հետ
4 ինք. Ա ա	Խաղում, ճըխում եթերում:
բ	Անփույթ, կապույտ եթերում
գ	Խաղում, խնդում եթերում:
ինք. Գ, Մբ	Ծըխում, ճախրում եթերում:

«ԲԵՐԱՆՆ ԱՐՆՈՏ ՄԱՐԴԱԿԵՐԸ ԷՆ ԱՆԲԱՆ»
(էջ 36)

1 խմբ. Ա ա	Բերանն արնոտ Մարդակերը [բութ, անբան]
բ	Բերանն արնոտ Մարդակերը [խոլական]
խմբ. Բ	Բերանն արնոտ Մարդակերը [խոլական]
3 խմբ. Ա ա	Ձեռքերն արնոտ դընում է նա մեծամիտ,
բ	Ձեռքերն արնոտ դընում է նա մեծամիտ, [անընդհատ] դանդաղ

1919

«ՄԵՌԱ՜Ն, ՄԵՌԱ՜Ն... ԵՎ, ԱՀԱ»
(էջ 37)

1 խմբ. Ա	Մեռա՜ն, [անցան]... ու ահա

«ԱՐԵՎԵԼՔԻ ԵԴԵՄՆԵՐԻՆ ԻՋԱՎ ՊԱՅԾԱՌ ԻՐԻԿՈՒՆ»
(էջ 38)

4 խմբ. Ա	Ա՜խ, թե նորից գըտնեմ ճամփեն, դեպի Հնաեղ, դեպի տո՜ւն...
խմբ. Բ ա	[Սըլանում է կարոտ հոգիս], Հնաե՜ղ, հեռու, դեպի տուն...
բ	[Ոնց է անցնում, ա՜խ]. եթե նորից գտնեմ ճամփեն Հնաեղ, հեռու դեպի տուն...
գ	Ա՜խ, թե նորից գըտնեմ ճամփան [էն աշխարհքը գըվարթ], դեպի Հնաե՜ղ, դեպի տո՜ւն...
դ	Դեպի Հնաեղ, էն բարձրերը, իմ բարձրերը գըվարթուն,

«ԴՈՒ ՄԻ ԱՆՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՍ, ՉԸՏԵՍՆԸՎԱԾ ՄԻՆՉ ԼՍՕՐ»
(էջ 39)

1 խնք. Ա — Դու մի անհայտ մեծ պոետ ես
2 ա — Մի հայացքով [ի՛նչ] երգեր ես թափում շուրջըդ լուսավոր:
բ — [Երգեր ես թափում շուրջըդ քո նայվածքով լուսավոր] հայացքներով լուսավոր
3 — Ես էլ պակաս զարմանալի ընթերցող չեմ, գիտենա՛ս,
խնք. Բ — [Բայց թե] [իսկ ես] ես էլ զարմանալի ընթերցող եմ բախտավոր:
4 խնք. Ա — Ոնց եմ կարդում էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

«ՀԵ՛Յ ԱԳԱՀ ՄԱՐԴ, ՀԵ՛Յ ԱՆԳՈՀ ՄԱՐԴ, ՄԻՏՔԸԴ ԵՐԿԱՐ, ԿՅԱՆՔԸԴ ԿԱՐՃ»
(էջ 40)

4 խնք. Ա ա — Խաղաղ անցիր, [ուրախ] անցիր կարճ ու անհայտ [էս] էդ ճամփեդ
բ — Խաղաղ անցիր, ուրախ անցիր կարճ ու անհետ էդ ճամփեդ:
խնք. Բ — Խաղաղ անցիր, ուրախ անցիր կարճ ու անհետ էդ ճամփեդ:

«ԱԶԱՏ ՕՐԸ, ԱԶԱՏ ՍԵՐԸ, ԱՄԵՆ ԲԱՐԻՔ ԻՐ ՁԵՌՔԻՆ»
(էջ 41)

4 խնք. Ա — Երբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը [սրտալի]:

«ՔՈՒՆ ԹԵ ԱՐԹՈՒՆ՝ ՕՐԻՍ ՇԱՏԸ ԵՐԱԶ ԵՂԱՎ, ԱՆՑԿԱՑԱՎ»
(էջ 42)

1 տնր. Ա ա — Քուն թե արթուն՝ օրիս շատը [երազի մեջ] անցկացավ,
բ — Քուն թե արթուն՝ օրիս շատը [երազներով] անցկացավ,
3 ա — [Թե բախտ երջանկություն ինչպես երազի մեջ եղավ]
բ — Երազն էլ նուրբ, [նուրբ] խուսափուկ, վըրազ եղավ, անցկացավ.
4 տնր. Բ — Կյանքըս թեթև [կոպիտ], անմիտ [անխելք], [անգետ], [անդարձ], [անհետ], [անփույթ] գըռազ եղավ, անցկացավ:

«ՈՐ ԱՇԽԱՐՀՔՈՒՄ ՈՒՆԵՄ ՇԱՏ ԲԱՆ. ՄԻՏՔ ԵՄ ԱՆՈՒՄ ԷՍ, ԹԵ ԷՆ»
(էջ 43)

3 տնր. Ա — Աստված ինքն էլ [մոլորվել է], չի հասկանում ինչ անի.

1920

«ԽԱՅԱՄՆ ԱՍԱՎ ԻՐ ՍԻՐՈՒՀՈՒՆ. — ՈՏԸԴ ԸԶԳՈՒՅՇ ԴԻՐ ՀՈՂԻՆ»
(էջ 46)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա — Խայամն ասավ իր սիրուհուն.– Ոտըդ ըզգույշ դիր [գետին]
բ — Խայամն ասավ իր սիրուհուն.– Ոտըդ ըզգույշ դիր հողին,
2 ա — Ով իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում
բ — Ո՜վ իմանա՝ որ սիրունի բիբն ես կոխում դու հիմի...:

4 ա — Էն սիրուհու բի՜բն ենք կոխում, թե [հենց] լեզուն խայամի:

բ — Էն սիրուհու բի՜բն ենք կոխում, թե հուր լեզուն խայամի:

«ԵՐՆԵԿ ԼՍՊԵՄ՝ ԱՆՎԵՐՋ ՔԵԶ ՀԵՏ — ԻՄ ԿՅԱՆՔԻ ՀԵՏ ԼԻՆԵԻ»
(էջ 47)

1 ինք. Ե — Ախ ինչ լավ է թե միշտ քեզ հետ – իմ կյանքի հետ լինեի,

ինք. Զ — Լավ է երբոր քեզ հետ

2 ինք. Ե — Ավելի լավ թե մեն մենակ դաշտում փռված երկընքի հետ լինեի:

ինք. Զ — Ավելի լավ երբ մենակ աչքերը ջինջ երկնքին

3 ինք. Գ — Բայց ով կըտար էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի.

ինք. Դ — Բայց ով կըտար այն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի

ինք. Ե — Բայց ով կըտա էն վայելքը՝ որ ինքս ինձ չըզգայի մոռանայի

4 ինք. Ե — Ու հալվեի, ծավալվեի, երկընքի հետ ու կյանքի հետ ամենքի հետ լինեի:

«ԼՈՒՍԸ ԼՈՒՍԻՆ ՔՈ ԺՊԻՏՆ Է ԻՄ ԵՐԵՍԻՆ ՃԱՌԱԳՈՒՄ»
(էջ 48)

Տարբերակ (ԹԹԳԳ1079/4-14է)

Ինչքան պայծառ ու սրտագող դու ժըպտում ես, իմ անգին[1],
Բայց կենսատու քո ժըպիտն էլ չի օգնելու իմ կյանքին:
Էսպես՝ գարնան ջերմ արևի շողերի մեջ ողողված
Չորանում է կամաց-կամաց կայծակնահար կաղնըքին:

[1]Ունի նաև՝ Ինչքան [շըքեղ] շռայլ ու սրտագող դու ժըպտում ես, իմ անգին.

1 ձեռ. Ա — Լուսը լուսին քո ժպիտն է [միշտ իմ դեմը] ճառագում,

ձեռ. Բ ա — Լուսը լուսին քո ժպիտն է [միշտ ինձ վրա] ճառագում,

բ — Լուսը լուսին, քո ժպիտն է [միշտ իմ դեմը] ճառագում,

2 ձեռ. Ա ա — Բայց, ա՜խ, արդեն [սրտից] զարկված դեպի ցած եմ ես հակվում:

բ — Բայց, ա՜խ, արդեն [խորունկ] զարկված դեպի հողն եմ ես հակվում:

ձեռ. Բ — Բայց [ես] [ախ] [ո՜ւր] արդեն անբույժ զարկված [լուռ մարում եմ ու ցամաքում]:

3 ձեռ. Ա — Ես էն վառ արեգակի շողերի տակ [մեղրածոր]

4 ձեռ. Բ — Կայծակնահար կաղնին ոտքի ցած է թեքվում:

1921

«ԱՌԱՏ, ԱՆՀԱՏ ԱՍՏԾՈՒ ՆՇԱՆ՝ ՄԻՇՏ ՏԵՂԱԼՈՒՑ ՀՈԳՆԵԼ ԵՄ ԵՍ»
(էջ 49)

4 ձեռ. Ա — Ամեն ճամփի[ն] ըսպասելուց ու փընտրելուց հոգնել եմ ես:

«ԵՍ ՇԸՆՉՈՒՄ ԵՄ ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒ ՇՈՒՆՉԸ ԱՄԵՆՈՒՐ»
(էջ 50)

1 ձեռ. Գ ա — [Ու] շընչում եմ ես կենդանի Աստծու շունչը ամենուր

բ — [Ու] շընչում եմ ես [մաքուր ու հուր] Աստծու շունչը ամենուր

2 ձեռ. Ա, Բ — Ես լըսում եմ իրեն անլուռ կանչն ու հունչը ամենուր.

ինք. Գ ա	[Ու] լըսում եմ իրեն անլուռ կանչն ու հունչը ամենուր.
բ	Ես լըսում եմ իրեն անլուռ կանչն ու հունչը ամենուր.

«ԱՐՅՈՒՆԱԼԻ ԱՂԵՏՆԵՐՈՎ, ԱՂՄՈՒԿՆԵՐՈՎ ԱՀԱՐԿՈՒ»
(էջ 51)

1 ինք. Բ	[Արյուններով], աղետներով, աղմուկներով ահարկու
3 ինք. Ա	Իրենց հոգու անապատից [վեր են կացել ոսկահար]

«ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՔՈ ՏԸՎԱԾԻՑ ԵՐԲ ՄԻ ԲԱՆ ԵՍ ԴՈՒ ՏԱՆՈՒՄ»
(էջ 52)

1 ինք. Ե	Ամեն անգամ քո տըվածից երբ մի մասն ես դու տանում
ինք. Զ, է ա	Ամեն անգամ [իմ աշխարհքից] երբ մի [մասն] ես դու տանում,
բ	Ամեն անգամ [իմ աշխարհքից] երբ մի բան ես դու տանում,
3 ինք. Ե	Ամեն անգամ, երբ տեսնում եմ, թե ինչքան է դեռ [ինձ] մընում
ինք. Զ	Ամեն անգամ, երբ տեսնում եմ, թե ինչքան է դեռ մընում
ինք. է ա	[Ես նայում] եմ, տեսնում, թե [ինձ] ինչքան է դեռ մընում
բ	Ամեն անգամ երբ տեսնում եմ, թե ինձ ինչքան է դեռ մընում
3 ինք. Ե, Զ	Զարմանում եմ, թե ո՛վ Շըռայլ ինչքան շատ ես ինձ տըվել
4 ինք. Գ	Ինչքա՛ն շատ եմ դեռ քեզ տալու, որ միանամ քեզ նորից

խմբ. Զ	Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու իմ կարճ կյանքի սահմանում:
խմբ. Է ա	Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու [հաշիվը չեմ հասկանում] [իմանում]:
բ	Ինչքան շատ եմ դեռ քեզ տալու էս իմ կարճ կյանքի [մոտերքին] սահմանում
գ	Թե ինչքան եմ դեռ քեզ տալու [ով է հաշիվն իմանում]

«ՀԱԶԱՐ ՏԱՐՈՎ, ՀԱԶԱՐ ԴԱՐՈՎ ԱՌԱՋ ԹԵ ԵՏ, Ի՞ՆՉ ԿԱ ՈՐ»
(էջ 53)

1 խմբ. Ա	Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ մին է
խմբ. Գ	[Էս օրվանից] հազար տարի առաջ թե ետ [մին է դա] միևնույն է
խմբ. Դ	[Էս օրվանից] հազար տարի առաջ թե ետ [մին է դա]
2 խմբ. Ա ա	Դու եղել ես ու կլինես հար ու հավետ
բ	Ես եղել եմ ու կլինեմ հար ու հավետ
խմբ. Դ	[Որ] եղել եմ – պիտի լինեմ հար ու հավետ, մին է դա
3 խմբ. Ա ա	Հազար էղպես ձևեր փոխես ձևը խաղ է լոկ նյութի
բ	Հազար էսպես ձևեր փոխեմ – ձևը խաղ է անցավոր
խմբ. Գ ա	[Հազար-հազար ձև կորցնեմ] ձևը խաղ է անցավոր,
բ	[Հազար-հազար ձևեր փոխեմ առնեմ], ձևը խաղ է անցավոր,
գ	Հազար-հազար ձևեր փոխեմ ձևը խաղ է անցավոր,
գ	Ձևեր առնեմ, ձևեր փոխեմ – ձևը խաղ է անցավոր
խմբ. Գ ա	Հազար-հազար ձևեր փոխեմ ձևը խաղ է անցավոր,
բ	Ձևեր առնեմ, ձևեր փոխեմ – ձևը խաղ է անցավոր
4 խմբ. Ա ա	Իսկ դու հոգի ափեղերքի, մեծ հոգու հետ – մին է:
բ	Իսկ ես հոգի ափեղերքի, մեծ հոգու հետ – մին է:
խմբ. Բ	Իսկ ես հոգի ափեղերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ:
խմբ. Գ	Ես – [հուր] հոգի ափեղերքի մեծ հոգու հետ, մին է դա:
խմբ. Դ	Իսկ ես հոգի ափեղերքի մեծ հոգու հետ մին է դա:

1 ա	*[Էս օրվանից] հազար տարի առաջ թե ետ [մին է դա]*
բ	*Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՜նչ կա որ,*
2 ա	*[Որ] եղել եմ – պիտի լինեմ հար ու հավետ, մին է դա*
բ	*Ես եղել եմ, կա՜մ, կըլինեմ հար ու հավետ, ի՜նչ կա որ,*
3 ա	*[Հազար-հազար ձև կորցընեմ] ձևը խաղ է անցավոր,*
բ	*[Հազար-հազար ձևեր փոխեմ առնեմ], ձևը խաղ է անցավոր,*
գ	*Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,*
4 ա	*Ես – [հուր] հոգի տիեզերքի մեծ հոգու հետ, մին է դա*
բ	*Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՜նչ կա որ:*

«ԱՍԻ. «ՀԵՆՑ ԼՈԿ ԷՍ ԱՃՅՈՒՆՆ Է ՈՒ ԱՆՈՒՆԸ, ՈՐ ՈՒՆԵՄ...»»
(էջ 54)

1 ինք. Բ, Գ	*Ասի [անցվոր] էս աճյունն է, [էս] անունն էլ, որ ունեմ,*
2 ինք. Ա	*Հանկարծ բացվեց լուսապայծառ քո ժպիտը հոգուս դեմ*
ինք. Բ ա	*[Երբոր բացվեց ծիածավալ քո ժըպիտը հոգուս դեմ.]*
բ	*[Երբոր բացվեց ամենիմաստ քո ժըպիտը հոգուս դեմ.]*
գ	*[Ու ճառագեց իմաստության քո արևը հոգուս դեմ.]*
ինք. Գ ա	*[Երբոր բացվեց ծիածավալ քո ժըպիտը հոգուս դեմ.]*
բ	*Հանկարծ բացվեց լուսապայծառ քո ժըպիտը հոգուս դեմ.*
3 ինք. Ա	*Ի՜նչ է աճյունն էդ [անցավոր], ու անունը, որ ունես,*
ինք. Բ ա	*Ով միամիտ, հենց էդ աճյունն, [էդ] անունն է, որ չունես,*
բ	*Ի՜նչ է աճյունն էդ [անցավոր], ու անունը, որ ունես.*
4 ինք. Ա, Բ	*Դու էլ ինձ պես մի անհուն ես, անանուն ես ու անես...*

«ԱՍՏԵՂԱՅԻՆ ԵՐԱԶՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՔՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱԿԱԹ»
(էջ 55)

2 ինք. Բ — Մեծ խաների խոլանքների հեռուներում ինձ անհայտ.
4 ինք. Ա, Գ ա — Երբեմն սուս, ըզգում եմ ես, թե եղած եմ նըրա մոտ
բ — Երբեմն, սուս, ըզգում եմ ես, թե [հասած եմ] նըրա մոտ
ինք. Բ — Երբեմն, սուս, ըզգում եմ ես, թե հասել եմ նըրա մոտ

«ԲԱՐՁՐ Է ՀԸՆՈՑ ԱՇԽԱՐՀՔՆ ՀԱՅՈՑ ՈՒ ՄԱՍԻՍԸ ԵՐԿՆԱԴԵՏ»
(էջ 56)

2 ինք. Ա, Բ — Իմ մեծ հոգին էն բարձունքին խոսք է բացել իրեն հետ
ինք. Գ ա — Իմ [մեծ] հոգին էն բարձունքին [զրույց ունի Աստծու հետ].
բ — Իմ մեծ հոգին էն բարձունքին խոսակցում է իրեն հետ
4 ինք. Բ — Մինչև սահմանն անսահմանի հարցնում է դարեդար
ինք. Գ — Մինչև վախճանն անվախճանի անց է կենում շարեշար:

«Ո՜Վ ԱՆԺԱՌ ՄԻՆ, ՈՐ ԱՄԵՆԻՆ ՄԻԱՑՆՈՒՄ ԵՍ ՄԻ ԿՅԱՆՔՈՒՄ»
(էջ 57)

1 ինք. Ա, Բ — Ո՜վ անհուն Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում,
4 ինք. Ա — Ոգիք Քո մեջ անմահ, անվերջ քեզ են օրհնում քո ձենով...
ինք. Բ — Ոգիք Քո մեջ անմահ, անվերջ քեզ են օրհնում Քու ձենով...

«ԱՍՏՂՈՒ ԲԱՆՏՆ ԵՆ ՏԱԺԱՐՆԵՐԸ — ԱՇԽԱՐՀՔՆԵՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿ»
(էջ 58)

2 ինք. Բ *Իբր էնտեղ է ապրում տերը, ժամհարների փակի տակ.*
4 *Բայց դու նայիր թշվառ մարդու գործին ու խելքին:*

«ԿՅԱՆՔԸՍ ԱՐԻ ՀԸՐԱՊԱՐԱԿ, ՈՏՔԻ ԿՈԽԱՆ ԱՄԵՆՔԻ»
(էջ 59)

1 ինք. Ա, Բ *Կյանքըս արի հըրապարակ, ոտի կոխան ամենքի,*

«ԻՄ ԿԸՆՈՒՆՔԻՆ ԵՐԿԻՆՔԸ՝ ԺԱՄ, ԱՐԵՎԸ՝ ՋԱՀ ՍԸՐԲԱՋԱՆ»
(էջ 60)

2 ինք. Ա, Բ *Ծիածանը՝ նարոտ եղավ, սերը եղավ ավազան.*
3 *Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն խընկավետ,*

«ԱՄԵՆ ՄԻ ՍԻՐՏ ՑԱՎՈՎ ԼԸՑՎԵՑ ՄԵՐ ԴԱՐՈՒՄ»
(էջ 61)

3 ինք. *Ցավոտ աշխարհքն... [ա՜խ] ո՜վ ամենից տառապած,*
4 *Իմ սիրտն է բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:*

1922

«ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԸՆՉՈՒՄ ԵՆ ՈՒ ԱՆՑ ԿԵՆՈՒՄ»
(էջ 62)

4 ինք. Բ *Պոետները [տենչում են] ու անց կենում:*

«ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՄԻ ՃԱՄՓՈՐԴ Է ԻՄ ՀՈԳԻՆ»
(էջ 63)

1 ինք. Ա *Տիեզերքում [ամենատենչ] մի ճամփորդ է իմ հոգին.*

«ԷՆՔԱՆ ՇԱՏ ԵՆ ՑԱՎԵՐՆ, ԱՎԵՐՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ»
(էջ 64)

2 տնք. Ա ա Էնքան անթիվ կորած լավերն իմ սրտում...
բ Էնքան սրտում կորած լավերն իմ սրտում
3 ա Չեմ էլ հիշում խավար ու չար էս ժամին
բ Չեմ էլ հիշում դըժվար ու չար էս ժամին
գ Չեմ էլ հիշում չար ու խավար էս ժամին

«— ԷՍ Է, ՈՐ ԿԱ... ՃԻՇՏ ԵՍ ԱՍՈՒՄ. ԹԱՍԸԴ ԲԵ՛Ր»
(էջ 65)

2 արտագր., Գե Էս էլ կանցնի հանց երազում. թասըդ բե՛ր
4 արտագր. Մեկն ապրում է, մյուսն՝ ըսպառվում. թասդ բեր.
Գե Մեկն ապրում է, մյուսն ըսպանվում. թասդ բեր:

«ՀԵ՛Յ ՃԱՄՓԱՆԵ՛Ր, ՃԱՄՓԱՆԵ՛Ր»
(էջ 66)

2 տնք. Ա ա Անծիր ու հին ճամփաներ,
բ [Անտառ] անծիր ճամփաներ,
գ Անծիր ու հին ճամփաներ,

II
1916

«ՀԱՆԳԵ՛Լ ԵՆ»
(էջ 67)

Ինքնագրի մշակման պատկերը

3 ա [Պաղ ցուրտ գիշեր, սև խավար]
բ Շուրջս խավար, [ցուրտ] գիշեր,
գ [Գիշերն ցուրտ է ու խավար]

դ Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց
ե Գիշերն եկավ մութ ու պաղ
զ Ցուրտ ու խավար էս գիշեր

«ՉԻ ԳԱԼԻՍ»
(էջ 68)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա [Կանգնել եմ] չի գալիս,
բ Չի գալիս,
3 ա Ձեն եմ լըսել էս անտառում
բ Ձեն եմ լըսել էս ձորում
4 ա [Քար եմ կըտրել], չի գալիս։
բ Կըտրել է, էլ չի գալիս։

1919

«ՄԵՐ ԳԱՆՁԵՐԸ ՄԻՇՏ ԿԱՆ ԱՌԱՏ»
(էջ 77)

4 ինք. Ու դժգոհ է ամեն մի մարդ։

«ԹԸՎՈՒՄ Է ՀԱՐ, ԹԵ ԱՆՑՅԱԼՍ ՈՒ ԱՊԱԳԱՍ ՏԵՍԱԾ ԿԱՄ»
(էջ 79)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Ինձ թըվում է հար, թե անցյալըս ու ապագաս տեսած կամ,
բ Թըվում է, հար, թե անցյալըս ու ապագաս տեսած կամ,
3 ա Հավերժության առաջ ու ետ
անհունության – ողջ անպակաս տեսած կամ,
բ Առաջ ու ետ անհունություն – ողջ անպակաս տեսած կամ,

«ՄԵՐ ԿՅԱՆՔԸ – ԿԱՐՃ ՄԻ ՎԵՐԵԼՔ»
(էջ 82)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Ինչ է կյանքը – մի վերելք,
բ Մեր կյանքը կարճ մի վերելք,
2 ա Անցնել հանգիստ ամեն պատնեշ ու վայելք,
բ Անցնել հանգիստ, ամեն տանջանք ու վայելք։
3 ա Անհաղթ, անախտ – հոգիանալ ու նորեն
բ Ապրել անախտ, անցնել անհաղթ – հոգիանալ ու նորեն

1920

«ԱՀԱ ՇԻՐԻՄՆ... ԻՄ ԸՆԿԵՐՆ ԷՐ... ՄԻ ՍՈՎՈՐՈՒԹՔ ՈՒՆԵՐ ՆԱ»
(էջ 83)

3 ինք. Ա Հե՜յ, ինչ դատարկ, ինչ խենթ խոսք է [հարց է] ժամն էսօր... [էստեղ]
ինք. Բ Հե՜յ, ինչ [փուչ] խոսք է [ժամը] էսօր [էստեղ] կողքին էս շիրմի
4 ինք. Բ Հե՜յ, անուշ ջան, ի՞նչ ես հարցնում միևնույն է ժամի քանիսն է հիմի։

«ԴՈՒ ՄԻ ՃԱՐՊԻԿ ՄԱՔՍԱՆԵՆԳ ԵՍ, ԼՈԿ ՃԱՄՓՈՐԴ ԵՍ ՁԵՎԱՆՈՒՄ»
(էջ 84)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Դու մի հարուստ մաքսանենգ ես, լոկ ճամփորդ ես ձևանում
բ Դու մի ճարպիկ մաքսանենգ ես, լոկ ճամփորդ ես ձևանում.
2 ա Ու չես ասում մեզնից քեզ[նից] հետ
բ Ու չես ասում մեզնից քեզ հետ ինչ գանձեր ես դու տանում:
3 ա Ինչ [ոսկի] սիրտ, մարգրիտ վշտեր
բ Ինչքան վշտեր մարգարիտով
գ Ինչ սիրող սիրտ մարգրիտ վշտեր ու ինչ գոհար երազներ...

1922

«ՈՒ՞Ր ՀԵՌԱՆԱՍ, ԿՈԽԱԾ ՏԵՂԵՐԴ ԱՐՅՈՒՆՈՏ»
(էջ 86)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Ո՞ւր հեռանաս, էս աշխարհքում կոխած հողերդ արյունոտ,
բ Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ,
2 ա Ո՞ւմ մոտ գընաս, ո՞ւմ գանգատես, ծանոթդ, ընկերդ արյունոտ.
բ Ո՞ւմ մոտ գընաս, ծանոթդ, ընկերդ արյունոտ.

«ԻՆՉ ԴԱԼՈՒԿ ԵՍ ՔՈՒ ԵՐԿՐԻ ՊԵՍ ՈՒ ՍՐԳԱՎՈՐ ԴՈՒ ԷՍՕՐ»
(էջ 88)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա [Ողջ] դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,
բ Ինչ դալուկ ես քու երկրի պես ու սրգավոր դու էսօր,
2 ա Բայց ողջ ու վեհ քան երբևէ և թանկ ու խոր դու էսօր.
բ Բայց ողջ ու վեհ քան երբևէ, թովիչ ու խոր դու էսօր.

ԲԱԼԼԱԴՆԵՐ

I

1886

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ
(էջ 91)

(Հատված) (ԳԱԹ Թֆ №121(21)

Շունը գնաց գանգատ տալ,
Մարդ հավաքեց, հետը բերավ,
Եկան տեսան նըստած հըրեն
[Կար է անում] մի [սև] աղվես –
– Ուրա՞ Կատուն, էլ չի՞ կարում...
– Կամաց խոսա, ի՞նչ ես գոռում.
Մի անծանոթ մարդ էլ լըսի,
Հալբաթ սրան պարտ են կասի:
– Ուրա՞ Կատուն, ասում եմ քեզ.
– Կատո՞ւն ով ա... ի՞նչ գիտեմ ես
Նա էլ թռավ?, թեկուզ դու էլ,
Կատու չես ինձ հո պահ տըվել.
Եքքա մարդ ես աչքեր ունես.
Վերև նայիր կարգա մի տես
Ուր ես մտել, ինչ ես գոռում
Էդպես բաներ ես չեմ սիրում –

---

13 Եքքա մարդ ես [Հեր օրհնած] աչքեր ունես
14 [Գնա վերև մըտի նայի տես]
15 Ուր ես մտել [ում ես հարցնում]
Ունի նաև՝
13-16 [Կար եմ անում, ասավ սիրեք
Հեռու կացեք, մի լուս արեք...
ախպեր... ախպար... կատեղ էր նա...
Վերջը թշվառն ինչ իմանա]

Որ գիշերով ուստա Կատուն
Կոտր էր ընկել, խանութ ու տուն
Դամ ու գաղգաճ ողջը ծախել
Ու, ո՛վ գիտի, ուր էր փախել:
Վա՛յ սատկես դու, ուստա Կատու,
Ծիծաղեցին խեղճ շան վրա
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Վա՛յ խեղճ քուչի,
Բաց բաց կուճի,
Ուստեն կորավ,
Մորթին կերավ,
Էլի մընաց
Գլուխըդ բաց.
Հա՛, հա՛, հա՛, հա՛.

20-րդ տողից հետո՝
ա [Էս որ լսեց խալխի միջին]
բ [Էս որ լսեց վա՛յ իմ մորթին]
[ապուշ] կտրեց [քեռի] մեր խեղճ [քուչին]
Մնաց սրա նրա երեսին նայելիս
Եվ չիմացավ թե ինչ ասի
Քիչ էր մնում լացն էր գալիս
22-23 [Ամեն կողմից] խեղճ[ի] վրա
[Ծիծաղ պրծավ] հա՛, հա՛, հա՛, հա՛
29-ից հետո՝ [Դե գնա հիմի
Գանգատ արա],
30-ից հետո՝ [Վայ սատկես դու,
Ուստա Կատու].

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ
(Ժողովրդական ավանդություն)

ԲՄ II (ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ժամանակով Կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չուներ,
Միայն գիդեմ ոչ՝ որդիանց-որդի
Ճանկել էր մի գառան մորթի:
Էկավ մի օր ձմրնամտին
Կատվի կուշտր տարավ մորթին.–
«Բար՚աչողում, ուստա Փիսո,
Գլուխըս մըրսեց, ի սեր Աստծո,
Ա՛ռ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի – գըլխիս հարմար.
Վարձդ կըտամ, միամիտ մնա՛,
Միայն խնթրում եմ շատ չուշանա»:
– «Աչքիս վրա, քեռի Քուչի,
Մի գդակ ա, խո մի քուրք չի.
Քու թանկագին խաթեր համար
Ուրփաթ օրը համեցեք տար.
Փողի մասին ավելորթ ա,
Մեր մեջ խոսալն էլ ամոթ ա,
Ի՛նչ վենձ բան ա, տո՛ հե՛ր օխնած,
Հա՛, հա՛, հա՛... մի գդակի վարձ...»

* * *

Ուրփաթ ծեքին քեռի Քուչին
Ուստից ծերքին, բաց բաց կուճին
Թափ թափ տալով, ծանդըր ու մեծ
Ուստա Կատվի շեմքում կանգնեց.

«Ուստեն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...»
Մի քիչ կացի, հրես կերևա։

* * *

Ուստեն էկավ քուրքը հագին.
Շանը տեսավ, բեխի տակին
Իրան-իրան քիչ փնթփնթաց
Ու մուշտարու վրա թնդաց –
«Ցրտատար էլա՞ր... վա՜, տնաշեն,
Չես թողնում, որ մի շունչ քաշեն.
Ահաթ խո չի, դեռ հլա նոր եմ
Ցրցամ ավել, թե որ կարեմ»։
– «Դե, հեր օխնած, էթենց ասա,
էդ բարգանալդ էլ ընչիս ա.
Փող եմ ավել, շուտով կարի,
Թե չէ, ասա էգուց արի...»
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ գլուխը բաց։

* * *

Մին էլ էկավ, դարձյալ չըկար.
Էս անգամը դիպան իրար,
էլ անպատիվ պետռը խոսքեր,
էլ հին ու նոր, էլ հեր ու մեր,
էլ գող Փիսո, էլ քաչալ Շուն...
Բանը հասավ դիվանբաշուն։
Մինչև շունը գնաց-էկավ,
Ուստա կատուն կոտըրն ընկավ,
Գլուխն առավ ու մի քըշեր
Հայդե, կորավ, էն գնալն էր...

* * *

Էն օրվանից մինչև օրս էլ
Շունն էս բանը չի մոռացել,

Մտքումը հյա դեռ պահում ա.
Որտեղ կատվին պատահում ա,
Վրա ա վազում, մորթուց քաշում.
Իրան մորթին եղ ա ուզում.
Իսկ սևերես կատուն հանկարծ
Ետ ա դառնում ու բարգացած
Փշտացնըմ ա, մթամ նոր եմ
Ցրցամ ավել, թե որ կարեմ:

Հեղինակի ծանոթագրությունները

Շունն ու Կատուն – *Այս ավանդությունը լսել եմ Լոռի և գրել տեղական բարբառով, որքան կարելի էր մեղմացնելով բարբառի կոշտությունը:*

1	Ծոն – գլխարկ կարող
3	Որտեղից որտեղ
19	Վենձ – մեծ
22	Ծերք – առաջ, վաղ
22	Կուճի – գլուխ
25	Փափախ – գդակ, գլխարկ
34	Ցրցամ տալ – սրսկել (ջուր սրսկել)
35	Էթենց – այդպես
43	Պետոր – անտառակ
46	Դիվանբաշի – նախագահ, դատավոր
48	Անանկացավ
60	Մթամ – իբրև

Դ, ԴՓ

5	Էկավ մի օր ձմռնամըտին
11-12	Վարձդ կըտամ, միա՛ միա մնա, Միայն խնթրում եմ շատ չուշանա՛:
14	Մի գդակ ա, խո մի քուրք չի,
17	Փողի մասին ավելնորթ ա
18	Մեր մեջ խոսային էլ ամոթ ա

19 Ինչ մենձ բան ա, տո՜ հեր օխնած,
20 Հա՛, հա՛, հա՛... մի գդակի վարձ...»
27 Ուստեն էկավ քուրքը հագին.
29 Իրան-իրան քիչ փնթփնթաց
31-32 «Ցրտատար էլա՜ր... վա՜հ, տնաշեն,
Չես թողնում որ մի շունչ քաշեն
33 Սհաթ խո չի, դեռ հլա նոր եմ
35 – «Դե, հե՛ր օխնած, էթե՛նց ասա,
37 Փող եմ տվել, շուտով կարի,
39-42-րդ տողերը չունեն:
47 Էլ անպատիվ, պետոը խոսքեր,
59-60 Վրա ա վազում, մորթուց քաշում,
Իրան մորթին եդ ա ուզում
62 Եդ ա դառնում ու բարկացած

ԲԹ, ԹԼ, ԲԲ

5 Եկավ մի օր ձմեռնամտին
17 Փողի մասին ավելնորդ ա
18 Մեր մեջ խոսալն էլ ամոթ ա
47 Էլ անպատիվ, [պետոը] խոսքեր

ԲԲ ուղղ.

37 Փող եմ տըվել [վախտին] շուտով կարի
47 Էլ անպատիվ, [պետոը] խոսքեր
57 Մտքումը [հլա] իր դեռ պահում ա

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ

5 Եկավ մի օր ձմեռնամտին
7 Բարեաչողում
22 Ցրտից սառած բաց-բաց կուճին
24-րդ տողից հետո՝
Ու բարձր հաչեց.

26-րդ տողից հետո՝

Պատասխանեց կատվի ձագը,
Որ մանել էր պատի ծակը:
33-35 Հեշտ բան հո չի՞, դեռ հիմիկս եմ
Ցրցամ տվել, որ ընկնեմ.
– Դե՛, հեր օրհնած, ընենց ասա,
49 Էլ գող կատու, էլ քաչալ շուն
57 Նա մտքումը դեռ պահում ա.
63 Թըրքախառը փըշտացնում,
Շան մըռութը թացացնում,
Միթամ թե՝ տես հենց հիմիկս եմ
Ցրցամ տըվել, որ ընկնեմ:

ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

57 Իր մտքումը դեռ պահում ա.

Լ II

47 Էլ անպատիվ, սևտոր խոզեր,

56-րդ տողից հետո օժանդակ բայերը՝ է:

Լ II *ուղղ.*

17-19 Փողի մասին ավելորդ [ա] է
Մեր մեջ խոսելն էլ ամոթ [ա] է
Ինչ մեծ բան է, ա՛ հեր օրհնած,
37 Փող եմ տըվել [վախտին] շուտով կարի

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ
(էջ 94)

Հատված (ԳԱԹ Թղ. №121(21)

Մարդու առաջ պահած է միշտ
Բայց թե հանկարծ հասնի մի վիշտ,
Թե մեծ փողով խրխտ գնա,
Ճամփեն կորցնի – սնանկանա,
Վերջը – ինչ էլ որ պատահի,
Մարդ նամուսը պետք է պահի.–
Բայց թե ինչպես – ով որ կուզի
Թող էս հնուց բանը լսի:
Էն օրվանից դեսն ինչքան է անցել,
Ինչքան մթնել է, ինչքան լուսացել,
Չղջիկն ամոթից գիշերն է շրջում,
[Որ իրան սնանկ ոչ ոք չըտեսնի],
Թիթեռն էլ ծովի վրա է թռչում,
[Որ գուցե իրանց կորուստը գտնի].
Իսկ փուշը, ով որ մոտիցը անցնում,
Փեշիցը բռնում, քաշում է, հարցնում,
Թե չեն տեսել իր պարտապաններին՝
Էն չըղջիկին կամ թիթեռին –
[Ասող էլ չըկա, թե նրանք ամոթից,
Չեն կարողանում անցնել քո մոտից]:

---

17 *Թե չեն տեսել իր պարտատերերին*
18 *Կամ չըղջիկին կամ թիթեռին -*
19 *Ասող էլ չըկա, թե [մարդիքն] ամոթից,*

12 Ինչքան պետք էր իրանց բանին:
15-16 Նստեց գյամին ու կանչեց Տե՛ր,
Խրրից գրնաց հեռու տեղեր:
Ինչ-որ տեղ կա Աստծու տակին, –
Հաբաշ, Մըսըր, Չինումաչին,
24-25 Բոլ-բոլ առավ գյամին լցրեց,
Գյամին լցրեց հազար բարով
27 Ուրախ-ուրախ գալիս էր տուն:
27-ից հետո՝

Բայց ո՜վ չարի ձախորդություն. –
Ճամբին ծովում քամի առավ,
Գյամին մինչև երկինք տարավ,
Հանեց վերև, բերեց ներքև,
Բացվեց, գոռաց անդունդքը սև,
Բոլոր ապրանքն, անգին ակը,
Տարավ գըցեց ծովի տակը,
Միայն սոփաքյար խեղճ Ճայն էր, որ
36-ից հետո՝

[Ու էնտեղից էլ տուն չեկավ.
Ծըփուն ծովի երեսն ընկավ,
Որ գուցե թե մի ճար անի,
Գյամին էլ ետ ծովից հանի...]
37 Իսկ Չղջիկը գուրը կարած
40 Թե [ընկերը] Ճայը երբ պիտի գա:
48 Ձեր մտածում՝ թե պարտք ունեք...
50 Դե, փողերըս տըվեք հիմի.–
55 Ոսկի տա մարդ իրա ձեռով՝
56 Չըկարենա առնել գոռով
58 Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»
60 Խեղճ Չըղջիկը միշտ լսելիս
71 Բարկանում էր իրան մտքում,
73 – Ա՛յ քո տունը քանդվի, ա՛ Ճայ

77 Եվ խնդրում էր ամեն անգամ.
95 Ես հույս ունիմ... Ասենք պարտք ենք...
97 Չէ՛, քո արածն ով մոռանա,
100 Շատ հույս տվեց, շատ խոստացավ,
106 Որ խայտառակ ըլեմ վերջը.
126 Խեղճ Չըղջիկը՝ փախած լուսնից

ԱՄ ուղղ.

14-ից հետո՝ [Նստեց գյամին ու կանչեց Տե՛ր,
Խըրիդ գընաց հեռու տեղեր:
Ինչ որ տեղ կա Աստծու տակին]
Առավ, նստեց գյամի միջին
29 Վերկացավ քամի արավ
30-ի փոխարեն՝
ա Հանեց վերև, բերավ ներքև
բ Հանեց վերև, նետեց ներքև
ա [Տարավ զըցեց ծովի տակը].
բ Ողջ կըլանեց [սև] մութ անտակը:
31 [Միայն] Խեղճ սովդաքյար [խեղճ] ձայն [էր], [որ] մենակ
37 ա Խեղճ Չղջիկը գուբը կորած
բ Խեղճ ընկերը գուբը կորած
135-136 Թևին տալի[ս] –
Ման է գալի[ս]:
140 Ճանկ ու ատամ [սուր պատրաստած] սրած սպառնալի

ԲԹ

24 Բոլ-բոլ առավ, նավը լըցրեց.
27 Ուրախ-ուրախ տուն էր գալի:
30-ից հետո՝
Երկինք հանեց ալիք ու նավ

Ու էնտեղից թողեց ներքև.
Ներքև՝ բացեց որկորը սև՝
Ողջ կըլանեց անդունդքն անհագ:
Մեր սովդաքյար ճայը մենակ –
Ո՜վ իմանա՝ ում էր տըված
Իրեն օրում մի կտոր հաց,
Ծովում առաջն ելավ էն օր –
56 *Չըկարենա առնել զոռով*
58 *Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»*
95 *Ես հույս ունիմ... Ասենք պարտք ենք...*

Թ1

24 *Բոլ-բոլ առավ նավը լըցրեց.*
27 *Ուրախ-ուրախ տուն էր գալի*
30-31 *Երկինք հանեց ալիք ու նավ,*
Երկինք հանեց, թողեց ներքև,
Ողջ կըլանեց անդունդքը սև:
56 *Չըկարենա առնել զոռով*
58 *Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»*
95 *Ես հույս ունիմ... Ասենք պարտք ենք...*

ԲԲ

30-ից հետո՝

Երկինք հանեց ալիք ու նավ
Ու էնտեղից թողեց ներքև.
Ներքև՝ բացեց որկորը սև՝
Ողջ կըլանեց անդունդքն անհագ,
Մեր սովդաքյար ճայը մենակ –
Ո՜վ իմանա՝ ում էր տըված
Իրեն օրում մի կտոր հաց,
Ծովում առաջն ելավ էն օր –

76 Գըլխիս էս ի՜նչ փորձանք բերիր...
78 – Մի՛ նեղանա, փուշ բարեկամ,

ԲԲ ուղղ.

107 Որ խայտառակ [լինեմ] ըլեմ վերջը...

ԼIII

24 Բոլ-բոլ առավ, նավը լըցրեց.
30-31 Երկինք հանեց ալիք ու նավ,
Երկինք հանեց, թողեց ներքև,
Ողջ կըլանեց անդունդքը սև:
56 Չըկարենա առնել զոռով
57 Սրանից ետը դե արի դու
78 – Մի՛ նեղանա, փուշ բարեկամ,
95 Ես հույս ունիմ... Ասենք պարտք ենք...
97 Չէ՛, քո արածն ով մոռանա.

ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

27 Ուրախ-ուրախ տուն էր գալի:

1887

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ
(էջ 99)

Աղ
(առաջին տպագրություն)

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ
(ժողովրդական ավանդություն)

Ասում են՝ իբրև կապույտ երկնում
Կա մի լուսեղեն ապարանք սիրուն
Այնտեղ եթերքում, ամպերի վրա
Ամուր, անսասան միշտ կանգնած է նա:
Նրա դռներին չկա պահապան.
Ոչ մոտից անցնող, ոչ լսվում է ձայն
Եվ այդ դյութական ամրոցի միջին
Տաշտին առաջին չոքած է մի կին:
Խմոր է հունցում, և բազուկները
Վերև են քաշած մինչ արմունկները.
Խմոր է հունցում և անուշ երգում,
Որ փափկահնչյուն լռին եթերքում
Անոսր այերը թեթև տատանում:
Ահա համրընթաց, ձյունափայլ, ճերմակ
Ամպերը կտրած մեկմեկու քամակ
Ինչպես գնայուն լեռներ ահագին,
Ունկնդիր են այն քաղցրալուր երգին:
Այն հրաշագեղ կինն երկնաբնակ
Ունի երկու հատ գեղեցիկ զավակ.
Եվ ահա կանչեց իր սիրուն զույգին,
Ձայն տվեց թե չէ՝ դուրս եկան կողքին:
Աղջիկ է մեծը, անունն՝ Արեգակ,
Նմանը չըկա երկնքում հրեշտակ.

Աչքերը կրակ, մազերը նույնպես
Հոնքերը կամար, աղեղ է կարծես
Իսկ փոքրը՝ տղա, անունը՝ Լուսնյակ,
Ճարմաղ ինչպես ձյուն, նրա պես սպիտակ:
Ապա թե խոսեց մայրը լուսածին. –
«Գնացե՛ք, որդիք, Արեգակ, Լուսին,
Մեկդ գիշերը, մյուսդ ցերեկը,
Լուսավորեցեք խավար աշխարհքը»:
– Ցերեկն ես կերթամ, ասաց Լուսնյակը,
Լուսավորելու խավար աշխարհքը,
Եվ այնտեղ ինչ որ տեսնեմ, նկատեմ,
Կըգամ քեզ, մայրիկ, մեկ մեկ կըպատմեմ:
– Վա՜հ, չէ՛, ես պիտի գնամ ցերեկը,
Ասաց վրդովված սիրուն Արեգը.
Աղջիկը գիշերն ինչպե՞ս կշրջե,
Այդ բնավ նրան վայելուչ բան չէ:
– Լսի՛ր, իմ Լուսին, չէ՞ խելոք ես դուն,
Հորդորեց մայրը իր համառ որդուն,
Արեգն աղջիկ է, նա կըվախենա,
Դու քաջ տղա ես, գիշերը գնա:
Սակայն Լուսինը շատ էր համառել,
Սիրուն քրոջը չուզեց զիջանել.
Եվ այդ ժամանակ մայրը լուսածին
Բարկացած դարձավ համառ զավակին.
Հերիք է, տղաս, համառես այդպես
Գնա քո գործին, հեռացիր աչքես:
Ասաց Լուսնյակին և բարկանալով
Զարկեց մի ապտակ խմորոտ ձեռքով:
Խռովեց Լուսինն ու լացակումած
Դուրս եկավ իսկույն իր գործին գնաց.
Բայց ապտակ կերած օրվանից դեսը
Խմորոտ մնաց քիթն ու երեսը:
Սակայն գեղեցիկ Արեգակն այժմ էլ
Ամոթ էր քաշում ցերեկով շրջել.

Եվ մայրիկն ահա տալիս է աղջկան
Մի բուռ լիքն աւեղ, և ասում նրան.
– Սրանցով, ահա, եթե նայեն քեզ
Նրանց աչքերը դու կըծակծըկես:
Արևը շիկնած, մեծ ապարանքից
Դուրս եկավ երկինք, ամպի արանքից
Եվ իր լուսավը ջինջ, ճաճանչափայլ,
Նա լուսավորեց երկիրը մայլ:
Եվ զվարթացավ բնությունն ամեն:
Բայց մինչև այսօր ոչ մի հողեղեն
Չի կարող նայել լուսատու դեմքին,
Աչք է ծակծկում, ասեղ կա ձեռքին...
Մեկը ցերեկով, մյուսը գիշերով,
Քույրն ու եղբայրը շրջան անելով,
Երկար ժամանակ իրար չըտեսան,
Սաստիկ կարոտից տանջվել սկսան:
Մայրը որոշեց, որ երբեմնապես
Իր զավակները գնան միմյանց տես.
Այդ տեսակցության ժամին կարոտած
Քույրն ու եղբայրը գրկում են միմյանց.
Իսկ քույր ու եղբայր երբ որ գրկվում են,
Մարդիկ մի առ ժամ լույսից զրկվում են:

Սևագիր պատառիկներ

Այնտեղ – երկնքում, կապույտ երկընքում,
Վերև – երկրնքում, կապույտ երկընքում,
Որտեղից [կարմիր] պայծառ արև է ծագում,
Արևածագի ամպերի գըլխին.
Կարմիր-ծիրանի ամպերի գըլխին
Կանգնած է պալատ – լուսեղեն պալատ լուսապատ
[Ճառագայթներից սյուները]
և կամարները լույս ապարանքի

Արևի շողերից շողազարդ
Պճնում են [ուրախ] ցոլուն աստղերն երկնքի

Կանգնած է պալատ, [լուսեղեն] [հրեղեն] գերբնական պալատ
Պատերն հրեղեն
Սյուները հյուսված [ոսկի] նուրբ շողերից

[Բայց խոսում են ողջ և փայլը չընչին]
[Լուսամոր շարմաղ գեղի առաջին]
Այն լույս պալատում, երկնքի
Ապրում է լուսամայրը

Կանգնած է պալատ, գերբնական պալատ
Պատերն հրեղեն, սյուներ շողազարդ,
Եվ <1 անընթ.> ու կամար [լուսեղեն] երկնային հարկի
Պճնում են ցոլուն աստղերն երկնքի
Այնտեղ ապրում է
Բարի լուսամայրն – երկնից անդրանիկ գեղեցկուհին

Այստեղ ապրում է ստեղծման օրից
Երկնից անդրանիկ դուստրը գեղանի.
Մի օր ....ի մոտ է կանչում։
Հանկարծ

1891

ԱԽԹԱՄԱՐ
(էջ 102)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №123(24)

7 Ջուրը ճեղփում լող է տալիս
12 Չըմոլորի որ ճամբան
12-ից հետո՝

Ոչ մի վտանգ նա չի հարցրել
Ոչ մի գիշեր մթագին,
Միայն ճգնում է շուտով հասնել
Երևացող կըրակին։

14 Այնպես կրակ է անում,

23 Ջրի ճեղփյուն և ողջ մարմնով
24 Խանդից այրվում է սաստիկ:
25-26 Լռեց հանկարծ… և ծովափին
Երևեցավ մի ստվեր…
30 ա Մեղմիկ դիպչում ափերքին,
բ Մեղմիկ դիպչում եզերքին,
31 Հրհրելով հեռանում են
33 ա Նրանք կարծես [թե խոսում են…]
բ Նրանք կարծես փսփսում են…
34 Ու ստվերը կամարից
35 Միաբերան բամբասում են
38-39 Եվ դարձյալ մութ գիշերով
Մեկը խավար ծովն է մտնում
40 Մյուսը ափից դողալով
40-ից հետո՝

Ծունկ է չոքում լուռ ծովեզրին
Եվ ականջը խոնարհած,
Հետևում է ջրի ձայնին,
Որ հեռանում է կամաց…

Մյուս գիշերը, նույն ժամանակ,
Էլ նույն կրակն է վառվում,
Եվ կրակի շուրջը դատարկ
Էլ նույն անցքն է կատարվում:

Բայց Թամարի հոր հարևան
Մի քանի մարդ չարասեր
Նրանց գաղտնիքըն իմացան.
Եվ ամպամած մի գիշեր

Լույսը հանգցրին. լողորդն հոգնած
Մոլորվեցավ սև ծովում,
Երբոր նայեց, տեսավ հանգած.

Փարոսն էլ չի երևում:
Լույսը հանգցրին չար գյուղացիք
Եվ կանգնած են լուռ ու մունջ.
Դեպի ափերն այն ուղղաձիգ
Հեռվից հողմը դառնաշունչ
Բերում է ձայն կիսամար –
«Ա՛խ Թամա՛ր...»

53 Ու մերթ լսվում է ուժասպառ

57-59 Նորա դեմքը այլանդակված
Կարծես մեռած ժամանակ
Մրմնջում էր անբարբառ

61 Այն օրվանից դրա համար

ՄԵ

30 Մեղմիկ դիպչում ափերքին,

35 Միաբերան բամբասում են

38-39 Եվ դարձյալ մութ գիշերով
Մեկը խավար ծովն է մտնում,

ԲՄ II

33 Նրանք կարծես փսփսում են...

Մնացածը՝ ինչպես ինքնագրում:

ԲԹ

14 Այնպես կըրակ է անում

31 Հըրհըրելով հեռանում են

49 Մոտ է ձայնը. խոլ խավարում

ԲԹ ուղղ.

29 Լոկ ալիքը Վանա ծովի

ԹՎ.

31 Հրրհրրելով հեռանում են

40-ից հետո՝

«Ո՞վ է ջահիլ էն խիզախը,
Որ հենց հարբած իր սիրով,
Սրտից հանած ահն ու վախը
Ծովն է անցնում գիշերով:

Ծովն անցնում է մյուս ափերից
Մեր Թամարին համբուրում...
Աղջի՛կ խլլի նա մեր ձեռից...
Ինչի՞ անեղ է մեզ գընում...».

Էսպես ասին վիրավորված
Կրքոտ միջի ջահիլներ
Ու Թամարի ձեռքով վառած
Լույսը հանգցրին մի գիշեր:

Մոտ է ձայնը. խոլ խավարում,

1894

ԵՐԿԻՆՔ ՈՒ ԵՐԿԻՐ
(էջ 107)

Հհ

1 Յուր խոր հայացքով երկինքը մի օր

15-17 Յուր հազարավոր աչքերը բանում,
Հիացած նայում սիրուհու վերա,
Մինչև լուս նայում և չի կշտանում:

20 Որանք փրփրում են, ուռչում, բարձրանում,

24-25 Փռում են իրան բոլոր փառքերը
Յուր բոլոր անենչերն, այրվող կրքերը,

28 Եվ երբ չի հասնում յուր անհաս սերին,

34 Հազար շրթունքով սարերի ծայրից

38-39 *Տանջում է ուժգին, վառվում է սերը*
Հուզվում են փրփրում նորա ջրերը
40-41 *Սակայն չեն հասնում քնքույշ փափագին*
47 *Ուռցնում է իրան կուրծքը տարփալի,*
55 *Ինքն էլ այնպիսի մի վեհ սիրուհի:*

Դփ

1 *Յուր խոր հայացքով երկինքը մի օր*
14 *Երկինքն աստղալի, անհամբեր, ագահ,*

Մնացածը՝ ինչպես Հհ-ում:

ԲԲ

1 *Յուր խոր հայացքով երկինքը մի օր*
9 *Եվ պինդ սիրեցին այսպես իրարու*
15 *Յուր հազարավոր աչքերը բանում,*
17 *Մինչև լույս նայում ու չի կշտանում*
20 *Որոնք փրփրում են, ուռչում, բարձրանում,*
24-25 *Փռում են իրան բոլոր փառքերը*
Յուր բոլոր տենչերն, այրվող կրքերը,
28 *Եվ երբ չի հասնում յուր անհաս սերին,*
33 *Իսկ էդ ժամանակ երկիր-սիրուհին*
34 *Հազար շրթունքով սարերի ծայրից*
40 *Սակայն չեն հասնում քնքույշ փափագին*
43 *Յուր մթին գահից*
47 *Ուռցնում է իրան կուրծքը տարփալի,*
55 *Ինքն էլ այնպիսի մի վեհ սիրուհի:*

ՀԲ

20 *Որոնք փրփրում են, ուռչում, բարձրանում.*
24-25 *Փռում են իրան բոլոր փառքերը*
Յուր բոլոր տենչերն, այրվող կրքերը,
28 *Եվ երբ չի հասնում յուր անհաս սերին,*

33 Իսկ այդ ժամանակ երկիր-սիրուհին
34 Հազար շրթունքով սարերի ծայրից
47 Ուղղում է իրան կուրծքը տարփալի,
55 Ինքն էլ այնպիսի մի վեհ սիրուհի:

1898

ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ
(էջ 110)

Սևագիր պատառիկներ (ԳԱԹ Թֆ 124(39)

Էյ, մի ղարիբ թաշուն եմ ես
Ման եմ գալիս երգելով,
Ընկեր չունեմ, տեր չունեմ ես,
Սիրտըս լիքն է վերքերով,
Էյ, սիրուն, գիտես դու էլ
Էս խոր [վերքերն] [վախերն] ախերն ով է ավել:

Ծով ու ցամաք անց եմ կենում
Սիրտս ...   «ախ»-երով,
Երկրե-երկիր գովքըդ անում
Հազար տեսակ խաղերով:
Էյ, սիրուն, գիտես դու էլ
Էս հուր խաղերն ով է ավել:

7-9 Ծով ու ցամաք անց եմ կենում
Սիրտըս «ախ»-երով,
Երկրե-երկիր գովքըդ անում,

Դու էլ մի օր դուրս եկ, լըսիր,
Ինչ եմ երգում քեզ համար,
Դու էլ մի օր հետս խոսիր,
Գոնե ժպտա մի անգամ...

Ախըս մարեց, խաղըս մարեց,
Ես էլ հանգա, մարեցի...
Է՜յ, սիրուն, գիտես դու էլ՝
Էս հուր խաղերն ով է տըվել...

– Աշուղ, աշուղ, ձենիդ ղուրբան,
Ի՞նչ անուշ ես դու երգում,
Ա՜խ, ո՞վ է քեզ տանջում էդքան,
Տանջվի թող նա աշխարհքում:

13-16 Դուրս ե՛կ, սիրուն, [տես] գարուն է
Դուրս ե՛կ, սիրուն, արևի տակ շողը
Է՛յ գարուն է դուրս եկ սիրուն,
Տես ինչ անուշ արեգակ,
Ծաղիկները բացվեցին
Վարդն էլ բաց<վեց>
Խոսիր, սիրուն,
Թռչունները խոսեցին:
[Դուրս եկ, սիրուն, տես ինչ շքեղ
Բացվել են վառ ծաղիկներ]
Թեկուզ դուրս եկ, կարոտս առնեմ,
Ձայնըդ լըսեմ գեթ մի օր...

17-18 [Ախըս հատավ, խաղըս հատավ,
Կանցնի նաև վառ գարուն]

21 Աշուղ, աշուղ, ձենիդ [մատաղ]

23 Ո՞վ է [արդյոք] տանջում քեզ,

[Այսպես] ասաց, [հարսն]
Մին էլ հանկարծ
Բացվեց դուռը
Ու դուրս եկավ
Ծեր կեսուրը.

– Հո՜ «պո, պո, պո»,
– Հոպոպ պառնաս,
Անամոթ հարս,
Լեզուդ լակի,
Մազդ թակի...

Ինքնագիր (ԳԱԹ Թփ №124(39)

Վաղ ժամանակ մի հին շենում

10-ից հետո՝

[Սիրուն շորեր,
Սև սև օրեր,
Ա՜խ, ո՞ւմ ասեմ իմ բալեն.
Լեզուս միշտ փակ,
Լուռ ու մենակ,
Ա՜խ, ո՞նց ասեմ իմ բալեն:

Անբա՜խտ, ասին
Ջահել հարսին,
Լեզգու գերի գընաս դու,
Աչքըդ լացով,
Սիրտըդ խոցով,
Ախ ու վախով կենաս դու:

---

25 ասավ
28 Վրա հասավ

Անգութ կեսուր
Քարե – մըսուր]

մեր չի ծընել
[արա՛, արա՛,
ոտիդ վրա,
Պըտիտ արի չարխի պես,
Մեծին լըսիր,
փոքրին հասիր,
Մեր չի ծնել բերել քեզ]:

11 աշխարքն ուրախ

16-ից հետո՝

Ինչու Աստված սեր տվեց
լեզու չունեմ

24 Բըշկի, փըլի

27 Փակած սըրտում

31 – Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը

40 Չի ամաչում

42 Մայըդ թաղկի

57 Միշտ էլ [էն] իր հին

ՄՃ

3 Նորա բերնից՝ կեսուր-կեսառ

15 Ջահել օրեր

17 Երնեկ ծըտին,

31-ը՝ նույնպիսի տողատակ ծանոթագրությամբ, ինչպես ինքնագրում:

** Ամոթի ու վախի բացականչություն (հեղ.)*

ԲԹ, ԲԲ

17 Երնեկ ծղոտին,

ԲԹ ուղղ.

7 Մի օր մենակ տանը նըստած
11-16 [– Անբախտ, ասին
ջահել հարսին,
լեզու գերի գընաս դու,
Աչքըդ լացով,
Սիրտըդ խոցով
ախ ու վախով կենաս դու]:

ԲԲ ուղղ.

7 Մի օր մենակ ներսում նըստած

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ
(էջ 113)

ԱՄ

1-ից առաջ՝ Շատ է պատահում այսպես հրաշք բան,
Որ ձուկ ու թռչուն, վայրենի գազան,
Անբան անասուն, անշունչ քար ու փետ
Լեզու են առնում խոսում իրար հետ:
1-3 Ահա մի անգամ անտառի մեջ էլ
Արծիվն ու Կաղնին սկսեցին վիճել
Թե որն իրանցից շատ տարի կապրի,
5-8 Արծիվն ասաց ես, Կաղնին էլ թե՝ ես...
Վերջը այս տեսակ պայման կապեցին.
11-12 Որ թե որոշած այն օրին հասնեն,
Մեկ էլ այն օրը գան իրար տեսնեն:
19-20 Եվ այնպես հուժկու կանգնեց անտառում,
Որ էլ վայր չընկնի հինգհարյուր տարում:

27-29 Թեև թարմ ու նոր, ճյուղերն էլ կանաչ,
Բայց հո ընկել էր իրանից առաջ...
– Հե՜յ դու, ձայն տվեց, պարծենկոտ Կաղնի,
32 Իսկ դու ընկել ես, պարծենկոտ հըսկա:
34 Այդքան էլ կապրեմ այսպես թեք ընկած
36 Պատասխան տվեց ընկած վիթխարին.

ԱՄ ուղղ.

1 [Ահա] եղավ մի անգամ անտառի մեջ էլ
27-28 [Թեև թարմ ու նոր, ճյուղերն էլ կանաչ,
Բայց հո ընկել էր իրանից առաջ]
32 [Իսկ դու] ընկել ես [պարծենկոտ] հըսկա:
36 Պատասխան [տվեց] տվավ ընկած
վիթխարին:

ԲԹ, ԹԼ

8 Վերջը այս տեսակ պայման կապեցին.
11-12 Որ թե որոշած այն օրին հասնեն,
Այն օրը մին էլ գան իրար տեսնեն:
19 Եվ այնպես հուժկու կանգնեց անտառում,
34 Այդքան էլ կապրեմ դեռ այսպես թիկնած

ԲԲ

3 Թե որն իրանցից շատ տարի կապրի,
8 Վերջը այս տեսակ պայման կապեցին.
11-12 Որ թե որոշած այն օրին հասնեն,
Այն օրը մին էլ գան իրար տեսնեն:
15 Դեպի ժայռերը, դեպի ամպերը,
19-20 Եվ այնպես հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգ հարյուր տարի:
26 Տեսավ, որ Կաղնին ընկել է արդեն.
34 Այդքան էլ կապրեմ դեռ այսպես թիկնած

ԲԲ ուղղ.

20 Որ [վայր] վեր չընկնի էլ հինգ հարյուր
[տարում] տարի:
34 [Այդքան] էդքան էլ կապրեմ [դեռ]
[այսպես] էսպես [թիկնած] թեք ընկած

«ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ»
(էջ 115)

ԲԹ, ԹԼ

9 Այսպես բարկացավ մի օր խորթ մերը,
65 Այսպես վերևից հենց կանչեց Աստված

ԲԲ

10 Ծիրանիներ տըվեց, գըրկեց հորթերը:
30 ա Որ չտեսնեն ձեր շուքը մեկ էլ
բ Որ չը տեսնեն ձեր շուքը մեկ էլ...
36 Հոգնած ու սոված, արցունքն աչքերին
58 Թռչուններ գառեր, թըռե՛ք, մա՛ն եկեք,
63 Ապրուստ ունեցե՛ք իմ լի սեղանից,
65 Էսպես վերևից հենց ասեց Աստված,
73 Մրսում են, ճըչում,

ԲԲ ուղղ.

63 Ապրուստ էլ առեք իմ լի սեղանից.

ԼՍ

9 Այսպես բարկացավ մի օր խորթ մերը:

ՈՐԲԸ
(էջ 118)

«Թատրոն» (առաջին տպագրություն)

ՈՐԲ ԹՌՉՈՒՆԸ

(Ժողովրդական ավանդություն)

– «Սըհա՛կ, Սըհա՛կ», գիշերն ի բուն
Կանչում է ձոտն աղեկըտուր,
Աշխարհքն այնինչ մտած խոր քուն,
Ինքը մենակ և շուրջը լուռ:

Բայց դուք գիտե՞ք, թե ով է նա,
Ո՞ւմ է կանչում ամեն գիշեր.
Ականջ արեք պատմեմ ահա.
– Նազիկն է այն որբ ու անտեր:

Աղջիկ էր նա մի ժամանակ,
Ջահել, աշխույժ, գեղեցկադեմ.
Թուրքը տեսավ – խելքը գնաց.
Եկավ տանի իրան հարեմ:

Բայց երբ գազան թուրքը եկավ,
Նրան բռնի հարեմ տանի,
Կտրիճ Սահակն առավ փախավ,
Որ իր քրոջն ազատ անի:

*Ծոտ կոչված թռչուն է, որ գիշերները տխուր ձայն է տալիս, ասես թե Սրհակ է կանչում:

– Մի վախենար, ասավ, քույրիկ,
Ես չեմ թողնիլ քեզ տանելու.
Քեզ կըթռցնեմ, ինչպես մրրիկ,
Այս աշխարհքից հեռո՜ւ, հեռո՜ւ...

Տես այն ձյունոտ բարձր լեռներ,
Որ ձգվում են հեռվում ահա՜,
Այն սարերն էլ անցնենք թե չէ,
Այնուհետև էլ թուրք չըկա:

Հենց այս խոսքում թուրքը հասավ՝
Թուրը ձեռին, սև ձիավոր:
– Մի վախենար, քույրիկ, ասավ,
Սեգ պատանին քաջ ու հըզոր:

Մի՜ վախենար կանգնած եմ ես...
Տե՜ս, այն ձյունոտ սարերն ահա՜...
Փախի՜ր, գնա՜... այն էլ անցնես,
Այնուհետև էլ թուրք չըկա:

Ու Նազիկը լեղապատառ,
Վազ է տալիս, փախչո՜ւմ, փախչո՜ւմ...
Բայց հարամին մոտ է արդեն
Փրնչում է ձին գենքը շաչում...

– Ա՜խ, ի՜նչ կըլնի թռչուն դառնամ,
Կանչեց ամպից խեղճը հանկարծ,
Ու բաց էին դռներն երկնից,
Լըսեց նրա ձայնը Աստված:

Իսկույն դառավ նա թևավոր,
Երկինքն ելավ, թռա՜վ, պրծավ...
Մնա՜ց, մնա՜ց... մինչև այսօր
Եղբայրը դեռ ետ չըդարձավ:

Էն օրվանից անբախտ քույրը
Թռչուն դառած ման է գալիս,
Հենց հասնում է մութ գիշերը
«Սըհա՛կ, Սըհա՛կ»... ձայն է տալիս:

Ձայն է տալիս գիշերն ի բուն,
Կանչում է սո՛ւր, աղեկըտո՛ւր,
Աշխարհքն այնինչ մտած խոր քուն,
Ինքը մենա՛կ և շուրջը լուռ:

«ԹԱՏՐՈՆԻ» ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

6	Այնպես [ջահել] աշխույժ ու գեղանի.
8	Ուզեց բռնի հարեմ տանի
13 ա	Ասավ [Սըհակ քաջ եղբայրը]
բ	Ասավ եղբայր քաջ Սըհակը
15	Թողած իրենց հոր աշխարհքը [Վազ են տալի]
26	Կանգնած եմ ես Թուրքի դիմաց
25-28	Մի վախենար քույրիկ դու գընա, Ես էլ հիմի կըգամ.
29 ա	Ու ետ դարձավ քաջ Սըհակը
բ	Հասավ [կանգնեց] քաջ պատանին
գ	Հասավ դարձավ քաջ պատանին
դ	Հասավ կանգնեց չար Թուրքի դեմ
35-36	Մին էլ տեսավ Թուրքը եկավ Թուրը կորած արյան միջում
41	Դարձավ թիթեռ մի թևավոր

52-ից հետո՝

Քնիր բալաս
Սառված կա այս երկնքում
Մարդ նեղ օրին որ կանչի
Թևեր էլ է նա զրկում
և տխր<ությունն> է խրճիթում
լուռ ծանրանում...

ՍԵՎԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ (ԹԹԳԳ1079/52-25)

1

Փուշ կենդանի, մի քանի <1 անընթ.> այն էլ կորցրիր,
Դե դու էլ կորի, աչքս չը տեսնի...

Ճիպոտը ձեռքին,
Արտասուքն աչքին,
Սոված,
Խռոված,
Գնաց, կորավ
Եա չը դառավ:
[Հիմի եղբայրը փոշմանած]
Ման է գալիս թռչուն դառած,
Ու սրտաբեկ
Գիշեր-ցերեկ
Կանչում՝
Սըհակ, Սըհակ...

---

1 Փայտը ձեռքին
5 [Նա] գնաց, կորավ
6 [էլ] եա չըդառավ.
11 [Ճչում]

2

Նրա եղբայրը միշտ ման է գալիս
Միշտ ման է գալիս ու ձայն է տալիս
Ծանոթ-անծանոթ հարցնում ամենքին
Չե՞ն տեսել արդյոք եղբայր Սըհակին:

Բայց ոչ մի տեղ չի գտնում
[Անքուն, գողունի] Ցերեկը անդուլ գիշերը մթնում
[Ու ողջ գիշերը] ծվում ցավագին,
[Մեր անտառում առք-փառք]
Ինչ որ սիրտըդ կուզի, կուտես
լի անխնա – կըկվի ձագեր, լորի ձու,
նապաստակ

բաղ ու սաղ և այլն:
Թե հիվանդ ես հարցնում
ա մտիկ տուր ինձ – ինչ օրի եմ
բ մտիկ տուր ինձ – տես իմ օրըս
Ոտըս, պոչըս, աչքըս, փորըս...
Բժշկեցեք ինձ ու [իբրև վարձ]
Թեև վարձ չեք պահանջում
Բայց իմ [պատիվն ինչ է եղել]
Ձեզ խրախունք կըտամ
Որ [անտառի] ամեն մասում
Ինչքան ձեր սիրտն է ուզում
Ձեզ մի [կըկվի ձագ] ձու կըտամ
Ձեզ խրախունք կըտամ – անտառի էս մասում
Ինչքան [ուտես] – սիրտդ է ուզում

470-490-րդ տողերի սևագրեր.

[– Վա՜յ, շուտ արա, վարպետ ջան, շուտ -
[Բայց] առաջ պիտի քըտնես անշուշտ]
[Քրտինքը թույն է –
ազատիր ինձ
էս ցավերից]
[ու ոտը տուր
երկար պոչըս, մազըս, բուրդըս]
էս կողմերում
ա Թեև իշխան ես տեր ես միահեծան
բ Դու իշխան ես միահեծան
սովոր ես որ
ա Բայց ինձ համար [հիվանդ ես լոկ.]
բ [Բայց ինձ համար էսօր
Լոկ հիվանդ ես սովորական]
Քանի [էսպես] [որ] դու հիվանդ ես դեռ
Ես եմ լինում իշխան ու տեր
Բայց բժշկի համար

Երբ հիվանդ
Միահեծան արքա իշխան
Տեր, ստրուկ, խենթ ու խելոք
Նրա համար հիվանդ են լոկ:
502 Էս ինչ խելոք ճար արի
522-523 ա – Վա՜յ, վարպետ, մեռա
չէ, մի վախիր, մեռնել չկա,
Դեռ կապրես
բ Վարպետ, վառա՜,
Վառա՜, մեռա՜...
Մեռա՜... ուռա՜...
Վարպետն ո՞ւր ա...
(ծլկում է)

Գ ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թֆ №140(10բ)

«Թագավորությունը – էդ ես եմ»

21 ա [Ախ] դու կըկու, տըխմար կըկու
բ Հա՜յ դու կըկո՛ւ, տըխմար կըկու
28 ա [Մեր] աշխարհքի օրենքը հին
բ Էս աշխարհքի օրենքը հին

29-30 տողերի դիմաց, լուսանցքում՝

30 ա Աստծուց է տված, Աստծու կամքը:
բ [Իմն են], ինձ համար են, [ինձ] սեփական,
Ինձ համար են, իմ սեփական.
36-37 ա [Նըրա շահին,] [կամքին,] կարգին
Ու [Լսպեսով] ընդդե՛մ ես ինձ
բ Աստծու կամքին, նըրա կարգին,
Ու, ո՛վ սարսափ՝ ընդդե՛մ ես ինձ.
66 ա Եկավ արնոտ գելը նորից:
բ Եկավ դաժան գելը նորից:
77 ա Ի՞նչ ես ասում [դու] աշխարհքին
բ Ի՞նչ ես ասում էս աշխարհքին,

78 ա	[Էս աշխարհքի կամքին], կարգին,
բ	Աստվածադիր նորա կարգին,
79 ա	Որ [ամենքի] դեմ ես գընում –
բ	Որ աշխարհս դեմ ես գընում –
80 ա	[Ինձնից թաքուն] ձայն ես հանում…
բ	Քեզ ու գլխու ձայն ես հանում…
86 ա	Լըցնես [ամբողջ] կըկուներով
բ	Լըցնես [կեղտոտ] կըկուներով
գ	Լըցնես քեզպես կըկուներո̂վ…
87-88 - չունի:	
101 ա	Ու ահարեկ, [անճար] ու խեղճ,
բ	Ու ահարեկ, մենակ ու խեղճ,
102 ա	Նրանից, որդաց [իր] բընի մեջ
բ	Նրանից, որդաց պաղ բընի մեջ
109 ա	Գելն [անիրավ],
բ	Գելը սարով
114 ա	[Աղվեսն] սանամերին
բ	Նազով-մազով սանամերին
126 ա	Էդ <1 բաց թողնված բառ>
բ	Էդ ինչ… խաբվել ես դու…
144 ա	Ագահ գելը զարհուրելի
բ	Սարի տերը զարհուրելի
գ	Գելը արնոտ, զարհուրելի:
198 ա	Էն ծըմակում մի մեծ գըմակ
բ	Էն ծըմակում մի գեր գըմակ
199 ա	Ունեմ [պահած]
բ	Ունեմ դադած
գ	Ունեմ ծածկած
201 ա	Բընությունս էապես
բ	Մի բնություն ունեմ էապես՝
203 ա	Բանը մենակ կուլ չի գընում
բ	Կոկորդիցս կուլ չի գընում.
205 ա	[Երբ] հանկարծ դու ելար իմ դեմ

բ	Եվ հանկարծ դու ելար իմ դեմ:
217 ա	[Մեղավոր եմ], [ախպեր,] քո դեմ,
բ	Մեղավոր եմ, ասավ, քո դեմ,
գ	Հանցավոր եմ, ասավ, քո դեմ,
223 ա	Դըմակ ունենք, մի լիանանք
բ	Ունենք, ունենք, մի լիանանք:
230-240-ի դիմաց՝	Օրինակ է բերում.
246 ա	Ողջ լիանան... Ծըմակ... դրմակ...
բ	Ողջ լիանան. . . . .

260-263-ի դիմաց, լուսանցքում՝

	Զրույց տալով գնում են – էն աղվեսի, նրա չար գործի և գելի իշխանության ու աշխարհքի կարգի մասին:
266 ա	Գելի աչքը հենց որ տեսավ
բ	Գելի աչքերն հենց որ առան,
267 ա	[Վառվեց] ասես մի-մի կրրակ դառան.
բ	Ասես մի-մի կըրակ դառան.
268 ա	Աղվեսն [այնինչ] նըստեց հեռու:
բ	Իսկ աղվեսը նըստեց հեռու:
305 ա	Եվ լսի՛ր ինձ, [կոպիտ] հիմար
բ	Եվ լսի՛ր ինձ, պարո՛ն հիմար
310 ա	Ու վրրեն էլ էսպես դըմակ
բ	Ու վըրեն էլ մի գեր դըմակ,
349 ա	Ոռնաց գելը [անճար գերի]
բ	Ոռնաց գելը ողորմելի
357 ա	Վա՜հ, ինչ եմ անտեր թողնում
բ	Վա՜հ, ինչու՞ ես անտեր մրնում.
388 ա	Ասավ, [ասավ]
բ	Ասավ, պըրծավ,
390 ա	[Սատանիկ] սովից ծունկը կրտրած,
բ	Երկար սովից ծունկը կըտրած,
405 ա	էն լիրրն, ասես, գետնից բուսավ

ր	Աշխեն, տես, գետնից բուսավ
407 ա	[Բռնել] եմ քեզ:
ր	Գրկել եմ քեզ,
412 ա	Բայց ալվեր [անահ] ու պաղ
ր	Բայց ալվեր [հանգարտ] ու պաղ,
414 ա	Խեղճ մարդ եք երևում դուք,
ր	Դու[ք] մի խեղճ մարդ [եք], կարծես,
գ	[Դուք լուրջ մարդ եք թվում էնպես]
գ	– Դու մի խեղճ մարդ ես, կարծես,
415 ա	[Բայց փարվում եք որպես մանուկ]
ր	Բայց ձեր խոսքը վայել չի ձեզ.
գ	Բայց խոսքերդ վայել չեն քեզ.
437 ա	[Դու էլ] ինքդ էլ տես՝ տեղս էր հորդ օղորմի.
ր	Ինքդ էլ տես՝ հորդ ողորմի.
448-450 ա	[Երկրե-երկիր ման եմ գալի]
	Իմ արվեստի սիրուց [խելառ] հարբած.
ր	Իմ արվեստի սիրուց հարբած՝
	Ոտըս բոբիկ, գլուխըս բաց
	Երկրե-երկիր ման եմ գալի,
470 ա	Առատ-[առատ], [կուտես]-կուտես
ր	Առատ կապրես, համով կուտես
473 ա	Միայն թե [ինձ] [ազատիր] ինձ
ր	Մենակ թե ազատիր ինձ էս ցավերից
474 ա	[Ետ] տուր աչքըս, [առողջ] ոտըս,
ր	Տուր լուս աչքըս, առույգ ոտըս,
476-477	Եվ հոգուդ է
	Եվ օգուտ է
482 ա	[Բայց] բըժըշկի համար չըկան
ր	Որ բըժըշկի համար չըկան
483 ա	Միահեծան արքա, իշխան,
ր	Էս աշխարհքում արքա, իշխան,
485 ա	Նըրա համար հիվանդ լոկ...
ր	Ողջ հավասար հիվանդ են լոկ...

487 ա	Ես եմ [էստեղ] իշխան ու տեր.-
բ	Ես եմ մեր մեջ իշխան ու տեր.-
490-493-ի դիմաց, լուսանցքում՝	կռունկի պատմությունը, որկորից ոսկորը հանելը:
502 ա	էս ինչ հըրաշք ճար արի...
բ	էս ինչ խելոք ճար արի...
505 ա	[Ոչինչ, ոչինչ], քիչ էլ կաց դեռ,
բ	Քեզ եմ ասում, քիչ էլ կաց դեռ:
510 ա	Անհաստատ է բախտն էսպես:
բ	Անհաստատ է կյանքն էսպես:
522 ա	[Բժիշկ], շունչըս... [բըժիշկ], մեռա՜...
բ	– Վարպե՜տ, շունչըս... վարպե՜տ, մեռա...
523 ա	[Մեռա՜ր]... <1 անընթ.>, վարպետն ո՞ւր ա...
բ	– Դուրս արի տե՜ս... վարպետն ո՞ւր ա...

ԻՆՔՆԱԳՐԻՆ ԿԻՑ ՊԱՀՎՈՂ ՍԵՎԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

– Լեզուդ [մի բաց] հանիր – բերանդ.
(հանում է)
– փառ է կապած:
– Իսկ երա՞կը (մեկնում է)
– Թույլ է զարկը...
Բախտ [եք] ես ունեցել –
[էս կողմն] որ դեսն եմ անցել.
Քիչ էլ [որ] մընար,
[էլ դեղ ու ճար չըկար]
[Ոչ մի հընար
Ու դեղ ու ճար
էլ չըկար...]
Պիտի հնանար –
Իսկ որ հնացավ
ու շնացավ
ցավին էլ ճար –
Շատ է դըժար –

Մենք աշխատում ենք ամենքի երջանկության համար
Մենք ուզում ենք, որ ամենքը կուշտ լինեն.
Ահա՝ վատն ենք ասա խնդրեմ – ինչո՞ւ
Աշխարհքում կարգ կա աստված
Եվ ժողովուրդն էլ մեզ հետ է – մի աղվես դուրս է եկել թե՝...

Էլ ո՞ւմ ասեմ, կամ ինչ լսեմ,
Երբ աշխարհքը ամբողջ – ես եմ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻՑ
(Ըստ Աշխեն Թումանյանի արտագրած օրինակի)

Աղվեսի ճտի ժամանակ կըկուն շարունակ հրճվանքի մեջ է և անհանգիստ.

– Կուկու, կուկու
բոլոր կըկուներ,
բոլոր նըկուներ,
եկեք միանանք,
ապրենք լիանանք,
դարը մերն [է] ա
սարը մերն [է] ա
տարարիրա,
տարա-րի-րա,
ինչ լավ դար ա,
ինչ լավ սար ա...
(և կրակրտացնում է կողքին կուչ եկած կատվի գլուխը)
կատու – ես քեզ ինչ եմ արել.
կըկու – ամառը շվաքում
ձմեռը տաքում
անձրև չես տեսնում
արև չես տեսնում
մաքուր խատակ
[հագիդ մուշտակ]

ձմեռ-ամառ
կա՛մ քեզ համար...

(Կատուն տեսնում է, որ վտանգված է – վախեցած խեթ-խեթ նայելով հեռանում է):

Երբ ասում է մաքրել
ներքին և արտաքին թշնամիներից –
մինը բոլոր չախկալների վրա նշան է դնում
– ինչ ես անում –
– նշաններ եմ դնում բոլոր չախկալների վրա:
Սրանցից պիտի մաքրվել:
(չախկալներից, որը փախչում է, որը փչանում
ընկնում ոտի տակ):

Երբ ասում է – բոլորս
եղբայրներ ենք – սկսում
են համբուրվել՝ շունը նապաստակի
հետ, կատուն՝ մկան և այլն
մեկի համբույրի ժամանակ գլուխը
մնում է բերանում:

մյուս տեղ կռիվ է պատահում –
– շունը նապաստակին դնում է
տակին խեղդում – ասում է
համբուրվելիս շրթունքս կծեց...
(դրանց դատը հետո)

Բայց [ասում են] էն օրվանից
կըկվի աչքն էնքան է վախեցել,
որ [էլ] իրեն համար էլ առանձին
նոր բուն չի շինում, ուրիշների
բներում է [ձու] ածում:

[միջին նստել, ձայներ հանել]
Ու հաշիվ էլ չես տալիս
Թե ինչեր ես դու մտածում
քանի քանի ձու ես ածում
կամ թե քանի հատ
ինձ հպատակ ձագ ունես հանած
կամ թե քանի իմ հպատակ
ձագ ես պահում թևերիդ տակ
ու չես ուզել դու անամոթ
մինչ ծառա ղրկես ինձ մոտ:

Հավի սագին՝ ականջում – գիտես սրան հիշում եմ մի գիշեր
հավանոցում և ճիշտն ասեմ – մեզ.
Մինը – հիմի էլ դուն քու հավքի ուղեղով...
Մյուսը – դու քո մասին ես մտածում, իրավունք չունես քո
մասին մտածելու, այլ ընդհանուրի...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I

1889

ԻՂՁ
(էջ 235)

Ինքնագիր

5 *Ես դեպի հարավ կըսլանայի,*

1890

«ԵԹԵ ԻՐԱՎ Է, ՈՐ ԳԻՇԵՐՆԵՐԸ»
(էջ 237)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №244(178), Տզ

8 *Կըկանչեմ նորա նըսեմ ըստվերը*

ԲՄ I

4 *Գերեզմանների վերա դողդողում*

Դ

4 *Գերեզմանների վերա դողդողում*

10 *Ինչպես որ էիր անջատման ժամին,*

1892

ԴԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ
(էջ 238)

ԲՄ II

2 *Ծեր Լաբերիոսը կանգնեց կրկեսում՝ Հռոմի առաջին.*

9-16 *Եվ սրի ձայնով անմահ Հռոմի հրճվանքի համար*

Ձգտում են ըմբշի և կամ միմոսի պըսակ ստանալ...
Լաբերիոսն այստե՞ղ... բայց չէ մոռացել Հռոմը նրան.
Հին քաղաքացի և հռչակավոր երգիչ անմահ,
Իսկ արդ կրկեսում, ամբոխի առջև այսպես նա
կանգնած,
Լուռ ու գլխակոր գետնին է նայում ամոթից կարմրած...
Եվ խոսակցության անորոշ ձայնը նրան է հասնում.
Նա յուր աչքերը Հռոմի վերա չի համարձակվում
18 Այս անարգանքին ինքնաբավական հայացքով մենակ
20 Գտնող Հռոմը լսեց վերստին: Կորացած գլխով,
23 Բայց նրա դեմքը առաջվա նման փայլեցավ վառ-վառ,
24 Եվ այն ճակատը վերստին դարձավ հանգիստ ու
պայծառ,
25-29 Եվ նորից երգի, բանաստեղծության համարձակ հոգին
Հասավ պոետին, նրան սիրտ տվեց, նա զվարթացավ,
Եվ սառնությունը սրտիցը մինչև մատները անցավ...
30-32 Նա ոգևորվեց.– նրա աչքերը կրակ են ցայտում:
Նայում է շուրջը ընկճող հայացքով... տարածեց ահա
Խռովությունից դողացող ձեռքը քնարի վերա.
37-39 Նոր նշան տվեց. և ահա երկչոտ և անհամարձակ
Լսվեցավ ձայնը... Ծերի դողդոջուն, չոր մատների տակ
Գովված քնարի թրթռուն լարերը հնչեցին կամաց,
51-52 Նա թախանձում է, որ ողջ մտածեն ինչպես որ ինքը,
Կեսարի շրթան վերա ճանաչեն իրանց օրենքը.
54 Եվ միշտ Կեսարի թշնամու ջանքերն իզուր ցրվեցին,
57 Հանկարծ վիրավոր երգիչը ցնցեց զըլուխն ալեզարդ
60-62 Այլևս չերգեց, այլ բոլոր ուժով գոռաց արձակեց
Խեղդվելով ցավից և բարկությունից ալևորը հեզ –
«Քաղաքացիներ, իրավունքներս կորցնում ենք, ելեք»:

1894

«ՄԵՌԱՎ ԻՄ ՄՈՒՍԱՆ... ՍԱԿԱՎ ԺԱՄԱՆԱԿ»
(էջ 247)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №246(172)

1 *Մեռավ իմ մուսան... սակավ ժամանակ*
3-5 *Ծաղկունքըս ընկան, ջահերըս հանգան,*
Խավարչտին գիշեր, ինչպես գերեզման:
Ցավից, տանջանքից հոգնած իմ սրտում
9 ա *Բայց իմ սենեկում – կար մի ժամանակ*
բ *Բայց իմ սենեկում երկար ժամանակ*
28 *Ականակիր գիշեր, ինչպես գերեզման:*

ՀՀ

2-9 *Նա լուսավորեց օրերըս միայնակ.*
Թափեցին ծաղիկներս, կրակներս հանգան,
Մութն է գիշերըս, ինչպես գերեզման:
Ցավից, հուզմունքից հոգնած իմ սրտում
Ջուր եմ ես բուժիչ ձայներ պտըրտում.
Ճըմլած է առաթուր պսակս հոտավետ
Կռվում եմ աներգ, տրտմում եմ աներգ:
Բայց՝ առաջ միջումն իմ հեգ սենեկի
12-20 *Գլխիս կըբացվեր լույսերի ծովում,*
Կըձգվեր հեռու լճակն արծաթի,
Կըփայլեր շըքեղ պալատ սյունազարդ:
Կըբարձրացնեին ծոցում կապույտի
Սուր ժանիքները լեռներ ձյունապատ...
Իսկ արդ – մենակ եմ. դատարկ ու մութը,
Խորթացած անկյունիս աչքիս է նայում,
Որպես սև թռչուն իմ լուսամուտը
Բըքոտ գիշերը երկյուղով բախում:
26-28 *Նա լուսավորեց օրերըս միայնակ*
Թափեցին ծաղիկներս, կրակներս հանգան,
Մութն է գիշերըս, ինչպես գերեզման:

ԲԹ

1 Մեռավ իմ մուզան... սակավ ժամանակ
9 Բայց իմ սենեկում – կար մի ժամանակ –
21 Պերճ պալատներըս ցընդեցան օդում,

1899

ՕԼԵԳԻ ԵՐԳԸ
(էջ 250)

Ինքնագիր (ԳԱԹ Թ·ֆ №244(177)

7 Մըթին անտառից նորա հանդիման
10 Կյանքում հնազանդ միմիայն Պերունին
18 Վարձըդ՝ քո սիրած ձին կըտամ ես քեզ։
36-37 [Հաղթ<ողին>] անտես ոգի է պահում.
Ոչ մի վըտանգից չի վախում քո ձին,
42 Բայց... դա կըլինի պատճառ քո մահվան,
87 Քեզնից շատ ապրեց քո տերը [նախկին]

Տղ

7 Մըթին անտառից նորա հանդիման
10 Կյանքում հնազանդ միմիայն Պերունին
18 Վարձըդ՝ քո սիրած ձին կըտամ ես քեզ։
24 Բայց կարդում եմ գիրդ ես քո ճակատին
33 Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշնակ
36-37 Հաղթողին անտես ոգի է պահում։
Ոչ մի վտանգից չի վախում քո ձին,
39 Մերթ հեզ կանգնում է նետերի տակին,
42 Բայց... դա կըլինի պատճառը քո մահվան։
44 Մըռայլեց դեմքը չարագույժ մտքից,
47 Եվ վերջին անգամ իր հին ընկերին
52 Քո ասպանդակի մեջ չեմ դընելու
55 Ծածկեցեք նրան թավարծի գորգով,
65 Հիշում են նըրանք օրերը անցած,

68 Ասեք ինձ, ո՞ւր է, սիգապանծ իմ ձին
70 Այնպես կըրակոտ է նա տակավին:
72 Մահու սև քընով վաղ է հանգել նա:
77 Կարեի մինչ օրս իմ ձիուն հեծնել,
80 Նրա հետ Իգորն և հյուրերը հին.
84-87 Եվ սեգը քամին վըրան օրորում:
Ոսն զգույշ դրեց իշխանը գանգին
Եվ կանչեց – քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզնից շատ ապրեց քու տերը նախկին:
100 Խումբը նստած է Դնեպրի ափին:

ՋՐԱՀԵՂՁԸ
(էջ 254)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №247(176)

9 Դիվան կըգա – ջուղաբ տո՛ւր,
19 Արդյոք [անբախտ] մի թշվա՞ռ էր
21 Մի գետակուր ձկնո՞րս էր այն,
24 Գողերի էր պատահել...
34 Ցած էր իջնում ճոճելով,
43 Մարխը արդեն այրվեց, հանգավ,
67 Փեղկը զարկեց: Նա դողալով
79 Ու խեղդվածը [ելնում գետից]

ԱՄ

9 Դիվան կըգա – ջուղաբը տուր,
16 Երևում էր ընկած դին:
19-21 Արդյոք անբախտ մի թշվա՞ռ էր
Հանգիստն առած ջրի տակ,
Մի գետակուր ձկնո՞րս էր այն:
24-25 Գողերի էր պատահել...
Ինչին է պետք... Աչք ածելով
30-32 Ջուրը հրեց նա նորան

Եվ գիակը գնաց նորից
Փնտրել խաչ ու գերեզման։
34 Ցած էր իջնում ճոճելով,
40 Էնքան կըտամ – կըսպանեմ։
43 Մարխը արդեն այրվեց, հանգավ,
47 Բուքն ոռնում է, մեկ էլ հանկարծ
51-52 Ի՞նչ է ցավդ... կես գիշեր
Ինչ չար հողմ է դեսը քշել։
54 Նեղ է տեղներս, տունը մութ...
59 Ջուր է թափում նորա միրքից,
63-64 Մարմնին կպած քաղչագները
Ահեղ սևին են տալի։
67 Փեղկը զարկեց։ Նա դողալով
69 Մտքերն իրար խառնվեցին,
71 Մինչև լույս դուռն ու լուսամուտ
75 Սպասում է ամեն տարի
78 Գիշեր գալիս բուք ու մութ

Բթ

9 Դիվան կըգա – ջուղաբը տո՛ւր,
21 Մի գետակուր ձկնո՞րս էր այն,
34 Ցած էր իջնում ճոճելով,
43 Մարխը արդեն այրվեց, հանգավ
67 Փեղկը զարկեց։ Նա դողալով

1900

ԳԵՂՋՈՒԿԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ
(էջ 258)

Ա ինքնագիր (ԳԱԹ Թֆ №245(166)

5-6 Ոչ ջահել կընիկ
Ունիմ իմ կողքին
12 Ոչ քյահլան մի ձին

Բ ինքնագիր (ԳԱԹ փվ.ֆ №413/7բ)

1 Նստել պատի տակ
5 Ոչ ջահել կընիկ
11-12 Ոչ տափան ու չութ,
Ոչ քյահլան ձին...
17 Բայց, ավա՜ղ, էն էլ
21 Նստել պատի տակ

Տգ

5 Ոչ ջահել կընիկ
9 - չունի։
11-12 Ոչ տափան ու չութ,
Ոչ քյահլան մի ձին...

ԲԹ

6 Ունիմ իմ կողքին

ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՄԱՅՐ՛ԻԿ
(էջ 259)

Ա ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թֆ №248(162)

1 ա [Օրորիր ինձ] նանիկ ասա մայրիկ, քո հիվանդ որդուն.
բ Հիվանդ եմ, մայրիկ, նանիկ ասա ինձ
2 ա [Որ ասում էիր] ինչպես օրրանում
բ Որ ասում էիր երբեմն օրրանում
4 ա [Տանջվում եմ ահա], քունս չի տանում
բ Ու նանիկ ասա, քունս չի տանում
5 ա Ես վայր կըթողնեմ գլուխս հոգնած
բ Թող վայր դնեմ ես գլուխս հոգնած
6 ա [Ծաղիկը արդեն նիրհում է մթնում
բ Գիշեր է – ծաղիկը հանգչում է արդեն
գ Գիշեր է արդեն – խոտն էլ է հանգչում
դ Ննջում է ծաղիկը մթին գիշերով

ե Գիշեր է արդեն, ծաղիկը հանգչում
7 ա Ով որ տուն չունի նա էլ է քնած
բ Հանգչում է պանդուխտը անտուն
գ Վաղուց է անտուն պանդուխտն էլ քնած
8 ա Մենակ ու անքուն հենց ես եմ տանջվում:
բ Մենակ քո անքուն որդին է տանջվում:
գ Մենակ քո հիվանդ զավակն է տանջվում:
9 ա Քո [խորթ] Թռչնակը վախցած է բույնից:
բ Մրրիկից վախցած է քո Թռչնակը:
գ Քո հեզ Թռչնակը վախցած է բույնից:
10 ա Ախ, մատաղ օրով շատ ցավեր տեսա
բ Ծանր է կյանքս, իմ կյանքը մատաղ
գ Էլ քուն չունեմ ես – տանջվում եմ վշտից
դ [Դառնացած սիրուց, վշտացած կյանքից]
ե Ախ, ես ջահելուց շատ ցավեր տեսա
զ Ա՛խ, ես դեռ մանկուց շատ ցավեր տեսա
11 ա Քունն աչքես փախած տանջվում եմ ցավից
բ Քունն աչքես փախած սրտումս կսկիծ
գ Քունն էլ, դադարն էլ փախան իմ աչքից
դ Քունն էլ վաղուց է փախել իմ աչքից
ե Քունն էլ, հանգիստն էլ փախան իմ աչքից...

Տգ

9 Քո հեզ Թռչնակը վախցած է բույնից.
11 Քունն էլ է վաղուց փախել իմ աչքից...

ԲԲ

8 Միայն քու հիվանդ զավակն է տանջվում:

1902

ԱՆՁՈՒԿ
(էջ 260)

Տգ

7 Ինչո՞ւ, ինչո՞ւ չունեմ թևեր,

Բթ·

2 Այս հովիտի խորքերից

1903

«ԿՈՒԶԵԻ ՀԱԼՎԵԼ, ՁՈՒԼՎԵԼ ԻՄ ԵՐԳԻՆ»
(էջ 262)

ԲԲ ուղղ.

2 Նրա ամեն խոսքի մեջ թաքնվել ծածուկ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
(էջ 263)

ԲԲ ուղղ.

11 Որ հավքերն երգում են ձեզ

1907

ԷԼԵԳԻԱ
(էջ 267)

Արոր, ԲԲ

5 Ձայն չի գալի ոչ մի կողմից,
7 Վըրացին է մերթ քընի մեջ

ԲԲ ուղղ.

5 Զայն չի գալի ոչ մի կողմից,

ՎԱՐԴԸ
(էջ 269)

ԲԲ

9 Վարդն ասաց.- Տե՛ս, կըծակեմ,
15 Փուշը նրա ձեռք ծակեց,

ԲԲ ուղղ.

4 Մանիկ վազեց նայի վարդին
6 Նայի վարդին, կարմիր վարդին,

1908

ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ
(էջ 270)

ՀԱ

4 Երբ որ կըզարթնեն երգերը կըրկին

1909

ԶՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ
(էջ 271)

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թ-ֆ №250(179)

1 ա Հողմը ամպով երկինքն առնում
բ Հողմը մեգով երկինքն առնում
2 ա [Պտըտում] է բուքը ձյան,
բ Գալարում է բուքը ձյան,
3 ա Մերթ մանկան պես լաց է լինում,
բ Մին՝ մանկան պես լաց է լինում,

4 ա Եվ մերթ ոռնում զերթ գազան
բ Մերթ ոռնում է զերթ գազան.
գ Մին՝ ոռնում է զերթ գազան.
5 ա Մերթ վայրենի սուլում պեսպես,
բ Մին՝ վայրենի սուլում պեսպես,
6 ա Մեր կիսավեր տանիքում,
բ Աղմկում է [խարխուլ] դատարկ տանիքում
գ Աղմկում է տանիքում
7 ա Մերթ ուշացած ճամփորդի պես
բ Մին՝ ուշացած ճամփորդ, ասես,
8 ա Լուսամուտն է նա [զարկում]
բ Լուսամուտն է նա թակում:
9 ա Մեր խրճիթը [խարխուլ] ու հին
բ Մեր խրճիթը, աղքատ ու հին,
11 ա Ինչո՞ւ ես դու, պատի տակին
բ Ի՞նչ ես [կծկվել] պատի տակին
գ – Ի՞նչ ես նստել պատի տակին,
13 ա Հոգնեցրել են քեզ մրրրիկի
բ [Բեզարել] ես փոթորիկի
գ Հոգնել ես դու փոթորիկի
14 ա Ոռնոցների ձայներից
բ Ոռնոցների աղմուկներից
գ Ոռնոցներից խելագար,
15 ա Թե՞ նիրհում ես քու իլիկի
բ Թե նիրհում ես քո իլիկի
16 ա Բըզզոցներից միալար
բ Բըզզոցի տակ միալար:
18 ա [Ուրախանանք] [սրտալի]
բ Իմ սև, չահել օրերի
20 ա [Որ] սիրտներս բաց կըլինի:
բ Սիրտներըս բաց կըլինի
21 ա Երգի – ո՞նց էր հավքը խաղաղ
բ Երգիր, ո՞նց էր ապրում խաղաղ

22 ա Երաշտահամը ծովից դեն
բ Պարիկը ծովից դեն
գ Հավքը ծովի էն ափին
23 ա Երգի ո՜նց էր աղջիկը վազ
բ Երգիր, ո՜նց էր աղջիկը վազ
24 ա Ջուրը գնում լուսնի հետ:
բ Ջուրը գնում մինչ արփին:

Հր

3-7 Մերթ՝ մանկան պես լաց է լինում,
Մերթ ոռնում է գերթ գազան
Մերթ վայրենի սուլում պեսպես
Մեր կխասվեր տանիքում,
Մերթ ուշացած ճամփորդ, ասես,
9 Մեր խրճիթը խարխուլ ու հին
21-22 Երգի – ո՜նց էր հավքը խաղաղ
Երաշտահամը ծովից դեն,

«ԱՄԲՈՂՋ ԳԻՇԵՐԸ ԽՈՍԵՑ ԱՆԴԱԴԱՐ»
(էջ 273)

Առաջին տպագրություն

3 Ու հինգ առավոտ բացվեց ոսկեվառ,
7 Մով տերևներից թափվում են լուռ լուռ

«ՄԻ ԵՐԳ ԿԱ ՄԱՆԿՈՒՑ, ՄԻ ԵՐԳ ԿԱ ՄԱՆԿՈՒՑ»
(էջ 274)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №249(180)

1 Մի երգ կա մանկուց, մի ձեն կա մանկուց
3 Ա՜խ, որքան հիմի, ա՜խ, ինչպես հիմի
5 [Երգում] ճախրում էր ծիծառ, երգում էր ծիծառ
7 Աշխարհքը զրվարթ, աշխարհքը պայծառ

9 Հայրենի դաշտեր, սրբազան դաշտեր,
10 Ա՜խ, ինչ եմ ուզում
11 Ձեր գըրկում մին էլ, ձեր ծաղկում մին էլ
13 Երբ որ հեռացա, ա՜խ, երբ հեռացա՝
15 Երբ որ ես դարձա, երբոր ես դարձա՝
17 Գալու է գարուն, նոր ծաղկած գարուն –
19 Բայց իմ սիրտն, ավա՜ղ, իմ [հեզ] սիրտն, ավա՜ղ,
21-22 Եվ ոչ մի ծիծառ, գարունքվա ծիծառ
Չի բերիլ իր հետ:

Հր

1 Մի երգ կա մանկուց, մի ձեն կա մանկուց
5 Երգում է ծիծառ
7 Աշխարհքը զվարթ
10 Ա՜խ, ինչ եմ ուզում
11 Ձեր ծաղկում մին էլ
19 Իմ հեզ սիրտն ավաղ
21 Գարունքվա ծիծառ
22 Չի բերի էլ ետ

1910

ԼՅՈՒՍԻՆ
(էջ 276)

1-4 Իմ ընկերներ, երբ կմեռնեմ
Շիրմիս տնկեք սգվոր ուռի
Նրա դալուկն ես կսիրեմ,
Ու սաղարթը իր տխրալի:

1917

ԹԵ ԼԻՆԵԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ...
(էջ 288)

Ա ինքնագիր

1 [Եթե] լինիմ անապատում
3 ա Բախտ կըլինի ինձ անապատում
բ Լույս կըլինի ինձ անապատում
5 Իսկ թե լինիմ միահեծան
7 Դու կըլինիս ամենաթանկ

Դ ինքնագիր

3 Բախտ կըլինեք ինձ անապատում
7 Դու կըլինեիր ամենաթանկ

1910-ական թվականներ

ԼԵՌԱՆՑ ՇԱՐՔԵՐԸ
(էջ 289)

Ա ինքնագիր

3-5 Խաղաղ դաշտերում
Մուժն է պատում
Ճամփեն [անփուշի]
7 Քիչ էլ [բադամիր]
8 ա Դու էլ կըքընես
բ Հիմի կըքընես

Բ ինքնագիր

5-7 *Ճամփեն [անփոշի]*
Տերևն անշարժ
Քիչ էլ [ըսպասիր]
8 ա *Դու էլ կըքընես*
բ *Հիմի կըքընես*

Գ ինքնագիր

6 ա *Տերևն անքամի*
բ *Տերևն անժաժ*
8 *Հիմի կըքընես*

1921

ԾՈՎԻ ԵՐԳԸ
(էջ 290)

Բ ինքնագիր

8 *Ու ճեմում ենք անհունն ընկած,*

1907

ՄԻՏԻԿԻ ՕՐՕՐՔԸ
(էջ 298)

1908 ԼՄ

9-10 *Բայց դու հավիկ մեզ օրօրի,*
Զարթեցնես ծիտիկին.
12 *Նանի՜, ծիտիկ ջան, նանի՜*

1908

ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ
(էջ 300)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №258(183)

5 *Մոտիկ է գալի[ս]*
7 *Ինչու ես լալի[ս]*
9 *Հապա ինչ անեմ*
11-12 *[Գանգատ է անում*
Փիսոն արխրադեմ:]
27-30 - *չունի:*
31 *Ասում է փիսոն*

ԼՄ

9 *Հապա ինչ անեմ*
21 *Էն քոթոթ Սուրենն*

ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ
(էջ 305)

Հսկ, ԼII

7 Ասի՝ աշխարհը հարդից է շինած,

ԱՇՈՒՆ
(էջ 306)

Ձեռագրի ուղղ.

10 Ամենքը տրտում
12 [Ամենքն] իրենց տուն

1908, ԼII

12 Ամենքն իրենց տուն

ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ
(էջ 307)

Հսկ

1 Այնտեղ, ուր հովը խաղում է ազատ
3 Այնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
9 Մի օր էլ այսպես անհանգիստ տրդան
11 «Մայրիկ, այստեղից պետք է հեռանամ,

ԼIII

1 Այնտեղ, ուր հովը խաղում է ազատ
3 Այնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
11 «Մայրիկ, այստեղից պետք է հեռանամ.

1909

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ
(էջ 309)

ՀII

Միայն թե հիմի մի կտոր հաց

II

1890-ական թվականներ

ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ
(էջ 318)

<Տողացի թարգմանությունը> (ԹԹԴԴ1079/9-4)

Մնաս բարև
Դե հավիտյան մնաս բ<արև>
Թող հավիտյան մնաս <բարև>

1. Թեկուզ դու լինես անողոք, անգութ
[Թեկուզ և դու շատ ես անգութ]
որքան էլ որ անգութ լինես
սիրտս քո դեմ не восстанет
ինչեր չես կարդալու դու այս սրտի մեջ.

2. այս (սրտի մեջ) կրծքի տակ, որի վրա
հաճախ դնում էիր գլուխդ
այնքան հանգել ես դու այն ժամանակ, երբ [դու]
[այն] քո վրա իջնում էր այն անդորր քունը,
որ դու այլևս երբեք չես ճանաչել:

3. դու կըխոստովանեիր, որ զուր ես
(նրան) այդպես արհամարհել:

4. թեկուզ այս գործում աշխարհքը քեզ պաշտպաներ
[ժպտար] այն հարվածներից, որ տալիս էր ինձ
այդ կլիներ մի վիրավորանք քեզ համար
այդ օտարի գովասանքն քեզ – որ իմ թշնամության
վրա <է> հիմնած

անշուշտ շատ արատներ
պակասություններ փչացրել են
իմ էությունը – <1 անընթ.>

6. մի խաբիր քեզ – սերը կարող է
հանգչել – մարել կամաց կամաց – թեթև
աստիճանաբար – բայց մի կարծիր
որ կարելի է մի հանկարծակի [ուժ]
թափով – զորով –

քո սիրտը դեռ. տակավին
(այնպես չըկա) (միշտ չըկա)
արյունոտ – պետք է, դատապարտված է
դեռ զարկելու տանջվելով այն մշտական
մտքով, որ մենք իրար էլ չենք տեսնի:

8. այս բառերում ավելի վիշտ
(դառնություն-կսկիծ) կա, քան այն
արցունքի, որ թափում են
մեռելների վրա:
Բայց ամեն առավոտ մեզ կարթնացնի

9. և երբ դու մխիթարանք կորոնես
և երբ մեր երեխայի բերնից կըլսես
առաջին ճիչերը
կըսովորեցնես հայրիկ կանչել,
որի խնամքից զուրկ է նա

10. Հիշիր նրան, որի աղոթքը
քեզ կօրհնի, որին քո սերը կարող էր
երջանկացնել:

11. Երբ նրա դեմքի գծերը նմանում են նրան
որին դու կրկին չես տեսնելու, այնժամ
դու կըզգաս, որ սիրտդ թեթև կըդողա
և այդ դողը կըլինի ինձ ծանոթ:

12. Գիտես բոլոր իմ մեղքերը, սխալներս
[բայց] ոչ ոք չի իմանում իմ
թեև թառամած իմ հույսերս քեզ հետ են

13. իմ բոլոր զգացմունքներս հաստատ
<1 անընթ.> էին, իմ գոռոզությունը, որ[ին]
ողջ աշխարհ [չըկարեց] չէր կարող [չ]խոնարհեց –
խոնարհեց քո առջև
մինչև իսկ հոգիս

14. վերջացած է զուր են խոսքերն
և իմ խոսքերից
բայց չենք կարող մեր միտքը սանձել
նա լույս է տեսնում [իմ] մեր
կամքի դեմ:

15. Մնաս-բարև, այսպես
բաժանված քեզնից, տեսնելով
կորած, խզած ամենաթանկագին կապերը
թառամած <?> մենակ –
որոնից ավել չեմ կարող մեռնել:

1-4 ա *Մնաս բարյավ, և թե [ընդմիշտ]*
Ապա ընդմիշտ մնաս բարյավ.
Սիրտս թեև չի [ներիլ] ներում քեզ,
Բայց չի ատիլ նա քեզ բնավ:
բ *Մնաս բարյավ, և թե կուզես՝*
Դե հավիտյան մնաս բարյավ.
Որքան լինիս դու անիրավ
Վեր չի կենալ սիրտս քո դեմ:
5 ա *Օ՛, թե սիրտս ես բանայի,*
բ *Օ՛, թե կուրծքս ես բանայի,*
6 ա *Որի վրա գլուխդ դրել ես դու՝*
բ *Ուր գլուխդ դրել ես դու՝*
8 ա *Կորած (քաղցր) քնով՝ հանգել ես դու –*
բ *Կորած քնով՝ հանգել ես դու –*
9 ա *Թե նորա տակ կարենայիր*
բ *Թե այնտեղ կարենայիր*
գ *Նորա ներքև կարենայիր*
12 ա *Որ շատ խիստ ես ինձ մերժել:*
բ *Որ շատ խիստ ես դու ինձ պատժել:*
17 ա *Իմ մեղքն, [ասենք] ինձ խորտակեց,*
բ *Իմ մեղքն, [իրավ] ինձ խորտակեց,*
21 ա *Դու մի՛ խաբվիր ունայն հույսով –*
բ *Ո՛հ, մի՛ խաբվիր ունայն հույսով –*
28 ա *Դողդողում է ինչպես առաջ...*
բ *Դողում է դեռ ինչպես առաջ...*
29 ա *Բառերս վշտով լիքն են ամբողջ*
բ *Էս խոսքերը վիշտ են ամբողջ*
30 ա *[Խորին վշտով] սգավորի,*
բ *Մեծ, քան միշտը սգավորի,*
32 ա *Եվ ապրում ենք ինչպես այրի:*
բ *Ու ապրում ենք – ինչպես այրի:*
33 ա *Արդյոք երբ որ ուզես հրճվել,*

բ Արդյոք երբ դու ուզես հրճվել,
40 ա Ու երջանիկ միայն քո սիրով։
բ Ու երջանիկ լոկ քո սիրով։
43 ա Սիրտդ մարի, դողա կրկին
բ Ու տրրոփե սիրտըդ կրկին
45 ա Իմ մեղքերն էլ գուցե հիշես –
բ Իմ հանցանքն էլ գուցե հիշես –
50 ա Գոռոզությունս [որ ոտնատակ]
բ Գոռոզությունս, որ ընկճեցիր,
51 ա [Ու] նույնիսկ հոգիս, որ [էլ] քեզնից լքված
բ Նույնիսկ հոգիս քեզնից լքված
54 ա Եվ իմ խոսքից[ն] էլ զուր չըկա.
բ Եվ իմ խոսքից զուրր – չըկա.
55 ա Բայց մենք չենք կարող իշխել, զսպել մեր միտքը
բ Բայց վրդովված միտքն ապստամբ
56 ա Դուրս է [հեղում] [միշտ] ակամա
բ Դուրս է զեղնում [միշտ] ակամա
գ Դուրս է հորդում նա ակամա
57 ա Մնաս բարյավ։ Ահա կըտրած
բ Մնաս բարյավ։ Այսպես կըտրած
58 ա Իմ հարազատ կապերն բոլոր։
բ Իմ հարազատ կապերն ամեն։

ՎԱՅՐԵՆԻ ՓԱՓՈՒԱՄՆԵՐԻ ԵՐԳԸ ՑՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻ ՎՐԱ։ ԻԴԱՐԱ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆ ԵՐԳՈՒՄ Է ԵՂԵԳՆԻ ՁԱՅՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
(էջ 321)

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թֆ №261(182)

3 ա [Բայց] մեր մեծ ծառերը նրանք կտրեցին
բ Մեր հին ծառերը նրանք կտրեցին
5 ա Բայց էդ ոչ մի բան չարժեր մեզ համար։
բ Բայց այդ ոչ մի բան չարժեր մեզ համար։
6 ա Նրանք, ցեղի պղնձումն ինչ կար,

բ Նրանք, համայնքի պղնձումն ինչ կար,
12 ա Ինչ որ ունեինք՝ բոլորը խլեցին:
բ Ինչ որ ունեինք՝ ողջը խլեցին:
13 ա Նրանք մեզ երկինք ու երկիր խոստացան,
բ Նրանք մեզ երկինք-երկիր խոստացան,
14 ա Բայց բացի վշտից չտվին այլ բան:
բ Ու բացի վշտից չտվին այլ բան:
17 ա Գետերի ափին – ծառի (կոկոս) հովանում,
բ Գետերի ափին – ծառի հովանում,
22 ա [Որովհետև] մենք փայտով ենք փորում,
բ Մենք հնավանդի փայտով ենք փորում,
28 ա Ծովի մյուս կողմից.
բ Ծովի էն ափից.
33 ա Ահա պոետի սիրտը [աղեկեզ.] վերջապես.
բ Ահա պոետի սիրտը վշտակեզ
38 ա Ծովը անց կենան ցեղերը բոլոր...
բ Ծովերը անցնեն ցեղերը բոլոր...
39 ա Լուռ կաց, եղեգն, յուր վշտի վըրան
բ Լուռ կաց, մի սրինգ, յուր վշտի վըրան

ՎԵԺ
(էջ 323)

Ինքնագիր

6 իսկ այն մտքերն [ընկնում են] ցած

1900-ական թվականներ

ԼՈՂՎՈՐ
(էջ 324)

Սուզվող

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թֆ №262(140)

Ով կը՞համարձակվի ասպետ կամ ծառայող (մանկլ· ավիկ ·)
Խորասուզվելու այս անդունդի մեջ,
Մի ոսկե բաժակ ձգում եմ ես [մեջ] ցած,
Սև բերանը արդեն նրան կուլ տվավ:
Ով ինձ այդ բաժակը ցույց տա նորից
Նա կարող է [նրան] իրեն պահել, իրն է:

Թագավորն այս ասում է և գցում ժայռի բարձունքից
Որ ցած է իջնում (ընկնում) ծովը (սահմանի վրա)
Բաժակը խավար անդունդի որկորը:
Ով է այն սրտոտը, հարցնում եմ կրկին
Այս խորությամ մեջը նետվելու համար:
Եվ ասպետներն ու ծառայողները (մանկլավիկները) նրա շուրջը
Լսում են ու գնում են լուռ.
Նայում են ցած վայրի ծով
Եվ ոչ ոք չի ուզում բաժակը հանի:
Ու թագավորը երրորդ անգամ կրկին հարցնում է,
Չկա մեկը, որ ցած համարձակվի (խիզախ)

Բայց ամենքը լուռ են մնում ինչպես առաջ
Եվ մի պաժ համարձակ ու մեղմ [կամաց] (հեզ)
Դուրս է գալիս պաժերի վարանած շարքից
Ու գեն է ձգում գոտին, լեն վերարկուն,
Եվ բոլոր մարդիկ ու կանայք շուրջը
Հիանալի երիտասարդին (ջահելին) են նայում զարմացած:

Եվ ինչպես նա գնում է (մոտենում է) դեպի ժայռի
կախվածքը,
Ու նայում է անդունդի [մեջ], [ցած անդունդից]
Ջրերը, որոնց նա ներս էր կուլ տալիս
Խավարի բերանն այժմ մագիլով ետ է տալիս –
Եվ ինչպես հեռավոր որոտումի (ժխորի) աղմուկի հետ
Նրանք փրփրադեզ խուժում էին խավարչտին գիրկը։

Ու գալարվում է, եռ է գալիս, փրփրում է ու ֆշշում է
Կարծես այնպես, ինչպես երբ ջուր ենք խառնում կրակին,
Մինչև երկինք է ցայտում գոլորշի դարձող
Ու անվերջ ալիքը ալիքին ճնշում է բթում (հրում)
Ու երբեք չի կամենում հատնել <1 անընթ.>
Կարծես ծովը դեռ էլի մի ծով է ուզում ծնել։
Սակայն վերջապես վայրի ուժը նորում է
Ու սպիտակ փրփուրի միջից սև
Մի հորանջող ճեղքած ցած է բացում
Անհատակ կարծես մինչև դժոխքի տեղը
ա Եվ երևում են [աղմկող] ալիքները
բ Եվ տեսնում ես ետ եկող ալիքները քաշում են ցած
Դեպի որոտքող ձագարը։
Այժմ արագ նախ քան ինքը նորից ետ է գալիս
Երիտասարդը հանձնում է իրեն աստծուն
Եվ շուրջը լսվում է սարսափի աղաղակը
Եվ արդեն հորձանքը նրան դեն է սրբել
Ու հանդուգն լողորդի վրա խորհրդալի կերպով
Փակվում է ռեխը։ Էլ չի երևում նա
Ու լուռ է իջնում ջրի անդունդի վրա,
Միայն խորքում աղմկում է խուլ
Ու դողալով լսում ես բերնե բերան
Մեծասիրտ (սրտոտ) տղա, երթաս բարով
Եվ ավելի ու ավելի խուլ լսում են ոռնում է

Ու կանգ է առնում լողորդը ափից ու սարսափած սպասում
հոգնած

Ճերմակ փրփուրը պատռելով միջից
Բաց արավ սև-սև կոկորդը
Մինչև դժոխքի հատակը
ա Ու որոտալով ալիքները [ջրերը] պտույտ են անում
(խաղում են)

Ու կուլ են գնում [էն] [խորունկ] մութ երախում..
բ Ու պտտվելով ջրերը թնդում
Ու կուլ են գնում էն սև անդունդում:

Ցած եկան հանկարծ ջրերն անդ<ունդի>,
Ճերմակ փրփուրը միջից պատռելով,
Մինչև դժոխքի հատակը ասես (մթին)
Բաց արավ ծովը կոկորդը սև-սև
Եվ պտտվելով ջրերը թնդում
Ու կուլ են գնում էն սև անդունդում:

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Ով ձեզնից՝ ասպետ կամ [սոսկ թիկնապահ]
բ Ով ձեզնից՝ ասպետ կամ թե զինակիր
3 ա Ահա ձգում եմ գավաթն իմ ոսկյա
բ Ձգում եմ ահա գավաթն իմ ոսկի
13 ա Կանգնած են անշարժ թիկնապահ, ասպետ,
բ Կանգնած են անշարժ զինակիր, ասպետ,
15 ա Ահռելի ծովին նայում են [հեռու]
բ Նայում են ահով ահռելի ծովին,
16 ա [Կա՞ ձեր մեջ արդյոք]
բ Ձրկա խիզախող գավաթի համար.
19 ա Լուռ են բոլորը: Եվ հանկարծ մի քաջ
բ Լուռ են ամենքը: Եվ հանկարծ մի քաջ
20 ա [Հաստատ] ու համարձակ գալիս է առաջ
բ Համարձակ ահեղ գալիս է առաջ...

22 ա Անձայն, հանդարտ դընում է գետին
բ Անմռունչ, հանդարտ դընում է գետին...
23 ա Տիկնայք, ասպետներ ափսոսում են յուռ
բ Տիկնայք, ասպետներ սարսափում են յուռ.
27 ա Անդունդի ծոցից հորձանքը [փրթած]
բ Անդունդքի ծոցից հորձանքը պրծած
29 ա Եվ <1 անընթ.> ալիքն, և փրփուրն եռում
բ Կուտակում ալիք, ու փրփուրն եռում,
31 ա Ոռնում է, շաչում, շռփում, շառաչում
բ Ոռնում է, շաչում, ծեծում, շառաչում
32 ա Հուրն ու ջուրն ասես [խառնվում իրար]
բ Հուրն ու ջուրն ասես մրցում են այնտեղ
37 ա Ու ետ քաշվեցին ջրերը հուզված.
բ Ետ ընկան հանկարծ ջրերը հուզված
գ Ետ քաշվեց հանկարծ տարերքը հուզված.
40 ա Բաց արավ ծովը մի ճեղքվածք մըթին,
բ Բաց արավ ծովը կոկորդը սև սև
42 ա Ու կույլ են գրնում էն հուր անդընդում
բ Ու կույլ են գրնում էն սև անդընդում...

ՍԵՐԵՆԱԴ
(էջ 326)

Ինքնագիր

14 Վայ զարթածներին [գիշերվան]

ԿՈՒՄԻԿՆԵՐԻ ՈՂԲԸ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՎՐԱ
(էջ 327)

Ինքնագիր (ԳԱԹ Թֆ №264(168)

4 [Գնացին] բերին <1 անընթ.> մեր աշխարհ,
6-8 Որ [գան] [չափեն] մեր հանդերը ծաղկավառ,
Մեր հողերի պլանները [գան] [հանեն],
Մեր սարերում սիպտակ բերդեր [գան շինեն]։

ՀՆԴԿԱԿԱՆ ՎԵԴԱՆԵՐԻՑ
(էջ 328)

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թֆ №265(169)

1 ա Անգոյությունն ու գոյությունն էին ժամանակ չըկային,
բ Գոյությունն ու անգոյությունն էին ժամանակ չըկային,
3 ա Բայց ինչն էր շրջում. Ո՞ւր. [ում հովանու] տակ.
բ Ինչ էր շրջում, ո՞ւր էր շրջում, և կամ ինչի՞ հովանու տակ
գ Ինչ էր շրջում, ո՞ւր էր շրջում, և կամ ընչի՞ հովանու տակ,
4 ա Կա՞ր ջրերի սև անդունդը անհատակ
բ Կամ կա՞ր արդյոք էս ջրերի սև անդունդը անհատակ
5 ա Անմահություն չըկար էն ժամանակ և ոչ մահ,
բ Ու մահ չըկար էն ժամանակ
6 ա Անմահություն չըկար այնժամ և ոչ մահ,
բ Խտիր չըկար (տարբերություն) գիշերի մեջ ու ցերեկի
7 ա Եվ ոչ խտիր օրի մեջ ու գիշերվա.
բ Ինքը միայն էն էր շընչում առանց հողմ (առանց շնչի)
գ Ինքը միայն էն էր շընչում առանց հողմ
9 ա Ի սկզբանե մութը ծածկված էր մութին (тьма) խավարը
բ Ի սկզբանե մութը ծածկված էր մութով
10 ա [էս] աշխարհքը ողջ անդունդ էր (пучина) мрачная
բ Եվ աշխարհքը ողջ մի վիհ էր խավարչտին
11 ա Բայց անդունդով ծածկված սկիզբը (начало)
բ Բայց начало, որ ծածկված էր մութի տակ,
12 ա Ջերմի ուժով ծնունդ առավ նա մենակ:
բ [Նա մենակ ծնվեց ջերմի ուժով: (զորությամբ)]
գ Ջերմի ուժով ծնունդ առավ նա մենակ:
15 ա [Եվ բացեցին]
բ [Ու բաց արին]
գ Ու փնտրելով (взыская) բանականությունը,
սրտեները անհայտ, սրտերում սրտի մեջ
գ Ու փնտրելով բանականությունը, սրտեները

16 ա [Գտան կապը] գոյության ու անգոյության սրտի մեջ:
բ Գոյության ու անգոյության կապը գտան սրտի մեջ:
17 ա Ու ամեն կողմ (поперек) տարածվում է լույսը նրանց մտքի.
բ Ու ամեն կողմ տարածվում է շողը նրանց մտքի.
18 ա Ու փայլում է վերև ներքև էն ճառագայթն...
բ Ու փայլում է վերև ներքև ճառագայթը բանական...
19 ա Եվ ստեղծողներ ու մեծ իշխան նրանք <եղան>
բ Նրանք եղան և ստեղծող, և մեծ եղան և հարուստ
20 ա Ներքև նրանց կամքը ու զորությունը վերև.
բ Նրանց կամքը երկրի վրա, նրանց ուժը ի վերուստ.
21 ա Ո՞վ գիտի էդ կամ ո՞վ կասի մեզ էս աշխարհքում հիմի
բ Ո՞վ գիտի էդ կամ ո՞վ կասի մեզ հիմի,
22 ա Որտեղից են ծագել ելել կազմը աշխարհքի (էս երկրի)
բ Թե որտեղից ելավ կազմը աշխարհքի
23 ա Ու [նրա հետ] [միասին] հայտնվեցին աստվածները նրա հետ
բ Ու որտեղից հայտնվեցին աստվածները իրեն հետ
24 ա Բայց ո՞վ կասի ինչպե՞ս է նա ծագել
բ Բայց ով կասի էս աշխարհքում, թե ինչպես է ծագել էդ:
27 ա [Նրա հսկողը] (պահապանը) (блюститель) գիտե միայն երկնքում,
բ Իր պահապանը գիտի միայն երկնքում,
28 ա Կամ, թերևս, նա ինքն էլ չըգիտի:
բ Կամ, թերևս, նա ինքն անգամ չըգիտի:

«ՏԵՐ, ԱՆԱՏԱՄ ՓԻԼԻՍՈՓԻ ԲԵՐՆԻ ՊԵՍ»
(էջ 331)

Ա ինքնագիր

2 Ցավով բացվել ու պատմում է մեզ կարծես
3 Ելան-ելան, կգան-կելնեն [օրենքն էս]
4 ա Միշտ նույն կյանքն է միևնույն հոսանքներով դուրս ու ներս

բ Միշտ նույն կյանքն է նոր ձևերով դուրս ու ներս

Բ ինքնագիր

4 ա Միևնույն կյանքն է նոր ձևերով դուրս ու ներս
բ [Միշտ նույն կյանքն է օրենքներով կյանքը էս]
գ Միշտ նույն կյանքն է նոր ձևերով դուրս ու ներս

1916

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ
(էջ 333)

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թ·ֆ №266(161)

3 ա Մատս ծակեց կարմիր արյուն [հոսեց] [հուր,] [տաք]
բ Մատս ծակեց, արյուն ծորեց իմ մատից
գ ծորեց արյունը կարմիր
գ Ծակեց ասեղն – արյուն ծորեց իմ մատից,
5 ա [Ու էն] խոշոր, խոշոր սպիտակ վարդը կարմրեց,
բ Խոշոր, խոշոր սպիտակ վարդը կարմրեց:
6 ա Քեզ վրա էր միտքս դառնում [առանց վերջ]
բ Քեզ վրա էր միտքս դառնում հենց անվերջ...
9 ա Ու [լցվեցին] արցունքները իմ կարոտած աչքերում
բ Ու [ցայտեցին] արցունքները իմ կարոտած աչքերում
գ Ու [հորդեցին] արցունքները իմ կարոտած աչքերում
գ Ու լճացան արցունքները իմ կարոտած աչքերում
10 ա [Եվ լուռ, երկար լալիս էի ու կարում:]
բ Ու լաց եղա՜, երկա՜ր, երկա՜ր, լաց եղա
գ [Երկար, երկար լալիս էի ու կարում]
15 ա Նորից [սրխուր] լուսամուտի առաջին,
բ Նորից նստած լուսամուտի առաջին,
16 ա Թափվում էին արցունքներս [մետաքս բարձին անդադար]
բ Թափվում էին արցունքներս [էն բարձին]

17 ա Ու ջինջ, որպես մարգարիտներ [վառ փայլուն]
բ Ու ջինջ, որպես մարգարիտներ [լուսաշող]
գ Ու ջինջ, որպես մարգարիտներ ցոլցըլուն

ՄԵՐԺՎԱԾԸ
(էջ 334)

Ինքնագրի մշակման պատկերը (ԳԱԹ Թ·ֆ №266(161)

2 ա [Լուսամուտի] պատուհանի մեջ դրրի դիցուհուս:
բ Պատուհանի մեջ դըրի դիցուհուս:
5 ա [Ուժասպառ] ձեռով [երգեցի] քնարիս վրա
բ [Ու անզոր] ձեռով [երգեցի] քնարիս վրա
գ Ու հոգնած ձեռով, քնարիս վրա
6 ա [Ինձ տանջող ցավը երգեցի սև]
բ Կարոտի [ցավը] ինձ տանջող
գ Կարոտն երգեցի, կարոտն ինձ տանջող
11 ա [Վառ] կարմիր մեխակ՝
բ Կարմիր մեխակ՝
12 ա Հարևանի ծաղկոցից
բ Հարևան ծաղկոցից:

ՄԱՐԴՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
(էջ 335)

Ինքնագիր (ԳԱԹ Թ·ֆ №266(161)

1-2 Ամրան տոթն անցավ – աշնան [շունչն է զով]:
Զմրան ձյունից հետ է բացվում գարնան ծաղկոցը
3 [արևը] [կար<միր>] արևը ելնում է [վաղորդյան] վառ,
4 ա ու [գնում] [վառվում] իր դեմքը շիկնած՝ ընթացքի մեջ:
բ ու [գնում] [կարմիր] իր դեմքը շիկնած ընթացքի մեջ
6-7 [ժամանակն փոխվում] [ու] ամեն առավոտ
8 [արևը նորափայլ] աշխարհքին երևում նորափայլ արև
9 [և իրենց հոսանքներով] հոսում անվերջ նոր ջրեր...
16 միջից [բուսնում է] կռոթուկ:

«ԻՆՉ ԿԱ ԵՐԿՆՔԻՑ ԲԱՐՁՐ ՈՒ ԱԶԱՏ»
(Լչ 337)

Ինքնագրի մշակման պատկերը

2 ա Տանջվում եմ տակին՝ ճնշում է հողս:
ր Կանգնում եմ տակին՝ ճնշում է հողս:
4 ա Ոտքս [փոխում եմ]՝ զոդում է տակս:
ր Ոտքս դընում եմ՝ զոդում է տակս:

Աշխենի օրինակը Թումանյանի ուղղումներով

2 [Ճրրչում եմ] տակին՝ ճնշում է հողս:
4 [Կանգնում եմ] վըրեն Ոտքս [փոխում եմ] զոդում է տակս:

ՔՅԱՐԱՄԻ ՀՐԱԺԵՇՏԸ
(Լչ 338)

Ինքնագրի մշակման պատկերը

1 ա Ես կը գընամ՝ մոտիկներիս վիշտ ու ցավ
ր Գընում եմ ես՝ մոտիկներիս վիշտ ու ցավ
2 ա Սերը մընա [կյանքն] ու բարը աշխարհի
ր Սերը մընա վարն ու բարը աշխարհի,
3 ա Էսօրվանից իմ դավթարը լրացավ
ր Էսօրվանից իմ հաշիվը վերջացավ,
4 ա Թող սընդուրվի...
ր Թող ծարուրվի...
5 ա Չեն դադարիլ ճամփաները մեր տեսած
ր Չեն դադարիլ ճամփաները մեզ ծանոթ
գ Չեն դադարիլ ճամփաները մեր անցած,
9 ա Եղ ու մեղրը հոսեն [չոլ] ու հանդերով,
ր Եղ ու մեղրը հոսեն դաշտ ու հանդերով,
10 ա Խոր ձորերը [դառնան] անուշ կաթնի ծով,
ր Խոր ձորերը կըտրեն անուշ կաթնի ծով,

11 ա [Միրգ] ու պըտուղ ծըմակներով, սարերով -
բ Բար ու պրտուղ ծրմակներով, սարերով,-
12 ա Գարուն ծաղկի ձըմռան սառը աշխարհի:
բ Գարուն բացվի ձըմռան սառը աշխարհի:
14 ա Քանի մարդու խելքից հանեց
բ Քանի մարդու արավ էսպես խելացնոր,

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի երկրորդ հատորն ընդգրկում է նրա քառյակները, բալլադները և չափածո թարգմանությունները (բացի թարգմանական պոեմներից, որոնք կտեղադրվեն 4-րդ հատորում):

Վերոհիշյալ երեք բաժիններն իրենց հերթին ունեն ենթաբաժիններ.

ա) ավարտուն և մշակված ստեղծագործություններ.

բ) սևագիր և անավարտ երկեր:

Հիշյալ մասերն իրարից առանձնացվում են I, II թվերով:

Բանաստեղծի ինքնագրերի նկարագրության մեջ (բացի այս հրատարակության ընդհանուր առաջաբանում նշված սկզբունքներից), ընթերցողի գործը դյուրացնելու համար, տվյալ տողի ձեռագրային տարբերակներից հետո բերվում է նաև նրա վերջնական խմբագրությունը:

Հատորում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները.

ԲՄI - Բանաստեղծություններ, Մոսկվա, 1890
ԲՄII - Բանաստեղծություններ, Մոսկվա, 1892
Դ - Դաշնակներ, Թիֆլիս, 1893
Դփ - Դաշնակներ, փոփոխված, Թիֆլիս, 1896
ԱՄ - «Աղբյուրի մատենադարան» շարքի «Հովհաննես Թումանյան» ժողովածու, Թիֆլիս, 1899
ԲԹ - Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903
ԹԼ - Լեգենդներ, Թիֆլիս, 1904
ԲԲ - Բանաստեղծություններ, Բաքու, 1908
ՀՀ - Հայրենիքիս հետ, Թիֆլիս, 1916
Քռ - Քառյակներ, Թիֆլիս, 1920
ԲՊ - Բանաստեղծություններ, Կ. Պոլիս, 1922
ԳԵ - Հովհաննես Թումանյան, Գեղարվեստական երկեր, Երևան, 1934
ԵԺ I, II, III, IV, V, VI - Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, գիտական հրատարակություն 6 հատորով, Երևան, 1940-1959
Աg - Արեգ, ամսագիր, Վիեննա, Բեռլին
Աղ - Աղբյուր, ամսագիր, Թիֆլիս
անընթ. - անընթեռնելի
արտագր. - արտագրություն
ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի
ԳԱԹ - Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան
ԳԳ - Սուրխաթյան, Գրական գոհարներ (քրեստոմատիա), Թիֆլիս. 1922
ԳԹ - Գրական թերթ, Երևան
Գծ - Գործ, ամսագիր, Բաքու, 1917
Գղ - Գեղարվեստ, հանդես, Թիֆլիս
ԵԼԺ - Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-10, 1988-1999

ԹԹ - Թումանյանի թանգարան
ԹԹԳԳ - Թումանյանի թանգարան գլխավոր գույքամատյան
ԹԸԱ - Թումանյանի ընտանիքի արխիվ
ԹԺՀ - Թումանյանը ժամանակակիցների հուշերում (տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Լ. Մ. Կարապետյան), Երևան, 1969
Թֆ - Թումանյանի ֆոնդ
ԹՏ - Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, 1869-1908, Երևան, 2010; 1908-1914, Երևան, 2016
ԺՁ(Թ) - Ժողովրդի ձայն, թերթ (Թիֆլիս)
ԺՁ(Պ) - Ժողովրդի ձայն, թերթ (Կ. Պոլիս)
Ինք. - Ինքնագիր
ԼI, ԼII, ԼIII և այլն - Լուսաբեր, դասագիրք, Ա տարի, Բ տարի, Գ տարի և այլն,
ԽԳ - Խորհրդային գրականություն, ամսագիր, Երևան
Խմբ. - Խմբագրական կոլեգիա
ՀԲ - Հայ բանաստեղծներ (կազմեց՝ Հ. Բաջազնունի), Բաքու, 1908
ՀԳ - Հայ գրողներ (քրեստոմատիա), Ա, Ռուսահայ գրողներ, Թիֆլիս, 1909 (առաջին տպ.), 1914 (երկրորդ տպ.)
ՀԴԳ - «Հայ դասական գրողներ» մատենաշար
Հեղ. - հեղինակային
Հկ - Հայաստանի կոոպերացիա , ամսագիր, Երևան
Հհ - Հորիզոն, գրական հանդես, գիրք առաջին, Թիֆլիս, 1894
ՀՆ - «Հոկտեմբեր-Նոյեմբեր», տարեգիրք, Երևան, 1932
Հսկ - Հասկեր, ամսագիր, Թիֆլիս
Հր - Հորիզոն, օրաթերթ, Թիֆլիս
Մթ - Միություն, շաբաթաթերթ, Թիֆլիս
Մհ - Մուրճ, ամսագիր, Թիֆլիս
Նհ - Նոր հոսանք, ամսագիր, Թիֆլիս
Ն. մշ. - Նոր մշակույթ
ՆՈՒ - Նոր ուղի, ամսագիր, Երևան
Նք - Նորք, հանդես, Երևան
ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես, Երևան
ՍԳ - Սովետական գրականություն, ամսագիր, Երևան
Վծ - Վերածնունդ, ամսագիր, Երևան
Տզ - Տարազ, շաբաթաթերթ, Թիֆլիս
ՈՒՀ1, ՈՒՀ2, ՈՒՀ3, ՈՒՀ4, ՈՒՀ5 - Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1, Երևան, 1964, հ. 2, Երևան, 1969, հ. 3, Երևան, 1983, հ. 4, Երևան, 1985, հ. 5, Երևան,1998
ուղղ. - ուղղումներ
ֆ - ֆոնդ
Նվարդ Թումանյան - Ն. Թումանյան. Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, 1982

[ ] Ուղղանկյուն փակագծերի մեջ դրվում են հեղինակի ջնջած բառերը, տողերը, հատվածները:

< > Սուրանկյուն փակագծերի մեջ դրվում են խմբագրության վերականգնած և ըստ տրամաբանության անհրաժեշտ տառերն ու բառերը:

Ծանոթագրություններում հիշատակվում են տվյալ ստեղծագործության Թումանյանի կենդանության օրոք եղած բոլոր հրապարակումները: Հետմահու հրատարակություններից նշվում են միայն բանաստեղծի երկերի նախորդ գիտական հրատարակության համապատասխան հատորը և էջը: Եթե այս կամ այն գործը առաջին անգամ տպագրվել է բանաստեղծի մահից հետո, ապա նշվում են առաջին հրապարակման տեղը և դարձյալ Թումանյանի երկերի նախորդ գիտական հրատարակությունը:

***

Վերահրատարակության խմբագրությունը հատորի տարբեր բաժիններում կատարել է բազմաթիվ լրացումներ ու ճշգրտումներ:

Առաջին անգամ ինքնագրից տպագրվում է մեկ սևագիր («Անցյալ չըկա. ապագա չըկա, հավիտյան առաջ») և մեկ ավարտուն («Ա՛ռ քնարս... լանջիդ վըրա») քառյակ: Մեկ քառատող («Ափսոս, որ չես տեսնում բնավ») տեղ էր գտել ԵԼԺ-ի և՛ առաջին, և՛ երկրորդ հատորներում: Քանի որ քառատողը բնույթով ավելի մոտ է ալբոմային բանաստեղծության, վերախմբագրված հրատարակության մեջ պահպանվել է միայն առաջին հատորում: «Ո՞ւր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ» քառյակը ԵԼԺ-ում տպագրված էր 1918 թ. տակ, ըստ ինքնագրի ճշտված է՝ 1922 թ.:

Առաջին անգամ տպագրվում է երկու նոր թարգմանություն՝ Ռ. Թագոր. «Լո՛ւյս, ո՛վ լույս, աշխարհը...» և աֆորիզմների, թևավոր խոսքերի ու պատկերավոր արտահայտությունների ընտրովի թարգմանություններ Շեքսպիրի սոնետներից և Շելլիի բանաստեղծություններից՝ մոտ երեք տասնյակ: Լրացումներ և ճշգրտումներ են կատարվել «Տարբերակներ» բաժնում:

Զգալի լրացումներ և ճշգրտումներ են կատարվել նաև «Ծանոթագրություններ» բաժնում, հատկապես բալլադների և թարգմանությունների ծանոթագրություններում. դրանց թիվը հասնում է տասնյակների:

Ծանոթագրություններում տրվում է Երկերի լիակատար ժողովածուի նախորդ հրատարակության էջերը:

Հեղինակի ծանոթագրությունները տրվում են տողատակ, աստղանիշով՝ փակագծում նշելով՝ (հեղ.): Մնացած դեպքերում ծանոթագրությունները տրվում են վերահրատարակության խմբագրության կողմից:

ԳԱԹ-ում և ԹԹ-ում պահվող արխիվային նյութերի ֆոնդային հին համարները փոխարինվել են նոր համարներով՝ փակագծում թողնելով հինը:

Ոճական և ուղղագրական անհրաժեշտ սրբագրություններ են կատարվել հատորի բոլոր բաժիններում:

Թումանյանի քառյակների, բալլադների, թարգմանությունների ու փոխադրությունների մասին Էդ. Ջրբաշյանի ներածական հոդվածները՝ գրականագիտական-տեսական ու բանասիրական բազմակողմանի բացատրություններով ու մեկնաբանություններով, լիովին պատշաճում են ակադեմիական հրատարակության պահանջներին՝ գիտության այսօրվա չափանիշներով: Ուստի վերահրատարակության խմբագրությունը պահպանում է այդ հոդվածները՝ առանց որևէ միջամտության՝ միայն մի վերապահությամբ: Խոսքը վերաբերում է Թումանյանի ստեղծագործական ուղղությանը կամ մեթոդին, որ հոդվածների հեղինակը հետևողականորեն համարում է ռեալիզմը՝ որպես գիտության կողմից վերջնականապես հաստատված և համընդհանուր ճանաչում գտած իրողություն: Մինչդեռ այդպիսի անվերապահ պնդումը միշտ էլ վիճելի է եղել, անգամ խորհրդային ժամանակներում, երբ ստեղծագործության արժևորման բարձրագույն չափանիշը համարվում էր դասական ռեալիզմը, հետո «քննադատականը», հետո «սոցիալիստականը»... Դա երևում է նաև հենց իր՝ Էդ. Ջրբաշյանի «Թումանյանի ռեալիզմը (մի քանի հարցադրում)» ընդարձակ հոդվածից (Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ 3, էջ 9-32), որտեղ նշվում են բանաստեղծի ստեղծագործական մեթոդի այնքան շատ առանձնահատկություններ, որոնք նրան ավելի հեռացնում են այդ ուղղությունից, քան մոտեցնում: Իսկ գրականագետների այսօրվա սերունդը, շատ քիչ բացառություններով, այդ տեսակետն արդեն ժամանակավրեպ է համարում: Խնդիրն, իհարկե, բարդ է և հատուկ հետազոտություն է պահանջում: Այստեղ թերևս ավելորդ չի լինի հպանցիկ անդրադառնալ առհասարակ Թումանյանի ստեղծագործության ուսումնասիրության մի քանի մեթոդաբանական հարցերի, որ, կարծում ենք, այս դեպքում կարող է օգտակար լինել:

Թումանյանի գեղարվեստական ժառանգությունը հայ գրականա-

գիտության ամենից շատ ուսումնասիրված բնագավառներից է, ու, չնայած դրան, իրական Թումանյանը դեռ լիովին բացահայտված չէ. կարծես արդարանում է բանաստեղծի այն հայտնի մտավախությունը, թե չհասկացան իրեն և երևի երբեք էլ չեն հասկանա... Ինչ տեսանկյունից ասես քննվել է բանաստեղծի գեղարվեստական վաստակը. մե՛րթ նա հայրենի եզերքի քնարերգուն է, մե՛րթ հայ գյուղաշխարհի անզուգական գեղանկարիչ, մե՛րթ «լեռան երգիչ», մե՛րթ սոցիալական իրականության քննադատ, մե՛րթ համազգային կյանքի հանրագիտարան, մե՛րթ հայրենական ցավի վշտակիր, մե՛րթ բարոյագետ ու փիլիսոփա բնապաշտ, կյանքի ու մահի խորհուրդների քննաքան և այլն: Այս բոլոր բնութագրումների և դրանց նման ուրիշ շատերի համար Թումանյանի ստեղծագործությունն, իրոք, հիմք տալիս է: Բայց բանաստեղծի գեղարվեստական աշխարհի բուն էությանը կարելի է մոտենալ միայն այս ամենի համալիր քննության ճանապարհով: Այսինքն՝ Թումանյանի բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործությունը պետք է դիտել որպես անտրոհելի համակարգ և փորձել գտնել այն գլխավոր հիմնախարիսխները, որոնց վրա բարձրանում է այդ համակարգը:

Թումանյանական համակարգի հիմնային հանգույցը մարդն է: Ոչ միայն այն իմաստով, իհարկե, որ բոլոր գեղարվեստական համակարգերում էլ առաջնայինը վերջիվերջո մարդու հիմնախնդիրն է: Թումանյանական գեղագիտության մեջ մարդու որոնումը աշխարհայացք ու մեթոդ ձևավորող սկիզբ է: Մարդը՝ մեծատառով, այդ գեղագիտության համակարգում բացարձակ արժեք է: Առարկայական աշխարհում իրական մարդու՝ իբրև կենսաբանական ու հասարակական երևույթի, գործունեության բոլոր դրսևորումները այդ արժեքային բացարձակի թերի մասնավորություններն են: Բանաստեղծի հոգին անդադար վայրիվերումների մեջ է՝ բացարձակից դեպի մասնավորությունները, մասնավորություններից դեպի բացարձակը: Այստեղից է ծագում Թումանյանի ստեղծագործական դրաման, որ հաճախ պատճառաբանում ենք միայն ազգային

կյանքի ողբերգական հանգամանքներով, բայց իրականում համամարդկային, համատիեզերական ծավալումներ ունի:
Թումանյանի ստեղծագործական հոգեբանության այդ դրամատիկ երկատվածությունը ամենատարբեր դրսևորումներով երևան է գալիս նրա բազմաժանր ստեղծագործության յուրաքանչյուր էջում՝ անկախ թեմայից, նյութից, կենսական շահագրգռություններից: Բանաստեղծի գեղարվեստական աշխարհը՝ իբրև բացառիկ միասնական ու ներդաշնակ կառույց, ունի իր հաստատուն խարսխակետերը՝ իրենց գործող խորհրդանիշերով՝ խավար ու լույս, սև ու սպիտակ, վերև ու ներքև, բարձր ու ցածր, անանց ու անցավոր, պահ ու հավերժություն և այլն: Թումանյանական ցանկացած սյուժե կամ քնարական տրամադրություն սկիզբ է առնում այդ հակադրամիասնություններից ու վերջիվերջո հանգում է դրանց: Կյանքից, սոցիալական ու ազգային իրականությունից, մարդկային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներից քաղված սյուժեներն ու դրվագները, չկտրվելով կենսական հողից, գեղարվեստական մեկնաբանությամբ իրենց առարկայական կոնկրետությունը իմաստավորվում են բարոյական արժեքների վերին բացարձակության մեջ:
Բացարձակը, որի ներսում է գոյավորվում նաև Մարդու թումանյանական իդեալը, անբաժան է արարչական նախասկզբի գաղափարից: Թումանյանական պանթեիզմը Աստծու էությունը չի լուծում բնության մեջ. Աստված ամենուրեք է, ամեն ինչի մեջ, բայց և եզակի է, վեր է ամեն ինչից: Մարդն արարչության ծնունդ է, բայց ինքն էլ արարիչ է, որ հեռացել է իր նախաստեղծ էությունից: Այդ սկզբին վերադարձի ճանապարհը դժվարին է, բայց վերադարձը անհնարին չէ: Իր բանաստեղծական աշխարհի այս եզրով Թումանյանը մերձենում է Գր. Նարեկացուն, փաստ, որ ցույց է տալիս, թե արվեստի ամեն մի իսկական ստեղծագործություն, իր ժամանակի ծնունդը լինելով հանդերձ, նաև վերժամանակային երևույթ է:
Թումանյանի գեղարվեստական համակարգում բացարձակի հիմնային գաղափարի տիրույթում են գործառում նաև ժամանակն

ու տարածությունը: Տեքստային իրականության մեջ գործում են իրական ժամանակն ու տարածությունը: Գործողություններն ունեն իրենց որոշակի տեղը, կատարվում են որոշակի ժամանակամիջոցում, հոգեվիճակները, քնարական ապրումները և անցյալ կամ ներկա պահերի հետ են կապվում, տեղի են ունենում ինչ-որ հայտնի, առարկայական իրադրության և սոցիալական ժամանակի մեջ: Բայց դրանք մեծ ժամանակի ու մեծ տարածության մասնավորություններն են, որ ենթատեքստում միավորվում են բացարձակ ժամանակի, այսինքն՝ հավերժության, և բացարձակ տարածության, այսինքն՝ անսահմանի, անսկիզբի ու անվախճանի մեջ: Թումանյանը գրեթե միշտ աշխարհի իրերն ու երևույթները դիտում է տարածական բարձրից, հավերժության հեռվից, որպեսզի մասնավորությունները չքողարկեն բացարձակ էությունները: Այնպես որ, Թումանյանի ստեղծագործության մեջ հասարակական հարաբերությունների, սոցիալական միջավայրի, բարքերի, կենցաղի ճշմարտացի պատկերները չի կարելի դիտել իբրև ռեալիզմի արտահայտություններ. դրանք նրա ստեղծագործական աշխարհիմացության համակարգում իմաստավորվում են ռեալիզմի հետ անհամատեղելի նշանակություններով:
Այդ սկզբունքի հետ է կապվում նաև բանաստեղծի անթաքույց հակումը դեպի հեքիաթային սյուժեներն ու ժողովրդական ավանդությունները, որտեղ ո՛չ որոշակի ժամանակ կա, ո՛չ որոշակի տարածություն: Հեքիաթներն ու ավանդությունները հավերժական ճշմարտություններ են հաստատում, որ վեր են որոշակի տարածությունից ու ժամանակից: Բայց այդ ճշմարտություններն են, որ պիտի կարգավորեն ու կատարելության տանեն մարդկային աշխարհը...
Առաջին հերթին այս իմաստով պիտի հասկանալ վաղուց նկատված այն իրողությունը, թե Թումանյանի ստեղծագործությունը ունիկալ՝ բացառիկ երևույթ է: Դրա ուսումնասիրությունը պահանջում է մեթոդաբանական յուրահատուկ մոտեցում: Թումանյանի աշխարհը չի կարելի հետազոտել դասական ռեալիզմի կամ այդ ուղղության որևէ տարատեսակի չափանիշ-

ներով ու մեթոդներով, ինչպես, մանավանդ խորհրդային շրջանում, մեծ մասամբ վարվել է թումանյանագիտությունը: Ավելին, այդ աշխարհը՝ իբրև համակարգ, չի կարող պարփակվել որևէ հայտնի ուղղության կաղապարներում:

Ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ գրականության մեջ Թումանյանն առհասարակ մերժում էր կաղապարային մտածողության ամեն մի ձև: Այս կապակցությամբ տեղին է հիշել բանաստեղծի «Զինվորագրվել են» հոդվածը: Բաքվի «Աշխատավոր» թերթը նոր հրատարակվող «Ժողովրդի ձայն»-ի աշխատակիցների շարքում, մի քանի անվանի գրողների հետ հիշելով նաև Թումանյանի անունը, գրում է, թե նրանք «զինվորագրվել են» թերթին: Դա վրդովեցրել է բանաստեղծին՝ հարկադրելով հիշեցնել, որ ինքն ու իր նմանները երբեք չեն կարող «զինվորագրվել», քանի որ դա ենթադրում է որոշակի պայմանների անվերապահ ընդունում, իսկ իրենք երբեք և ոչ մի տեղ չեն կարող գտնել հոգու համար վերջնական հանգրվան. նրանք հավերժական որոնողներ են:

Չի կարելի չհիշել նաև այս հոդվածից 16 տարի առաջ բանաստեղծի մի այլ խոստովանություն.

Ելած կյանքի ամեն համփից,
Կարոտներով անմեկին,
Ագահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հոգին:

Մի ձեռք չըկա, մի գիրկ չըկա՝
Պահի նըրան իրեն մեջ,
Խենթ, խելագար զընում է նա
Չըգտումներովն իր անվերջ:

Սա նշանակում է, որ բանաստեղծի ստեղծագործական հոգեբանությունը այդ տարիների ընթացքում որևէ փոփոխություն չի կրել: Ուրեմն նրա կտրուկ հրաժարումը «զինվորագրվելու» մտքից հավասարապես կարող է վերաբերել նաև գրական ուղղությանը:

Պատահական չէ, որ բանաստեղծի կենդանության օրոք նրա ստեղծագործության ուսումնասիրողները, անգամ մարքսիստ քննադատները, որքան մեզ հայտնի է, որևէ ակնարկ չեն արել նրա՝ այս կամ այն ծանոթ գրական դպրոցի կամ ուղղության հետևած լինելու մասին, բացի, իհարկե, Վալերի Բրյուսովի հայտնի դիտողությունից, թե նա ոչ մի ուղղության չի հետևում, ունկնդիր է միայն իր ներշնչանքի ձայնին: Թումանյանն ինքն էլ, հին ու նոր շատ գրողների նվիրված իր հոդվածներում ու ելույթներում, անդրադառնալով նրանց ստեղծագործության գաղափարական ու գեղագիտական ամենատարբեր կողմերի, ոչ մի անգամ ակնարկ չի արել ուղղության կամ մեթոդի մասին:

Բանաստեղծը մի առիթով հստակ սահմանել է գրական երկի արժևորման իր գլխավոր չափանիշը. «Ես ոչ արվեստի ու իր օրենքների, ոչ անցյալ գրական երկերի օրինակով եմ մոտենում գրական գործին, ոչ էլ նրա հասարակական ու գաղափարական արժեքների տեսակետից, այլ ամենից առաջ ուզում եմ ճշտել, գտնել, թե արդյոք նրա մեջ կա ստեղծագործողի կենդանի շունչը, էն, որ ամենայն իրավամբ կոչվում է Աստվածային, որովհետև նա է միայն, որ գրական ստեղծագործությանը տալիս է մեծության ու անմահության հատկությունը: Մնացածը՝ և՛ արվեստ, և՛ փիլիսոփայություն, և՛ հասարակական գաղափար, և՛ բարոյականություն - բոլորը գալիս են նրանից հետո» (7, 26): Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ ակնարկ չկա գրական ուղղության կամ մեթոդի մասին: Թումանյանի՝ իբրև գեղագետի համար միակ անբեկանելին գեղեցիկի պաշտամունքն է: «Իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է»,- գրում է նա (7, 491): Իսկ գեղեցիկի իդեալը յուրաքանչյուր արվեստագետ որոնում ու գտնում է իր նախընտրած կամ նախասիրած ոլորտում: Թումանյանը շատ առիթներով է խոստովանել, որ իր համար այդ բարձրագույն ոլորտը ժողովրդի ստեղծագործությունն է: Եթե կարելի է որևէ վերջավոր սահմանում տալ ժողովրդական ստեղծագործության «մեթոդին», ապա հենց դրա շրջանակներում էլ պիտի բնութագրել Թումանյանի «մեթոդը»: Իր ստեղծածից մեծ բանաստեղծի մշտական անբավա-

բարվածության հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ նա անընդհատ ձգտում էր նվաճել «արվեստական բանի» այն «բարձունքը», որ հասանելի է միայն ժողովրդի հավաքական մտածողությանն ու երևակայությանը: Ռեալիստը կենսական փաստը վերլուծում ու մեկնաբանում է որոշակի ժամանակի սոցիալական խնդիրների ու բարոյական արժեքների տեսանկյունից, ժողովրդի հավաքական գիտակցությունը նույն կենսական փաստը իմաստավորում է հազարամյակներով ստուգված հարակա ճշմարտությունների ու սրբագործված արժեքների դիտակետից: Թումանյանի ստեղծագործական «մեթոդի» հիմքը այս դիտակետն է:

ՎԼ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐԸ

Կյանքի վերջին տարիներին (1916-1922) Թումանյանի չափածո ստեղծագործության մեջ կարևորագույն տեղ է գրավում պոեզիայի ամենափոքր ձևերից մեկը՝ քառյակը: Այդ ժանրը շատ առումներով դարձավ նրա անցած ճանապարհի հանրագումարը: Ճիշտ է, Թումանյանի «քառյակային» ժառանգությունը ծավալով այնքան էլ մեծ չէ. բանաստեղծի կենդանության ժամանակ տպագրվել է ընդամենը 46 քառյակ, շուրջ երեք տասնյակ էլ մնացել են անտիպ կամ սևագիր վիճակում: Սակայն, առանց տատանվելու կարելի է ասել, որ այդ համեմատաբար «փոքր տարածության» վրա է ընկնում Թումանյանի ստեղծագործական կյանքի վերջին շրջանի գրական-փիլիսոփայական որոնումների հիմնական ծանրությունը:

Քառյակների ստեղծման և մշակման ընթացքը լրիվ ներկայացնելու համար կարևորագույն աղբյուրներ են մամուլում եղած հրապարակումները, հեղինակային ձեռագրերը, որոնք պահպանվել են գրեթե առանց կորստյան, ինչպես նաև հետևյալ երկու գրքերը: Առաջինը՝ 1920 թ. Թիֆլիսում տպագրված «Քառյակներ» գրքույկն է, ուր զետեղված է երեսուն ստեղծագործություն (դասավորված ժամանակագրական կարգով և համարակալված արաբականթվերով): Երկու տարի անց՝ «Բանաստեղծությունների» Կ. Պոլսի ժողովածուի մեջ ավելացան նաև 1920-1921 թթ. գրած քառյակները, և դրանց թիվը հասավ քառասունի (համարակալված հայկական այբուբենի տառերով): Վերջին հրատարակության մեջ, սակայն, կան ժամանակագրական կարգի՝ ոչնչով չարդարացված խախտումներ, ինչպես նաև կրճատումներ (օրինակ՝ «Լինե՛ր հեռու մի անկյուն...» քառյակը): Նման փաստերը, որոնք առհասարակ բնորոշ են հեղինակի անմիջական հսկողությունից դուրս մնացած այս ժողովածուի համար, ստիպում են քառյակների հրատարակության ժամանակ ևս նրան մոտենալ զգուշությամբ: Հեղինակային վերջին հրապարակումները 1922-ին գրված և նույն

թվականին «Նորք» հանդեսում տպագրված երեք քառյակներն են («Աղբյուրները հնչում են ու անց կենում...», «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին... », «Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում... »), որոնք ավարտում են շարքը և, անշուշտ, սկզբունքային նշանակություն ունեն այն իր ամբողջության մեջ հասկանալու համար:

Թումանյանի հետմահու հրատարակություններում քառյակները տարբեր սկզբունքներով են տպագրվել: Ե. Չարենցի խմբագրած «Գեղարվեստական երկեր» գրքում (1934) հեղինակի կենդանության ժամանակ տպագրվածներին ավելացվեց ևս վեց քառյակ՝ նրանց ընդհանուր թիվը հասցնելով 52-ի, իսկ տասը քառյակ էլ տեղ գտան «Անտիպ բանաստեղծություններ» բաժնում: Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորում (1950) բանաստեղծի կողմից չտպագրված բոլոր՝ և՛ ավարտուն, և՛ սևագիր քառյակները տեղադրվեցին հիմնական շարքից դուրս, «Ֆրագմենտներ և սևագրություններ» բաժնի տարբեր տարեթվերի տակ: Դասավորության և տեղադրման կայուն սկզբունք չի եղել նաև Թումանյանի երկերի մյուս ժողովածուների, ինչպես և քառյակների առանձին հրատարակությունների մեջ (1934, 1938, 1969):

Ներկա հատորում, ելնելով այս հրատարակության մեջ ընդունված միասնական սկզբունքից, քառյակները ևս դասավորվել են մեկ ընդհանուր շարքի մեջ, ժամանակագրական կարգով, բացի սևագիր և անավարտ գործերից, որոնք կազմում են առանձին բաժին:

Ի՞նչը մղեց հայ էպիկական բանաստեղծության խոշորագույն վարպետին, որ նա կյանքի վերջում այդքան մեծ ուշադրություն հատկացներ «բանաստեղծական մանրանկարի»՝ քառյակի ժանրին: Պահպանվել է մի շատ հետաքրքիր և մինչև այժմ անտիպ մնացած գրառում, որ Թումանյանը վերնագրել է այսպես. «Ինչու սկսեցի քառյակներ գրել» (գրության ճիշտ ժամանակը հայտնի չէ, միայն կարելի է ասել, որ գրվել է 1919 թ. նոյեմբերից հետո, քանի որ վերջում նիշատակվում է այդ ժամանակ ստեղծված «Դու մի

անհայտ Բանաստեղծ ես, չըտեսնըված մինչ էսօր...» քառյակը): Այդ գրության մեջ հիշատակվում են մի քանի կենսագրական փաստեր, հատկապես հարազատների կորուստը (Ռոստոմ և Արտաշես եղբայրների սպանվելը, ապա և որդու՝ Արտիկի զոհվելը), որ եղել են քառյակների մեջ արտահայտված ողբերգական մտորումների կենսական հիմքը: Բանաստեղծը գրում է.

«1915 թվի սեպտեմբերին սպանվեց եղբայրս - Ռոստոմը: Ռոստոմը բնականից բանաստեղծ մարդ էր. շատ լավ գիտեր արևելյան ճաղերը - պոեմները թուրքերեն - Ասլի Քյարամ, աշըղ Ղարիբ և այլն, և այլն և շատ բայաթի, ու միշտ նվագում էր ու երգում:

Մահից հետո զարմանալի կենդանի նրա ձենը մնաց ականջիս մեջ ու երգում էր շարունակ: Էդ երգերիցազդված սկսեցի բայաթիներ գրել - քառյակներ և սկսեցի հենց իրենցից - Արտաշը - (հետն էլ հայրենիքի կարոտը, ծղրիդ և այլն):

1918-ի սկզբներին ընդունեցի ազգային խորհրդի լիազորությունը և ընդհատվեց երկար:

Ապա տակն ու վրա:-

Նրանից հետո էլ Արտիկիս կորուստը գումեցին նույն թվի դեկտեմբերին - և միառժամանակ նորից լռեցի, ապա թե փոխվեց և՛ տրամադրությունը, և՛ ձևը»:

Ինքնին հասկանալի է, որ այստեղ հիշատակված տխուր փաստերը, որոնք ծանր և անփարատ հետք են թողել բանաստեղծի հոգևոր աշխարհում, քառյակի ժանրին դիմելու արտաքին կենսագրական դրդապատճառներն են միայն: Ստեղծագործական առումով ևս Թումանյանը 1916 և հետագա տարիներին հասել էր այնպիսի մակարդակի, որը նրան պիտի մղեր դեպի «բանաստեղծական մանրանկարի» ձևը: Դա, ամենից առաջ, աշխարհի և մարդու մասին իմաստասիրական խորհրդածության հակումն էր, որը հատուկ էր նրան դեռ վաղ տարիներից և ժամանակի ընթացքում ավելի ու ավելի հստակ և ավարտուն արտահայտության ձևեր էր որոնում: Մարմնավորվելով բանաստեղծական պատկերի բազմազան տեսակների մեջ՝ պոեմների և բալլադների օբյեկտիվ կերպարներից ու սյուժեներից մինչև խոհական բովանդակութ-

յամբ հագեցած շատ բանաստեղծություններ, Թումանյանի փիլիսոփայական մտորումները 10-ական թվականներին հասել էին արդեն այնպիսի խորության և որոշակիության, որ կարող էին արտահայտվել գիտական բանաձևի սեղմությամբ և հստակությամբ: Եվ Արևելքի պոեզիայի ավանդական ձևերից մեկը՝ քառյակը (ռուբայի, բայաթի, հայրեն, կաֆա) դրա համար ամենից հարմար միջոցը դարձավ: Քառյակը նաև հնարավորություն էր տալիս հասնելու ծայրաստիճան սեղմության, խոսքի միջոցների առավելագույն տարողունակության,- հատկանիշներ, որոնց Թումանյանը ձգտել է իր ողջ ստեղծագործական կյանքում:

Վերջին տարիների զրույցներում բանաստեղծը հաճախ է անդրադարձել քառյակներին, նրանց բնույթին և մտահղացման ազդակներին: Ահա այդ բազմաթիվ ասույթներից մի քանիսը. «Քառյակը պոեզիայի մինիատյուրն է, նուրբ ճաշակի բան»: «Քառյակները շատ նուրբ, ազնիվ, խորը և գեղեցիկ բաներ են: Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ գալիս. գալիս եմ դեպի մերը...»: «Քառյակները հասուն շրջանի արդյունք են՝ իմաստության, վեհության... Քառյակը գոհար է և անպայման հղկված պետք է լինի»: «Քառյակները շատ ուժեղ շարիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են» (տե՛ս Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 221, 224, 225, 305): Հետաքրքիր է նաև Թումանյանի այն խոստովանությունը, թե քառյակների մեծ մասը ինքը գրել է աշնան և ձմռան ամիսներին, երբ սենյակում միայնակ փակված, վառարանի կրակի մոտ, տրամադրվել է հանձնվելու խորհրդածության և ինքնազննման (նույն տեղում, էջ 225-226):

Զրույցի ժամանակ Թումանյանի ասած խոսքերն այն մասին, թե ինքը քառյակներում գալիս է դեպի Արևելք, դեպի ազգային գրականության ակունքները, պետք է հասկանալ ինչպես կառուցվածքի, ձևի, այնպես էլ թեմատիկայի ու բովանդակության առումով: Հայտնի է, որ արևելյան պոեզիայում՝ սկսած X դարից, քառյակը ամենից սիրված ու տարածված ժանրային ձևերից մեկն է եղել: Ռուբայի, բայաթի և այլ անվանումներով քառյակի ժանրն

ակտիվորեն «գործել է» պարսկերեն, արաբերեն, թուրքերեն լեզուներով գրականությունների մեջ: Ինչպես երևում է Նվարդ Թումանյանի գրի առած զրույցներից, հայ բանաստեղծը լավ գիտեր գրական այդ ավանդույթը և հատկապես բարձր էր գնահատում Օմար Խայամին, որի մեջ նա տեսնում էր կենսական և իմաստասիրական ամենաբարդ խնդիրներ փոքրածավալ բանաստեղծական ժանրի մեջ ընդգրկելու փայլուն օրինակ: Արևելքի այդ մեծ բանաստեղծի մոտիվների ներշնչմամբ է գրված Թումանյանի քառյակներից մեկը՝ «Խայամն ասավ իր սիրուհուն» սկսվածքով: Նա ծանոթ էր նաև արևելյան ուրիշ բանաստեղծների ռուբայիներին ու բայաթիներին, իսկ Խաքանուց թարգմանել է վեց քառյակ:

Քառյակի ժանրին դիմելիս Թումանյանը հենվում էր նաև ազգային գրական ավանդույթների վրա: Այն լայն և բազմակողմանի հետաքրքրության մեջ, որ տածում էր բանաստեղծը դեպի հայ միջնադարյան գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը, որոշն տեղ ունեին նաև քառատող չափով հորինված բանաստեղծությունները՝ հայրեններ, խաղիկներ, կաֆաներ, բայաթիներ: Իրենց նշանակությամբ առանձնանում են Քուչակին վերագրված հայրենները, որոնք Ա. Տևկանցի և հատկապես Ա. Չոպանյանի հրապարակումներից հետո դարասկզբին համընդհանուր հետաքրքրություն էին առաջացրել: Թումանյանի «Նահաշ Նովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի սերը» ուսումնասիրության մեջ (մամուլում տպագրված 1911 թ., առանձին գրքույկով՝ 1916-ին) երևում է նաև հայրենների բնագրերի և էության շատ խոր իմացություն:

Պետք է ավելացնել, որ դարասկզբին, զգալի չափով հենց միջնադարյան արևելյան և հայկական քառյակների տպավորությամբ ու ներշնչմամբ, մեզանում շատերն էին փորձում իրենց ուժերը այդ ժանրի մեջ: Այսպես, Թումանյանի քառյակների գրքույկի հետ նույն տարում՝ 1920 թ. լույս տեսավ նաև Դ. Դեմիրճյանի քառյակների ժողովածուն՝ «Վարուն» վերնագրով: Զրույցներից մեկի ժամանակ Թումանյանը նույնիսկ ասել է, թե մեզանում

«քառյակներ գրելը համաճարակ է դարձել» (նույն տեղում, էջ 221): Իր քառյակների հրապարակումով Թումանյանը ստվերի տակ թողեց այդ ժանրով գրող ժամանակակից բանաստեղծներին, դարձավ այդ ժանրի խոշորագույն դեմքը հայ նոր գրականության մեջ: Նրան հաջորդած հայ բանաստեղծներից Եղիշե Չարենցն է միայն, որ 1926 և մանավանդ 1933 թվականին գրած իր նշանավոր ռուբայիներով իրավունք նվաճեց կանգնելու Թումանյան քառյակագրի կողքին:

Թումանյանը ստեղծագործաբար շարունակեց արևելյան ռուբայաթի թեմատիկ բովանդակության բնորոշ գծերը: Քառյակը նրա գրչի տակ ևս նախ և առաջ խոհական-փիլիսոփայական ժանր է՝ հագեցած խորհրդածություններով աշխարհի և կյանքի, մարդու կոչման և հեռանկարների մասին: Դրանք անխառն քնարերգության օրինակներ են, որոնց մեջ քնարական հերոսը լիովին համընկնում է բանաստեղծի անհատականության հետ, նրանց միջև որևէ սահման կամ տարածություն չկա: Թումանյանի քառյակներին բնորոշ չեն կյանքի այն օբյեկտիվ պատկերները և նույնիսկ սյուժետային տարրերը, որ մենք տեսնում ենք միջնադարյան հայրեններից շատերի մեջ: Այստեղ բացակայում են նաև հայրենների մեջ գերակշռող սիրային և պարոյախրատական մոտիվները: Աշխարհի և մարդու կեցության «վերին հարցերն» են Թումանյանի քառյակների հիմնական ոլորտը:

Քառյակների ձևական հատկանիշների, մասնավորապես՝ ոտանավորի կառուցման հարցերում ևս Թումանյանի համար ելակետ են եղել արևելյան տաղաչափության ավանդական սկզբունքները՝ իհարկե, ձևափոխվելով մեր ազգային ոտանավորի պահանջներին համապատասխան: Սակայն բուն հայկական «քառյակային ոտանավորի» ձևը՝ հայրենների տաղաչափական հայտնի կառուցվածքը, 15 վանկանի տողաչափ՝ բաժանված 7 և 8 վանկային կիսատողերի, Թումանյանը ոչ մի անգամ չի օգտագործել: Ճիշտ է, 15 վանկանի տողաչափը նրա քառյակներում շատ հաճախ է հանդիպում, բայց ունի բոլորովին ուրիշ, ժամանակակից կառուցվածք (քառանդամ բաժանում՝ 4+4+4+3 սկզբունքով) և այդ

պատճառով էլ՝ էապես ուրիշ հնչերանգ:

Պետք է ուշադրություն դարձնել նաև քառյակների տաղաչափության մեջ ժամանակի ընթացքում կատարված մի էական փոփոխության վրա: Քառյակներ գրելու առաջին տարիներին (մինչև 1918 թ. ներառյալ) բացարձակորեն գերիշխում է 7 վանկանի տողաչափը՝ 4+3 կառուցվածքով: Այսինքն այն չափը, որն Արևելքի պոեզիայում ավանդաբար կապված է եղել բայաթի ժանրային ձևի հետ (այդ չափն է կիրառված նաև Խ. Աբովյանի բայաթիներում): Ընդհանուր առմամբ՝ «բայաթու չափով» Թումանյանը գրել է 28 քառյակ. (օրինակ. «Ջուր եմ փախչում, ինձ խաբում...»): Դրանցից վեցի մեջ առաջին տողերը կիսատ են (ընդամենը 3 վանկանի) և երկրորդի հետ միասին հնչում են այսպես. «Վերջացա՜վ... Կյանքըս մաշվեց, վերջացա՜վ»: Սա ևս հաստատում է Թումանյանի այն խոստովանությունը, որ քառյակներ գրելու համար ազդակներ են եղել ժողովրդական բայաթիներն իրենց տրամադրությամբ ու ձևով: Թեև հետագա տարիներին ևս 7 վանկանի չափով մի քանի քառյակ գրվում է, բայց 1919 թվականից սկսած նախապատվությունը տրվում է 15 վանկանի տողաչափին (22 քառյակ). «Արևելքի / եդեմներին / իջավ պայծառ / իրիկուն...»: Տաղաչափական այս անցումը կապված էր քառյակների բովանդակության խորացման և ընդլայնման հետ: Եթե 7 վանկանի քառյակներում գերիշխում են անձնական վշտի ու կարոտի մոտիվները (իհարկե, հասցված գեղարվեստական ընդհանրացման բարձր աստիճանի), ապա ավելի քան կրկնակի երկարացված բանատողն արդեն ծառայում է անհամեմատ լայն ընդգրկումների: 15 վանկանի էպիկական տողաչափն իդեալականորեն ներդաշնակում է քառյակների խոհափիլիսոփայական բովանդակությանը, համամարդկային և տիեզերական խոհերին, քնարական հանդարտ ու վեհ հնչերանգին: Բացի այս երկու հիմնական տաղաչափական ձևերից (7 և 15 վանկանի), Թումանյանն ունի հինգ քառյակ 11 վանկանի չափով («Աղբյուրները / հրնչում են ու / անց կենում...»), մեկ քառյակ 16-վանկանի («Առատ, անհատ՝ / Աստծու նըման՝ / միշտ տեղալուց / հոգնել եմ ես...») և մեկ քառյակ 8-վանկանի («Ծով է իմ վիշտն, /

անափ ու խոր...»):

Պոեզիայի ընդհանուր արևելյան-հայկական ավանդույթները Թումանյանի համար նախատիպ են եղել նաև քառյակների մեջ հանգավորման եղանակներ ընտրելիս: Ուստի չպետք է զարմանալ, որ տաղաչափական կանոնիկ ձևերին ընդհանրապես քիչ հետևող բանաստեղծը քառյակների մեջ շատ ավելի ավանդապահ է, հաշվի է առնում ժանրի պարտադրած պահանջները: Այսպես, նրա քառյակների մեծ մասում կիրառվում է արևելյան ռուբայիների հանրահայտ ձևը՝ 1-ին, 2-րդ և 4-րդ տողերի հանգավորում՝ 3-րդ տողին տրվող «ազատությամբ»: Հիշյալ հրատարակության 57 քառյակներից այդ ձևով են գրված 42-ը, ընդ որում Թումանյանը հավասարաչափ դիմում է նրա երկու հիմնական տարբերակներին.

ա) երբ 1, 2 և 4-րդ տողերն ավարտվում են միևնույն բառերով (ռեդիֆ), իսկ նրանց նախորդող բառերը հաճախ (բայց ոչ միշտ) ներքին հանգ են ստեղծում (այդ ձևով գրված է 22 քառյակ, հիմնականում 11-16 վանկանի. «Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ», կամ՝ «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին».

բ) երբ քառյակի նշված երեք տողերը կապվում են սովորական հանգերով, առանց ռեդիֆի (20 քառյակ, հիմնականում 7 վանկանի). «Լինե՜ր հեռու մի անկյուն», կամ՝ «Ի՞նչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին»:

Բավական մեծ թիվ են կազմում (12) կից հանգավորմամբ (aabb) գրված քառյակները (օր.՝ «Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ», «Կյանքըս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի»): Վերջապես, մի քանի քառյակ էլ (3) գրված են այսպես կոչված համատարած հանգավորմամբ (aaaa), ինչպես՝ «Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չըտեսնված մինչ էսօր»:

Սակայն եթե Թումանյանի քառյակներում կիրառված ոտանավորի տեսակները կարող են առանձնացվել ու դասակարգվել համեմատաբար հեշտ, ապա շատ ավելի դժվար է նրանց թեմատիկ տարբերակումը: Բանաստեղծն անդրադարձել է իր ժամանակի կյանքի և ընդհանրապես մարդկային կեցության բազմազան

կողմերի, բայց դրանք միշտ չէ, որ հստակորեն սահմանազատվում են: Միևնույն քառյակի մեջ հաճախ միաձուլվում են տարբեր մոտիվներ: Առավել ևս դժվար է դրանք առանձնացնել ժամանակագրական առումով: Թումանյանն իր քառյակները թեմատիկ շարքերի չի բաժանել, այլ դրել է խառը կարգով, որպես իր «հոգու կենսագրության» բնական ընթացքի բանաստեղծական արձագանք: Եվ, այնուամենայնիվ, ուշադիր ընթերցանության դեպքում քառյակների մեջ կարելի է նկատել թեմատիկ մի քանի շերտ: Դրանց առանձնացումը, որն, իհարկե, շատ կողմերով պայմանական է, օգնում է ավելի լավ պատկերացնելու բանաստեղծական խոհի և հույզի զարգացման դիալեկտիկ ընթացքը, կենսական և իմաստասիրական հարցերի բացառիկ լայնությունն ու լրիվությունը՝ արտահայտված «փոքր ժանրի» նեղ շրջանակներում:

Ամենից առաջ, պետք է առանձնացնել այն քառյակները, որոնց կենսական հիմքը այդ տարիներին բանաստեղծի կրած անհատական ծանր կորուստներն են եղել: Ինչպես երևում է Թումանյանի հիշյալ գրառումներից, հենց այդ կորուստներն էին (եղբայրների և որդու զոհվելը), որ մղեցին նրան իր վիշտն ու խոհերն արտահայտելու հատկապես քառյակ-քայաթու խտացված, տարողունակ տողերի մեջ: Սակայն դա միայն ելակետն էր: Բանաստեղծը միշտ բարձրանում է սեփական ցավի ու կորստյան անմիջական ազդեցությունից, հասնում մարդկային վշտի ու տառապանքի ընդհանրացված բացահայտման: Այդ քառյակներից են՝ «Ո՞ւր կորա՜ն...», «Ե՛տ չեկա՜վ... », «Քանի՜ մահ կա իմ սրտում...», «Մեռա՜ն, մեռա՜ն... Եվահա... », «Կորցըրել եմ, ո՞ւր գըտնեմ...» և մի քանի ուրիշներ:

Թումանյանի ստեղծագործական կենսագրության հետաքրքիր մի փաստ է այն, որ 1920 թ. «Քառյակներ» ժողովածուն նա բացում էր դրանից ճիշտ 30 տարի առաջ՝ 1890 թ. գրած «Հառաչանք» պոեմի նախնական տարբերակից վերցրած երկու քառատողերով («Ա՜նց կացա՜ն...», «Վերջացա՜վ...» սկսվածքներով), որոնք մինչ այդ մնացել էին անտիպ: Ինչպես ցույց է տալիս պահպանված

սնագիր հատվածը (տե՛ս ՈՒՀՀ2, էջ 207), պոեմում այդ քառյակները ծեր այգեպանն է երգում՝ իբրև իր սպառվող կյանքի և կրած տառապանքների արտահայտություն: Երեք տասնամյակ անց Թումանյանը, կարծեք, «յուրացնում է» իր իսկ ստեղծած հերոսի վիշտն ու տվայտանքը՝ վերացնելով օբյեկտիվ կերպարի և քնարական ես-ի ապրումների միջև եղած սահմանները: Այստեղ մի տեսակ կրկնվում էր այն հոգեբանական իրադրությունը, որը ժամանակին արտահայտվել է «Հին օրհնության» հայտնի խոսքերում. «Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել»:

Անձնական վշտի և շրջապատի մարդկանց տառապանքի միասնության գիտակցությունը օգնում է գնալու դեպի մեծ ընդհանրացումներ: Բանաստեղծն իր սրտի մեջ զգում է հանրության, ժողովրդի վշտերի ամբողջ ծանրությունն ու խորությունը և կոչում՝ արտահայտելու դրանք իր երգերում.

Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում.
Ցավոտ սրտով աշխարհ լցվեց մեր դարում.
Ցավոտ աշխարհքն եկավ լցվեց բովանդակ
Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

Երկրորդ խումբը կազմում են այն քառյակները, որոնց մեջ բանաստեղծը հիշում է իր մանկության անցքերն ու վայրերը, պոեմի խոսքերով ասած՝ «երջանիկ օրեր, սիրելի դեմքեր, որ հիմի չկան»: Սակայն, քառյակի ժանրային բնույթին համապատասխան, այդ մոտիվները վերանում են առարկայական կոնկրետությունից, արտահայտվում կարոտի և ափսոսանքի խորհրդանիշ դարձած պատկերներով: Դրանք մերթ հայրենի ծղրիդներն են («Հիմի բացե՛լ են հանդես...), հանդերում ճախրող կամ մոլոր նստած արտուտները («Կըլթացնում են, արտորում...», «Աշնան ամպին ու զամպին...»), հիշողությունից չհեռացող վիրավոր հավքը («Մի հավք զարկի ես մի օր...»), մերթ էլ անտես ձեռքերով իրենց գիրկը կանչող հարազատ անտառները («Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ ...»): Բանաստեղծի «սուր, արթուն ականջում» միշտ հնչում է «անհուն, անքուն կարոտի» մի

ձայն, և նա անձկությամբ հետ է կանչում «անցած օրեր, խինդ ու սեր»: Իսկ նրանց վերադարձի անհնարինության ըմբռնումից էլ ծնվում են հոգու անփարատ վիշտ ու տառապանք:

Հայրենի տան, վաղեմի պատկերների կարոտն ու երազանքը Թումանյանի պոեզիայի առանցքային մոտիվներից մեկն է, որն սկսվում է վաղ տարիներից (հիշենք 1890 թ. գրած «Նախերգանքը», որ բանաստեղծը դնում է իր բոլոր ժողովածուների սկզբում) և հասնում մինչև այս քառյակները: Դեռ բանաստեղծի կենդանության ժամանակ սա հիմք տվեց քննադատությանը (Ա. Տերտերյան) Թումանյանին բնորոշելու իբրև «հայրենի եզերքի քնարերգու»: Դա նեղ աշխարհագրական հասկացություն չէր, այլ ուներ հոգևոր ապաստարանի, բարոյագեղագիտական բարձր իդեալի նշանակություն: Քառյակներում հայրենի եզերքի իմաստն աստիճանաբար ընդլայնվում է՝ հասնելով Արևելքի, իբրև լույսի և բարության ակունքի, ըմբռնման: Երազելով «Արևելքի եդեմներն» ու «հեքիաթական պալատները», բանաստեղծն անձկությամբ ու կարոտով բացականչում է. «Ա՜խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտե՛ղ, դեպի տո՛ւն...»: Մի ուրիշ քառյակում Արևմուտքից եկող «արյունալի աղետներին» և «հոգու անապատին» հակադրվում է «Արևերն աստվածային - հայրենիքը իմ հոգու»: Արևելքի պատկերը, այսպիսով, ներկայանում է իբրև գեղագիտական բարձր չափանիշ, որի օգնությամբ բանաստեղծը ձգտում է հաղթահարել հասարակական և անհատական կյանքի ողբերգական հակասությունները, հասնել «մեր հոգու սուրբ հայրենիքին», որի մասին նա խոսել է դեռ 1902 թ. գրած «Ընկերիս» բանաստեղծության մեջ:

Քառյակների մի երրորդ խմբի թեման իր՝ բանաստեղծի հոգևոր որոնումների և ճակատագրի հարցերն են: Երկու տրամադրություն և նրանց հակադրությունից ծնվող ողբերգական ապրումներ մշտապես ուղեկցում են բանաստեղծին: Մի կողմից՝ սեփական հոգևոր-ստեղծագործական անսպառ ուժերի հավատում, հպարտ ինքնագիտակցություն այն բանի, որ իր բանաստեղծական ձիրքը բնությունից ստացած վերին պարգև է՝ հազվագյուտ և անկրկնելի

(«Դու մի անհայտ Բանաստեղծ ես՝ չըտեսնըված մինչ էսօր...», «Ի՞նչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին...», «Բարձր է հընոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ...», «Իմ կընունքին երկինքը՝ժամ, արևը՝ ջահ սրբազան...», «Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում...» և այլն): Բանաստեղծի կոչման վեհությունն առավել ևս ընդգծվում է այն գիտակցությամբ, որ ինքը պետք է ապրի ամենքի հետ և ամենքի չափ տառապի, պետք է սպառվի մարդկանց բարիք ու լույս պարգևելու ճանապարհին: Սակայն, մյուս կողմից, բանաստեղծի գիտակցության մեջ միշտ կա նաև ինչ-որ անհանգստություն, անբավականություն իր արածից, կա այն համոզմունքը, որ ինքը դեռ շատ պարտք ունի մարդկանց և արարիչ-բնության հանդեպ: Իսկական արվեստագետին բնորոշող այդ հատկանիշները իրենց տարբեր կողմերով արտահայտվել են մի շարք քառյակներում՝ «Քուն թե արթուն օրիս շատը երազ եղավ, անցկացավ...», «Առատ, անհատ Աստծու նըման միշտ տեղալուց հոգնել եմ ես...», «Լույսը լուսին քո ժպիտն է իմ երեսին ճառագում...» և այլն: Սակայն այդ տրամադրությունների բարձրակետն ու դասական արտահայտությունը, իհարկե, «Կյանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի...» քառյակն է՝ ողբերգական մեծ լարման հասնող մի ստեղծագործություն: Ինչքան էլ մեզ համար դժվար է համաձայնել բանաստեղծի ինքնագնահատականների հետ, երբ նա իր կյանքը համարում է «խափան, խոպան ու անպըտուղ», անցած «առանց արդյունքի», բայց մենք լավ ենք հասկանում, որ այդ տրամադրության հիմքում դրված է հանճարի հավերժական անբավականությունը, ձգտումը դեպի ավելի կատարյալն ու գեղեցիկը: Եվ մեզ խորապես համակում են նրա խոսքերում արտահայտված մեծ տագնապն ու ցավը.

Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...
Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին...

Քնարական տրամադրությունների զարգացման հաջորդ աստիճանը այն քառյակներն են, որոնց մեջ տարբեր կողմերից

զննվում են մարդու պատմական ճակատագրի, անհատի և հասարակության փոխհարաբերության հարցերը: Իշխող մոտիվը այստեղ լայնախոհ մարդասիրական հայացքն է, բարության և այլասիրության պատճառած հոգեկան հրճվանքը.

Բայց ո՞վ կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,
Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

Բանաստեղծի մարդասիրական ձգտումները հաճախ են բախվում իրականությանը, ուր մարդու կատարելատիպը դեռ հեռավոր նպատակ է («Ու հեռու է մինչև Մ՛արդը իր ճամփան»): Բայց դրանից նրա երազանքը ոչ միայն չի խամրում, այլև բորբոքվում է նոր ուժով. լավագույն ապացույցը «Լինե՛ր հեռու մի անկյուն...» քառյակն է, նրա մեջ արտահայտված է «հաշտ ու խաղաղ մարդկության» երազանքը:

Աշխարհի, հասարակության նկատմամբ մարդասիրական հայացքի տարբեր կողմեր՝ միշտ մարմնավորված վառ և ինքնատիպ պատկերի մեջ, արտահայտվել են այնպիսի քառյակներում, ինչպես «Ծով է իմ վիշտն, անափ ու խոր...», «Ի՜նչքան ցավ եմ տեսել ես...», «Զուր եմ փախչում, ինձ խաբում...», «Ո՞վ իմանա՝ ո՛ւր ընկանք...», «Քանի՛ ձեռքից եմ վառվել...», «Ո՛նց է ժըպտում իմ հոգին...», «Երազումըս մի մաքի...» և այլն: Թումանյանական քառյական պատկերների գերագույն իմաստը խաղաղության, փոխադարձ սիրո և ըմբռնման քարոզն է, կյանքի և բնության ամբողջ գեղեցկությունն ու հմայքը հասկանալու, վայելելու կոչը: Խորհելով մարդկային կյանքի անցողիկության մասին («Երկու շիրիմ իրար կից...»), Թումանյանը հաստատում է հումանիզմի սկզբունքը՝ իբրև հակադրություն կյանքում իշխող դաժան և անհեթեթ օրենքների: Այդ մասին են խոսում «Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ...» և մանավանդ հետևյալ քառյակը.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դըժբախտ է նա կըրկին.

Է՛յ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:

Քառյակներում արծարծվում է նաև մարդու և բնության փոխահարաբերության խնդիրը: Մարդկային կյանքը դիտվում է բնության հավերժական շարժման մեջ, իբրև նրա մի անբաժան մասնիկ: Այս թեման Թումանյանի համար նորություն չէր. դեռ վաղ շրջանի մի շարք բանաստեղծություններում, «Դեպի Անհունի» և «Անուշի» մեջ, շատ բալլադներում նա համադրել է բնության մշտանորոգ կյանքն ու մարդու կարճատև գոյությունը: Քառյակներում ևս այդ հակադրությունից ծնվող ողբերգությունը հաղթահարվում է բնության հետ միաձուլվելու գաղափարի միջոցով: Բայց այդ գիտակցությունն այստեղ հասցված է ավելի բարձր աստիճանի, արտահայտվում է փիլիսոփայական ծանրախոհությամբ և մի յուրօրինակ էպիկական հանդարտությամբ: Դրա ապացույցն են այնպիսի քառյակներ, ինչպես՝ «Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՞ս, թե էն...», «Ասի. «Հենց լոկ էս անյունն է ու անունը, որ ունեմ... », «Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտըդ ըզգույշ դիր հողին...», «Հին աշխարհքը ամեն օր...», «Էս է, որ կա... Ճիշտ ես ասում. թասըդ բե՛ր...» և այլն:

Բնության մշտահոլով կյանքի հետ հաղորդակցման և միավորման մեջ Թումանյանը տեսնում է մարդու անմահության միակ ուղին: Այդ ճանապարհով էլ նա վեր է բարձրանում անխուսափելի մահվան ճնշող ազդեցությունից: Մարդը ծնվում է բնությունից և մահանալով նորից վերադառնում է դեպի բնություն, դառնում նրա հավերժական գոյության մի մասը: Նման բնապաշտական հայեցակետի արտահայտությունների կարելի է հանդիպել շատ քառյակներում, որոնց յուրօրինակ խտացումն է «Ո՛վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում...» քառատողը: Թումանյանն ասես ձգտում է մի քանի տողի մեջ ամփոփել մարդկային կյանքի ողջ ընթացքը, դիալեկտիկան, որ սկիզբ ու վերջ չունի: Նույնիսկ ճամփաների առօրեական պատկերը կապվում է մարդկանց, սերունդների հավերժական հաջորդափոխման գաղափարի

հետ («Ովքե՞ր անցան ձեզանով, Ո՞ւր գնացին, ճամփաներ»)։ Իսկ մշտահոս աղբյուրները հիշեցնում են, որ թեև անցողիկ, բայց և հավերժական են նաև մարդկային կյանքը, ձգտումները, երջանկության ակունքների բանաստեղծական երազանքը («Աղբյուրներ հրնչում են ու անց կենում...»)։

Այստեղից արդեն մի քայլ է մինչև բանաստեղծի մտորումների ամենավերին շերտը, որ կարելի է կոչել տիեզերական խոհեր։ Այդպես է բնութագրել ինքը՝ Թումանյանը, որը 1923 թ. հունվարի 31-ի զրույցի ժամանակ ասել է. «Իմ վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը - «տիեզերական խոհերի» շրջանն է» (Նվարդ Թումանյան, 304)։ Բացի «Սիրիուսի հրաժեշտը», «Տիեզերքի ընթերցումը», «Արոսյակ» և փիլիսոփայական այլ բանաստեղծություններից, այդ շրջանի ամենացայտուն դրսևորումներից եղան նաև քառյակները։ Ավելին՝ այդ թեմայի ամենաբարձր ու կատարյալ արտահայտությունը։ Բանաստեղծն ուզում է մտքով ընդգրկել տիեզերական տարածության և ժամանակի անվերջությունը, որի մասին մի զրույցի ժամանակ ասել է. «Անհունության գաղափարը մեծ գաղափար է» (նույն տեղում, 86)։ Նա ցանկանում է զգալ և ընկալել «տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն» (ինչպես ասվում է 1920 թ. գրած «Տիեզերքի ընթերցումը» բանաստեղծության մեջ)։ Այդ մտայնության տարբեր դրսևորումների կարելի է հանդիպել «Հոգիս՝ տանը հաստատվել...», «Ես շրնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր...», «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին...», «Աստծու բանտն են տաճարները - աշխարհիքներում բովանդակ...», «Հազար տարով, հազար դարով... » և այլ քառյակներում։ Մտովի ընդգրկելով տիեզերական հասկացությունների անսահմանությունը, Թումանյանի քնարական հերոսը ցանկանում է հասնել ու միաձուլվել մի բարձրագույն էության հետ, որն աստվածացված բնության խորհրդանիշն է։

Ահա այդ մտայնությունն արտահայտող լավագույն քառյակներից մեկը.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ,
Մեծ խոհերի խոյանքների հեռուներում անարատ,

Անհիշելի վերհուշերի մըշուշներում ճըրքաղոտ՝
Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ...

Այս քառյակի ընդգրկումների հիրավի տիեզերական անվերջությունը, աննյութական և անշոշափելի պատկերները, բազմազան բաղաձայնույթի և ներքին հանգերի ներթափանցումները մեզ կարծես տեղափոխում են մի անտեսանելի ոգեղեն աշխարհ: Նրանք օգնում են լսելու, Թումանյանի մի ուրիշ քառյակի խոսքերով ասած՝ «տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը ամենուր»:

Այսպես, Թումանյանի ավարտուն քառյակները, որոնց ընդհանուր ծավալը հազիվ է հասնում 250 տողի, կենսական գեղարվեստական և փիլիսոփայական բացառիկ հարուստ բովանդակություն են ամփոփում: Շատ հատորներից ավելի ծանրակշիռ է այդ ժառանգությունը, ինչպես գրել է Ա. Ֆետը Տյուտչևի հատորյակի մասին: Քառյակները պատկանում են Թումանյանի ստեղծագործության ամենաբարձր գագաթների թվին, մտնում են հայ բազմադարյան խոսքարվեստի լավագույն նվաճումների շարքը:

I

1890

«ԱՆՑ ԿԱՑԱ՛Ն...»
(էջ 9) (ԵԱԺ 2, էջ 7)

Գրված է 1890 թվականին: «Հառաչանք» շարքի հատվածներից է, որ բանաստեղծը հետագայում հրատարակել է որպես առանձին քառյակ:

ԳԱԹ ԹՖ №152 (100Լ)-ում պահվում է շարքի նախնական գրառումներից մեկը (հրատարակված՝ ՄԻՀ 2, էջ 205-207), որի մեջ կա նաև այս քառյակը:

ԳԱԹ ԹՖ №97 (101)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի տակ Թումանյանը գրել է «Հառաչանքից»:

Բացի սրանից, ԹԹԳԳ860/2-ում Նվարդ Թումանյանի ալբոմում, պահվում է ևս երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ «Հառաչանքից» վերնագրով: Եվս մեկ օրինակ պահվում է ԹԹԳԳ1079/4-14բ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, 1917, №11-12, էջ 38, այնուհետև, առանց «Հառաչանքից» նշումի՝ Քն, էջ 1, ԳԳ, էջ 498, ապա՝ ԵԺԱ, 203:

Արտատպվում է ԳԳ-ից:

«ՎԵՐՋԱՑԱ՛Վ...»
(էջ 10) (ԵԱԺ 2, էջ 8)

Գրված է 1890 թվականին: «Հառաչանք» շարքի հատվածներից է, որ բանաստեղծը հետագայում հրատարակել է որպես առանձին քառյակ (տե՛ս «Անց կացա՛ն...» քառյակի ծանոթագրությունը):

ԳԱԹ ԹՖ №98(102)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի տակ գրված է՝ «Հառաչանքից»:

ԹԹ-ում պահվում է ևս երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ Նվարդ Թումանյանի ալբոմում՝ ԹԹԳԳ 860/2, իսկ մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14բ-ում:

Առաջին անգամ առանց «Հառաչանքից» նշման տպագրվել է Քն, էջ 2, այնուհետև՝ ԵԺԱ, 203:

Արտատպվում է Քն-ից:

«ՀԻՄԻ ԲԱՑԵԼ ԵՆ ՀԱՆԴԵՍ»
(էջ 11, 346) (ԵԼԺ 2, էջ 9, 331)

Գրված է 1916 թ. հունիսին:

ԳԱԹ Թֆ №99(105)-ում պահվում է մեկ ինքնագիր:

ԹԹԳԳ1079/14-4գ-ում պահվում է ևս մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԺՃ(Թ), 1918, №13, այնուհետև՝ Քռ, էջ 3, ԲՊ, էջ 45, ապա՝ ԵԺI, 204:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԵՍ ՉԵԿԱՎ»
(էջ 12, 346) (ԵԼԺ 2, էջ 10, 331)

Գրված է 1916 թ. հունիսին:

ԹԹ-ում պահվում է չորս ինքնագիր, որոնցից մեկը հեղինակի դստեր՝ Նվարդի ալբոմում՝ ԹԹԳԳ860/2: Ինքնագրերից մյուսը գրված է բանաստեղծի №8 ծոցատետրում (էջ 5)՝ ԹԹԳԳ1034, «Ո՞ւր կորա՛ն», «Հանգել են», «Չի գալիս» քառյակների հետ՝ «Կորուստի երգեր» ընդհանուր խորագրի տակ: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-14բ և 1079/4-14թ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, №11-12, էջ 38, այնուհետև՝ Քռ, էջ 4, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 46, ապա՝ ԵԺI, 204:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՈՒՐ ԿՈՐԱ՛Ն...»
(էջ 13, 346) (ԵԼԺ 2, էջ 11, 332)

Գրված է 1916 թ. հունիսին:

ԹԹ-ում պահվում է հինգ ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի №8 ծոցատետրում (էջ 8)՝ ԹԹԳԳ1034, (տե՛ս «Ես չեկա՛վ...» քառյակի ծանոթագրությունը), մեկը՝ Նվարդի ալբոմում՝ ԹԹԳԳ860/2: Մյուս երեքը պահվում է ԹԹԳԳ1079/4-15ա, 1079/4-14բ և 1079/4-14թ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, №11-12, էջ 38, այնուհետև՝ Քռ, էջ 5, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 46, ապա՝ ԵԺI, 204:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԵՐԿՈՒ ԴԱՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ»
(էջ 14) (ԵԼԺ 2, էջ 12)

Գրված է 1917 թ. հունվարի 15-ին:

ԳԱԹ Թֆ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է 1934 թվականին՝ Գե, էջ 127, այնուհետև ԵԺI, 529:

ՀԴԴ մատենաշարում քառյակի վերջին՝ «Ու հին ցարի արանքում» տողի ցարը բառը դարձել է ցավ: Աղավաղվել է քառյակի իմաստը. բանաստեղծն ուզում է ասել, որ «հոգնել» է «նոր ընկերի», այսինքն՝ բոլշևիկների նոր իշխանության, և «հին ցարի», այսինքն՝ ցարական հին կարգերի «արանքում»:

Տպագրվում է ինքնագրից:

«ԾՈՎ Է ԻՄ ՎԻՇՏՆ, ԱՆԱՓ ՈՒ ԽՈՐ»
(էջ 15) (ԵԼԺ 2, էջ 13)

Գրված է 1917 թ. փետրվարի 9-ին:

ԹԹԳԳ860/2-ում՝ Նվարդի ալբոմում, պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Գղ, Թիֆլիս, 1921, №7, էջ 66, այնուհետև ԲՊ, էջ 45, ապա՝ ԵԺI, 205:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՔԱՆԻ՜ ՄԱՀ ԿԱ ԻՄ ՍՐՏՈՒՄ»
(էջ 16, 347) (ԵԼԺ 2, էջ 14, 332)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 7-ին:

ԹԹ-ում պահվում է չորս ինքնագիր, որոնցից մեկը, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել՝ Նվարդի ալբոմում՝ ԹԹԳԳ860/2: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-15բ և 1079/4-14գ-ում :

ԹԹԳԳ1079/57-7-ում պահվում է մեկ արտագրություն՝ կատարված Աշխենի ձեռքով:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, №11-12, էջ 38, այնուհետև՝ Քս, էջ 6, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 47, ապա՝ ԵԺI, 205:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԿՅԱՆՔԻՑ ՀԱՐԲԱԾ ԱՆՑԱՎՈՐ»
(էջ 17) (ԵԼԺ 2, էջ 15)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 10-ին:

ԹԹԳԳ860/1-ում՝ Աշխենի ալբոմում, պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ «Աստծու ու պոետի գրազը» քառյակի հետ միասին տպագրվել է Ագ, 1923, №8, էջ 467, խմբագրության հետևյալ ծանոթությամբ. «Մեր նշանավոր բանաստեղծի որդին՝ Համլիկ Թումանյանը, ուղարկել է մեզ մի քանի էջ իր թանկագին հոր անտիպ գրվածքներից: Խորին շնորհակալությամբ տպագրում ենք այն «Արեգին» էջերում»: Այնուհետև ԵԺI, 535:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՏ ԵԿԵ՛Ք...»
(էջ 18) (ԵԼԺ 2, էջ 16)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 11-ին:

ԹԹ-ում պահվում է չորս ինքնագիր, որոնցից մեկը Նվարդի ալբոմում՝ ԹԹԳԳ860/2: Մյուս երեքը պահվում է ԹԹԳԳ1079/4-15գ, 1079/4-14գ և 1079/4-11-ում:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, №11-12, էջ 38, այնուհետև՝ Քո, էջ 7, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 47, ապա՝ ԵԺI, 205:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՀԻՆ ԱՇԽԱՐՀՔԸ ԱՄԵՆ ՕՐ»
(էջ 19, 347) (ԵԼԺ 2, էջ 17, 332)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 11-ին:

ԹԹ-ում պահվում է չորս ինքնագիր, որոնցից մեկը՝ բանաստեղծի դստեր Արփենիկի ալբոմում՝ ԹԹԳԳ860/4: Մյուս երեքը պահվում է ԹԹԳԳ1079/4-15գ, 1079/4-14գ և 1079/4-14ժգ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №23, այնուհետև՝ Քո, էջ 8, ԲՊ, էջ 48, ապա՝ ԵԺI, 205:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՋՈՒՐ ԵՄ ՓԱԽՉՈՒՄ, ԻՆՁ ԽԱԲՈՒՄ»
(էջ 20, 347) (ԵԼԺ 2, էջ 18, 333)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 12-ին:

ԹԹԳԳ860/2-ում՝ Նվարդի ալբոմում, պահվում է մեկ ինքնագիր: ԹԹԳԳ1079/57-7-ում կա մեկ արտագրություն՝ կատարված Աշխենի ձեռքով:

Առաջին անգամ տպագրվել է 1932 թվականին՝ ՀՆ, էջ 3, այնուհետև՝ ԵԺ I, 535:

Տպագրվում է ինքնագրից:

«Ո՛Վ ԻՄԱՆԱ՝ ՈՒՐ ԸՆԿԱՆՔ»
(էջ 21, 347) (ԵԼԺ 2, էջ 19, 333)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 30-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ Արփենիկի ալբոմում՝ ԹԹԳԳ860/4: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-15ե և 1079/4-14դ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №23, այնուհետև՝ Քռ, էջ 9, ԲՊ, էջ 48, ապա՝ ԵԺ I, 205:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՔԱՆԻ՛ ՁԵՌՔԻՑ ԵՄ ՎԱՌՎԵԼ»
(էջ 22) (ԵԼԺ 2, էջ 20)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 24-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ Աշխենի ալբոմում՝ ԹԹԳԳ860/1: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-15գ և 1079/4-14դ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №1, այնուհետև՝ Քռ, էջ 10, ԲՊ, էջ 49, ապա՝ ԵԺ I, 206:

Արտատպվում է ԲՊ-ից:

1994 թ. Թումանյանի թոռնուհին՝ Ի. Սաֆրազբեկյանը, բանաստեղծի ծննդյան 125-ամյակի առթիվ հրատարակում է նրա ընտիր քառյակների մի ժողովածու, որտեղ այս քառյակի վերջին տողի սկզբի «լույս»-ը փոխարինվել է «հույս»-ով: Ակնհայտորեն աղավաղվել է քառյակի իմաստը: Տարօրինակ է, որ ժողովածուի խմբագիրը, որ ինքը Համո Սահյանն է, չի նկատել դա:

«Ի՛ՆՉՔԱՆ ՑԱՎ ԵՄ ՏԵՍԵԼ ԵՍ»
(էջ 23, 348) (ԵԼԺ 2, էջ 21, 333)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 24-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ Աշխենի ալբոմում ԹԹԳԳ860/1: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-15է և 1079/4-14դ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՃ(Թ), 1918, №1, այնուհետև՝ Քռ, էջ 11, ԲՊ, էջ 49, ապա՝ ԵԺ1, 206:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԵՐԱԶՈՒՄԸՍ ՄԻ ՄԱՔԻ»
(էջ 24, 348) (ԵԼԺ 2, էջ 22, 333)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 24-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ Աշխենի ալբոմում ԹԹԳԳ860/1: Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ 423/3 և 1079/4-14դ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՃ(Թ), 1918, №1, այնուհետև՝ Քռ, էջ 12, ԲՊ, էջ 50, ապա՝ ԵԺ1, 206:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՄԸՆԱՑԵԼ Է ԲԵՐԴԸ ՄԵՋ»
(էջ 25) (ԵԼԺ 2, էջ 23)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 26-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1034-ում բանաստեղծի №8 ծոցատետրում (էջ 21): Մյուս երկուսը պահվում է ԹԹԳԳ1079/4-15ը և 1079/4-14դ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՃ(Թ), 1918, №23, այնուհետև՝ Քռ, էջ 13, ԲՊ, էջ 50, ապա՝ ԵԺ1, 206:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՀՈԳԻՍ՝ ՏԱՆԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ»
(էջ 26, 348) (ԵԼԺ 2, էջ 24, 334)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 27-ին:

ԳԱԱԹ ԹՓ, №100(106)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է 1934 թվականին՝ ԳԵ, էջ 128, այնուհետև՝ ԵԺԱ, 588:

Տպագրվում է ինքնագրից:

1918

«Ո՞ՆՑ Է ԺՊՏՈՒՄ ԻՄ ՀՈԳԻՆ»
(էջ 27) (ԵԼԺ 2, էջ 25)

Գրված է 1918 թ. հունվարի 4-ին:

ԹԹԳԳ 1079/4-14ե-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №13, այնուհետև՝ Քռ, էջ 14, ԲՊ, էջ 51, ապա՝ ԵԺԱ, 207:

Արտատպվում է ԲՊ-ից:

«Ի՞ՆՉ ԵՍ ԹՌՉՈՒՄ, ԽԵՎ-ԴԵՎ ՍԻ՞ՐՏ»
(էջ 28) (ԵԼԺ 2, էջ 26)

Գրված է 1918 թ. հունվարի 25-ին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը ԹԹԳԳ1079/4-15թ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ե-ում:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №23, այնուհետև՝ Քռ, էջ 15, ԲՊ, էջ 51, ապա ԵԺԱ, 207:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԻՄ ՍՈՒՐ, ԱՐԹՈՒՆ ԱԿԱՆՋՈՒՄ»
(էջ 29) (ԵԼԺ 2, էջ 27)

Գրված է 1918 թ. հունվարի 26-ին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը ԹԹԳԳ1079/4-15ժ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ե -ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 16, այնուհետև՝ ԲՊ, էջ 52, ապա ԵԺԼ, 207։

Արտատպվում է ԲՊ-ից։

«ԼԻՆԵ՞Ր ՀԵՌՈՒ ՄԻ ԱՆԿՅՈՒՆ»
(էջ 30, 348) (ԵԼԺ 2, էջ 28, 334)

Գրված է 1918 թ. փետրվարի 2-ին։

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը ԹԹԳԳ423/3-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ժբ-ում։

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №1, այնուհետև՝ Քո, էջ 17, ապա՝ ԵԺԼ, 208։

Արտատպվում է Քո-ից։

«ՄԻ ՀԱՎՔ ՋԱՐԿԻ ԵՍ ՄԻ ՕՐ»
(էջ 31) (ԵԼԺ 2, էջ 29)

Գրված է 1918 թ. փետրվարի 2-ին։

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը ԹԹԳԳ423/1-ում, թվագրված՝ «փ. 2», մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ա-ում, և երրորդը՝ ԹԹԳԳ1079/4-14ե-ում։

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №13, այնուհետև՝ Քո, էջ 18, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 52, ապա՝ ԵԺԼ, 208։

Արտատպվում է ԲՊ-ից։

«ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ ԻՐԱՐ ԿԻՑ»
(էջ 32, 349) (ԵԼԺ 2, էջ 30, 334)

Գրված է 1918 թ. փետրվարի 4-ին։

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը ԹԹԳԳ1079/4-15ժա-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ե-ում։ Նույն տեղում պահվում է նաև քառյակի մասնակցմանը վերաբերող մի արձակ սևագրություն, որ ներկայացնում ենք «Տարբերակներ» բաժնում։

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Թ), 1918, №1, Քո, էջ 19, ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 53, ապա՝ ԵԺԼ, 208։

Արտատպվում է ԲՊ-ից։

«Ո՞Վ Է ՁԵՌՔՈՎ ԱՆՈՒՄ, Ո՞Վ»
(էջ 33, 349) (ԵԼԺ 2, էջ 31, 335)

Գրված է 1918 թ. փետրվարին:

ԳԱԱԹ Թֆ №101(1 III ց)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Մեկ ինքնագիր էլ պահվում է ԹԹԳԳ1079/4-14գ-ում:

Առաջին անգամ տպագրվել է ՄԲ, 1918, 2 նոյեմբերի, №30, այնուհետև՝ Քո, էջ 20, ԲՊ, էջ 53, ապա՝ ԵԺ1, 208:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱՇՆԱՆ ԱՄՊԻՆ ՈՒ ՋԱՄՊԻՆ»
(էջ 34, 349) (ԵԼԺ 2, էջ 32, 335)

Գրված է 1918 թ. փետրվարին:

ԳԱԱԹ Թֆ №102 (1 III ց)-ում պահվում է մեկ ինքնագիր: ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցի մեկը՝ ԹԹԳԳ1079/4-14գ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-11-ում :

ԳԱԱԹ Թֆ №3603(1407)-ում պահվում է ՄԲ-ի մի օրինակ, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ տպագրվել է ՄԲ, 1918, 2 նոյեմբերի, №30, այնուհետև՝ Քո, էջ 21, ԲՊ, էջ 54, ապա՝ ԵԺ1, 208:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԿՂԹԱՅՆՈՒՄ ԵՆ, ԱՐՏՈՐՈՒՄ»
(էջ 35, 349) (ԵԼԺ 2, էջ 33, 335)

Գրված է 1918 թ. հունիսին:

ԹԹ-ում պահվում է չորս ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժբ, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14գ, երրորդը՝ ԹԹԳԳ1079/4-14ժգ, չորրորդը՝ ԹԹԳԳ1079/4-11-ում:

Առաջին անգամ տպագրվել է ՄԲ, 1918, 2 նոյեմբերի, №30, այնուհետև՝ Քո, էջ 22, ԲՊ, էջ 54, ապա՝ ԵԺ1, 209:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԲԵՐԱՆՆ ԱՐՆՈՏ ՄԱՐԴԱԿԵՐԸ ԷՆ ԱՆԲԱՆ»
(էջ 36, 350) (ԵԼԺ 2, էջ 34, 335)

Գրված է 1918 թ. նոյեմբերին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ423/2-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14գ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 23, այնուհետև՝ ԳԳ, էջ 498, ԲՊ, էջ 55, ապա՝ ԵԺI, 209:

Արտատպվում է ԲՊ-ից:

1919

«ՄԵՌԱ՛Ն, ՄԵՌԱ՛Ն... ԵՎ, ԱՀԱ»
(էջ 37, 350) (ԵԼԺ 2, էջ 35, 336)

Գրված է 1919 թ. հոկտեմբերի 8-ին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժզ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14է-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 24, այնուհետև՝ ԲՊ, էջ 55, ապա՝ ԵԺI, 210:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱՐԵՎԵԼՔԻ ԵԴԵՄՆԵՐԻՆ ԻՋԱՎ ՊԱՅԾԱՌ ԻՐԻԿՈՒՆ»
(էջ 38, 350) (ԵԼԺ 2, էջ 36, 336)

Գրված է 1919 թ. նոյեմբերի 21-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժդ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14է-ում, և երրորդը՝ ԹԹԳԳ1079/4-14ժա-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 25, այնուհետև՝ ԳԳ, էջ 499, ԲՊ, էջ 56, ապա՝ ԵԺI, 210:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԴՈՒ ՄԻ ԱՆՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՍ, ՉԸՍՏԵՄՆԸՎԱԾ ՄԻՆՉ ԷՍՕՐ»
(էջ 39, 351) (ԵԼԺ 2, էջ 37, 336)

Գրված է 1919 թ. նոյեմբերին:

Նվիրված է տիկ. Թամամշևային: Այդ մասին կա Թումանյանի վկայությունը «Ինչու սկսեցի քառյակներ գրել» գրառման մեջ (ԹԹԳԳ1079/4-18): Խոսքը վերաբերում է Փ. Վարդազարյանի քրոջը՝ Լիզային (ամուսնական ազգանունով՝ Թամամշյան): Ըստ հանրագիտական տեղեկության՝ Թամամշյան վաճառական ընտանիքը, սկսած XVIII դարից, կարևոր դերակատարություն է ունեցել Թիֆլիսի հասարակական-քաղաքական կյանքում՝ «որպես ընտրովի քեթխուդաներ»: Ընտանիքի հայտնի անդամներից հիշվում են Հովհաննեսի, Դավթի (եղել է Ներսես Աշտարակեցու հավատարմատար գործակալը՝ վեքիլը), Ավետիքի, Գաբրիելի անունները (Հայկական համառոտ հանրագիտարան 2, Երևան, 1995, էջ 260):

Հնարավոր չեղավ պարզել, թե Թամամշյաններից ում կինն է եղել Լիզա Վարդազարյանը:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժե-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ժ-ում, և երրորդը՝ ԹԹԳԳ1079/4-14ժգ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 28, այնուհետև՝ ԲՊ, էջ 57, ապա՝ ԵԺԱ, 211:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՀԵ՜Յ ԱԳԱՀ ՄԱՐԴ, ՀԵ՜Յ ԱՆԳՈՀ ՄԱՐԴ, ՄԻՏՔԴ ԵՐԿԱՐ, ԿՅԱՆՔԴ ԿԱՐՃ»
(էջ 40, 351) (ԵԼԺ 2, էջ 38, 337)

Գրված է 1919 թ. նոյեմբերին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժգ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ը-ում :

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 27, այնուհետև՝ ԲՊ, էջ 57, ապա՝ ԵԺԱ, 211:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱԶԱՏ ՕՐԸ, ԱԶԱՏ ՍԵՐԸ, ԱՄԵՆ ԲԱՐԻՔ ԻՐ ՁԵՌՔԻՆ»
(էջ 41, 351) (ԵԼԺ 2, էջ 39, 337)

Գրված է 1919 թ. նոյեմբերին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժէ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14թ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 26, այնուհետև՝ ԲՊ, էջ 56, ապա՝ ԵԺI, 210:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՔՈՒՆ ԹԵ ԱՐԹՈՒՆ՝ ՕՐԻՍ ՇԱՏԸ ԵՐԱԶ ԵՂԱՎ, ԱՆՑ ԿԱՑԱՎ»
(էջ 42, 352) (ԵԼԺ 2, էջ 40, 337)

Գրված է 1919 թ. դեկտեմբերի 6-ին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ժթ-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ժ-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 29, այնուհետև՝ ԲՊ, էջ 58, ապա՝ ԵԺI, 211:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՈՐ ԱՇԽԱՐՀՔՈՒՄ ՈՒՆԵՄ ՇԱՏ ԲԱՆ. ՄԻՏՔ ԵՄ ԱՆՈՒՄ՝ ԷՍ, ԹԷ ԷՆ»
(էջ 43, 352) (ԵԼԺ 2, էջ 41, 338)

Գրված է 1919 թ. դեկտեմբերի 8-ին:

ԹԹ-ում պահվում է երկու ինքնագիր, որոնցից մեկը՝ ԹԹԳԳ1079/4-15ի-ում, մյուսը՝ ԹԹԳԳ1079/4-14ժը-ում:

Առաջին անգամ տպագրվել է Քո, էջ 30, այնուհետև՝ ԲՊ, էջ 58, ապա՝ ԵԺI, 211:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԿՈՐՑՐԵԼ ԵՄ, ՈՒՐ ԳՏՆԵՄ»
(էջ 44) (ԵԼԺ 2, էջ 42)

Գրված է 1920 թ. փետրվարի 4-ին:
ԳԱԹ Թփ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր:
Առաջին անգամ տպագրվել է ՀՆ, էջ 3, այնուհետև՝ ԵԺ1, 546:
Տպագրվում է ինքնագրից:

«Ի՜ՆՉ ԽՄԱՆԱՍ ԸՍՏԵՂԾՈՂԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ԱՆՄԵԿԻՆ»
(էջ 45) (ԵԼԺ 2, էջ 43)

Գրված է 1920 թ. մարտի 30-ին:

ԳԱԹ Թփ №114(109), №110(110), №109(261)-ում պահվում է երեք ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Հկ, 1920, №13, էջ 512, այնուհետև՝ ԲՊ, էջ 59, ապա՝ ԵԺ1, 212:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԽԱՅԱՄՆ ԱՍԱՎ ԻՐ ՍԻՐՈՒՀՈՒՆ. «ՈՏԸԴ ԸՋԳՈՒՅՇ ԴԻՐ ՀՈՂԻՆ»
(էջ 46, 352) (ԵԼԺ 2, էջ 44, 338)

Գրված է 1920 թ. ապրիլի 6-ին:

ԳԱԹ Թփ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է 1932 թվականին՝ ՀՆ, էջ 134, այնուհետև՝ ԵԺ1, 546:

Տպագրվում է ինքնագրից:

Այս քառյակի մտահղացումը որոշակիորեն կապվում է Խայամի երկու քառյակների հետ: Մեկի մասին գրում է գրականագետ Ազ. Եղիազարյանն իր «Այս հնում, հանճարեղ տղեկին» (Երևան, 2009) գրքի «Մահվան ընկալումը Թումանյանի և Խայամի ստեղծագործության մեջ» բերելով հետևյալ քառյակը.

Երբ Նովրուզին ամպը ցողով լալաների դեմքը դաղի,
Ելի՛ր մենք էլ գինու գավով դաշտերն ելնենք՝ խաղ ու տաղի,

Այս մարգերը, որտեղ այսօր մենք ենք շրջում երազելով,
Գալ գարունքին, ո՜վ իմանա, գուցե բուսնեն հենց մեր հողին:
(Օմար Խայամ, Քառյակներ, բնագրից թարգմանեց՝ Ա. Մաթյան, Սարահան, 2007, էջ 22):

Մյուսը վկայակոչում է գրականագետ Վ. Դևրիկյանը՝ Օմար Խայամ, Քառյակներ, պարսկերենից թարգմանեց՝ Գ. Փառնակ, Փարիզ, 1904 գրքից: Բերում է ՃԻԹ (129) քառյակի վերջին երկու տողերը.

Դալարիքին վրա նստե, ո՛վ իմ կուռքս, վի երկար ատեն չանցներ,
Մինչև որ դալարիք բուսնի իմ ու քո հողեն:

Բերված օրինակները, հավանաբար, միևնույն քառյակի տարբեր թարգմանություններ են՝ մեկը գեղարվեստական, մյուսը՝ բառացի: Բոլոր դեպքերում վարկածը համոզիչ է:

«ԵՐՆԵԿ ԼՍՊԵՄ՝ ԱՆՎԵՐՋ ՔԵԶ ՀԵՏ – ԻՄ ԿՅԱՆՔԻ ՀԵՏ ԼԻՆԵԻ»
(էջ 47, 353) (ԵԼժ 2, էջ 45, 339)

Գրված է 1920 թ. մայիսի 12-ին:

ԳԱԹ ԹՖ №114(109), №110(110) և №107(6լր)-ում պահվում է երեք ինքնագիր, ԹԹ-ում պահվում է ևս չորս ինքնագիր՝ ԹԹԳԳ1079/4-10-ում երեք օրինակ, և ԹԹԳԳ1079/4-8-ում :

Առաջին անգամ տպագրվել է Հկ, 1920, №13, էջ 512, այնուհետև՝ ԳԳ, էջ 499, ԲՊ, էջ 59, ապա՝ ԵժԼ, 212:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԼՈՒՍԸ ԼՈՒՍԻՆ ՔՈ ԺՊԻՏՆ Է ԻՄ ԵՐԵՍԻՆ ԾԱՌԱԳՈՒՄ»
(էջ 48, 353) (ԵԼժ 2, էջ 46, 339)

Գրված է 1920 թվականի նոյեմբերի 24-ին:

ԹԹ-ում պահվում է երեք ինքնագիր՝ ԹԹԳԳ1079/4-14ը, ԹԹԳԳ1079/4-14ժա և ԹԹԳԳ1079/4-15ժը:

Առաջին անգամ, «Թամարի ալբոմից» վերնագրով, տպագրվել է Նք, 1924, գիրք 4, էջ 63, այնուհետև՝ ԵժԼ, 546:

Տպագրվում է Գ ինքնագրից:

ԹԹԳԳ1079/4-14է-ում պահվում է այս քառյակի նախնական տարբերակը, գրված «Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն» քառյակի ինքնագրի հակառակ էջին, Թվագրված՝ «ն. 23», որը բերվում է Տարբերակներ բաժնում:

1921

«ԱՌԱՏ, ԱՆՀԱՏ ԱՍՏԾՈՒ ՆՇՄԱՆ՝ ՄԻՇՏ ՏԵՂԱԼՈՒՑ ՀՈԳՆԵԼ ԵՄ ԵՍ» (էջ 49, 354) (ԵԼԺ 2, էջ 47, 340)

Գրված է 1921 թ. փետրվարի 7-ին:

ԳԱԱԹ Թֆ №114(109), №110(110) և №109(261)-ում պահվում է երեք ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Վծ, 1921, №1, էջ 49, այնուհետև՝ ԲՊ, էջ 60, ապա՝ ԵԺ1, 213:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԵՍ ՇՐՋՆՈՒՄ ԵՄ ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒ ՇՈՒՆՉԸ ԱՄԵՆՈՒՐ» (էջ 50, 354) (ԵԼԺ 2, էջ 48, 341)

Գրված է 1921 թ. փետրվարի 14-ին:

ԳԱԱԹ Թֆ №114(109), №110(110) և №109(261)-ում պահվում է երեք ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Վծ, 1921, №1, էջ 49, այնուհետև՝ ԲՊ, էջ 60, ապա՝ ԵԺ1, 213:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱՐՑՈՒՆԱԼԻ ԱՂԵՏՆԵՐՈՎ, ԱՂՄՈՒԿՆԵՐՈՎ ԱՀԱՐԿՈՒ» (էջ 51, 355) (ԵԼԺ 2, էջ 49, 341)

Գրված է 1921 թ. մայիսի 1-ին

ԳԱԱԹ Թֆ №114(109), №110(110) և №109(261)-ում պահվում է երեք ինքնագիր:

ԹԹ-ում պահվում է ևս երեք ինքնագիր՝ ԹԹԳԳ1079/4-2, ԹԹԳԳ1079/4-3ա և ԹԹԳԳ1079/4-3բ:

Առաջին անգամ տպագրվել է ԲՊ, էջ 61, այնուհետև՝ ԵԺ1, 213:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ՔՈ ՏՐՎԱԾԻՑ ԵՐԲ ՄԻ ԲԱՆ ԵՍ ԴՈՒ ՏԱՆՈՒՄ»
(էջ 52, 355) (ԵԼԺ 2, էջ 50, 341)

Գրված է 1921 թ. մայիսի 2-ին:

ԳԱԹ ԹՓ №114(109), №110(110) և №109(261)-ում պահվում է երեք ինքնագիր:

ԹԹ-ում պահվում է և չորս ինքնագիր՝ ԹԹԳԳ1079/4-2, ԹԹԳԳ1079/4-3ա, ԹԹԳԳ1079/4-3բ և ԹԹԳԳ1079/4-3գ:

Առաջին անգամ տպագրվել է Նք, 1922, գիրք Ա, էջ 95, այնուհետև՝ ԳԳ, էջ 499, ԲՊ, էջ 61, ապա՝ ԵԺԼ, 214:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ՀԱԶԱՐ ՏԱՐՈՎ, ՀԱԶԱՐ ԴԱՐՈՎ ԱՌԱՋ ԹԵ ԵՍ, Ի՞ՆՉ ԿԱ ՈՐ»
(էջ 53, 356) (ԵԼԺ 2, էջ 51, 342)

Գրված է 1921 թ. մայիսի 3-ին:

ԳԱԹ ԹՓ №111(109) և №109(261) պահվում է երկու ինքնագիր: ԹԹ-ում պահվում է և երեք ինքնագիր՝ ԹԹԳԳ1079/4-3, ԹԹԳԳ1079/4-7-ում երկու օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է ՆՈՒ, 1929, №1, էջ 8, այնուհետև՝ ԵԺԼ, 549:

Տպագրվում է Ե ինքնագրից:

«ԱՍԻ. «ՀԵՆՑ ԼՈԿ ԷՍ ԱՃՅՈՒՆՆ Է ՈՒ ԱՆՈՒՆԸ, ՈՐ ՈՒՆԵՄ...»
(էջ 54, 357) (ԵԼԺ 2, էջ 52, 344)

Գրված է 1921 թ. մայիսի 6-ին:

ԳԱԹ ԹՓ №114(109) և №111(109)-ում պահվում է երկու ինքնագիր: ԳԱԹ ԹՓ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի վրա գրված է երկու տարբերակ: ԹԹԳԳ1079/4-9-ում պահվում է և մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԲՊ, էջ 62, այնուհետև՝ ԵԺԼ, 214:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԱԶՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՔՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱԿԱԹ»
(էջ 55, 358) (ԵԼԺ 2, էջ 53, 345)

Գրված է 1921 թ. մայիսի 16-ին:

ԳԱԹ Թփ №114(109), №110(110) և №112(110)-ում պահվում է երեք ինքնագիր:

Առաջին անգամ «Բարձր է հրնոց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադես» և «Իմ կրնունքին երկինքը ժամ, արևը ջահ սրբբազան» քառյակների հետ տպագրվել է ԺՁ(Պ), 1921, №940, խմբագրության հետևյալ ծանոթությամբ. «Սույն քառյակները, ինչպես նաև անոնց հետևող «Վայրէջք» քերթվածը՝ անտիպ են: Մեր շնորհակալությունները բանաստեղծին նրանց առաջին ընթերցման հաճույքը մեր ընթերցողներին ընծայել ուզելու համար»:*

Այնուհետև տպագրվել է ԲՊ, էջ 62, ապա՝ ԵԺ1, 214:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԲԱՐՁՐ Է ՀՐՆՈՑ ԱՇԽԱՐՀՔՆ ՀԱՅՈՑ ՈՒ ՄԱՍԻՍԸ ԵՐԿՆԱԴԵՍ»
(էջ 56, 358) (ԵԼԺ 2, էջ 54, 345)

Գրված է 1921 թ. մայիսի 21-ին:

ԳԱԹ Թփ №114(109), №110(110) և №113(110)-ում պահվում է երեք ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Պ), 1921, №940 (տե՛ս «Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ» քառյակի ծանոթագրությունը): Այնուհետև տպագրվել է ԲՊ, էջ 63, ապա՝ ԵԺ1, 214:

Արտատպվում է ԲՊ-ից:

«Ո՛Վ ԱՆԾԱՌ ՄԻՆ, ՈՐ ԱՄԵՆԻՆ ՄԻԱՅՆՈՒՄ ԵՍ ՄԻ ԿՅԱՆՔՈՒՄ»
(էջ 57, 358) (ԵԼԺ 2, էջ 55, 346)

Գրված է 1921 թ. օգոստոսի 3-ին:

ԳԱԹ Թփ №114(109) և №110(110)-ում պահվում է երկու ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԲՊ, էջ 64, այնուհետև՝ ԵԺ1, 214:

Արտատպվում է ԲՊ-ից:

** ԺՁ-ի խմբագրությունը տեղյակ չի եղել, որ «Վայրէջքը» դրանից առաջ տպագրվել է երկու անգամ 1909, №69 և ՆՀ, 1913, №3, էջ71, (խմբ.):*

«ԱՍՏԾՈՒ ԲԱՆՏՆ ԵՆ ՏԱՃԱՐՆԵՐԸ — ԱՇԽԱՐՀՔՆԵՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿ» (էջ 58, 359) (ԵԼԺ 2, էջ 56, 346)

Գրված է 1921 թ. օգոստոսի 25-ին:

ԳԱԹ Թֆ №114(109)-ում պահվում է մեկ ինքնագիր: ԹԹԳԳ1079/4-13-ում պահվում է ևս մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 128, այնուհետև՝ ԵԺI, 549:

Տպագրվում է առաջին ինքնագրից:

Քառյակը հիշեցնում է Ֆ. Նիցշեի «Զվարթ գիտության» 175-րդ ասույթը. «Տակավին ուրիշ ինչ են այս եկեղեցիները եթե ոչ Աստծու դամբարան և մահարձան» (Ֆ. Նիցշե, «Այսպես խոսեց Զրադաշտը», թարգմ.՝ Հակոբ Մովսեսի, Երևան, 2015, էջ 9): Նկատել է Վ. Դերիկյանը:

«ԿՅԱՆՔԸՍ ԱՐԻ ՀԸՐԱՊԱՐԱԿ, ՈՏՔԻ ԿՈԽԱՆ ԱՄԵՆՔԻՆ» (էջ 59, 359) (ԵԼԺ 2, էջ 57, 346)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 5-ին:

ԳԱԹ Թֆ №114(109) և №110(110)-ում պահվում է երկու ինքնագիր: Ինքնագրերից մեկի (№114) վերջում բանաստեղծը գրել է՝ «Պոլիս և հիվանդություն»:

Նվարդ Թումանյանը հիշում է բանաստեղծի հետևյալ խոսքերը. «...Քառյակները շատ ուժեղ շարիֆներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են.

Կյանքըս արի հըրապարակ...

Ճի՛շտ որ հրապարակ – Պոլիս գնալիս ճամփին եմ գրել» (տե՛ս Նվարդ Թումանյան, էջ 305):

Թումանյանը Կ. Պոլիս է մեկնել ավելի ուշ՝ 1921 թ. նոյեմբերի վերջին: Հետևաբար, այս քառյակի հեղինակային թվագրության (սեպտեմբերի 5) և Ն. Թումանյանի բերած խոսքերի միջև հակասություն կա, որը թերևս մոռացության արդյունք է (ինքնագիրը թվագրված է հետո՝ մատիտով): Սակայն հնարավոր է նաև, որ սեպտեմբերի 5-ին գրվել է քառյակի՝ մեզ չհասած մի տարբերակ, որը Թումանյանը հետո վերամշակել է Պոլիս ուղևորվելու ճանապարհին:

Առաջին անգամ տպագրվել է ԲՊ, էջ 64, այնուհետև՝ ԵԺI, 215:

Արտատպվում է ԲՊ-ից:

«ԻՄ ԿԸՆՈՒՆՔԻՆ ԵՐԿԻՆՔԸ ԺԱՄ, ԱՐԵՎԸ ՋԱՀ ՍԸՐԲԱԶԱՆ»
(էջ 60, 359) (ԵԼԺ 2, էջ 58, 346)

Գրված է 1921 թ. նոյեմբերի 21-ին:

ԳԱԹ ԹՖ №114(109) և №110(110)-ում պահվում է երկու ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԺՁ(Պ), 1921, №940 (տե՛ս «Աստղային երգերի աշխարհներում լուսակաթ» քառյակի ծանոթագրությունը): Այնուհետև տպագրվել է ԲՊ, էջ 63, ապա՝ ԵԺԿ, 215:

Արտատպվում է ԲՊ-ից:

Քառյակի տողերը հաջորդաբար ներկայացնում են կնունքի ողջ ընթացքը: Ավելի հանգամանորեն տե՛ս Վ. Գևորգյան, Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը, Երևան, 2010, էջ 87:

«ԱՄԵՆ ՄԻ ՍԻՐՏ ՑԱՎՈՎ ԼԸՑՎԵՑ ՄԵՐ ԴԱՐՈՒՄ»
(էջ 61, 359) (ԵԼԺ 2, էջ 59, 347)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Դատելով ձեռագրից՝ գրված է 1921-1922 թթ.:

ԳԱԹ ԹՖ №117(111)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է 1932 թ., ՀՆ, էջ 134, այնուհետև ԵԺԿ, 549:

Տպագրվում է ինքնագրից:

1922

«ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԸՆՉՈՒՄ ԵՆ ՈՒ ԱՆՑ ԿԵՆՈՒՄ»
(էջ 62, 359) (ԵԼԺ 2, էջ 60, 347)

Գրված է 1922 թ. հունիսի 9-ին:

ԳԱԹ ԹՖ №114(109) և №110(110)-ում պահվում է երկու ինքնագիր: ԳԱԹ ԹՖ №115 (4 լր.)-ում ևս մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Նք, 1922, գիրք Ա, էջ 95, այնուհետև ԳԳ, էջ 499, ապա՝ ԵԺԿ, 216:

Արտատպվում է ԳԳ-ից:

«ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՄԻ ՃԱՄՓՈՐԴ Է ԻՄ ՀՈԳԻՆ»
(էջ 63, 359) (ԵԼԺ 2, էջ 61, 347)

Գրված է 1922 թ. հուլիսի 8-ին:

ԳԱԹ Թֆ №114(109) և №116(109)-ում պահվում է երկու ինքնագիր: ԳԱԹ Թֆ №115(5 լր.)՝ ևս մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Նք, 1922, գիրք Ա, էջ 95, այնուհետև՝ ԵԺ4, 216:

Արտատպվում է Նք-ից:

«ԷՆՔԱՆ ՇԱՏ ԵՆ ՑԱՎԵՐՆ, ԱՎԵՐՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ»
(էջ 64, 360) (ԵԼԺ 2, էջ 62, 347)

Գրված է 1922 թ. հուլիսի 12-ին:

ԳԱԹ Թֆ №114(109)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է Նք, 1922, գիրք Ա, էջ 95, այնուհետև՝ ԵԺ4, 218:

Արտատպվում է Նք-ից: Ուղղել ենք մեկ տպագրական սխալ (3-րդ տողում «էս»-ի փոխարեն տպագրված էր «այս»):

«ԷՍ Է, ՈՐ ԿԱ... ՃԻՇՏ ԵՍ ԱՍՈՒՄ, ԹԱՍԸԴ ԲԵ՛Ր»
(էջ 65, 360) (ԵԼԺ 2, էջ 63, 348)

Գրված է 1922 թ. օգոստոսի 14-ին: Նվիրված է բժիշկ Գրիգոր Սաղյանին (1880-1937): Վերջինս ժամանակին մերժել է Աղասի Խանջյանի ինքնասպանության սարքովի վարկածը, ինչի համար գնդակահարվել է: Թումանյանի կյանքի վերջին շրջանում Գ. Սաղյանը եղել է նրա մտերիմ բարեկամներից մեկը, որին նվիրված է նաև մի ուրիշ քառյակ («Հե՜յ, Գրիշա, իմ լուսախոպեր, ալեկոծվեց կյանքն էսպես»):

ԹԹԳԳ1079/4-6-ում պահվում է մեկ ինքնագիր՝ վերնագրված՝ «Գրիշին», թվագրված՝ «14 օգ., 1922»: ԹԹԳԳ1079/57-6-ում պահվում է Աշխենի ձեռքով արտագրված մեկ օրինակ:

Առաջին անգամ, ինքնագրի լուսապատճենի հետ միասին տպագրվել է ՀՆ, էջ 134, այնուհետև՝ ԳԵ, էջ 129, ապա՝ ԵԺ4, 550:

Արտատպվում է ինքնագրից:

Ժամանակին չորրորդ տողի «ըսպասում» բառի կապակցությամբ

բանավեճ է տեղի ունեցել Նվարդ Թումանյանի և գրականագետ Հովհ. Ղանալանյանի միջև (տե՛ս ԽԳ, 1938, №3-4, էջ 213 և ԳԹ, 1938, №27, №29 և №40)։ Ի վերջո, «բացանվում» և «բացատվում» բառերը մերժվել են և ինքնագրի հիման վրա ընդունվել է «բացասում» բառը։

Գրականագետ Սամվել Մուրադյանը հիշում է այդ առիթով լեզվաբան Հր. Աճառյանի պատմածը, թե ինչպես նա մի անգամ Ավ. Իսահակյանի մոտ արտասանել է այդ քառյակը «Մեկն ապրում է, մյուսն սպանում» տարբերակով և լսել Իսահակյանի արձագանքը. «Թումանյանին սպանեցիր»։

«ՀԵ՜Յ, ՃԱՄՓԱՆԵ՛Ր, ՃԱՄՓԱՆԵ՛Ր»
(էջ 66, 360) (ԵԼԺ 2, էջ 64, 348)

Գրված է 1922 թ.։

ԳԱԹ ԹՖ №118(112)-ում պահվում է մեկ ինքնագիր։

Առաջին անգամ ինքնագրի ֆաքսիմիլեն տպագրվել է 1923 թ. «Заря востока» թերթում, №68։

Տպագրվել է Աղ, Վիեննա, 1924, №7, էջ 398, հետևյալ խմբագրական ծանոթությամբ. «Այս քառյակը գրված է այն ժամանակ, երբ Հ. Թումանյան ծանր հիվանդ ճանապարհվում էր Մոսկվա բժշկվելու։ Կարծվում է, որ այս նրա վերջին բանաստեղծությունն է»։ (Ճիշտ չի «կարծվում». Թումանյանի վերջին ստեղծագործությունը «Արտույտի» բանաստեղծությունն է, որ մեզ է հասել կիսավարտ սևագիր վիճակում - խմբ.)։

Այնուհետև տպագրվել է ԵԺԻ, 550։

Տպագրվում է ինքնագրից։

II

1916

«ՀԱՆԳԵ՛Լ ԵՆ»
(էջ 67, 360) (ԵԼԺ 2, էջ 65, 348)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԹԹԳԳ1034 №8 ծոցատետրում (էջ 6) պահվում է մեկ ինքնագիր, 1916 թվականի հունիսին գրված «Ե՛տ չեկա՛վ» և «Ո՞ւր կորա՛ն» քառյակների շարքում, որից կարելի է ենթադրել, որ գրված է նույն ժամանակ։

Առաջին անգամ տպագրվել է ԵԼԺ 2, 1990:
Տպագրվում է ինքնագրից:

«ՁԻ ԳԱԼԻՍ»
(էջ 68, 361) (ԵԼԺ 2, էջ 66, 349)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԹԹԳԳ 1034 №8 ծոցատետրում (էջ 7) պահվում է մեկ ինքնագիր, 1916 թվականի հունիսին գրված «Ե՛տ չեկա՛վ» և «Ո՞ւր կորա՛ն» քառյակների շարքում, որից կարելի է ենթադրել, որ գրված է նույն ժամանակ:

Առաջին անգամ տպագրվել է ԵԼԺ 2, 1990:
Տպագրվում է ինքնագրից:

1917

«ՄԻՆՉԵՎ ԷՍՕՐ ԻՄ ՕՐՈՒՄ»
(էջ 69) (ԵԼԺ 2, էջ 67)

Գրված է 1917 թ. հունվարի 16-ին:
ԳԱԹ ԹՖ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր, ջնջված:
Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 127, այնուհետև՝ ԵԺ1, 529:
Տպագրվում է ինքնագրից:

«ԱՌԱՏ ԿԸԼՆԻ ԿԻՆԸ ԱՐԴ»
(էջ 70) (ԵԼԺ 2, էջ 68)

Գրված է 1917 թ. հունվարի 16-ին:
ԳԱԹ ԹՖ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ ջնջված:
Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 127, այնուհետև՝ ԵԺ1, 529:
Տպագրվում է ինքնագրից:

«Ա՛Ռ ՔԸՆԱՐԸՍ... ԼԱՆՋԻԴ ՎԸՐԱ»
(էջ 71)

Նշված է ամիսը և ամսաթիվը՝ 28, I, առանց տարեթվի: Հավանաբար

գրվել է 1917 թ., քանի որ Անուշ Թումանյանի ալբոմում այս քառատողին նախորդող և հաջորդող գրառումները նույն թվականի գործեր են:

Պահվում է ԹԹԳԳ860/3-ում Անուշ Թումանյանի ալբոմում:

Տպագրվում է առաջին անգամ:

«ԻՄ ԾԻՏԻԿԸ ԳՈՒ ՀԵՐՎԱՆ»
(էջ 72) (ԵԼԺ 2, էջ 70)

Գրված է 1917 թ. նոյեմբերի 12-ին:

ԹԹԳԳ860/5-ում բանաստեղծի դուստր Սեդայի ալբոմում, պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ4, 535:

Տպագրվում է ինքնագրից:

«ՔՈՒ ՍԵՐՆ ԱՆԽՈՍ ԽԱԲԵՑ ԻՆՁ»
(էջ 73) (ԵԼԺ 2, էջ 71)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԹԹԳԳ1079/4-11-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, «Ե՛տ եկե՛ք» քառյակի հետ նույն էջի վրա, որից կարելի է ենթադրել, թե գրված է նույն 1917 թվականին:

Առաջին անգամ տպագրվել է ԵԼԺ 2, 1990:

Տպագրվում է ինքնագրից:

1918

«ՆԱ ՄԻ ԱՌՅՈՒԾ, ԵՍ ՄԻ ԳԱՌ»
(էջ 74) (ԵԼԺ 2, էջ 72)

Գրված է 1918 թ. հունվարի 25-ին:

ԳԱԹ Թֆ №100(106)-ում պահվում է մեկ ինքնագիր, ջնջված:

Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 128, այնուհետև ԵԺ4, 538:

Տպագրվում է ինքնագրից:

«ԿՅԱՆՔՆ ԱՀԱ»
(էջ 75) (ԵԼԺ 2, էջ 74)

Գրված է 1918 թ. օգոստոսի 30-ին:
ԳԱԹ Թֆ №109(261)-ում պահվում է մեկ ինքնագիր:
Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 128, այնուհետև՝ ԵԺI, 542:
Տպագրվում է ինքնագրից:

«ԱՂՋԻԿ ԱՆՈՒՇ, ԵՐԳ ԱՆՈՒՇ»
(էջ 76) (ԵԼԺ 2, էջ 75)

Գրված է 1918 թվականին:

ԹԹԳԳ860/3-ում՝ բանաստեղծի դուստր Անուշի ալբոմում, պահվում է մեկ ինքնագիր:

Ըստ Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության կազմողների (տե՛ս ԵԺI, 739) առաջին անգամ տպագրվել է 1923 թ. (մեզ չհաջողվեց պարզել առաջին հրատարակության տեղը): Այնուհետև տպագրվել է ԵԺI, 541:

Տպագրվում է ինքնագրից:

1919

«ՄԵՐ ԳԱՆՁԵՐԸ ՄԻՇՏ ԿԱՆ ԱՌԱՏ»
(էջ 77, 361) (ԵԼԺ 2, էջ 76, 349)

Գրված է 1919 թ. փետրվարի 14-ին, ի պատասխան դստեր՝ Անուշի գրած հետևյալ քառյակի.

Հիմար էի ես, որ չըտրվի
Գանձերս իմ հաճույքին,
Հիմա գիտեմ, էլ չեմ հասնի,
Ու կմնա ուրիշին:

ԹԹԳԳ1079/4-5-ում պահվում է մեկ ինքնագիր՝ վերնագրված «Անուշի քառյակին»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺI, 543:

Տպագրվում է ինքնագրից:

«ԷՆՔԱՆ ԵԿԱՆ, ԱՆՑ ԿԱՑԱՆ»
(էջ 78) (ԵԼԺ 2, էջ 77)

Գրված է 1919 թ. մայիսին:

ԵԼԺ 2, 1990 թ. տպագրության ծանոթագրությունում նշված է՝ «ԹԸԱ պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է առաջին անգամ»: ԹԹ-ում ձեռագիրը չի գտնվել:

Տպագրվում է 1990, ԵԼԺ 2-ից:

«ԹՎՈՒՄ Է ՀԱՐ, ԹԵ ԱՆՑՅԱԼԸՍ ՈՒ ԱՊԱԳԱՍ ՏԵՍԱԾ ԿԱՄ»
(էջ 79, 362) (ԵԼԺ 2, էջ 78, 350)

Հավանաբար գրված է 1919 թ.:

ԳԱԹ ԹՖ №103(107)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ1, 545:

Տպագրվում է ինքնագրից:

«ՄԱՆՈՒԿ ՕՐԻՑ ՍԱՐ ՈՒ ՁՈՐԻՆ ԵՍ ՄՆԱՑԻ ՄՈՏ ԸՆԿԵՐ»
(էջ 80) (ԵԼԺ 2, էջ 79)

Հավանաբար գրված է 1919 թվականին:

Ինքնագիրը մեր ձեռքին չի եղել: ԹԹԳԳ1079/57-7-ում պահվում է Աշխենի ձեռքով արտագրված մի օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ1, 545:

Տպագրվում է Աշխենի արտագրած օրինակից:

ՍԻ՛ՐՏ

(«Դու գիտես մենակ ճամփեն երկընքի»)
(էջ 81) (ԵԼԺ 2, էջ 80)

Հավանաբար գրված է 1919 թվականին:

ԳԱԹ ԹՖ №104(108)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1942, №5-6, էջ 68, այնուհետև՝ ԵԺ1, էջ 544:

Տպագրվում է ինքնագրից:

«ՄԵՐ ԿՅԱՆՔԸ — ԿԱՐՃ ՄԻ ՎԵՐԵԼՔ»
(էջ 82, 362) (ԵԼԺ 2, էջ 81, 350)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ձեռագրից դատելով, հավանաբար, գրված է 1919 թվականին:

ԹԹԳԳ1079/4-4-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ I, 544:

Տպագրվում է ինքնագրից:

Ներկա հրատարակության մեջ, ինքնագրի հիման վրա, ճշտել ենք 4-րդ տողը («անմեկ աստված», որի փոխարեն ԵԺ I-ում սխալմամբ տպագրվել է «անմահացած»):

1920

«ԱՀԱ ՇԻՐԻՄՆ... ԻՄ ԸՆԿԵՐՆ ԷՐ... ՄԻ ՍՈՎՈՐՈՒԹՔ ՈՒՆԵՐ ՆԱ»
(էջ 83, 362) (ԵԼԺ 2, էջ 82, 351)

Գրված է հավանաբար 1920 թվականին:

ԳԱԹ Թֆ №120(100ժա)-ում պահվում է երկու ինքնագիր՝ թվագրված՝ «30 հունվարի»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ VI, 76:

Տպագրվում է ինքնագրից:

«ԴՈՒ ՄԻ ՃԱՐՊԻԿ ՄԱՔՍԱՆԵՆԳ ԵՍ, ԼՈԿ ՃԱՄՓՈՐԴ ԵՍ ՋԵՎԱՆՈՒՄ»
(էջ 84, 363) (ԵԼԺ 2, էջ 83, 351)

Գրված է 1920 թ. մայիսի 16-ին:

ԳԱԹ Թֆ №108(100ժբ)-ում պահվում է մեկ ինքնագիր:

ԹԹԳԳ1079/57-7-ում կա Աշխենի ձեռքով արտագրված մեկ օրինակ, վերնագրված՝ «Ն. Վ. Բ.-ին»:

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիքի ձայն», Երևան, 1965, №4:

Տպագրվում է ինքնագրից:

Տիկ. Բյուլմերինգի և քառյակի ստեղծման մասին Սոֆյա Դանիել-Բեկն իր հուշերում գրում է. «Թումանյանի հիվանդության սկիզբն էր, երբ պատերազմը վերջացավ. սահմանները բացվեցին. արտասահման պետք է մեկներ մեր ընդհանուր ծանոթներից մեկը, տիկին Բյուլմերինգ-Ակիմյանը, կրթական մեծ պաշարով մի անձնավորություն: Տիկինը թեև հայերենին

չէր արտահայտում, բայց հետաքրքրվում էր հայ գրականությամբ, մասնավորապես Թումանյանի ստեղծագործությամբ: Նա աջակցել էր նաև Շանթի «Հին աստվածների» թարգմանությանը գերմաներենի, որը մտադիր էր բեմադրել Բեռլինում: Թիֆլիսի ինտերնացիոնալ հասարակության մի շրջան՝ ռուսներ, վրացիներ, գերմանացիներ, հայեր, բարի երթի երեկույթով պատվեցին տիկնոջը: Հ. Թումանյանը արդեն հիվանդ էր. չկարողացավ ներկա լինել երեկույթին, բայց մի ուշագրավ ուղերձ ուղարկեց տիկնոջը... Ոտանավորը կարդացվեց, խոսքս թարգմանվեց ռուսերենի և մեծ տպավորություն գործեց» (տե՛ս «Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին», Երևան, 1975, էջ 150):

1921

«ԱՏՈՒՄ ԵՄ ՔԱՂԱՔԸ ԴԱՏԱՐԿ ՈՒ ԾԵՔԵՂ»
(էջ 85) (ԵԼԺ 2, էջ 84)

Գրված է 1921 թ. մայիսի 20-ին:

Նախորդ հրատարակության մեջ նշված է. «ԹԸԱ պահվում է Նիկարդի ձեռքով արտագրված մեկ օրինակ՝ թվագրված՝ «1921.20.V. Երևան-Թիֆլիսից-Լոռի-Երևան»: Նյութը թանգարանի ֆոնդերում չենք հայտնաբերել:

Տպագրվում է ԵԼԺ2-ից::

1922

«Ո՞ՒՐ ՀԵՌԱՆԱՍ, ԿՈԽԱԾ ՏԵՂԵՐԴ ԱՐՅՈՒՆՈՏ»
(էջ 86, 363) (ԵԼԺ 2, էջ 73, 349)

Գրված է 1922 թ. հուլիսի 12-ին: Գրության թվականը ճշտվում է ըստ ինքնագրի:

ԳԱԹ Թփ №114(109)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ1, 542:

Տպագրվում է ինքնագրից:

«ՀԵ՛Յ, ԳՐԻՇԱ, ԻՄ ԼՈՒՍԱԽՈՊԵՐ, ԱԼԵԿՈԾՎԵՑ ԿՅԱՆՔՆ ԷՍՊԵՍ»
(էջ 87) (ԵԼԺ 2, էջ 85)

Գրված է 1922 թ. օգոստոսի 12-ին:

Նվիրված է բժիշկ Գրիգոր Սաղյանին (տե՛ս «էս է, որ կա... Ճիշտ ես ասում. Թասդ բե՛ր» քառյակի ծանոթագրությունը):

Ինքնագիրը չի պահպանվել:

ԹԹԳԳ1079/57-6-ում պահվում է Աշխենի ձեռքով արտագրված մեկ օրինակ, «էս է, որ կա... Ճիշտ ես ասում. Թասդ բե՛ր» քառյակի հետ նույն էջի վրա:

Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիքի ձայն», 1965, №4:

Տպագրվում է Աշխենի արտագրած օրինակից:

«ԻՆՉ ԴԱԼՈՒԿ ԵՍ ՔՈՒ ԵՐԿՐԻ ՊԵՍ ՈՒ ՍԸԳԱՎՈՐ ԴՈՒ ԷՍՕՐ»
(էջ 88, 363) (ԵԼԺ 2, էջ 86, 352)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Նվիրված է վրաց նշանավոր արձակագիր, դրամատուրգ և տեսաբան Գրիգոլ Ռոբաքիձեին (1880-1962):

ԹԹԳԳ1079/4-18-ում պահվում է Աշխեն Թումանյանի ձեռքով գրված մեկ օրինակ: Վերին լուսանցքում գրված է՝ «Ռոբակիձեին»: Աշխենի ձեռագրով մեկ այլ օրինակ պահվում է ԹԹԳԳ1079/57-7-ում, նրա ձեռագրերի տետրում՝ վերնագրված՝ Գ. Ռոբակիձեին: ԹԹԳԳ1079/30-ում պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Առաջին անգամ տպագրվել է ԵԼԺ 2-ում:

Տպագրվում է Աշխենի արտագրած օրինակից:

«ԱՆՑՅԱԼ ՉԸԿԱ, ԱՊԱԳԱ ՉԸԿԱ, ՀԱՎԻՏՅԱՆ ԱՌԱՋ»
(էջ 89)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ Թֆ №119(113)-ում պահվում է մեկ սևագիր ինքնագիր:

Տպագրվում է առաջին անգամ:

ԲԱԼԼԱԴԻ ԺԱՆՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թումանյանի չափածո ժառանգության մեջ որոշակիորեն առանձնանում է երկերի մի քանակական մեծ խումբ, որոնք իրենց գեղարվեստական նկարագրով և ծավալային հատկանիշներով գտնվում են նրա քնարերգության և պոեմների միջև: Դրանք ժողովրդական ավանդությունների և զրույցների, առակների ու հեքիաթների հիման վրա գրված բազմազան գործերն են, որոնք իրենց տարբերիչ գծերի հետ միասին ունեն նաև որոշ ընդհանուր ժանրային հատկանիշներ: Նախ, բոլոր այդ երկերն ունեն քիչ թե շատ հստակորեն արտահայտված սյուժե՝ մեծ մասամբ այլաբանական կամ ֆանտաստիկ բնույթի, երբեմն էլ իրապատում: Դեպքերի ու կերպարների օբյեկտիվ գծագրումը կատարվում է հեղինակային պատումի և հերոսների խոսքի միջոցով, իսկ բանաստեղծի քնարական վերաբերմունքի ուղղակի դրսևորումներ գրեթե չկան: Նշված և այլ հատկանիշներ մեզ հիմք են տալիս Թումանյանի այդ երկերին տալու մեկ միասնական ժանրային բնութագիր և դրանք համախմբելու «Բալլադներ» ընդհանուր վերնագրի տակ:

Բալլադի ժանրը Թումանյանի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը մտավ, կարելի է ասել, տարերայնորեն՝ ոչ թե գրական նմուշների ազդեցությամբ, այլ առաջին հերթին ժողովրդական բանահյուսության խոր և բազմազան իմացության շնորհիվ: Եթե իր պոեմների մասին Թումանյանն ասում էր, որ նրանց ժանրային ձևը գոյացել է զգալի չափով Պուշկինից և Լերմոնտովից ստացած ստեղծագործական ներշնչանքով, ապա բալլադների վերաբերյալ նույնը ասել ճիշտ չէր լինի: Այստեղ ելակետը ժողովրդական ստեղծագործությունն էր: Երիտասարդ բանաստեղծն առաջին իսկ քայլերից մեծ տեղ էր հատկացնում ժողովրդի բանավոր հիշողության մեջ դարերով պահպանված

զրույցներին և ավանդություններին, որոնց նվիրական իմաստի բացահայտումը նա համարում էր առաջնակարգ ստեղծագործական խնդիր: Թումանյանի համար դրանք ոչ թե «ստացական», «ձեռք բերված» գիտելիքներ էին, այլ նրա էության և մտածողության անբաժան մի մասը: Հետագայում, պայքարելով գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերության մասին պարզունակ և գռեհիկ պատկերացումների՝ այսպես կոչված «հայոց դրամբյանիզմի» դեմ, նա լիակատար իրավունքով գրել է. «...Ես լոռեցի եմ ու էն գլխից, ոչ «դիպվածով», սիրել ու հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով, և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց» (ԵԺ IV, 98):

Ինչպես երևում է Թումանյանի ստեղծագործական կենսագրությունից, ժողովրդական ավանդությունների մշակումով նա սկսել է զբաղվել դեռ 1880-ական թթ. կեսերից: Այդ մասին կա նրա ուղղակի վկայությունը. «Մի ժամանակ (1885-1887) էդ տեսակ բաներ, ժողովրդական առակներ ու լեգենդներ շատ էի գրում բարբառով և շատ էլ ունեի, բայց, որովհետև չէի պահում, դես-դեն կորան, նրանցից մնացին «Շունն ու Կատուն», մին էլ «Անբախտ վաճառականները» (ԵԺ IV, 119): Սրան պետք է ավելացնել, որ Թումանյանի առաջին տպագիր՝ ճիշտ է, անստորագիր հոդվածը (1887) կոչվում էր «Մի ավանդություն» և վերաբերում էր Դսեղում հիշվող պատմական մի զրույցի, իսկ նրա առաջին տպագիր բանաստեղծությունը (1890) «Արև և լուսին» ավանդությունն է եղել: Դրանից հետո ավելի քան երեսուն տարի, մեծ կամ փոքր ընդմիջումներով, ժողովրդական զրույցների ու լեգենդների գեղարվեստական մշակումը միշտ եղել է նրա ստեղծագործական աշխատանքի «օրակարգում»: Վերջին գեղարվեստական երկը, որի վրա Թումանյանն աշխատել է մահից մի քանի ամիս առաջ՝ 1922 թ. ամռանը, «Անբուն Կրկուն» քաղաքական այլաբանությունն էր:

Սակայն չպետք է անտեսվի նաև ռուս և արևմտաեվրոպական գրական ավանդույթի դերը: Թումանյանը լավ ծանոթ էր այս ժանրի բնագավառում Պուշկինի, Լերմոնտովի և ռուս գրականության ամենախոշոր բալլադագիր Վ.Ա. Ժուկովսկու ինքնուրույն և թարգ-

մանական երկերին: «Բանաստեղծությունների» մոսկովյան հրատարակության 2-րդ հատորում (1892 թ.) տեղ գտավ վերջինիս «Աքիլլես» դիցաբանական բալլադի թարգմանությունը, որը հետագայում էական վերամշակման ենթարկվեց: 1899 թ. Թումանյանը թարգմանեց Պուշկինի երկու նշանավոր բալլադները՝ «Օլեգի երգը» և «Ջրահեղձը», իսկ 1906-ին՝ Մ. Գորկու «Վալախական լեգենդը»: Արևմտաեվրոպական հեղինակների բալլադներին հայ բանաստեղծը հաղորդակից է եղել ռուսերեն թարգմանությունների միջոցով: Օրինակ, «բալլադային» հարուստ նյութ են պարունակում Ն. Վ. Գերբելի կազմած ռուսերեն հայտնի ժողովածուները՝ «Անգլիացի բանաստեղծները կենսագրականներով և նմուշներով» (1875), «Գերմանացի բանաստեղծները կենսագրականներով և նմուշներով» (1877), որոնք եղել են Թումանյանի գրադարանում: Մեզ հասել է Շիլլերի «Լողվոր» բալլադի սևագիր թարգմանությունը:

Թումանյանի կենդանության ժամանակ եղած հրապարակումները ցույց են տալիս, որ ժողովրդական ավանդությունների մշակումներին նա շատ տարբեր, խայտաբղետ ժանրային անվանումներ է տվել: Հաճախ դրանք ժանրային հստակ բնորոշումներ չեն, այլ միայն մատնանշում են երկերի ժողովրդական ակունքները: Այսպես, ամենից հաճախ Թումանյանի այդ գործերը հրատարակվել են «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով («Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականներ», «Արև և Լուսին», «Արծիվն ու Կաղնին», «Որբը», «Արտուտի երգը»): «Ազգային ավանդություն» ենթավերնագիրն են ունեցել «Ախթամարն» ու «Աղավնու վանքը», իսկ «Աղջկա սիրտը» ստացել է «արևելյան ավանդություն» բնութագիրը: Մի քանի գործեր կոչվել են առասպելներ, ինչպես «Օրորոցագողը» (ժողովրդական առասպել), «Հսկան» (Կովկասի առասպելներից): «Լեգենդ» անվանումն են ստացել «Անիծած հարսը» (ժողովրդական լեգենդա), «Փարվանան» (լեգենդ), «Հոգեհանը» (լեգենդա), իսկ «Էսպես չի մնա» և «Կաչաղակների ծագումը» բանաստեղծությունները կոչվել են «Հին զրույց»: Առաջին հրատարակության մեջ «Մի կաթիլ

մեղրը» ունեցել է «հեքիաթ» անվանումը (հետագայում՝ 1922 թ. Պ. Մակինցյանին բանաստեղծը գրում էր. «Մի կաթիլ մեղրը» առակ է, թեև ռուսները վրան գրել են «сказка» - ԵԺ V, 472), իսկ «Գառնիկ ախպերը»՝ «Հայ ժողովրդական հեքիաթ»: Սյուժետային-այլաբանական բնույթ ունեցող որոշ չափածո գործեր ունեն «ժողովրդական» («Մուկիկի մահը») կամ «ժողովրդականից» («Քաջ Կիվիվը», «Կաքավի ողբը») ենթավերնագրերը:

Մեր դարի սկզբին Թումանյանն իր այդ երկերի համար սկսում է որոնել միասնական ժանրային անվանումներ: Այսպես, «Բանաստեղծությունների» 1903 թ. Թիֆլիսի հրատարակության մեջ նա այդ գործերից ութը («Շունն ու Կատուն», «Ախթամար», «Անբախտ վաճառականներ», «Անիծած հարսը», «Արծիվն ու Կաղնին», «Պողոս-Պետրոս», «Լուսավորչի կանթեղը», «Փարվանա») համախմբեց առանձին բաժնում՝ «Լեգենդներ» ընդհանուր վերնագրի տակ: Նույն «Լեգենդներ» վերնագրով նշված երկերը լույս տեսան նաև առանձին գրքույկով (հրատարակություն Ստ. Լիսիցյանի և ընկ., 1904): Իսկ մի քանի տարի անց՝ 1908 թ. Բաքվի «Բանաստեղծություններ» գրքում նույն գործերը համախմբվեցին մեկ այլ վերնագրով՝ «Ժողովրդական մոտիվներ»: Վերջապես, Թումանյանի կազմած վերջին ժողովածուի մեջ («Բանաստեղծություններ», Կ. Պոլիս, 1922) հիշյալ ութ երկերին ավելացան ևս հինգը («Մի կաթիլ մեղրը», «Հսկան», «Աղավնու վանքը», «Աղջկա սիրտը», «Թագավորն ու չարչին»), և բաժինն ստացավ քառակի անվանում՝ «Լեգենդներ, բալլադներ, առակներ, առասպելներ»:

Թումանյանի երկերի հետմահու հրատարակությունների (այդ թվում նաև ռուսերեն թարգմանությունների) մեջ մեզ հետաքրքրող բաժինը վերնագրվել է կամ «Լեգենդներ և բալլադներ» և կամ «Լեգենդներ, բալլադներ, առակներ» (այդպես է նաև Թումանյանի երկերի առաջին ակադեմիական հրատարակության մեջ):

Սակայն 1969 թ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակված երկերի քառահատոր ժողովածուի առաջին հատորում վերանայվեց այդ ավանդույթը, և տվյալ բաժինն ստա-

ցավ մեկ միասնական անվանում՝ «Բալլադներ»: Հետագայում այդ սկզբունքը ընդունվեց նաև ուրիշ ժողովածուներում, իսկ այժմ կիրառվում է Թումանյանի ժառանգության ներկա գիտական հրատարակության մեջ: Ո՞րն է այդ սկզբունքի տեսական հիմքն ու նպատակահարմարությունը:

Չնայած իրենց ներքին բոլոր տարբերություններին, Թումանյանի այս երկերն ունեն այնպիսի ընդհանուր ժանրային հատկանիշներ, որոնք իրավունք են տալիս դրանք համախմբելու մեկ միասնական վերնագրի տակ: Բայց այդ ժանրային միասնությունը հնարավոր չէ արտահայտել այն ենթավերնագրերով, որ, ինչպես տեսանք, սովորաբար տալիս էր բանաստեղծն իր այդ գործերին: Առհասարակ՝ ավանդություն, լեգենդ, առասպել, զրույց կամ ժողովրդական մոտիվ բնութագրումները գրականության մեջ ժանրային հստակ որակումներ չեն: Դրանք մատնանշում են միայն ստեղծագործության ժողովրդական հիմքն ու աղբյուրը, բայց ժանրային որոշակի բովանդակություն չունեն, քանի որ բանահյուսական այդ նյութերը կարող են գրական մշակման ենթարկվել տարբեր ժանրերով՝ պոեմ, բալլադ, դրամա, վիպական ստեղծագործություն:

Ավանդության և հարանման բանահյուսական նյութերի հիման վրա գրված թումանյանական չափածո երկերը ամենից ավելի մոտենում են բալլադի գրական տեսակին: Վերցնենք, օրինակ, Թումանյանի այն գործերը, որոնք ծագում են ժողովրդական առակներից, մի ժանր, որն իր բնույթով ավելի հեռու է գրական բալլադից, քան նշված մյուս բանահյուսական տեսակները: Ճիշտ է, այս բաժնի գործերից մի քանիսը («Անբախտ վաճառականներ», «Արծիվն ու Կաղնին», «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», «Մոծակն ու Մրջյունը») ունեն առակային ծագում և, բնականաբար, որոշ համապատասխան հատկանիշներ: Սակայն Թումանյանի մշակմամբ դրանք, արդեն առակներ չեն սովորական առումով: Այլաբանությունը և բարոյախոսությունը,- առակի ժանրի այդ երկու հիմնական գծերը,- թեև հանդես են գալիս այդ գործերում, բայց էապես տարբերվում են առակներին բնորոշ դրսևորումներից

(բացի, թերևս, «Մոծակն ու Մրջյունը» բանաստեղծությունից)։ Իսկ «Գառնիկ ախպերը», «Էսպես չի մնա» կամ «Աղջկա սիրտը», անշուշտ, ծագում են հեքիաթային բանահյուսությունից և պահպանում են այդ ժանրի որոշակի գծեր (ինչպես նաև «Հազարան բլբուլը», որը սովորաբար դասվում է Թումանյանի պոեմների շարքը)։ Սակայն մշակման ենթարկվելով չափածո ձևով, դրանք ձեռք են բերել բանաստեղծական բովանդակության և կառուցվածքի նոր, լրացուցիչ հատկանիշներ։ Ե՛վ առակային ու հեքիաթային «տարերքից» ծագող այս երկերը, և՛, մանավանդ, լեգենդի, ավանդության հիման վրա գրված գործերը («Ախթամար», «Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», «Փարվանա», «Հսկան», «Աղավնու վանքը» և այլն) իրենց հիմնական գծերով մոտենում են գրական բալլադի չափանիշներին։

Բալլադը նոր ժամանակների գրականության հենց այն ժանրային տեսակն է, որը ծագել է ժողովրդական լեգենդների, ավանդությունների և զրույցների ստեղծագործական մշակման ճանապարհով։ Բալլադը համադրական ժանրային ձև է։ Նրա բովանդակության և կառուցվածքի մեջ բնականորեն զուգակցվում են իրականն ու ֆանտաստիկը, առօրեականն ու պայմանական-այլաբանականը, ինչպես նաև պատմողական, քնարական և դրամատիկական տարրերը։ Ժանրի այդ համադրական բնույթը շատ լավ է երևում նաև Թումանյանի երկերի օրինակով, որոնք իրենց հիմնական գծերով լիովին համապատասխանում են բալլադի ժանրի՝ նշված և ուրիշ էական հատկանիշներին։

Թումանյանը հայ իրականության մեջ բալլադի, իբրև ինքնուրույն գրական տեսակի, հիմնադիրն ու խոշորագույն վարպետն է։ Ճիշտ է, նրանից առաջ ժողովրդական ավանդությունների չափածո մշակման առանձին փորձեր են արել Աբովյանն ու Պատկանյանը, Րաֆֆին ու Հովհ. Հովհաննիսյանը, սակայն նրանք չհասան ազգային բալլադի ինքնատիպ ստեղծագործական նկարագրի բացահայտման։ Այդ խնդրի իրականացումը վիճակվեց Հովհ. Թումանյանին, որից հետո հայ գրական բալլադի հետագա պատմական ընթացքը շարունակեցին Ավ. Իսահակյանը, Ե.

Չարենցը, Գ. Սարյանը և ուրիշ բանաստեղծներ:

Դիմելով ազգային բանահյուսության ֆանտաստիկ և այլաբանական ույժերին, Թումանյանն, իհարկե, չէր հեռանում իր ստեղծագործության ժողովրդական և ռեալիստական հիմքերից, այլ ցուցադրում էր նրանց գեղարվեստական լայն հնարավորությունները: Նրա բալլադներին լիովի վերաբերում է այն միտքը, որ բանաստեղծն արտահայտել է 1899 թ. մի նամակում. «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի» (ԵԺ V, 147): Իրոք, Թումանյանի լավագույն բալլադները ամբողջ հայ գրականության պատմության մեջ ազգային-ժողովրդական ոգու լիարյուն գեղարվեստական մարմնավորման անգերազանց օրինակներ են: Իրենց արտահայտած լուսավոր գաղափարներով և հավերժական ընդհանրացումներով դրանք ձեռք են բերում համամարդկային արժեք և նշանակություն:

Պետք է նկատի առնել նաև հետևյալ կարևոր հանգամանքը: Համաեվրոպական գրականության մեջ բալլադի ժանրը նախապես ծագել ու ձևավորվել է ռոմանտիզմի ուղղության ներսում XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի ռոմանտիկ բանաստեղծների ջանքերով, Բյուրգերից մինչև Ժուկովսկի: Եվ այդ իրողությունը իր ուժեղ կնիքը դրեց ժանրի գեղարվեստական նկարագրի վրա: Բալլադն իր խորհրդավոր և ֆանտաստիկ մոտիվներով, անսովորի և բացառիկի հակումով հաճախ համարվել է «զտարյուն» ռոմանտիկական ժանր, նրան դիմելը՝ ռոմանտիզմին «տուրք տալու» արտահայտություն: Սակայն գրականության պատմությունը նաև օրինակներ է տալիս այն բանի, երբ բալլադի ժանրի ֆանտաստիկ, այլաբանական շղարշի տակ արտահայտվել է լիարյուն ռեալիստական բովանդակություն՝ իրական կենսական հարաբերություններով և բնավորություններով: Ռուս գրականության մեջ դրա լավագույն օրինակը տվեց Պուշկինը, մասնավորապես՝ հենց Թումանյանի թարգմանած «Օլեգի երգը», «Ջրահեղձը»

բալլադներում: Նույնը կարելի է ասել ազգային-ժողովրդական ոգով տոգորված ուրիշ բանաստեղծների մասին: Թումանյանը պատկանում է նրանց շարքին: Իր լավագույն բալլադներով նա տվեց «ռոմանտիկական ժանրի» ռեալիստական իմաստավորման փայլուն օրինակներ: Այդ շարքի գործերը՝ «Շունն ու Կատվից» մինչև «Թագավորն ու չարչին», Թումանյանի ռեալիստական արվեստի անբաժան մասն են կազմում: Կենդանական և առարկայական աշխարհի մարդկայնացման, հրաշապատում ձևափոխությունների և այլաբանական կերպարների միջոցով երևան է գալիս կենսական ճշմարտությունն իր ամբողջ հավաստի-ությամբ, կենդանի բնավորություններ՝ իրենց խոսքով ու գործով: Միաժամանակ Թումանյանի երկերը միշտ պարունակում են կյանքի որոշ հավերժական գծեր, համամարդկային ընդհան-րացումներ: Այդ բոլորի բազմազան դրսևորումներն են և կենդանիների դիմակի տակ հանդես եկող բնավորությունները («Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականներ», «Չարի վերջը», «Արծիվն ու Կաղնին», «Մոծակն ու Մրջյունը»), և՛ ֆանտաստիկ ձևափոխումներն ու չափազանցումները («Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», «Աղավնու վանքը», «Նեսկան», «Որբը»), և Թումանյանի ստեղծագործության անվիճելի գագաթների թվին պատկանող «Փարվանան», «Մի կաթիլ մեղրը», «Թագավորն ու չարչին»:

Թումանյանի բալլադները, որոնց թիվը հասնում է շուրջ երեք տասնյակի, սույն հատորի մեջ բաժանված են երկու մասի՝ ավարտված և սևագիր կամ անավարտ գործեր: Առաջին բաժնում տեղադրված ավարտուն երկերն էլ տարբեր ճակատագիր են ունեցել: Նրանց մի մասը գրվելուց և տպագրվելուց հետո նորից ու նորից գրավել է հեղինակի ուշադրությունը, ենթարկվել բազմաթիվ փոփոխությունների («Շունն ու Կատուն», «Անբախտ վաճառականներ», «Ախթամար», «Որբը», «Գառնիկ ախպերը», «Նեսկան» և այլն): Կամ էլ սկզբից ևեթ երևան է եկել այնպիսի կատարյալ տեսքով, որ հետագայում էական փոփոխությունների անհրաժեշտություն չի զգացվել («Պողոս-Պետրոս», «Փարվանա»,

«Լուսավորչի կանթեղը», «Մի կաթիլ մեղրը», «Աղավնու վանքը», «Թագավորն ու չարչին» և այլն): Վերջապես, կա նաև բալլադների մի ուրիշ խումբ, որոնք առաջին տպագրությունից հետո մի տեսակ դուրս են մնացել ստեղծագործական տեսադաշտից, որևէ փոփոխություն չեն կրել կամ չեն վերահրատարակվել («Արև և Լուսին», «Օրորոցագող», «Հոգեհան», «Երկինք և երկիր»): Ըստ երևույթին, Թումանյանը դրանք համարել է անհաջող գործեր, որոնք հիմք չեն տալիս վերամշակման համար: Քառորդ դար անց, անդրադառնալով իր առաջին տպագիր բանաստեղծությանը («Արև և Լուսին»), նա, օրինակ, գրել է, թե դա «անպայման անհաջող է դուրս եկել» և «դրա համար էլ մնացել է առաջին հրատարակության մեջ» (ԵԺ V, 417):

Թումանյանի բալլադների աղբյուրը եղել են հայկական կամ ընդհանրապես արևելյան ժողովրդական ավանդություններն ու զրույցները, երբեմն էլ՝ հայ հին մատենագրության մեջ եղած հիշատակությունները: Բանաստեղծն իր տրամադրության տակ սովորաբար չի ունեցել ամբողջական ու ծավալուն սյուժեներ, որոշակիորեն գծագրված կերպարներ: Այդ բոլորը նա ստեղծել է ինքնուրույն ճանապարհով՝ պատմական կամ աշխարհագրական որևէ հիշատակության ու սեղմ զրույցի, բնության երևույթի կամ որևէ անվան ժողովրդական ստուգաբանության հիման վրա: Դրա շնորհիվ էլ Թումանյանի բալլադները, իրենց նյութով ու ոգով լինելով խորապես ժողովրդական, միաժամանակ ըստ ամենայնի նոր և ինքնուրույն կերտվածքներ են, արդյունք են ստեղծագործական մեծ աշխատանքի:

Իրենց թեմատիկ հատկանիշներով Թումանյանի այս երկերը կարելի է բաժանել մի քանի խմբի:

Նախ, որոշակիորեն առանձնանում են, պայմանականորեն ասած, մանկական բալլադները: Դրանք հասցեագրված են, ամենից առաջ, «մանկական լսարանին», թեև պարունակում են գաղափարներ ու պատկերներ, որոնք յուրովի հետաքրքիր և ուսանելի են նաև տարեց ընթերցողների համար: Բալլադների այս խումբն սկսվում է դեռ 80-ական թթ. գրված «Շունն ու Կատուն»

և «Անբախտ վաճառականներ» բանաստեղծություններով և շարունակվում հաջորդ տասնամյակներում գրված մի շարք ուրիշ գործերով, ինչպես «Գառնիկ ախպերը», «Չարի վերջը», «Հսկան», «Արտուտի երգը», «Ծաղիկների երգը», «Մոծակն ու Մրջյունը» և այլն: Ընդհանուր է սրանց մեջ այն, որ կենդանի պատկերի ուժով (թեև մեծ մասամբ այլաբանորեն) ցուցադրվում են կյանքի զարմանալիորեն ճշմարտացի տեսարաններ, մարդկային բնավորություններ իրենց համոզիչ խոսքով ու գործով, քարոզվում են մարդասիրության և արդարության, հավասարության և ազատասիրության գաղափարներ՝ առանց որևէ ձանձրալի խրատաբանության: Կենդանի պատկերի տրամաբանությամբ էլ բանաստեղծը մանուկ ընթերցողին հանգեցնում է չարի դատապարտման, բարու և աշխատանքի դրվատման մտքին:

Կառուցվածքի սկզբունքներով հիշյալ գործերից շատերը պայմանականորեն կարող են կոչվել «փոքր դրամաներ»: Նրանց մեջ բացարձակորեն գերիշխում է գործող անձանց խոսքը, որը ոչ միայն բացահայտում է բնավորությունների կենդանի երանգներ, այլև, հեղինակային պատումի հետ «դաշնակցած», առաջ է մղում գործողության ընթացքը: Հայտնի է, որ Թումանյանը շատ է խոսել իր դրամատուրգիական նախասիրությունների մասին, որոնք, սակայն, ուղղակի մարմնավորում չգտան որևէ ամբողջական թատերգական ստեղծագործության մեջ: Բայց դրանք իրենց ինքնատիպ արտահայտությունը գտան կենդանի շարժմամբ, գործողությամբ ու դրամատիզմով հագեցած չափածո և արձակ շատ գործերում: Վերջիններիս թվին է պատկանում նաև թումանյանական բալլադների զգալի մասը (բացի վերը թվարկված գործերից, պետք է հիշատակել նաև «Թագավորն ու չարչին», «Մի կաթիլ մեղրը», «Անիծած հարսը» և այլն):

Բալլադների երկրորդ խումբը կազմում են այն երկերը, որոնք արծարծում են մարդու և բնության փոխհարաբերության խնդիրը՝ լուծելով այն մարդասիրության և բնապաշտության դիրքերից: Այդ իմաստով նրանք մերձեցման շատ կետեր ունեն Թումանյանի ուրիշ երկերի, մանավանդ «Դեպի Անհունը» պոեմի և քառյակների

հետ: Բանաստեղծը հատուկ նախասիրություն ունի ժողովրդական այն սյուժեների նկատմամբ, որոնց մեջ կյանքի չար ուժերից հալածված էակները վերածվում են թռչունների, դառնում մեծ ու գթառատ բնության մի մասնիկը: Այդ ճակատագիրն է վիճակվում դաժան սկեսրոջից անիծված երիտասարդ կնոջը («Անիծած հարսը»), խորթ մոր քմահաճույքով հայրական տնից վտարված որբերին («Պողոս-Պետրոս»), քույրի կողմից առևանգված գեղանի աղջկան («Որբը»), Լենկթեմուրի հրամանով գերի քշվող հազարավոր մարդկանց («Աղավնու վանքը»): Բնությունը նրանց համար դառնում է հարազատ գիրկ, փրկում է չար ու դաժան մարդկանց հալածանքից: Այստեղ արտահայտվել է Թումանյանի աշխարհայացքին շատ բնորոշ այն մոտիվը, որը հաճախ նրան մղում էր հասարակական կյանքի ողբերգական հակասությունները լուծելու բնության միջոցով՝ նրա մեջ տեսնելով մարդասիրության, արդարության և ազատության բարձրագույն տիպար ու հանգրվան: Բնությունը մարդկային ձգտումների հավերժացման միջոց է դառնում նաև «Ախթամար», «Աղջկա սիրտը» բալլադներում, իսկ «Արծիվն ու Կաղնին», «Էսպես չի մնա» և այլ գործերում յուրովի արտահայտվել է բնության ու կյանքի հավերժական հոսունության, շարժման գաղափարը: Առհասարակ, բալլադներում ցայտուն կերպով արտահայտվել են Թումանյանի գեղարվեստական մտածողության երկու կողմերը իրենց բնական միասնության մեջ. մի կողմից պատկերի առարկայական, գրեթե տեսանելի կոնկրետություն, մյուս կողմից՝ հավերժական ընդհանրացումներ, ժամանակն ու տարածությունը իրենց անչափելի մեծությամբ ընդգրկելու ձգտում:

Այս բոլոր մոտիվների ամենաբարձր և կատարյալ արտահայտությունը դարձավ «Փարվանան», որն «Անուշի» և «Թմկաբերդի առումի» հետ կարող է համարվել Թումանյանի էպիկական պոեզիայի գագաթներից մեկը: Բանաստեղծի համար ելակետ են եղել Փարվանա լճի և կրակի մեջ այրվող թիթեռների մասին Ջավախքում պատմվող զրույցները, որ նա նախապես լսել էր իր դասընկեր Գրիգոր Վանցյանից: Այս զրույցների հիման

վրա գրելով, Թումանյանը մեծապես ընդլայնեց պատմության աշխարհագրական և փիլիսոփայական սահմանները, արտահայտեց իր նվիրական խոհերը մարդու կատարելության և մարդկության զարգացման հեռանկարների մասին։ Անշեջ հուրը ոչ միայն բալլադի հերոսներին շարժման մեջ դնող կետնպատակն է, այլև վիթխարի ուժի հասցված մի ընդհանրացում, որը խորհրդանշում է մարդկության հավերժական ձգտումը դեպի գեղեցիկն ու կատարյալը։ Բարձր իդեալի այդ անվերջանալի մղումն արտահայտվում է արքայադստեր, թիթեռներ դարձած անձնազոհ կտրիճների կերպարներում։ Այս դեպքում ևս ֆանտաստիկ ձևափոխությունը Թումանյանի հումանիստական գաղափարների դրսևորման միջոց է։ Հայ բանաստեղծն ինքնատիպ մեկնաբանություն է տվել Արևելքի միջնադարյան և նոր ժամանակների արևմտյան գրականության մեջ բազմիցս օգտագործված կրակի և թիթեռի բազմանշանակ պատկերին։ Այդ պատկերը կապվում է բարձր իդեալի հավերժական ձգտման հետ, որը մշտապես ապրում է մարդկության սրտում՝ չնայած բոլոր արգելքներին ու դժվարություններին։

Վերջապես, կարելի է առանձնացնել բալլադների մի երրորդ խումբ, որոնք արծարծում են ազգային-հայրենասիրական և քաղաքական կյանքի խնդիրներ, ներկայացնում պատմության դրվագներ՝ ի դաս ժամանակակից սերնդի։ Այս խմբի մեջ մտնող գործերի համար («Աղավնու վանքը», «Լուսավորչի կանթեղը», «Մի կաթիլ մեղրը», «Թագավորն ու չարչին») հիմնական աղբյուր են ծառայել միջնադարի գրականությունից քաղված առանձին սյուժետային դրվագներ, որոնք իմաստավորվում են արդիականության դիրքերից։ Այսպես, Արագածի գագաթին կախված մշտավառ ջահի ավանդությունը, որը գալիս է վաղ միջնադարից, Թումանյանը ներկայացնում է իբրև ազգային ազատության անմարելի հույսերի խորհրդանիշ։ Իսկ «Աղավնու վանքի» համար հիմք է ծառայել միջնադարյան մի հրաշապատում լեգենդ, որի տարբերակները գրի են առնվել XVIII դարի մատենագիր Ղազար Ջահկեցու գրքի, Միքայել Չամչյանի

«Պատմություն հայոց» աշխատության և Ավգուստ ֆոն Հաքստհաուզենի ուղեգրության էջերում: Այդ աղբյուրներից քաղված դրվագներն ու մանրամասները Թումանյանը վերաիյուսել է մի նոր գեղարվեստական ամբողջության մեջ: Բայց լեգենդի ֆանտաստիկ սյուժեն (գերյալ հայերի աղավնի դառնալու պատմությունը) նրան գրավել է ոչ թե իբրև կրոնական հրաշք, այլ որպես հայրենասիրական և հումանիստական գաղափարների հաստատման միջոց:

Նույնը կարելի է ասել նաև մյուս երկու բալլադների մասին: «Մի կաթիլ մեղրի» ստեղծման համար անմիջական խթան է եղել Վարդանի առակների գրքում տեղ գտած համանման պատմությունը: Սակայն միջնադարյան առակի սեղմ, արձանագրական սյուժեն բալլադում վերածվել է կենսական լիարյուն մանրամասներով հագեցած մի լայնածավալ համայնապատկերի, իսկ երկու գյուղերի կռիվն ի վերջո ձեռք է բերել համընդհանուր արյունահեղ պատերազմի չափեր: Առաջին համաշխարհային պատերազմի ծագումից մի քանի տարի առաջ՝ 1909 թ. գրված այս ստեղծագործության մեջ Թումանյանն ասեք կանխազգում էր մոտալուտ աղետը: Երգիծական մեծ ուժով նա ցուցադրում էր պատերազմի անմարդկային և անհեթեթ բնույթը, նրա բերած անհամար չարիքները, մերկացնում աշխարհի տիրակալների կեղծ-հայրենասիրական դեմագոգիան: «Մի կաթիլ մեղրը» դուրս է գալիս ազգային ու պատմական շրջանակներից և վերաբերում է բոլոր ժամանակներին: Այն կարող է դասվել համաշխարհային հակապատերազմական գրականության լավագույն էջերի թվին և այսօր էլ հնչում է իբրև խորապես հրատապ ստեղծագործություն:

Ոչ միայն անցյալի, այլև ներկայի իմաստավորմանն է ծառայում նաև «Թագավորն ու չարչին» (1917), որի նյութը Թումանյանը քաղել է XVII դարի նշանավոր պատմիչ Առաքել Դավրիժեցու, մասամբ էլ նույն դարի հեղինակ Զաքարիա Սարկավագի գրքերից: Շահ Աբասի հրամանով իրականացված հայերի բռնագաղթը, նրանց զրկանքների ու տանջանքների ողբերգական պատմությունը ներքուստ զուգադրվում էր համաշխարհային պատերազմի

տարիներին ծավալված հայկական մեծ եղեռնի դեպքերի հետ: Բայց այստեղ ևս Թումանյանն ազգայինից գնում է դեպի համամարդկային խնդիրների արծարծում: Գեղարվեստական մեծ ուժով նա դատապարտում է ամեն կարգի բռնություն, որի պայմաններում հնարավոր չէ «ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր»:

«Թագավորն ու չարչին» Թումանյանի վերջին ավարտուն բալլադն է: Բայց կյանքի վերջին տարիներին էլ նրա միտքն աշխատում էր բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակման վրա՝ ձգտելով նրանց բովանդակության ազգային և ժամանակագրական շրջանակների ընդլայնման: Թումանյանը համոզված էր, որ «էդ ճանապարհով միայն գրողը կարող է համամարդկային գրականության մեջ տեղ ունենալ» (տե՛ս Նվ. Թումանյան, էջ 296): Առաջին իսկ քայլերից ղեկավարվելով այդ սկզբունքով, բանաստեղծը կյանքի մայրամուտին էլ երազում էր ավարտել «Հազարան բլբուլ» հեքիաթ-պոեմը, որը, նրա համոզմամբ, պետք է լիներ իր բոլոր նվիրական գաղափարների, մոտիվների ու ձևերի ամենալրիվ ու բարձր համադրությունը: Բանահյուսական հիմք ունեցող մյուս երկը, որը նույնպես մնաց անավարտ, «Անբուն Կըլկուն» էր: Այստեղ Թումանյանը նորից անդրադարձավ մոտ 15 տարի առաջ գրած «Չարի վերջը» մանկական բալլադի նյութին, բայց շատ ավելի լայն ստեղծագործական ծրագրով: Բանը միայն ծավալի բազմապատիկ մեծացումը չէր (ավարտելու դեպքում, դատելով պահպանված հատվածներից, դա լինելու էր Թումանյանի ամենածավալուն չափածո երկերից մեկը): Ավելի կարևոր է այն, որ այս դեպքում ևս մեծապես ընդլայնվում են ստեղծագործության թեմատիկ-գաղափարական սահմանները՝ արդարության և հավասարության բարոյախոսական հավաստումից գնալով դեպի քաղաքական երգիծանքի լայն ընդգրկումներ: «Անբուն Կըլկուն», նույնիսկ իր առկա մասերով, արդեն դուրս է գալիս բալլադի ժանրային շրջանակներից: Դա նոր ժամանակներում մի յուրօրինակ «կենդանական վեպ» ստեղծելու, այն հասարակական-քաղաքական հրատապ խնդիրներով հագեցնելու համարձակ

փորձ էր: Իրավացի էր թումանյանագետ Արամ Ինճիկյանը, երբ «Անքուն Կըկուն» համեմատում էր Գյոթեի նշանավոր «Ռեյնեկե աղվես» երգիծական պոեմի հետ (տե՛ս ՈԻՀ1, էջ 29), որն, ի դեպ, ինչպես վկայել է Աշխեն Թումանյանը, բանաստեղծն իրոք նկատի է ունեցել իր երկը գրելիս:

Ինչպես ուրիշ ժանրերի, այնպես էլ բալլադի բնագավառում Թումանյանն ուներ անհամար մտահղացումներ ու ծրագրեր, որոնք առհասարակ մնացին անհայտության մեջ: Ազգային ժողովրդական ավանդությունների և լեգենդների համապարփակ իմացությունը պետք է հիմք ծառայեր շատ տասնյակ բալլադների ստեղծման, որի համար Թումանյանն ըստ ամենայնի պատրաստ էր: 1923 թ. փետրվարի 6-ին նա ասել է. «Հիմա որ լավացա, էլ ոչ ոք չի պոկի ինձ իմ գրասեղանից: Գարունքի հետ հենց որ աչքերս բացվեն՝ ինչե՜ր եմ թափելու, ինչե՜ր եմ թափելու՝ հեքիաթների, լեգենդների հեղեղ...» (Նվարդ Թումանյան, էջ 310): Դրանից մի քանի շաբաթ անց վրա հասած մահը ողբերգական վերջակետ դրեց բանաստեղծի այդ մեծ երազանքին:

Ամփոփելով շարադրվածը, կարելի է ասել, որ բալլադը Թումանյանի ստեղծագործության առաջատար և կենտրոնաձիգ ժանրային ձևերից մեկն է: Նրա ամբողջ գրական ճանապարհի միջով անցնող ու հարատևող հետաքրքրությունը ժողովրդական ավանդությունների նկատմամբ նշանավորվեց բազմաթիվ անզուգական երկերի ստեղծումով, որոնք պատկանում են հայ գրականության չխամրող արժեքների թվին: Թումանյանի լավագույն բալլադները այդ ժանրի դասական նմուշներից են ոչ միայն ազգային, այլև համաշխարհային գրական չափանիշներով:

I

1886

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

(«Ժամանակով Կատուն ճոն էր»)
(էջ 91, 364) (ՆԼԺ 2, էջ 89, 353)

Սկզբնաղբյուրը ժողովրդական է: Թումանյանը լսել է Լոռում, իր քեռի Իսայից (տե՛ս «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը»,- ՈՒՀ2, էջ 420):

Ինչպես վկայում է Ան. Արովյանը, բանաստեղծն այս բալլադը գրել է Ներսիսյան դպրոցը թողնելուց հետո՝ 1886 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին (տե՛ս Ան. Արովյան, Իմ հուշատետրը, էջ 19, ԳԱԹ, «Հայ հեղինակներին վերաբերող հուշեր», №11):

Ամբողջական ինքնագիրը մեզ չի հասել:

ԳԱԹ ԹՓ №121(21լր)-ում պահվում է մի սևագիր հատված, որ հետագա մշակման փորձերից է (առաջին անգամ հրատարակել է Ա. Ինճիկյանը. տե՛ս ՈՒՀ1, էջ 289-290):

ԳԱԹ ԹՓ №3839(1355ա)-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանն օժանդակ բայերի բարբառային ձևերը փոխել է գրականի:

ԹԹ-ում պահվում են ԲԲ-ի մեկ ուրիշ և 1908 թ. ԼՍ-ի Թումանյանի սեփական օրինակները, հեղինակի որոշ ուղղումներով:

Առհասարակ, շուրջ երեսուն տարի, ժամանակ առ ժամանակ Թումանյանն անդրադարձել է այս երկին, կատարել փոփոխություններ և շտկումներ:

1889 թ. Ալ. Արասխանյանը հրաժարվել է «Շունն ու Կատուն» տպագրել ՄՃ-ում: Այդ մասին Թումանյանը 1916 թ. Ց. Խանզադյանին հղած նամակում գրում է. «Շունն ու Կատուն» եթե իմ առաջին գրքում (Մոսկվայի) չկա՝ պատճառը հանգուցյալ Արասխանյանի զարմանքն է, որ նա հայտնեց ինձ 1889 թվականին, երբ տարա նոր «Մուրճում» տպագրելու: Կարդաց, շատ զարմացավ և հարցրեց, թե՝ ասացեք խնդրեմ Շուն ու Կատու և բանաստեղծություն, սրանք ինչ կապ ունեն իրար հետ, էն էլ էս տեսակ վայրենի լեզվով...»(ՆԺV, 415-416):

Առաջին անգամ «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է ԲՄՍ, էջ 62-65, հեղինակի հետևյալ ծանոթագրությամբ. «Այս ավանդությունը լսել եմ Լոռի և գրել տեղական բարբառով, որքան կարելի էր մեղմացնելով բարբառի կոշտությունը» (տրվում է «Տարբերակներ»

րամնում հեղինակի ծանոթագրություններով): Այնուհետև՝ Գ, էջ 15-17, Գփ, էջ 15-17, ԲԹ, էջ 45-47, ԹԼ, էջ 3-5, 1906 թ. Գ. Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքում, ԲԲ, էջ 65-68, ԼՄ, 1908, էջ 32-34, նույն թվականին առանձին, պատկերազարդ գրքույկով, ապա՝ ԲՊ, էջ 67-70 և ԵԺI, 265-267:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԱՆԲԱԽՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

(«Մի օր Չրչիկն ու Ճայն եկան»)
(էջ 94, 371) (ԵԼԺ 2, էջ 92, 360)

Ակունքը ժողովրդական է: Այդ մասին Թումանյանը գրում է «Թե ինչպես իմ «Անբախտ վաճառականները» դարձավ «американская» հոդվածում. «Էդ առակը աշակերտ ժամանակս եմ լսել իմ քեռուցն եմ լսել ու տպածների մեջ իմ առաջին գրվածքներից մինն է: Միայն «չրի պեպենակի» (թիթեռ) տեղ ես գրել եմ ճայ: Մի ժամանակ (1885-1887) էդ տեսակ բաներ, ժողովրդական առակներ ու լեգենդներ շատ էի գրում բարբառով ու շատ էլ ունեի, բայց որովհետև չէի պահում, գես ու գեն կորան, նրանցից մնացին «Շունն ու Կատուն», մին էլ «Անբախտ վաճառականները» (ԵԺIV, 146-149):

Նույն հոդվածից տեղեկանում ենք, որ Թումանյանին հայտնի են եղել այս ավանդության տարբեր մշակումներ: Օրինակ՝ «Ջղջիկ, Մացառ ու Բադ». Առակք Լաֆոնթենի, թարգմ. Մեսրոպ Նուպարյանց, Թիֆլիս, 1900, էջ 233-235: Գրական նախօրինակը Եզոպոսի «Ջղջիկը, նամխենին ու սագը» առակն է (Եզոպոսի առակները, թարգմ. Վ. Բաբայան, Երևան, 1977, էջ 141-142):

Գրված է 1886 թվականին: Հետագայում բազմիցս ենթարկվել է վերամշակման: Այդ մասին 1916 թ. օգոստոսի 12-ին Յ. Խանզադյանին ուղղած նամակում բանաստեղծը գրում է. «Շունն ու Կատվի» հետ միասին գրվածներից է և «Անբախտ վաճառականները», բայց նա, դեռ չտպված, հիմնական փոփոխության է ենթարկվել» (ԵԺV, 415): Այն, որ բալլադի նախնական տարբերակը բանաստեղծը հիմնովին վերամշակել է, վկայում է նաև Գևորգ Ասատուրը. «Հովհաննես Թումանյանն այդ ոտանավորը 1891-ին թե 1892-ին կարդացել է իմ առաջ իր սկզբնական ձևով: Հեղինակը շատ էր տարվել ծովի նկարագրությամբ, և նրա ալեկոծության և նավի խորտակման նկարագիրը շատ էր երկարացրել (20-24 տող կլինեին մոտավորապես): Ես Հովհաննեսին նկատեցի, որ այդ երկար նկարագիրը կանգնեցնում է ընթերցողի ուշադրությունը ոչ էական մասի վրա, շեղելով գլխավորից և ձգձգում է երկը: Խորհուրդ տվի պահել նկարագիրը ուրիշ

ավելի հարմար դեպքի համար, իսկ զրույցի մեջ միայն մի երկու խոսքով տալ ծովի ալեկոծումն ու նավի խորտակումը: Ես չգիտեմ՝ Հովհաննեսն արդյոք իմ խորհրդին հետևեց, թե, գուցե, ուրիշների խորհրդին, սակայն, երբ ես առաջին անգամ տեսա տպագրված «Անբախտ վաճառականները», ծովի այն ալեկոծման երկար ու բավականին արհեստական նկարագիրը (Հովհաննեսը դեռ ծով չէր տեսել) այլևս չկար» (Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Երևան, էջ 173-174):

Փ. Վարդազարյանը ևս գրում է, որ ճայի փոխարեն ժողովրդական տարբերակում եղել է «Պղենակը», որը «ջրի վրա թռչող մի թիթեռ է»: Ըստ Վարդազարյանի՝ Թումանյանն իզուր է այս թիթեռին դարձրել ճայ, որովհետև «առաջինն իրավ որ խեղճ կտորըն ընկածի ողորմելի-մերկ ու տկլորի պատմությունն է անում, երկրորդը՝ ոչ» (Փ. Վարդազարյան, Վշտի ու թախծի երգիչը, Թիֆլիս, 1905, էջ 17, 33):

Այն, որ Թումանյանը ևս սկզբում ճայի փոխարեն թիթեռ է գրել, երևում է տարբերակների հատվածներից մեկի հետևյալ տողից (տե՛ս այս հատորում, էջ 371):

Թիթեռն էլ ծովի վրա է թռչում:

Եզոպոսի ու Լաֆոնտենի մոտ փուշը չղջիկի և ճայի հետ միասին դառնում է երրորդ վաճառականը, որ վաճառքի համար տալիս է իր զգեստները: Նավաբեկությունից հետո նրանք հալածվում են պարտատերերի կողմից: Փուշը, սակայն, իր դժնի բարքով այնքան էլ հալածված պարտապանի տպավորություն չէր կարող թողնել: Թումանյանը պարտապանի փոխարեն նրան դարձրել է վաշխառու պարտատեր: Գրական նախօրինակում փուշը, փնտրելով իր զգեստները, կառչում է անցորդների շորերից՝ տեսնելու, թե արդյոք նրանք չեն հագել: Թումանյանի մշակման մեջ նա անցորդների շորերի փեշից է քաշում՝ հարցնելով չղջիկի և ճայի մասին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԹԹԳԳ1079/1-3-ում պահվում է սևագիր մի պատառիկ, թվագրված՝ 28.V/14: Այս հատվածը, Ա. Ինճիկյանի կարծիքով, «Անբախտ վաճառականների» վերջին մասն է (տե՛ս ԲԵՀ, 1972, №1, էջ 156):

ԳԱԹ ԹՖ №3826(1353) պահվում են ԱՄ-ի և ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակները, որոնց վրա Թումանյանը ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով, տպագրվել է ԱՄ, 1899, №54, էջ 3-10, այնուհետև՝ ԲԹ, էջ 59-67, ԹԼ, էջ 9-24, ԲԲ, էջ 72-77, ԼՄ, 1909, էջ 128-133. նույն թվականին՝ առանձին, պատկերազարդ գրքույկով, ԲՊ, էջ 75-80, ապա՝ ԵԺԼ, 268-271):

Արտատպվում է ԲՊ-ից:

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ

(«Ասում են, իբրև, երկնում կապուտակ»)
(Էջ 99, 376) (ԵԼԺ 2, էջ 97, 365)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտագործել է ավանդության Լոռու տարբերակը, որ նրան հայտնի է դարձել բանավոր աղբյուրներից: Այդ մասին ԲՄ1-ում կա հեղինակային ծանոթագրություն. «Այս ավանդությունը Լոռի են պատմում»:

Գրված է 1887 թ. օգոստոսին:

1916 թ. օգոստոսի 24-ին Թումանյանի՝ Ցոլակ Խանզադյանին ուղղած նամակում կարդում ենք. «Արև ու Լուսինը» իմ առաջին գրվածքը չի նույնիսկ տպածների մեջ: Տպածների մեջ ամենից հինը «Շունն ու Կատուն» է: «Արև ու Լուսինից» առաջ են գրված «Գութանի երգը» և «Մարոն» և էլ չգիտեմ որը: «Արև ու Լուսինն» էլ էս վերջիններիս շրջանում գրած բան է: Լավ եմ հիշում, 1887 թվականի ամառը (կարծեմ օգոստոսին) արևի խավարում եղավ, էդ մասին գրեցին, խոսեցին: Հենց էդ օրերում ես էլ «Արևն ու Լուսինը» գրեցի...» (ԵԺV, 417):

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №122(2թթ.)-ում պահվում է մեկ սևագիր պատառիկ:

«Թե ինչպես իմ «Անբախտ վաճառականները» դարձավ «американская» հոդվածի սևագիր տարբերակում բանաստեղծը գրում է. «...Իմ լեզուն դառն գռեհիկ և խառնուրդ ավելի ձևեր վերցնել էդ վայրենի բարբառից ու գրական լեզու դարձնել: Ճաշակ տալու և համոզելու համար ցույց էին տալիս, կարդում էին մեր հին գրաբար ստանավորները: Ես էլ գրականությունից միանգամայն անտեղյակ ու ապուշ, մի, գրեթե պատանի, էնքան հավատացի, որ լեզուս փոխեցի, սկսեցի գրել գրական լեզվով («Արև ու Լուսին» և այլն) և մինչև անգամ գրաբար, թեև չգիտեի» (տե՛ս ՈՒՀ2, էջ 421):

Առաջին տպագրության մասին 1890 թ. հուլիսի 29-ին Ան. Աբովյանին հղած նամակում Թումանյանը գրում է, թե «Արև ու Լուսինը» Ղ. Աղայանի խորհրդով հավանաբար կհանձնի «Աղբյուրին». «Կարդացինք և «Արև ու Լուսինը», որին անխոս շատ հավանեցին, և ըսեց (Ղ. Աղայանը.– խմբ.), որ անպատճառ գրեմ տանեմ «Աղբյուր-Տարազիչի» խմբագրությանը: Ես ասացի արդեն ուշ է, նա կրկին պահանջեց, գնացի և տանեմ...» (ԵԺV, 20):

Հաջորդ՝ օգոստոսի 27-ի նամակում արդեն հայտնում է. «Աղբյուրի այս համարում տպված է Աղայանցի ուղած բանաստեղծությունը...» (նույն

տեսքում, էջ 22):

Առաջին անգամ տպագրվել է Աղ., 1890 թ., №8-9, էջ 20 (ներկայացված է որպես տարբերակ), այնուհետև ԲՄ1, էջ 62-66, ապա ԵԺ1, 272-274:

Այս ավանդության առաջին («Աղբյուր» ամսագիր) հրատարակությունից մի քանի շաբաթ հետո տպագրված ԲՄ1-ում բավական զգալի փոփոխությունների է ենթարկվել մանավանդ լեզվական առումով: Այդ փոփոխությունները հիմք են տալիս ասելու, որ իր «Բանաստեղծությունների» 1-ին հատորի ձեռագիրը տպագրության համար Մոսկվա ուղարկելիս Թումանյանը արդեն ստեղծել էր մի նոր տարբերակ, որ և տպագրվեց գրքում:

Պատահական չէ, որ այս ավանդությունը Թումանյանը մշակել է արևի 1887թ. խավարմանը հաջորդող օրերին: Արևին և լուսնին նվիրված ժողովրդական ավանդությունների իրար հաջորդող շարքում նախ պատմվում է, թե արեգակը ինչու է փակում իրեն նայողի աչքերը: Ապա գալիս է Արևի և Լուսնի խավարման մասին պատմությունը, որպես թե երբ դժոխքում գտնվող յոթգլխանի վիշապի կերը պակասում է, նա վեր է կենում և փակում արևի ու լուսնի առաջը, որ լույսի և ջերմության պակասից մարդիկ կոտորվեն, որպեսզի նրանց ուտի: Աստված, սակայն նրան դարձյալ նետում է դժոխքը: Այս պատճառով արևի ու լուսնի խավարման ժամանակ կրակում են երկնային լուսատուների ուղղությամբ, որ վիշապին սպանեն:

Երրորդ ավանդությունը վերաբերում է լուսնի մակերեսի անհարթությունների իբրև թե խմորի շերտ լինելուն (Ե. Լալայան, Գանձակ, «Ազգագրական հանդես», գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 345-346):

***1-58 տողեր** — Բերված է վերը հիշված հետևյալ ավանդության Գանձակի տարբերակը. «Արեգակն ու լուսինը քոյր և եղբայր են համարում. Ըսկզբում արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն է ման գալիս եղել: Մի օր քոյր արեգակը խնդրել է եղբայր լուսնին, որ իրեն ազատէ գիշերը շրջելուց, որովհետև վախենում է, ցերեկն էլ չի կամենում ման գալ, որովհետև ամաչում է, բոլորն էլ իրեն են նայում: - Լա՛ւ, ասում է եղբայր լուսինը, դու ցերեկը շրջիր որ չվախենաս, իսկ ես գիշերը կը շրջեմ. և որպէսզի քեզ չնայեն, ա՛ռ այս մի թիզ ասեղները և ցցի՛ր նրանց աչքերում, որոնք կընայեն քեզ: Եւ այնուհետև արեն սկսեց ցերեկը ման գալ և ասեղներով ծակել իրեն նայողներին»:*

***59-72 տողեր** — Գրական մշակման ժողովրդական մի տարբերակն է Գանձակի գրառումը. «Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ արեգակն ու լուսինը քոյր և եղբայր են եղել. Արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն են շրջել: Բայց քոյր արեգակը վախեցել է գիշերը շրջելուց և յայտնել է մօրը,*

սա էլ պատվիրել է լուսնին գիշերը շրջել, և երբ նա ընդդիմացել է՝ մայրը մի ապտակ է տվել երեսին և ստիպել անշուշտ կատարել իր հրամանը: Նա էլ խռոված սկսել է շրջել, բայց շատ-շատ կամակորում և թաք է կենում: Մոր տված ապտակի հետքերը այժմ էլ նկատելի են»:

73-82 տողեր — Արևի ու լուսնի խավարմանը ավելի խոր բովանդակություն հաղորդելով՝ Թումանյանն այն պայմանավորում է ոչ թե վիշապի հարձակմամբ, այլ քրոջ ու եղբոր կարոտով. նրանց գրկախառնման ժամանակ տեղի է ունենում խավարումը:

Արտատպվում է ԲՄԴ-ից:

ԲՄԴ-ում կան հետևյալ ծանոթագրությունները.

«Արև ու Լուսին» – Այս ավանդությունը Լոռի են պատմում:

26 Կեռկեռ – կամար

47 Պալին կանգնել – համառել, կամակորել:

1891

ԱԽԹԱՄԱՐ

(«Մրծապախտ Վանա ծովի»)
(էջ 102, 379) (ԵԼԺ 2, էջ 100, 368)

Ակունքը ժողովրդական է. թափառիկ սյուժե, որ մշակել են ինչպես հայ, այնպես էլ այլազգի գրողներ (այս մասին տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի բալլադները, Երևան, 1969, էջ 89-91): Ժողովրդական աղբյուրի մասին երկու հոդված է գրել Տ. Փիրումյանը (Աղ, 1892, №12 և Տզ, 1893, №3): Վերջին հոդվածն ունի հեղինակի հետևյալ ծանոթությունը. «Երբ ես սրանից մի քանի ամիս առաջ այդ ավանդությունը պատմեցի Հով. Թումանյանին, նա հենց նույն օրը կազմեց դրանից մի սիրուն ոտանավոր, որ տպվեցավ «Մուրճ» ամսագրի չորրորդում»:

Ինքնագրի տողատակի ծանոթության մեջ Թումանյանը հաստատում է. «Այս ավանդությունն ինձ պատմել է Տ. Փիրումյանը, որ մի քանի տարի ապրել է Վան»:

Ավանդության հիմքում ընկած է Հերոյի և Լեանդրոսի սիրո դիցաբանական պատմությունը, որ իբրև թափառող սյուժե փոխանցվել է նոր շրջանի եվրոպական գրականության, ինչպես նաև հայկական ժողովրդական բանահյուսության: Թումանյանի գրական մշակման մասին տե՛ս Վ. Դևրիկյան, «Ափից ափ լողացող սիրահար պատանու պատմությունը և «Ախթամարը» (Երևան, 2014, 64 էջ):

Զ. Ավետիսյանը «Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան» (Երևան, 1973, էջ 94) գրքում բերում է այս սյուժեով հյուսված միջնադարյան մի հայրեն.

Սուրաթ ու ճրագ գրիր, գիս ի քո
լուսոյդ ձէնեցիր.
Ձէց ի քո ծովուն մեջ եկի, լոք զարկիր
Ճրագն անցուցիր.
Ա՞ռ էր քո ամէն ումէան, այ հոգեկ,
որ ինձ կուտայիր.
Ճրագ, ամ, այլ ի՞նչ վառած, երբ
բազկիս ուժը հատուցիր:

«Նահապետ Քուչակի դիվանը», քննական ուսումնասիրությամբ մը հրատարակեց Արշակ Չոպանյան, Փարիզ, 1902, էջ 45:

Գրված է 1891 թվականին:

ԳԱԹ Թֆ №123(24)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ 1891 թ. դեկտեմբեր 11. ունի «Ազգային ավանդություն» ենթավերնագիրը:

ԳԱԹ Թֆ №3828(1354)-ում պահվում է ԲԹ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, №4, էջ 593-596, այնուհետև՝ ԲՄՎ, էջ 40-43, ԲԹ, էջ 48-51, ԹԼ, էջ 6-9, 1905 թ. տպագրվել է նաև նկարազարդ ալբոմի ձևով, հայերեն և ռուսերեն (թարգմ.՝ Կ. Բալմոնտի): Նոր մշակմամբ՝ ԲԲ, էջ 69-72, «Գրական նմուշներ» (խմբ.՝ Լ. Մանվելյան), 1912, Թիֆլիս, էջ 338-342, ԲՊ, էջ 71-74, ապա՝ ԵԺԼ, 275-277:

ԲՊ-ում տպագրվել է ԹԼ-ի բնագիրը, իսկ առանձին հրատարակության համար բանաստեղծը նախընտրել է ԲԹ-ն:

Բնագրի վրա Թումանյանը վերջին անգամ աշխատել է 1908 թ.՝ Բաքվի ժողովածուն կազմելիս, այսինքն՝ այդ բնագիրը բանաստեղծի վերջին կամքի արտահայտությունն է (մանրամասն տե՛ս Էդ. Ջրբաշյան, Տեքստաբանական դիտողություններ Թումանյանի ստեղծագործության մասին, ԲԵՀ, 1968, №3, էջ 110-115):

Արտատպվում է ԲԲ-ից:

ՕՐՈՐՈՑԱԳՈՂ

(«Կես գիշերին մութ խրճիթում»)
(էջ 105) (ԵԼԺ 2, էջ 103)

Ակունքը ժողովրդական է:

Գրված է 1893 թ. փետրվարի 1-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Ժողովրդական առասպել» ենթավերնագրով տպագրվել է ՄՆ, 1893, №2, էջ 267-268, Թումանյանի հետևյալ ծանոթագրությամբ. «Հայոց գյուղերում ընդունված է գոյությունը մի չար ոգու, որի պաշտոնն է – գիշերը, մեծերի քնած ժամանակ խեղդել տղա երեխաներին օրորոցում կամ փոխել տեղը մի դև դնելով: Զանազան գավառներում այլ և այլ անուններ ունի այս դևը: Լոռի կոչվում է օրորոցագող»:

Ինչպես երևում է Թումանյանի նշումից, բանաստեղծության հիմքում ընկած է մարդագայլի՝ չար ոգի լինելու տարբերակը: Հին հայկական հավատալիքներում, ըստ Ալիշանի, հուշկապարիկը՝ որպես չար ոգու հունա-հռոմեական համարժեքը, «կրնայ Մարդագայլ կոչուիլ» (Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1895, էջ 186):

Առավել տարածված էր Մարդագայլի նյութական-առարկայական պատկերումը: Ըստ ժողովրդական հավատալիքի՝ մարդագայլ դառնում են այն կանայք, որոնք գիշերը երեխաներին քնեցնելուց հետո մերկ դուրս են գալիս շրջելու կամ էլ այդպես ուրիշ տղամարդկանց հանդիպելու համար: Նրանց մերկ մարմնին երկնքից գայլի մորթի է ընկնում, և նրանք գիշերները մարդագայլ են դառնում: Առանց որևէ արգելքի ներս են մտնում ցանկացած տան դռնից ու պատուհանից: Օրորոցից հափշտակում են երեխային, տանում հեռու մի վայրում ուտում և մինչև լուսադեմ նա վերադառնում՝ թաքցնելով մորթին: Մինչև գիշեր ապրում են ամենօրյա կյանքով, և գիշերը նույնը կրկնվում է. այսպես յոթ տարի շարունակ, մինչև պատիժը վերանում է (տե՛ս «Ազգագրական հանդես», Ա գիրք, Շուշի, 1895, էջ 370-371, Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 14):

Մարդագայլի ավանդությանը հայ նոր գրականության մեջ առաջինն անդրադարձել է Խ. Աբովյանը «Աղասու խաղը» չափածո ստեղծագործության մեջ (Լ. Հովսեփյան, Մարդագայլի առասպելը Խ. Աբովյանի «Աղասու խաղ»-ում, «Էջմիածին», հմր. Ժ, էջ 75-81):

Ըստ հավատալիքների՝ մարդագայլին չեն վնասում ո՛չ դանակի

հարվածները և ո՛չ էլ հրազենային կրակը: Այս հավատալիքի հետ է կապված Թումանյանի բալլադի մտահղացումը, ուր օրորոցայինը կարողանում է հաղթել միայն մայրական սիրո ուժը:

Հետագայում Թումանյանի ոչ մի ժողովածուի մեջ չի մտել և որևէ փոփոխության չի ենթարկվել: Տպագրվել է ԵԺI, 278-279:

Արտատպվում է ՄԵ-ից:

1894

ԵՐԿԻՆՔ ՈՒ ԵՐԿԻՐ

(«Իր խոր հայացքով երկինքը մի օր»)
(էջ 107, 382) (ԵԼԺ 2, էջ 105, 371)

Գրված է 1894 թ. օգոստոսի 25-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

1895 թ. նոյեմբերի 30-ին Էջմիածնից Փիլիպոս Վարդազարյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է, թե Ռուսաստանի և Եվրոպայի հայ ուսանողները «շատ են հավանել» «Հորիզոն» գրական հանդեսը և թե «մինչև անգամ «Հորիզոնից» գերմաներեն թարգմանված է «Երկինքն ու երկիրը» (ԵԺV, 112): Թարգմանությունն առայժմ հայտնի չէ և, ըստ երևույթին, չի տպագրվել:

Այստեղ արտահայտվել է այն հին հավատալիքը, թե երկինքը սիրահարն է կամ ամուսինը, որ վերևում է, և ներքևում գտնվող երկիրը սիրած աղջիկն է կամ կինը: Սիրո կարոտից արտասվող սիրահարի արտասուքն է երկնքից տեղացող անձրևը, որ ոռոգում և պտղաբերում է երկիրը (Երկինք երկիր հարաբերակցության մասին տե՛ս Մ. Աբեղյան, «Հայ վիպական բանահյուսություն» ուսումնասիրության «Վահագն վիշապաքաղ» բաժինը, Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Ա, Երևան, 1966, էջ 77-93):

Առաջին անգամ տպագրվել է ՀՀ, էջ 106-107, այնուհետև՝ Դփ, էջ 12-13, ԲԲ, էջ 36-37, նույն թվականին՝ ՀԲ, էջ 98-99, ապա՝ ԵԺI, 280-281:

Արտատպվում է ԵԺI -ից:

1898

ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

(«Վաղ ժամանակ մի հայ շենում»)
(Էջ 110, 384) (ԵԼԺ 2, էջ 107, 373)

Ավանդը ժողովրդական է: Հնարավոր է, որ Թումանյանը նյութը քաղած լինի բանավոր աղբյուրներից, քանի որ մեզ հայտնի ժողովրդական երկու տարբերակները լույս են տեսել բալլադի ստեղծումից հետո՝ 1900 և 1908 թթ. («Բյուրակն», 1900, №21 և «Ազգագրական հանդես», 1908, գիրք I, էջ 90, մանրամասն տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 495):

Դրանց հետ համեմատությունը ցույց է տալիս, թե բանաստեղծը փոքր փոփոխությամբ ինչպես է կարողացել լիովին նոր իմաստ հաղորդել ստեղծագործությանը:

«Բյուրակնում» տպագրված տարբերակում ասվում է, որ «Յոպոպ հարսնացու աղջիկ մ՛ է եղեր, որ իր լողանքին մէջ, երկար մազերու հիւսկէնները սանտրելով զբաղած պահուն» հանկարծ եղբորն է տեսնում: Ամոթից աղոթելով «յոպոպ կը դառնայ և կը թռչի՝ սանտրը դեռ գլխուն վրայ»: Թումանյանը հրաժարվում է նման մեկնաբանությունից, որ հակաբնական կլիներ: Ի դեպ, «Բյուրակնում» տպագրված տարբերակին է հետևել արևմտահայ բանաստեղծ Ա. Հարությունյանը «Յոպոպ Թռչուն» (Լքուած բնար, Կ. Պոլիս, 1902, էջ 76-77) չափածո փոքրիկ ստեղծագործության մեջ:

Թումանյանը հրաժարվել է նաև ավանդության «Ազգագրական հանդեսի» հետևյալ տարբերակից. «Ժամանակով մի հարս սանր լողանալիս սկեսրայր ներս է մտնում: Հարսը սաստիկ ամոթխածությունից թռչուն է դառնում և սանրը գլխին հերթիկից դուրս թռչում»:

Առաջին տարբերակում հարսը ոչ թե միայնակ նստած և մազերը թափած երգ է ասում, և այդ պահին ներս է մտնում կեսրայրը, այլ նա երգով պատասխանում է իրեն դիմած սիրահարին: Ինչպես գրում է Է. Ջրբաշյանը. «Այս անշուշտ ավելի է խորացնում նահապետական աշխարհում կնոջ ստրկական վիճակի գաղափարը. հերոսուհին պատժվում է ազատ կյանքի և սիրո ամենաբնական մարդկային կարոտ արտահայտելու համար» (Թումանյան, «Ստեղծագործության պրոբլեմներ, Երևան, 1988, էջ 163):

Գրված է 1898 թվականին:

ԳԱԹ ԹՓ №124(39)-ում պահվում է մեկ ինքնագիր «Ժողովրդական լեգենդա» ենթավերնագրով: Նույն տեղում պահվում են նաև նախնական սևագիր տարբերակի պատառիկներ, որոնք հրատարակել է Ա. Ինճիկյանը (ԲԵՀ, 1972, №1, էջ 157-158):

ԳԱԹ Թֆ №3828(1354) և №3839(1355)-ում պահվում են ԲԹ-ի և ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակները, որոնց վրա Թումանյանն ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ «Ժողովրդական լեգենդա» ենթավերնագրով տպագրվել է ՄԵ, 1901, №3, էջ 65-68, այնուհետև՝ ԲԹ, էջ 58-60 և ԹԼ, էջ 15-17, ԲԲ, էջ 78-80, ԼIV, 1909, էջ 165-167, ԲՊ, էջ 81-83, ապա՝ ԵԺ1, 282-284:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

(«Եղավ՝ մի անգամ անտառի միջին»)
(էջ 113, 388) (ՆԼԺ 2, էջ 110, 377)

Ակունքը ժողովրդական է: «...Ինչպես Թումանյանն էր ասում,– կարդում ենք բանաստեղծի դստեր վկայությունը,– «Արծիվն ու Կաղնին», «Անբախտ վաճառականները», «Շունն ու Կատուն» իր մեծ մորեղբայրը՝ քեռի Իսային է պատմել սարից գալիս, ճամփին» (տե՛ս Ն. Թումանյան, Թումանյանի մանկությունը և պատանեկությունը. 1869-1883, 1938, էջ 31):

Գրված է 1898 թվականին:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №3826(1353) և №3839(1355ա)-ում պահվում են ԱՄ-ի և ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակները, որոնց վրա Թումանյանը ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է ԱՄ, №54, էջ 19-20, այնուհետև՝ ԲԹ, էջ 62-63, ԹԼ, էջ 18-19, ԲԲ, էջ 81-82, ԲՊ, էջ 85-86, ապա՝ ԵԺ1, 288-289:

Արտատպվում է ԲՊ-ից:

17-18-րդ տողերը տպագրվում են ըստ ԲԲ-ի, քանի որ ԲՊ-ի մեջ դրանք տպագրության ժամանակ աղճատվել են և դարձել մեկ տող:

«ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ»

(«Վաղո՛ւց, երբ մոտ էր երկրին երկինքը»)
(էջ 115, 390) (ԵԼԺ 2, էջ 112, 379)

Ավանդը ժողովրդական է: Թումանյանը լսել է Շուլավերում: Այդ մասին վկայում է Մոսես Միրզոյանը՝ 1936 թ. մարտի 23-ին Նվարդ Թումանյանին հղած նամակում (պահվում է ԹԹ-ում՝ Նվ. Թումանյանի ֆոնդում): Ըստ այդ վկայության՝ լեգենդը Թումանյանին պատմել է Մոսես Միրզոյանի ավագ եղբայր Բաղդասարը: Վկայության հեղինակը մեջ է բերում ժողովրդական տարբերակի համառոտ բովանդակությունը. «Երկու հոտաղ մի խիստ մաճկալ են ունեցել. սա հոտաղներին ասում էր, թե՝ մեր այսօրվա միջավարը մեծ է, այսինչ աստղը երևալուն պես լծկանը բերեք գութանի մոտ: Այնինչ այդ գիշեր հոտաղները եզը կորցնում են, մինչև լույս ման են գալի, իրար ձայն տալիս.- Պողո՛ս, գտա՞ր,- Չէ՛, Պետրո՛ս, գտա՞ր – Չէ՛, և այն օրից, երբ առավոտը դեռ չբացված, այդ ձենով ղուշը կանչում է, միշտ ասում են. «Եզնարածի ղուշը կանչում է»: Մոսես Միրզոյանն ավելացնում է, թե Թումանյանը գրելիս փոխել է: Ա. Ինճիկյանը ենթադրում է, որ «բանաստեղծը ունեցել է մեզ անծանոթ մի այլ տարբերակ ևս» (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 495-496):

Գրված է 1898 թ. ամռանը: Այդ մասին տեղեկանում ենք Թումանյանի՝ 1898 թ. օգոստոսին Շուլավերից Արիստակես Զարգարյանին հղած նամակից, որի մեջ «Պողոս-Պետրոսի» և «Անիծած հարսի» մասին գրում է. «Այստեղ կամաց-կամաց էլ պարապում եմ – մի քանի բան եմ գրել, որոնցից երկուսը ժողովրդական բաներ են, որ դուք կհավանեք» (ԵԺV, 142):

Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԹՖ №3839(1355ա)-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մի քանի ուղղումներ:

Առաջին անգամ տպագրվել է ԲԹ, էջ 64-67, այնուհետև՝ ԹԼ, էջ 20-23, ԲԲ, էջ 83-86, ԼՄ, 1908, ԲԴ, էջ 87-90, ապա՝ ԵԺI, 285-287:

Արտատպվում է ԲԴ-ից:

1899

ՈՐԲԸ

(«– Սրհա՛կ... Սրհա՛կ... գիշերն ի բուն»)
(էջ 118, 391) (ԵԼԺ 2, էջ 115, 380)

Ակունքը ժողովրդական է: Հավանաբար Թումանյանն օգտվել է Սրհակ թռչունի մասին Գ. Սրվանձտյանի գրի առած ավանդությունից (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 189): Սակայն պահելով ժողովրդական բնագրի սյուժեն և գործող անձանց, բանաստեղծը կարևոր փոփոխություններ է կատարել. Օրինակ՝ եղբորը հափշտակող արծվի կամ գայլի փոխարեն մտցրել է քրոջը առևանգելու եկած թուրքին՝ դրանով նոր իմաստ հաղորդելով նյութին:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ամբողջական ինքնագիրը չի պահպանվել:

ԹԹԳԳ1079/52-25-ում պահվում են մի քանի պատառիկներ: Նույնպիսի հատվածներ են պահվում նաև ԳԱԹ Թֆ №1005, որոնք հրապարակել է Ա. Ինճիկյանը (տե՛ս ԲԵՀ, 1971, №1, էջ 158-160):

ԳԱԹ Թֆ №3465(1361)-ում պահվում է «Թարոնի»՝ հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանը բազմաթիվ ուղղումներ է կատարել:

Այս ավանդությունը Թումանյանն օգտագործել է նաև «Հին կռիվը» պոեմում (տե՛ս ԵԺVI, 49):

Առաջին անգամ «Որբ թռչունը» վերնագրով և «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է «Թարոն», 1899, №6, էջ 87-88, տողատակի ծանոթագրությամբ. «Ծոտ կոչված թռչուն է, որ գիշերները տխուր ձայն է տալիս. ասես թե Սրհակ է կանչում (ներկայացված է որպես տարբերակ): Այնուհետև, վերամշակված՝ ՀՀ, էջ 41-43, «Հայ ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով և տողատակի «Գիշերահավի ցեղից մի փոքրիկ թռչուն է, որ գիշերները տխուր ձեն է տալիս. ժողովուրդը որբ է անվանում» ծանոթագրությամբ, ապա՝ ԵԺI, 290-291:

Արտատպվում է ՀՀ-ից:

1901

ՀՈԳԵՀԱՆ

(«Փոցխովի ձորում ծակում էր Շամոն»)
(էջ 121) (ԵԼԺ 2, էջ 118)

Ակունքը ժողովրդական է:

Գրված է 1901 թ. ամռանը, Ուրավելում: Այդ մասին իմանում ենք 1901թ. հուլիսի 2-ին բանաստեղծի Մարիամ Թումանյանին հղած նամակից. «...Անցյալ գիշեր Դրրխքևապովը (Ձեզ հայտնի Կիրքևապովը) մի լավ լեգենդ պատմեց – արդեն գրել եմ: Գիտեք, երբ որ մարդ առողջ է, շուտ է տպավորվում և հեշտ էլ գրում» (ԵԺV, 182):

Լեգենդի մասին Թումանյանը խոսում է նաև Ավ. Իսահակյանին գրած 1902 թ. նոյեմբերի 9-ի նամակում. «Աճառյանը ոտանավոր է ուզել «Մուրճի» համար: Այս օրերս մի բան եմ ուղարկելու և այն էլ լեգենդ... Երևի հիշում ես անցյալ տարվա պատմությունները...» (տե՛ս ԵԼԺ IX, 359-360):

Առաջին անգամ «Լեգենդա» ենթավերնագրով տպագրվել է ՄԿ, 1902, №12, էջ 35-37, «Հոգեհան» բառի մասին հեղինակի հետևյալ ծանոթագրությամբ. «Մի բարձրություն է Ախալցխայի և Ուրավելի մեջտեղը: Վրացիք ասում են «Սուլթմեցխա» – հոգին դուրս եկավ. իսկ թուրքերը «օղլան փաթրայան – տղա ճաքեցնող»: Նույն տեղում Թումանյանը բացատրում է նաև, թե որն է Փոցխովի ձորը, գրելով «Ախալցխայի ձորն է»: Տպագրության վերջում նշված է՝ դեկտեմբեր: Թերևս բանաստեղծն այդ ժամանակ է վերջնականապես ավարտել բալլադի մշակումը: Այնուհետև ԵԺԱ, 299-300:

Հետագայում Թումանյանի ոչ մի ժողովածուի մեջ չի մտել և որևէ փոփոխություն չի ենթարկվել:

Արտատպվում է ՄԿ-ից:

1902

ՓԱՐՎԱՆԱ

(«Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր»)
(էջ 124, 397) (ԵԼԺ 2, էջ 121, 385)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն առաջին անգամ լսել է

Ներսիսյան դպրոցի իր նախկին դասընկեր, հետագայում մանկավարժ և լեզվաբան Գր. Վանցյանից: «Գրիգորն է լսել Ախալքալաք,– գրում է բանաստեղծը ԹԹԳԳ1029 №3 ծոցատետրում: – Փարվանա (կրակի թիթեռ): Թագավորը մի աղջիկ է ունենում, ասում է՝ ով որ կրակ բերի, նրան կտամ: Գալիս է, կրակի շուրջը պտտվում, որ կրակ տանի և միշտ ընկնում է մեջն այրվում» (տե՛ս ՈՒՀ2, էջ 420, 459):

Ընկերոջ պատմածը լսելուց հետո Թումանյանն այցելել է Փարվանա լիճ, նրա մոտակա գյուղերը և այստեղ, հավանորեն, նույն ավանդությունը լսել նաև ուրիշներից: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ավ. Իսահակյանը. «... 1901 թվի սեպտեմբերին Օհաննեսը Ալեքսանդրապոլ եկավ Աբասթումանից, ուր նա բժշկվում էր: Ճանապարհին կանգ էր առել Ախալքալաքում, այցելել էր Փարվանա լիճը, որի հայտնի լեգենդի մասին վաղուց ի վեր մտորում էր: Լսել էր Թմկաբերդի լեգենդը: Չէր կարողացել գնալ բերդը տեսնելու, սակայն Աբուլ լեռան լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից աղոտ ուրվագծվում էին: Խանդավառ խոսում էր Փարվանայի ու Թմկաբերդի լեգենդների մասին. նրա երևակայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ չքնաղ պոեմները:

Հիշում եմ այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի առաջին փորձը արտասանեց, մեծ հիացմունք պատճառելով ինձ»(ԹժՀ, էջ 12-13):

Գրված է 1902 թ. Աբասթումանում: Այդ մասին տեղեկանում ենք 1909 թ. հուլիսի 18-ին բանաստեղծի՝ Մ. Թումանյանին հղած նամակից. «Որքան հիշողություններ ու անմոռանալի վայրկյաններ են կապված Աբասթումանի այս կամ այն փոքրիկ, խաղաղ, չքնաղ անկյունում,– գրում է Թումանյանը,– այդտեղ ես շատ եմ երազել ու գրել եմ իմ մի քանի լավ բաները: Այդտեղ եմ մշակել «Անուշը», այդտեղ եմ գրել «Փարվանան» և այլ բաներ – հա, «Թմկաբերդի առումը» (ԵժV, 320):

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №3828(1354) և №3839(1355ա)-ում պահվում են ԲԹ-ի և ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակները, որոնց մեջ Թումանյանն ուղղումներ է կատարել և լուսանցքում արել նաև հետևյալ նշումները. «Մի քիչ ավելացնել ու պարզացնել» (77-79-րդ տողերի կողքին), «Իմ Հերն էլ շատ ունի – մեր երկնքում էլ աստղեր կան» (81-83-րդ տողերի կողքին), «Ավելացնել, պարզացնել իր իդեալը» (85-88-րդ տողերի կողքին), «Աղջկանը ավելի շատ տեղ տալ» (109-111-րդ տողերի կողքին):

Փարվանայի ավանդության և Փարվանա թիթեռների մասին տե՛ս Հովհ. Կոստանյան, «Փարվանա լիճը. Շիրակի լեգենդներից» («Տարազ», 1894, համ. 2): Այս ստեղծագործության «Փարվանա լիճ» վերնագրի ծանոթագրության մեջ ասվում է. «Փարվանա նշանակում է գիշերային թիթեռ, որ կրակ

տեսնելիս անդադար թռչկոտում է նրա շուրջը՝ մինչև ընկնելով նրա մեջ այրվում է»:

Կրակում այրվող թիթեռների մոտիվը տարածված է եղել նաև արևելյան գրականության մեջ: Սաադիի «Բուստան» գրքի երրորդ գլխում մի հատված նվիրված է թիթեռների և մոմի պատմությանը, որ ասվում է. «Մի՛ ողբա այրված թիթեռի համար, նա միացավ իր սիրելիի՝ կրակի հետ» (Տե՛ս Саади, Бустан, Лирика, перевод В. Державина, А. Старостина, Москва *1962, стр. 227-230, տե՛ս նաև Է. Ջրբաշյան, Թումանյանի ստեղծագործության պրոբլեմներ, էջ 181):*

Թումանյանը քաջ ծանոթ էր նաև արևելյան երգախառն սիրավեպերին: Պահպանվել է մահմեդական Քյարամի և հայ քահանայի դստեր Ասլիի մասին սիրավեպից «Քյարամի հրաժեշտը» երգի թարգմանության սևագիրը:

Այդ հեքիաթ-սիրավեպը ավարտվում է շատ տպավորիչ մի դրվագով: Քահանան նրանց միությունը կարող է համաձայնել միայն մի պայմանով, եթե Քյարամը երգով կարողանա արձակել Ասլիի զգեստի 40 կոճակները: Տղան սկսում է երգել, և բացվում են 39 կոճակները, բայց քառասուներորդին նորից փակվում են: Այսպես շարունակվում է այնքան, մինչև որ սիրահարված երգչի բերանից բոց է ժայթքում և այրում նրան: Անհավանական չի թվում, որ «Փարվանայի»

Հեշտ չի բերվում հուրն անշեջ.
Շատ-շատ անգամ բերող հոգին
Ինքն է այրվում նրա մեջ...

տողերը գրելիս բանաստեղծի մտքում եղել է նաև հեքիաթի այդ դրվագը:

Առաջին անգամ «Լեգենդ» ենթավերնագրով տպագրվել է ՄԾ, 1903, №1, էջ 33-38, տողատակի հետևյալ ծանոթությամբ. «Փարվանա լիճը գտնվում է Ախալքալաքից 20 վ. հյուսիս-արևելք: Փարվանա են կոչվում և այն թիթեռները, որ թռթռում են ճրագի շուրջը»: Այնուհետև ԲԹ, էջ 70-76, ԹԼ, էջ 23-29, ԲԲ, էջ 89-95, ՀԳ, էջ 95-100, ԳԳ, էջ 322-327, ԲՊ, էջ 91-97, ապա ԵԺԼ, 292-296:

Արտատպվում է ԲՊ-ից: Ուղղել ենք մի քանի վրիպակ:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

(«Կես գիշերին կանթեղը վառ»)
(էջ 131, 399) (ՆԼԺ 2, էջ 127, 387)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանը հավանաբար օգտվել է Գ. Հովսեփյանի «Փշրանքներ» բանահյուսական ժողովածուից (Թիֆլիս, 1892, էջ 47), որտեղ «Ապարան» անվանման մասին կարդում ենք. «...Սա Աբարան չէ, Անպարան է, որովհետև Լուսավորչի աղոթքով լիքը կանթեղը երկնքից անպարան կախված է «հաչաների» (գագաթների) մեջ. դրա համար էլ Ապարան են ասում» (տե՛ս Ա. Ղանալանյան, Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը, ՈՒՀ1, էջ 41-43):

Լուսավորչի կանթեղի՝ քառագագաթ Արագածի վրա առանց պարան կախված լինելու, նրա մեջ յուղի տեղակ սրբի արցունքների անսպառ վառվելու և միայն արդարներին տեսանելի լինելու մասին 13-րդ դարի հեղինակ Վարդան Վարդապետը գրում է. «Կախեալ կանթեղս առանց չուանի և փոխանակ ջրոյ արտասուօք լցեալ և հրով երկնային վառեալ և է մինչև ցայսօր անշիջանելի և մնա մինչև ի Գալուստն Քրիստոսի ի Դատաստան, որ և բազմաց արժանաւորացն տեսեալք են և տեսանեն զհրաշքն զայն ի փառս Քրիստոսի» (Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, աշխատասիրութեամբ Հայկ Պէրպէրեանի, Փարիզ, 1960, էջ 26): Լուսավորչի կանթեղը հիշվում է նաև հետևյալ գործերում (Ղազար Ա. Ջահկեցի, Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 670, Սիմեոն Ա. Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 288, Սաղմոսավանքի կոնդակ՝ Մաշտոցի անվան մատենադարան,, ձեռ. հմր. 8061, Պերճ Պռոշյան, Սոս և Վարդիթեր, Երկերի լիակատար ժողովածու, հտ. Ա, Երևան, 1962, էջ 183-184, Երվանդ Շահազիզ, Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 45, Միքայել Նալբանդյան, Կրիտիկա Սոս և Վարդիթերի, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 4-րդ, Երևան, 1983, էջ 197): Հայ մատենագրության մեջ Լուսավորչի կանթեղի մասին եղած հիշատակությունների և Թումանյանի նույնանուն ստեղծագործության մասին տե՛ս Վ. Գևրիկյան, «Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը» գրքի «Լուսավորչի կանթեղը» բաժինը, Երևան, 2010, էջ 6-35:

Գրված է 1902 թվականին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲԹ, էջ 68-69, այնուհետև՝ ԹԼ, էջ 30-31, ԲԲ, էջ 86-87, ԲՊ, էջ 99-100, ապա՝ ԵԺ1, 297-298:

Արտատպվում է ԲՊ-ից:

1905

ԳԱՌՆԻԿ ԱԽՊԵՐ

(«Երկու որբեր»)
(Էջ 133, 400) (ԵԼԺ 2, էջ 129, 388)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Նյութը, ինչպես նշել է բանաստեղծը երկի առաջին հրատարակության մեջ, վերցված է Տ. Նավասարդյանի գրքից (տե՛ս Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք 1-ին, Վաղարշապատ, 1882, «Գառնիկ ախպեր», էջ 14-21):

Հիմնական նյութը քաղելով ժողովրդական սկզբնաղբյուրից, Թումանյանը ստեղծել է նաև նոր դրվագներ, իհարկե, լիովին հարազատ մնալով ժողովրդական հեքիաթի ոգուն ու բովանդակությանը:

Բանաստեղծը ծանոթ է եղել նաև հեքիաթի այլ տարբերակների: Ինչպես վկայում է ինքը՝ «Հովիվը» Ս. Հ.-ի քննադատականի առթիվ» հոդվածում (ԵԺIV, 253), օգտվել է նաև «հայ ժողովրդական հեքիաթից՝ Վասպուրականի վարիանտից, որ գրի է առել հանգուցյալ Սրվանձտյանը և տպված է նրա «Մանանայում», հեքիաթի անունն էլ հենց «Գառնիկ ախպեր», ինչպես կոչվում է նաև հայկական ուրիշ շրջաններում, օրինակ Արարատյան երկրում» (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 153-161, «Գառնիկ աղբեր»):

Էդ. Ջրբաշյանը նշում է, որ Թումանյանը Մանուշի և եղբոր փրկվելը ներկայացրել է հեքիաթից տարբերվող այլ պատմությամբ – «Կրակ վառեցեք» տողից մինչև «Անմեղ Մանուշին հանում է ծովից» տողը – ճիշտ 50 տող» (Թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ, էջ 149):

Առաջին անգամ «Բովանդակությունը քաղված է Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուից» հեղինակային ծանոթագրությամբ տպագրվել է Հսկ, 1905, սեպտեմբեր, №1, էջ 2-7, նոյեմբեր-դեկտեմբեր, №3-4, էջ 97-102, այնուհետև՝ 1909 թ., առանձին պատկերազարդ գրքով, ապա՝ ԵԺI, 301-307:

Արտատպվում է առանձին գրքից:

ՁԱՐԻ ՎԵՐՋԸ

(«Լինում է մի սար»)
(էջ 142, 402) (ԵԼԺ 2, էջ 137, 390)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտվել է ինչպես հայ, այնպես էլ օտար աղբյուրներից: ԳԱԹ Թֆ №3881(1360)-ում ԼՄ սեփական օրինակում նա հիշում է իր օգտագործած աղբյուրները. Ս. Հայկունի, ժողովրդական առակներ (Վաղարշապատ, 1907), «Сборник материалов» (39, 1908), «Сказки африканских народов» և հատկապես՝ «Дятель, Лиса и ворон» (инголийская сказка), «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 32, Тифлис, 1903, отдел 2-й, стр. 129-131:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ամբողջական ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №125(90)-ում պահվում է վերջին հատվածի ինքնագիրը (տող 163-175), իսկ №3839(1355ա)-ում ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանը կատարել է մեկ ուղղում:

ԳԱԹ Թֆ №3881(1360)-ում պահվում է ԼՄ-ի 1908՝ հեղինակի սեփական օրինակը, բազմաթիվ ուղղումներով:

Մշակելով «Ձարի վերջը», Թումանյանը մտահղացել է մի նոր երկ՝ «Անբուն Կըկուն»: ԼՄ-ի սեփական օրինակում նա ջնջել է վերնագիրը և դրա փոխարեն գրել՝ «Կըկվի երգը կամ Անբուն Կըկուն»:

Առաջին անգամ «Պապի առակներից» ենթավերնագրով տպագրվել է Հսկ, 1908, №1, էջ 3-9, այնուհետև՝ ԲԲ, էջ 101-106, ԼՄ, 1908, էջ 91-98, ապա՝ ԵԺI, 308-312:

«Ձարի վերջի» բանահյուսական նախօրինակների և դրանց գրական մշակման պատմության մասին տե՛ս «Անբուն կըկուն» բալլադի ծանոթագրությունները (ս.հ. էջ 607):

Տպագրվում է ԲԲ-ի ուղղված բնագիրը:

ՀՍԿԱՆ

(«Լավ չեմ հիշում, թե որ դարում»)
(էջ 148, 405) (ԵԼԺ 2, էջ 147, 393)

Ակունքը ժողովրդական է:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Ույժը» վերնագրով և «Կովկասի տատասկներից» ենթավերնագրով տպագրվել է Հսկ, 1908, №4, էջ 130-137: Այնուհետև, նույն վերնագրով ու «Հատված» նշումով ԲԲ, էջ 10-15: Այս հրատարակության մեջ Թումանյանը կրճատել է վերջին 6 տողը և ենթավերնագրից հետո ավելացրել «Հատված» նշումը: 1922 թ. Պոլսի հրատարակությունը պատրաստելիս բանաստեղծը հիմնովին վերամշակել է բալլադը. հանել է «Հատված» նշումը և կրճատել ևս 32 տող: Այս ձևով («Հսկան» վերնագրով և «Կովկասյան տատասկներ» ենթավերնագրով) տպագրվել է ԲՊ, էջ 109-114, ապա՝ ԵԺԿ, 313-318:

Արտատպվում է ԲՊ-ից:

Երկար ժամանակ հրատարակիչները ուշադրություն չեն դարձրել Թումանյանի կատարած կրճատումների վրա և հրատարակել են նախնական տարբերակը (մանրամասն տե՛ս Էդ. Ջրբաշյան, Տեքստաբանական դիտողություններ Հ. Թումանյանի ստեղծագործության մասին, ԲԵՀ, 1968, №3, էջ 115-118):

ԷՍՊԵՍ ՉԻ ՄՆԱ

(«Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ»)
(էջ 154, 407) (ԵԼԺ 2, էջ 149, 395)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտվել է հայ և օտարազգի բանահյուսությունից: Հիմնականում օգտագործել է Ս. Հայկունու գրի առած «Տերտեր ու տճամ աղբեր» («Դունյեն խայրմա չի մնա») հեքիաթը, տպագրված՝ «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, էջ 345-347: Նրան ծանոթ է եղել նաև ասորական հեքիաթը՝ «Нет на свете ничего постоянного», «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 20, 1894, стр. 72-76.

Թումանյանը կատարել է սյուժետային որոշակի փոփոխություններ: Հայր-որդեգիր կապը դարձրել է հայր և որդի: Հանել է սյուժետային մի շարք մանրամասներ՝ թե ինչպես է որդին ծանր և զրկանքներով լի կյանքով ապրում և աշխատում, անգամ եզան հետ լծվում է գութանին: Սյուժետային բոլոր փոփոխություններով հանդերձ բանաստեղծը պահել է էականը՝ հոր և որդու (որդեգրի)՝ կյանքի տարբեր հանգրվաններում՝ մինչև մահ և մինչև գերեզմանաքարի ավերվելն իսկ շարունակ ասելը՝ «էսպես չի մնա»: Այսինքն՝ ամեն ինչի անցողիկության և կյանքի հավերժության գաղափարը:

Գրության թվականնստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №3552(1360)-ում պահվում է Հսկ-ի հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ «Հին զրույց» ենթավերնագրով տպագրվել է Հսկ, 1908, №9, էջ 312-314, ապա՝ ԵԺI, 319-321:

Տպագրվում է Հսկ-ի՝ ուղղած բնագիրը:

ԱՐՏՈՒՏԻ ԵՐԳԸ

(«Մի մարդ տեսավ գարնան մարգում»)
(էջ 157, 407) (ԵԼԺ 2, էջ 152, 395)

Ակունքը ժողովրդական է: ԹԹԳԳ1029 №3 ծոցատետրում Թումանյանը մի նշում ունի, ըստ որի՝ ավանդությունը լսել է 1899 թ. ամռանը՝ Դսեղում, իր քեռի Սիմոնից. «1899 թ. հուլիսի 16-ին քեռի Սիմոնը պատմեց.

Մի ծիտ բռնել էին գրել մի ոսկե վանդակում, որ երգի, ուրախանա: Սա հենց միայնակ ձեն էր տալիս՝ վա՜յ վաթան, վա՜յ վաթան: Բերին սրա վանդակն ավելի սիրունացրին, շաքար ուտեցրին, շաքարի հաց: Էլի վա՜յ վաթան, վա՜թան: Հանեցին, թե սրան բաց թողեք, տեսնենք ուր է գնում, սրա վաթանը ո՞րն է: Գնաց մտավ ջրափերի չալըը – խոտերի մեջ: Էն օրվանից երգում է վա՜յ վաթան, մի քանիսն ասում են (խանրիձեն), թե էն օրվանից սկսեց երգել՝ ա՜յ վաթան, ջա՜ն վաթան: Ասում էին, որ սա տորոլ է (тороп), արտուտը»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ №13552(1360)-ում պահվում է Հսկ-ի հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել, սակայն մշակումը չի ավարտել:

Առաջին անգամ «Ժողովրդական ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է Հսկ, 1908, №8, էջ 273-275, այնուհետև՝ ԼIII, 1909, էջ 112-113, ապա՝ ԵԺI, 322-324:

Արտատպվում է Հսկ-ից, մեկ տողի ուղղումով՝ ըստ ԼIII-ի (27-րդ տողի «մաշող կարոտն իր գերության» այստեղ դարձել է՝ «Մաշող կարոտն ազատության»):

ՄՈՒԿԻԿԻ ՄԱՀԸ

(«Մկնիկն ու Մուկիկը ախպերացան»)
(էջ 160, 408) (ԵԼԺ 2, էջ 155, 396)

Ակունքը ժողովրդական է: Ինքնագրերի և Հասկերի բնագրի վրա Թումանյանի ձեռքով նշված են հետևյալ աղբյուրները. «Ս. Հայկունի, «Անդամանական վեպ», Վաղարշապատ, 1907, 1. «Գուլգուլ խաթուն», 2. «Լուն ու ոջիլ», 3. «Նապաստ խանում», «Ծեր ու զուզ», «Մուկն ու պապոք», «Պաճուրի մուրը», «Բաղաճի հեքիաթ», «Грим №7 вошка-блошка» «Смерть курочки» - «Бр. Гримм, пер. Феодорова и Давидова, стр. 494, Гатцук - «Кавказские сказки», кн. V, стр. 159»:

Գրության թվականն առայժմ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ №126(65)-ում պահվում է երկու ինքնագիր սևագիր և մաքրագիր: Վերջինս բերվում է որպես տարբերակ, տողատակ նշելով դրա և սևագիր-ինքնագրի տարբերությունները:

ԳԱԹ ԹՖ №3552(1360)-ում պահվում է Հասկ-ի հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել, սակայն մշակումը չի հասցրել ավարտին: Անկասկած, բանաստեղծը նպատակ է ունեցել վերամշակելու Հասկ-ի բնագիրը, լրիվ չափածոյի վերածելով, որից ստացվել է վերոհիշյալ մաքրագիր օրինակը:

Առաջին անգամ տպագրվել է Հասկ, 1908, №3, էջ 99-103, այնուհետև ԼՄ, 1908, էջ 102-106, ապա ԵԺԱ, 325-328:

Արտատպվում է ԼՄ-ից:

1909

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

(«Մի գյուղացի իրենց գյուղում»)
(էջ 164, 414) (ԵԼԺ 2, էջ 159, 402)

Ակունքը Վարդան Այգեկցու «Կաթ մեղու պատճառ պատերազմի» առակն է. «Այր ոմն ունէր խանութ և մեղր կու ծախէր. և կաթեաց կաթ մի ի մեղրէն ի գետին. և սիծակ մի նստաւ ի վերայ նորա. և կատու փաղաց և էառ զսիծակն. և յետ նորա շուն փաղեց և էառ զկատուն. և խանութին տէրն եհարկ զշունն և սպանեց. և կայր այն գեղին դրացութիւն գեղ մի, որ շունն յայն գեղիցն էր: Իբրև իմացաւ շան տէրն, եթէ խանութպանն զիւր

շունն սպանեաց, յայն ժամ եկն և սպանէ զխանութպանն: Յետոյ յարեան Բ(2) կողմանց գիւղացիքն և արարին պատերազմ մեծ ընդ միմեանս. և եղև կոտորումն ի մէջ նոցա. զի մնաց երկու կողմանց մարդ մի կենդանի վասն կաթ մի մեղրի համար...» (տե՛ս Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1895, էջ 298-299):

«Басни средневековой Армении» ժողովածուի այս առակի ծանոթագրության մեջ Հովսեփ Օրբելին գրում է, որ այն Ն. Մառը մինչև «Ժողովածոյք առակաց Վարդանայ» աշխատանքի երկրորդ հատորի տպագրվելը ցույց է տվել Թումանյանին: Բանաստեղծն այն մշակել է ընդարձակ շարադրմամբ: Օրբելին բերում է նաև «Մի կաթիլ մեղրի» առաջին մասը Վ. Խոդասևիչի թարգմանությամբ (Иосиф Орбели, Басни средневекой Армении, Москва-Ленинград, 1956, стр. 147):

Գրված է 1909 թ. փետրվարին, Մետեխի բանտում:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ №3556(1360)-ում պահվում է Հսկ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ «Հեքիաթ» ենթավերնագրով տպագրվել է Հսկ, 1909, №3, էջ 98-103, ԼII, 1909, էջ 48-53, այնուհետև՝ որոշ փոփոխություններով (նկատի են առնված Հսկ ուղղումները), առանձին պատկերազարդ գրքով, ապա՝ ԲՊ, էջ 101-107 և ԵԺI, 329-333:

Արտատպվում է ԲՊ-ից:

1922 թ. հուլիսի 22-ին Թիֆլիսից Հայաստանի լուսժողկոմ Պողոս Մակինցյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Անշուշտ մի նոր «Քաջ Նազարը» կամ մի նոր «Մի կաթիլ մեղրը» ձեռք բերելը ձեզ համար ավելի թանկ բան պիտի լիներ, քան ուրիշ շատ թանկագին պատրաստի բաներ: Սրանց եմ օրինակ բերում, որովհետև իմ կարծիքով սրանք եվրոպական մանկական գրականության մեջ էլ պիտի որ նկատվեն...» (ԵԺV, 470):

«Մի կաթիլ մեղրը» ստեղծագործության սյուժեն ունի բազմաթիվ միջազգային տարբերակներ (տե՛ս Պ. Հակոբյան, «Մի կաթիլ մեղրը» յոթնասունամյա հեռավորությունից, ՈՒՀ3, էջ 32-53):

ԱԳՌԱՎՆՈՐ ՎԱՆՔԸ

(«Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ»)
(էջ 170, 415) (ԵԼԺ 2, էջ 165, 403)

Հիմքում ընկած է միջնադարյան մի ավանդություն, որը հիշատակվում է՝ Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1795, էջ 672-673, Միքայել Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 880-882 և Август фон Гакстгаузен, Закавказский край, ч. I, *СПб, 1857, с. 159-160.*

Թումանյանն ավելի շատ օգտվել է Չամչյանի գրքից, սակայն նկատի է ունեցել նաև Ա. ֆոն Հաքստհաուզենի գրի տված տարբերակը, քանի որ միայն այստեղ է հիշատակվում Սևանա լիճը, իբրև այն վայրը, որտեղ կատարվել են դեպքերը:

Սկզբնաղբյուրներում ագռավի վերածված գերիները գետի մյուս ափին վերստանում են իրենց մարդկային կերպարանքը, իսկ Թումանյանի երկում գերի-ագռավները իրենց երազած ազատությունը գտնում են բնության մեջ՝ բաց երկնքում:

Հայր Հովհանի կերպարը հարազատ է եղել Թումանյանին իր անձնազոհ ժողովրդանվեր արարքով. մեծ բանաստեղծն ինքը ևս օժտված է եղել մայր ժողովրդին ծառայելու առաքելության նույն գիտակցությամբ: Բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, հորը Հայր Հովհանի հետ է համեմատում հետևյալ հայտնի և ցնցող դրվագում.

«Օգոստոսի 19-ի գիշերն էր, Արարատյան դաշտի անմոռանալի, ծանր գիշերը...

Փոթորիկ, կայծակ, որոտ... Երկինքը հանկարծ մթնեց, սևակնեց, և մութ ամպերով ծածկվեց ու սկսվեց հորդ անձրևը: Գաղթականությունը բաց երկնքի տակ էր:

Հայրիկը սև թիկնոցով, կեպին գլխին, շտապ դուրս եկավ իր սենյակից՝ գաղթականությանը շենքերում պատսպարելու: Առաջին հերթին նա նկատի ուներ վեհարանի նոր, կիսավարտ շենքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականությանը հատկացնել: Հայրիկը զայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին, նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը:

Ուսանողները՝ Լևոն Լիսիցյանը, Լյալյա Աճեմյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը, ջահերով (երկար փայտե ձողերի ծայրերին աթար էին ամրացրել, վրան նավթ ածել ու վառել) գնում էին հայրիկի երկու կողմից և

լուսավորում էին նրա ճանապարհը:

Հայրիկը, թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կապոցներով, երեխաներով՝ նույնիսկ հարազատների դիակներով... Սարսափելի տեսարան էր...

Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին» (Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987, էջ 126):

«Աղավնու վանքը» բալլադի մասին տե՛ս նաև Վ. Դևրիկյան «Աղավնու վանքը» և Մարգարավանից Սուրբ Նշանը» հոդվածը «Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը» գրքում (էջ 36-52):

Գրված է 1912 թվականին:

Ամբողջական ինքնագիրը չի պահպանվել: ԹԹԳԳ 1079/23-4-ում պահվում է մեկ ինքնագիր, որի թերթիկների վերին մասերը պատռված են:

Առաջին անգամ «Ազգային ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է ՆՀ, 1913, էջ 34-36, այնուհետև՝ 22, էջ 44-46, ԲՊ, էջ 115-117, ապա ԵԺ1, 334-336:

Արտատպվում է ԲՊ-ից:

1913

ԱՂՋԿԱ ՍԻՐՏԸ

(«Հին արևելքում, մի հին քաղաքում»)
(էջ 173, 415) (ԵԼԺ 2, էջ 168, 403)

Ակունքը ժողովրդական է:

«Ծաղիկների երգը» բալլադի ինքնագրերում (ԳԱԹ Թֆ №128(68), №127(68ա) Թումանյանը նշում է իր օգտագործած աղբյուրները. «Легенды цветов», «Книжка о розе», изд. 1882, Քիշմիշյան, Բույսերի մեծարանքը. կան նաև տարբեր անունների բացատրություններ և դրանցից մի քանիսի ծագման հետ կապված ավանդություններ: «Խաշխաշ» վերնագրի տակ հիշվող ավանդությունը հիմք է դարձել «Աղջկա սիրտը» բալլադի համար. «Մի աղքատ տղա,- կարդում ենք այստեղ,- սիրում էր իշխանի աղջկան, որ ապրում էր բարձր աշտարակում: Հայրը չի ուզում իր աղջկան տա սիրած տղին – թե աղքատ է (կրակում է աշտարակը). աղջկանը տալիս է ուրիշի – նա էլ տեսնում է ուրիշին է սիրում – սպանում է: Նրա ընկած տեղից ծաղիկ է բուսնում: Երազում աղջիկը երևում է իր սիրածին, թե իմ սրտից մի ծաղիկ դուրս կգա (սրտի նման) – նա ուժ ունի, կարող է մոռացնել տալ քեզ ինձ ու

քո վիշտը։ Խաչխաչն է»։

Գրված է 1913 թվականին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ «Արևելյան ավանդություն» ենթավերնագրով տպագրվել է ՆՀ, 1913, №4-5, էջ 682-686, այնուհետև՝ ԲՊ, էջ 119-122, ապա՝ ԵԺ4, 334-336։

Արտատպվում է ԲՊ-ից։

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

(«Մեծ գոլն ընկավ, ձընհալն ընկավ»)
(էջ 177, 416) (ԵԺ 2, էջ 172, 403)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԳԱԹ Թֆ №128(68) և №127(68ա)-ում պահվում է երկու սևագիր-ինքնագիր։ Այստեղ Թումանյանը նշում է իր օգտագործած աղբյուրները. «Легенды цветов», «Книжка о розе», изд. 1882, Քիշմիշյան, Բույսերի մեծարանքը։ Կան ծաղիկների անվանումների ռուսերեն-հայերեն ցանկեր, զանազան գրառումներ խոտերի, բույսերի, ծաղիկների անվանումների (ռուսերեն-լատիներեն-հայերեն) ծագման, նշանակության մասին, վարդ, նարգիզ, խաչխաչ, զամբակ, քրքում, շուշան և այլ ծաղիկների հետ կապված ավանդություններ (տե՛ս, օրինակ, «Աղջկա սիրտը» բալլադի ծանոթագրությունը)։ Այսպիսի սևագիր նյութերի մի ամբողջական տետր պահվում է ԳԱԹ Թֆ №129(68բ)-ում ։

ԹԹԳԴ1079.1-1-ում պահվում է մի թերթիկ, որի վրա կան ծաղիկների անուններ և 40-45-րդ տողերը հիշեցնող մի գրառում։

Կարելի է ենթադրել, որ Թումանյանը մտադիր է եղել գրել ծաղիկների հետ կապված լեգենդների շարք։

Այսպիսի մտադրության Թումանյանը վաղուց է ունեցել։ Այդ մասին կա իր իսկ վկայությունը։ Աշխեն Թումանյանը և Մարուսյա Վարդազարյանը, որ 1910 թ. ամռանը հանգստանում էին Մանգլիսում, բանաստեղծին տեղեկացնում են, որ Շուշան Վարդազարյանը Ժնևից մի ֆրանսերեն ամսագիր է ուղարկել, որտեղ նյութեր կան ծաղիկների մասին։ Նույն թվի օգոստոսի 15-ի նամակում բանաստեղծը գրում է դստերը. «Ծաղիկների մասին էդ ինչ է. թե հետաքրքիր բան է, ուղարկիր ինձ։ Ծաղիկների մասին եղած բաները ես հավաքում եմ. բան եմ գրելու։ Ուզում եմ գրեմ Փարիզ, որ ծաղիկների լեգենդների մասին գիրք կա – գրկեն։ Հայրդ էդ է, եկել է» (ԹՏ, 1909-1914, էջ 46)։

Առաջին անգամ տպագրվել է Հսկ, 1913, №5, էջ 133-135, հետևյալ ծանոթագրությամբ. «Գոլ - մեղմ տաքություն: Ձմեռվա մեջ երկու գոլ է ընկնում. մինը հունվարին, որ կոչվում է փոքր գոլ, մյուսը՝ մարտին, որ կոչվում է մեծ գոլ»: Այնուհետև՝ ԵԺI, 172-174:

Արտատպվում է Հսկ-ից:

Ն. Թումանյանը իր հուշերում (1914 թ. հունվար) գրում է. «Նոր տարուն մեծ քրոջս՝ Աշխենի տանը բեմադրեցինք հայրիկի «Ծաղիկների երգը»: Կազմակերպողը մեծ եղբայրս էր՝ Մուշեղը: Նա, որպես բնագետ, բոլոր դերակատարների համար գունավոր թղթերից ծաղիկների զգեստ էր պատրաստել՝ նարգիզ, շուշան, կակաչ և այլն: Դերերը բաժանել էր այսպես.

Ջուրը - Համլիկն էր,
Արևը - Արեգը,
Աղջիկը - Սեդիկը,
Արևածաղիկը - Անուշը,
Շուշանը - Արփիկը,
Կակաչը - Թամարը,
Նարգիզը - Սաթիկը,
Մանուշակը - Վարսիկը:

Սաթիկն ու Վարսիկը հորեղբորս աղջիկներն էին, որ ապրում էին մեր տանը:

Ներկայացումը հաջող էր ստացվել, հայրիկը շատ հավանեց» (Հուշեր և զրույցներ, էջ 107-108):

Բնագրային տարբերությունների բաժնում բերված պոեմի ինքնագրի առաջին տարբերակը ունի ընդգծված ուսումնա-դիդակտիկ ուղղվածություն, որն արտահայտվում է բնագետի, աշակերտի և գյուղացու կերպարներով: Ն. Թումանյանի գրածից երևում է, որ թերևս եղել է այս ստեղծագործության ևս մի տարբերակ, որը միջանկյալ դիրք է գրավել ինքնագրի Ա տարբերակի և «Հասկերում» տպագրվածի միջև, որովհետև Ն. Թումանյանի մոտ հիշված կերպարները մասնակիորեն են համընկնում «Հասկերում» տպագրվածի հետ:

Կարելի է ենթադրել, որ ինքնագրի Ա տարբերակի բնագետը եղել է Մուշեղ Թումանյանը, որ որպես բնագետ, ըստ Ն. Թումանյանի հուշերի, իրականացրել է այդ բեմադրությունը:

ՄՈԾԱԿՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

(«Գիժ Մոծակի պարի ժամին»)
(էջ 181, 427) (ՆԼԺ 2, էջ 176, 414)

Առակը ժողովրդական է: Գծ-ում Թումանյանը տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Էս հանրածանոթ առակը, որ Եզոպոսն ունի «Ճպուռն ու Մրջյունը» անունով, Փեդրոսը՝ «Ճանճն ու մրջյունը», Կռիլովը՝ «Стрекоза и муравей» (Ջրաթիթեռն ու մրջյունը), իսկ մեր Վարդանը (միջնադարյան առակների մեջ), «Ժժիկ ու մեղուք» և «Մրջիմն և կամ ժժին ու Մեղուն», սա էլ առակի նոր փոփոխակ – «Մոծակն ու Մրջյունը» – ինձ պատմեց մեր Անդրանիկը (խոսքը զորավար Անդրանիկի մասին է.– խմբ.), որ լսել է Տաճկահայաստանում»:

Գրված է 1916 թվականին:

ԳԱԹ Թֆ №130(73)-ում պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «1916 թ. Բորժոմ»:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, 1917, №1, էջ 104-106, այնուհետև՝ ԵԺI, 341-343:

Արտատպվում է Գծ-ից:

1916 թ. սեպտեմբերի 21-ին Ցոլակ Խանզադյանին ուղղած նամակում Թումանյանն այս երկի մասին գրում է. «Մխիթարն էստեղ էր: «Մոծակն ու Մրջյունը» պետք է բերեր «Գարծի» համար: Էնպես անակնկալ է դուրս եկել, որ էլ իրար չենք տեսել, թեև պայմանավորվել էինք: Ա՛յ տղա, էս անտերը գրել չեմ կարողանում: Մի խոսքով «Մոծակն ու Մրջյունը» ղրկում եմ: Թիֆլիսի շրջաններում արդեն տարածվել է, և կարծում են «Շունն ու Կատվից» ավելի լավն է: Աստված ինձ էլ էս տեսակ անասուններից է տվել՝ շուն, կատու, մոծակ, մրջյուն: Մարդ չի կարող երևակայել թե Աստված իր բախտն ինչի հետ է կապել» (ԵԺV, 419):

ԳԱԹ Թֆ №1368(59)-ում պահվում է Ց. Խանզադյանի՝ 1916 թ. սեպտեմբերի 24-ին գրած պատասխան նամակը, որտեղ իր հիացմունքն է հայտնում վերոհիշյալ երկի վերաբերյալ. «...Իմ այժմյան ուրախության պատճառը Ձեր նոր առակն է: Շատ հավանեցի: Դասարանում կարդացի մեր աշակերտուհիներին, հիացած մնացին... Ձեր առակն այնքան գեղեցիկ բան է, որ ես չէի կամենա, որ նրա վրա մի փոքրիկ բիծ անգամ լինի... Խիստ ուրախ եմ, որ մեր առաջին համարը զարդարված պիտի լինի Ձեր թանկագին անունով...»: Խանզադյանի՝ այս նամակում տված մի քանի հարցերին Թումանյանը պատասխանել է սեպտեմբերի 25-ին գրած

նամակում.

«Սերը ածական է աշխարհքին: Որ արձակ կարդաս՝ հեշտ կհասկանաս... Մըտիկ արա՛ որ էն արև աշխարհքը և այն...

Սլարել բառ չկա իմ ոտանավորի մեջ. կա սալարել, խղճացած մոլորվել կնշանակի:

Մըճըրվել – կնշանակի ինքն իր մեջ քաշվել, ամաչել, սիրտ չանել մի բան ասելու, անելու:

Շահելը միևնույն պահելու իմաստն ունի, մեր ժողովուրդն էդպես գործ է ածում – շահել-պահել:

Տեղ չի ունեմ... էս չի-ն մեր շատ հարազատ ու սովորական չի-ն է: Ճշմարիտ է, որ գրականի մեջ գործ չի ածվում, բայց ժողովրդական բարբառի մեջ սովորական ձև է և սխալ չի: Այլապես կարող էի ուրիշ բան ասել «չունիմով»:

Շատ շնորհակալ եմ ժամանակին տեղեկացնելուդ համար և հույս ունեմ սրբագրությունն էլ խնամքով կկատարվի: Առհասարակ սրբագրությունից ես շատ եմ վախենում» (ինքնագիրը պահվում է ԳԱԹ Թֆ №633(349):

Այս սյուժեով Ս. Խնկոյանը «Հասկերում» 1909 թ. տպագրել է «Ճպուռն ու մրջյունը»:

1917

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՉԻՆ

(«Հե՜յ, լավ մանրո՜ւք»)
(էջ 185, 427) (ԵԼԺ 2, էջ 180, 415)

Գրված է 1917 թվականին:

Բանաստեղծն օգտագործել է Առաքել Դավրիժեցու պատմության մեջ նկարագրված հետևյալ դրվագը. «...Եւ զի սովորութիւն էր այս Շահաբասիս երբեմն երբեմն, զի այլակերպեալ զինքն՝ ձևանայր իբրև զմի ի զօրականաց՝ և գնայր ի տեղին ուր գնալոց էր, և ըստ այսմ սովորութեան յայսմ նուագի ևս արար, զի ինքն միայն և իւր յառաջընթաց փայեկն, նախ քան զամենայն զօրսն եկին յառաջին գիւղն երկրին Փարիոյ՝ զոր Դարբնի գիւղ ասեն: Որում հանդիպեալ կին ոմն ի նոյն գեղջէն, և կինն ոչ գիտէր զնա թէ շահն իցէ, խօսեցաւ շահն ընդ կնոջն և ասաց. եթէ ունիս հաւ վաճառելոյ՝ բեր առխս զի գնեցից. իբրև եբեր կինն զհաւն, և ի պատճառէ հաւին բազում խօսս և զբանս առաջարկեալ փորձ ի փորձ ընդ կնոջն, խօսէր զնանրութիւն և ի սիրտ իւր ժողովէր զանօրէնութիւն: Եւ ի կարգս խօսիցն ասաց շահն. տասն փող տամ քեզ ի գինս հաւիս՝ և թէ դու սիրես զշահն տուր մեզ զհաւս.

և կինն ասաց. զինչ յատագոյն բարիս և զերախտիս առնաք մեք ի շահէն՝ որ վասն սիրոյ շահին տաց քեզ զհատս: Եւ շահն ասաց. զինչ այլ ևս բարիս արասցէ ձեզ շահն, զի յայսպիսում լաւ և վայելուչ երկրի բնակեցուցեալ և յապահով պահէ զձեզ յամենայն նեղութեանց. և քաղցրութեամբ և գթով վարի ընդ ազգիդ ձերում: Եւ կինն ասաց. «Երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ զի վտարանդի արարեալ եհան զմեզ ի նախնի աշխարհէն մերմէ, ի բնիկ տեղեաց, և ի հայրենի ժառանգութեանց, և բերեալ աստէն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ...» (տե՛ս «Պատմութիւն Առաքելոյ վարդապետի Դաւրիժեցւոյ», երրորդ տպ., Վաղարշապատ, 1896, 163-169):

40-51 տողերի համար նկատի է ունեցել Դավրիժեցու Պատմության հետևյալ հատվածը. «Եւ զբանալի եկեղեցւոյն՝ զոր վերին Կաթան ասէին՝ առին քահանայքն, և յորժամ եկին ընդ դուռն պարսպին Ջուղայու, և ի հասանելն առաջի եկեղեցւոյն, որ անուամբ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ Ջուղայու. իբրև հասեալ, և տեսին զԱստուածածին եկեղեցին, և բազում քրիստոնեայք եկեալ խառնեցան ընդ քահանայսն. որ և նոքա ևս բերին զբանալիս տանց իւրեանց, և ի միասին զաղաղակ բարձին ողբագին ձայնիւ, փղձկեալ սրտիւ և արտասուալի աչօք զառայծին՝ և լային, և աղաղակելով կանչէին ընդդէմ Աստուածածնին և ասէին. ո՛վ սուրբ և Աստուածածին, այսուհետև բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձն լիցի. և դու դարձուցես զմեզ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին: Եւ զայս ասացեալ արկին զբանալիսն ի գետն, և մոմոքալով յոյով ժամս ձայն բարձեալ լային. և ապա գնացին» (տե՛ս նույնը, էջ 59-60):

Նկատի է ունեցել նաև Զաքարիա Սարկավագի «Պատմության» այն հատվածը, որտեղ, ի միջի այլոց, պատմվում է նաև Շահ Աբասի՝ իր երկրում ծպտված շրջելու սովորության մասին. «... որ երբեմն յայլակերպս եղեալ շրջէր: Լինէր՝ զի երբեմն երկվարաւ և փայեկաւ գնայր՝ ուր և կամէր, երբեմն միայն, երբեմն ի կերպ փոքեղկի՝ որ է Չարչի: Եւ այսպէս շրջէր ի մէջ մեծամեծաց և ռամկաց: Հարցանէր և տեղեկանայր յամենայնէ ի Շահէն և յերկրէն ի հարկաց և յամենայն իրաց...» (տե՛ս «Զաքարեայ Սարկաւագի Պատմութիւն», հատ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 15-16):

ԳԱԲ Թփ №131(79)-ում պահվում է մեկ մաքրագիր և մեկ սևագիր ինքնագիր, վերջինս վերնագրված՝ «Անկեղծ խոսքն ու շահը»: Ինքնագրերի վրա կան գրառումներ և ծրագրային նշումներ՝ բալլադում նկարագրվող պատմական դեպքերին ու Ջուղայի գաղթին վերաբերող: Նույն տեղում կան նաև բալլադի ավարտ հիշեցնող սևագիր արձակ հատվածներ (ներկայացված են «Տարբերակներ» բաժնում):

Սևագրերի վրա հեղինակը նշել է օգտագործած աղբյուրները. Մ. Չամչյանի «Հայոց պատմության» 3-րդ հատորը, Լեոյի «Հայկական

տպագրության» 1-ին հատորը, История человечества, под редакцией Г. Гельмольта, II, III, стр. 361, V, стр. 159, СПб, 1904, տրված են առանձին պատմական դեպքերի թվարկումներ, ինչպես նաև Առաքել Դավրիժեցու գրքի համապատասխան գլուխների բովանդակության սեղմ շարադրանքը «Գլ. Ա. մինչև կաթողիկոսը. [այս] և օսմանցիք ինչպես էին վարվում – տեղեկություններ, ապա թե Գլ. Գ. Կովկասի գրեթե բոլոր ժողովուրդներից ներկայացուցիչներ են գնում, Շահին խնդրում, դա ազատի օսմանցիների խառնություններից, և կօգնեն: Սկսում է նույնիսկ գաղթ:

Շահը պատեհ համարելով դեպքը հարձակվում է օսմանցիների վրա, սկսում է կռիվը:

Միջկ. Հայոց կաթողիկոսների կռիվն ու դավերն իրար դեմ:

Պոլսում լսելով էս ամենը Սուլթանը մեծ զորքով ղրկում է Ջղալօղլի Սինան փաշային:

Շահը լսելով բոլոր ղարիբականներին – որ զորքը հավաքել է զանազան տեղերից ու գերիներին, քշել Պարսկաստան: Իսկ երբ մոտենում է Սինան փաշան – Շահը հրամայում է քշել բովանդակ երկրի բնակչությունը Պարսկաստան, ավերել երկիրը, դարձնել անապատ, որ Սինան փաշան – օսմանցիք գան ու մնան դատարկ անապատում – էսպես է անում ու քաշվում իր երկիրը շտապով:

երեք բանակ

մեծ ավազակախմբեր (Քյորօղլի)

սովը, գայլերն և այլն:

1603-4 թ. Ջուղայի կամուրջը և նրա վրի ավանդությունը

Իրոք – վաճ. ճամբան արևելքից արևմուտք

Առաքել <Դավրիժեցի> Գլ.Ա. – օսմանցիք զորեղ – նրանց փաշաները նստում էին Թավրիզ, Երևան, Գյանջա, Շամախի, Ղամուրղափի (Դերբենտ), Խուզափրին տիրում էին:

Երկու կաթողիկոս – պարտք ՄԻ ղուռուշ, չեն կարողանում վճարեն, միշտ փախած: Անճարություն:

<Գլ. Բ>Սրապիոնին կանչեցին կաթողիկոսության: Դարձյալ չեն պրծնում: Ավելի երկպառակություն ու ավելի նեղություն:

<Գլ. Գ> Տաթև ժողով են անում և պատգամավոր են ղրկում Շահաբասին, որ դա ազատի իրենց օսմանցիների նեղություններից, ծանր հարկ, կողոպուտ, տանջանք, մանավանդ ամենքն էին դժգոհ, և մահմեդականները, իսկ քրդերի խաները արդեն փախել էին Շահի մոտ: Եվ խնդրում են դա, իրենք կօգնեն ու կընդունեն նրա հպատակությունը: Նույնը և վրացիք, որ առանձնապես վշտացած էին մանավանդ նրա համար, որ իրենց Սիմոն թագավորին բռնեցին տարան Ստամբոլ, սպանեցին:

ժողովուրդներն էլ գյուղերով փախչում էին նեղություններից, ծանր հարկերից ու սպանվելուց Պարսկաստան:

Եվ Շահն արդեն մոտիկ էր գալու: Ու Մելիքսեթ կաթողիկոսը մի քանի եպիսկոպոսների հետ գնաց պատգամավոր:

Շահը Սպահանից [եկավ] ընկավ անակնկալ Թավրիզի վրա, ջարդեց, զորավարը գերի առավ, տիրեց Թավրիզին: Փախած օսմանցի զորքերը եկան Նախիջևան և ամեն տեղ թալանեցին ու կրակեցին - անելով թե մի բան որ էս աշխարհը մեր ձեռքից դուրս է գալի:

Շահը նրանց ետևից եկավ:

Ջարդ: Ընդունելություն: Հարստություն: Շահի չար միտքը:

Երևանն առնելու քրիստոնյա գյուղացիներից կազմած բանակը գնում էր կրակի առջև: [Իսկ մյուս] զորավարներին ղրկեց ամեն կողմ ավերել ու տիրել: Ամիրգունեան Գյանջա - ավերեց, ավարեց - բերավ Երևան (էջ 18) և տես էջ 20:

Իսկ ամեն կողմից բերած ժողովուրդները հրամայեց քշել Պարսկաստան:

Այս թե սկսեց Շահը [հարկերը] պարտքերը պահանջել կաթողիկոսներից - թե՝ էն պարտքը, որ պարտք էիք օսմանցիներին, ինձ եք տալու, որովհետև ես եմ տերը:

Բռնել տվավ Սրապ խան Կաթողիկոսին, բանտարկեցին ամեն օր հրապարակ էին հանում, ոտներից կախում ու ծեծում:

8 ամիս պաշարելուց հետո առավ Երևանը: Ու առաջացավ դեպի Կարս:

16 դ. Ահմեդ Սուլթանը ղրկում է Սինան Ջղալօղլի փաշային մեծ զորքով ղրկեց պարսից դեմ:

Շահը հասած Շիրակ լուր առավ, թե Սինան փաշան մտավ Էրզրումի դաշտը: Լավ իմանալով որ չի կարող դիմադրել օսմանցիների զորությանը - ետ դարձավ: (Մտավ Աղջաղալա - Երվանդակերտ) ու հրամայեց Հայոց աշխարհի բոլոր բնակիչներին՝ հայ, հրեա, մահմեդական - քշեն Պարսկաստան, որ օսմանցիք գան, երկիրը գտնեն անբնակ մի կողմից և չգտնեն կերակուր ոչ իրենց, ոչ իրենց անասուններին և [վերջապես] մյուս կողմից այդ տեսակ աշխատասեր ժողովրդով կցներ իր երկիրը: Կանչեց հայոց մեծերին - իբրև արդարացում հայտնեց Սինան փաշայի գալուստը, երկյուղը, որ արշավներից կպատահի ու փրկելու մտքով հայտնեց իր ծրագիրը: (էջ 27)

Հայոց մեծամեծները հակառակում են:

Նա չի լսում ու հրամայում է քշել: Ու ցրում են զորավարները սարսափահար լեռներն ու ձորերը փախած, թաքնված ժողովրդի ետևից:

Երեք բանակ հետևում են իրար:

Ջուղա. Մեծ ավազակախմբերը. Սովը»: «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցւոյ», 1884, Վաղարշապատ: Գիրքը պահվում է ԹԹ Թումանյանի անձնական գրադարանում՝ 5-89:

Նախորդ հրատարակությունում նշվում է. «ԹԸԱ պահվում է մեկ ինքնագիր պատառիկ բալլադի առաջին սևագրություններից, որ Թումանյանի անձնական գրադարանի՝ «Զաքարեա Սարկաւագի պատմութիւն» գրքի առաջին հատորի միջից հանել և հրապարակել է Ա. Ինճիկյանը (տե՛ս ԲԵՀ, 1972, էջ 160)»: Թանգարանի ֆոնդերում այդ ձեռագիրը չի հայտնաբերվել:

Առաջին անգամ տպագրվել է Գծ, 1917, №9-10, էջ 5-7, այնուհետև՝ ԲՊ, էջ 123-126, ապա՝ ԵԺI, 344-346:

Արտատպվում է ԲՊ-ից:

II

1887

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

(«Ասեմ որդեակ և յո՛ւր հուշիկ»)
(էջ 189) (ԵԼԺ 2, էջ 184)

Գրված է 1887 թվականին:

Անավարտ է, սևագիր: Գրաբար գրված երկերից է, որի կապակցությամբ «Թե ինչպես իմ «Անբախտ վաճառականները» դարձան американская» հոդվածի սևագիր տարբերակում բանաստեղծը գրում է, որ մի քանի ընկերներ իրեն խորհուրդ էին տալիս հրաժարվել բարբառից և համոզելու համար կարդում էին հին գրաբար ոտանավորներ, ես էլ «...լեզուս փոխեցի, սկսեցի գրել գրական լեզվով («Արև ու Լուսին» և այլն) և մինչև անգամ գրաբար, թեև չգիտեի» (տե՛ս ՈՒՀ2, էջ 421):

Ամենայն հավանականությամբ երկի բովանդակությունը լինելու էր XII դարում նահատակված Գրիգոր Մամիկոնյանի և նրա քույր Խորիշահի մասին հյուսված ավանդությունը (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 232):

Թումանյանը իրենց տոհմի ծագումը կապում էր Մամիկոնյանների հետ: Այդ մասին գրում է նաև իր առաջին հոդվածներից մեկում «Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանքը» (1887) հոդվածում:

Պահպանված տարբերակը «Լոռեցի Սաքոն» պոեմում Լոռվա ձորի նկարագրության գրաբարյան ոճով նախնական մի տարբերակ կարելի է

համարել: Բնության սպասքը և լեռնային անմատչելիությունը հիշեցնում են Գրիգոր Մամիկոնյանին նվիրված հոդվածի մեջ վերջինիս մասին պատմող ավանդության նկարագրությունը:

ԳԱԹ Թ-ֆ №132(16)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ տողատակ տրված հետևյալ բացատրություններով.

«Փաղաքուշ – անուշ լեզու բանացնել.

Փարատ – զատված, հեռու. փղձկալի – նեղսրտությամբ լացուն.

Փղձկիլ – սիրտը լցվել.

Քաշկեն – զարեհայ. քաշաիկ – նավ շինող.

Քուշկեն – ուրար (սարկավագուհի կուսանաց).

Քասմնելի – փշաքաղելի, խրտնելու, վախենալու, զարհուրելու

Օդաչու – օդում թռչող, օրացի – օրական, սովորական, օրհներգու»:

Սակայն ինքնագրում այս բառերից ո՛չ մեկն օգտագործված չէ: Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ2, էջ 233:

Տպագրվում է ինքնագրից:

1890-ական թվականներ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

(«Երբոր աշխարհքն ստեղծեց սառված»)
(էջ 191, 431) (ԵԼԺ 2, էջ 186, 419)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Սևագիր է: Հավանաբար, գրված է 90-ական թվականներին:

ԳԱԹ Թ-ֆ №133(91)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ2, էջ 236:

Տպագրվում է ինքնագրից:

ԿԱԶԱՂԱԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

(«Զրույց կա, թե Պիերուսի»)
(էջ 193, 432) (ԵԼԺ 2, էջ 188, 420)

Ակունքը ժողովրդական է:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հավանաբար գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ Թ-ֆ №134(81)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Հին զրույց»

ենթավերնագրով: Բնագրի ավարտից հետո բանաստեղծը գրել է՝ «Թե որտեղից են կաչաղակները. հունական? ժողովրդական? առասպել»:

Համաձայն հին հունական դիցաբանության՝ Պիերիուսը ուներ ինը աղջիկ, որոնցից յուրաքանչյուրը կրում էր ինը մուսաներից մեկի անունը: Նրանք մրցության են հրավիրում մուսաներին, ովքեր հաղթելով Պիերիուսի աղջիկներին, նրանց պատժելով կաչաղակներ են դարձնում: Այս մասին գրում է Օվիդիուս Նազոնը (մճխ. 8 թ. մ.թ.) իր «Մետամորֆոզներ» (փոխակերպումներ) գործի հինգերորդ գրքում (300-678 տողեր):

Թ·Թ·Գ·Գ·1079/23-3 (23)-ում պահվում է սևագիր, անթվակիր մի պատառիկ, որ համապատասխանում է հիմնական բնագրի 9-16 և 25-28 տողերին: Երկու տները գրված են թերթիկի մի, մյուսը՝ հակառակ երեսին:

Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 118-119, ապա՝ ԵԺ1, 492-493:

Տպագրվում է ինքնագրից:

ԵՐԿՈՒ ԱՐՇԱՎԱՆՔ

(«Հանդես էր կազմել Հերովդես արքան»)
(էջ 195, 433) (ԵԼԺ 2, էջ 190, 421)

Գրության թվականնստույգ հայտնի չէ:

Հավանաբար գրված է 1890-ական թվականներին:

Ունի երկմաս կառուցվածք, ուր իրար են հակադրվում Հերովդես թագավորը ռազմի արշավանքով (1-14-րդ տողեր) և Քրիստոսը խաղաղության պատգամով (15-30-րդ տողեր):

15-16-րդ տողեր — Ակնարկվում են Քրիստոսի «Այլ յորժամ լսիցէք պատերազմունս, եւ համբաւս պատերազմաց՝ մի՛ խռովիցիք» (Մարկ. ԺԳ7):

17-18-րդ տողեր — տե՛ս «Խաղաղութիւն թողում Ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ Ձեզ, ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես Ձեզ. մի խռովեսցին սիրտք Ձեր, եւ մի՛ զանգիտեսցեն» (Յովհ. ԺԴ 27):

19-22-րդ տողեր — տե՛ս «Ժամանակ իմ մերձեալ է» (Մտթ. ԻԶ 18) և «Փոքր ինչ ժամանակ ընդ Ձեզ եմ» (Յովհ. ԺԳ 33):

23-24-րդ տողեր — տե՛ս «Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց» (Մարկ. ԺԶ 15):

25-րդ տող — տե՛ս «Եւ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո» (Մատթ. ԺԹ):

26-27-րդ տողեր — տե՛ս «Ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ի մէջ գայլոց» (Ղուկ. Ժ 3):

ԳԱԹ Թֆ №135(95)-ում պահվում է մեկ սևագիր-ինքնագիր:
Տպագրվում է առաջին անգամ:

1899

ԹՈՅՈՆՆ ՈՒ ՄՈՒԿԸ

(«Թոյոնն իջավ խոր ծմակից»)
(էջ 196, 434) (ԵԼԺ 2, էջ 192, 421)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանը լսել է Դսեղում, 1899 թ., ինչպես կարդում ենք նույն թվականի օգոստոսի 12-ին Մարիամ Թումանյանին գրած նամակում. «...Երբոր մարդ ու կին մի ներդաշնակություն չեն կազմում,- գրում է բանաստեղծը,- երբոր մեկը չի հանդուրժում իրեն լռության մյուսի, այնտեղ մարդկային կյանքը և ամուսնությունը կորցնում է իր գեղագույն խորհուրդը, դառնում է մի անտանելի, չնչին, բայց մաշող պայքարի հանդես և դժբախտության աղբյուր: Այս մասին մի հրաշալի ավանդություն-առասպել եմ գտել, թեև փոքր, բայց շատ գեղեցիկ, իմ կարծիքով, թե ինչպես մուկն ու Թոյոնը (վայրենի ագռավը) սիրահարվում են իրար վրա:

- Բայց մուկը ո՞վ, Թոյոնը ով,
Որ իրար հետ ապրեն սիրով...» (տե՛ս ԵԺV, 150):

Գրված է, հավանաբար, 1899 թ. աշնանը:
ԳԱԹ Թֆ №136(42)-ում պահվում է մեկ թերի, սևագիր-ինքնագիր:
Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 119-120, այնուհետև ԵԺI, 479-481:
Տպագրվում է ինքնագրից:

1900-ական թվականներ

ԶԻ ԱՍՏՈՒԱԾ ԸՆԴ ՄԵԶ Է...

(«Ահա եկել պաշարել են»)
(էջ 200, 436) (ԵԼԺ 2, էջ195, 423)

Հիմքում լեզգի ասպատակների դեմ հայ ժողովրդի պայքարի դեպքերն են (տե՛ս «Պատմութիւն անցից անցելոց Սևանայ վանուց, արարեալ Մանուէլ Կիւմիւշխանեցւոյ», 1871, Վաղարշապատ, էջ 32-38):

Ասվում է, որ լեզգիները, ասպատակելով Հայաստանը, հասնում են մինչև Սևան, ուր ապաստարվել էին լճի շրջակա բնակավայրերի բնակիչները: Չկարողանալով գրավել կղզին՝ պատրաստում են քառասուն արկղ՝ ամեն մեկի մեջ տեղավորելով երկուական ավազակի: Որպես վաճառականներ ներկայանալով՝ խնդրում են արկղերը, իրենց ապրանքը, միառժամանակ կղզում պահելու, որպես թե լեզգիների կողոպուտից փրկելու համար: Երկու լեզգիներ իբրև թե ապրանքի պահպանության համար մնում են կղզում, որ գիշերը բացեն արկղերը:

Վանքի սաներից մեկը այդտեղ է գալիս սերտելու դասերը: Պատահաբար երբ հենվում է արկղերից մեկին, ներսի լեզգին ձայն է տալիս: Լսելով նրա ձայնը՝ աշակերտը գնում և պատմում է վանքի միաբաններին: Բռնելով կղզի եկած երկու ծպտյալ լեզգիներին՝ իմանում են, թե ինչ էին նրանք ծրագրել, և արկղերը ծովն են նետում:

Համաձայն ավանդության՝ այս պատմության հիման վրա է ստեղծվել «Ժամագրքի» խաղաղական ժամերգության «Շնորհեա մեզ, Տէր» երգը (Ժամագիրք, Վաղարշապատ, 1891, էջ 170):

Թումանյանը տուն առ տուն իրար զուգահեռ է ներկայացրել հիշյալ ավանդությունը և «Շնորհեա մեզ, Տէր» երգի տողերը, որով, ըստ գործողությունների զարգացման ընթացքի, իրար զուգահեռ են ընթանում ավանդության և խաղաղական ժամերգության երգի ծիսակատարությունը (Թումանյանի այս ստեղծագործության մասին տե՛ս Վ. Դևրիկյան, Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթը, էջ 53-64):

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հավանաբար գրված է 1900-ական թվականներին:

ԳԱԹ Թֆ №137(93)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ2, էջ 241:

Տպագրվում է ինքնագրից:

1922

ԱՆԲՈՒՆ ԿԸԿՈՒՆ

(«Լինում է մի սար»)
(էջ 203, 436) (ԵԼԺ 2, էջ 198, 424)

«Զարի վերջի» ընդարձակ մշակումն է, հյուսված ժողովրդական տարբեր առակներից, որ նոր, ինքնուրույն ստեղծագործության արժեք ունի: Թումանյանն օգտագործել է հետևյալ աղբյուրները. Ղ. Հովհանյան,

*Նախնյաց ասմունքների վրա, Վիեննա, 1897, Բ տետր, Մ. Աբեղյան, Ազգագրական հոդվածներ. Գայլ և գայլի պատահարներ, Թիֆլիս, 1908, էջ 23-27, (*Сборник материалов для описания местностей и племен Кавказа, кн. XXXII, *1903, էջ 129-131,* кн. XXXIX, *1908, էջ 115),* Сборник сведений о кавказских горцах, вып. I, *էջ 64-66,* вып. VII, *էջ 50-56 (խմբ.), ինչպես նաև՝* Н. Марр, Сборник притч Вардана, *մաս* III, *հավելված* VI, *էջ 179-192 (Ն. Մառ, Ժողովածուք առակաց Վարդանայ, մաս Բ, բնագիր, էջ 85-86):*

Ավելի շատ օգտվել է Դաղստանում գրի առնված «Волк, Лисица и Куклухай» *հեքիաթից* «Сборник сведений о кавказских горцах», вып. *7,* Тифлис, *1873,* стр. *50-56 և Մ. Աբեղյանի «Ազգագրական հոդվածներ. Գայլ և գայլի պատահարներ» գրքում եղած նյութերից (մանրամասն տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի բալլադները, էջ 65):*

Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ «Անբան Կրկուն» համարվում է 1922 թ. ստեղծագործություն, իսկ Ա. Ինճիկյանը ենթադրում է, որ պետք է գրված լինի «ոչ ուշ, քան մինչև 1915 թ.» (տե՛ս Ա. Ինճիկյան, «Անբան Կրկուն» առակի անտիպ տարբերակը, ՊԲՀ1, էջ 46-59): Առաջին կարծիքն ավելի հավանական է:

ԳԱԹ ԹՖ №138(90), №139(90), №140(10բ)-ում պահվում է երեք ինքնագիր, որոնցից մեկը (Գ) համառոտ հիմք է դարձել Նք-ի տպագրության համար: Ա ինքնագրի վրա կան նշումներ. «1. Նախնյաց ասմկ. Բ. 323. 2. Կենդանական վեպ. Մ. Հայկունի, ա գիրք 32. Գել ու աղվես. 3. Сб. мат. для изуч. местн. *39* стр. *115. 4.* сб. Кавказск. горск. *5.* Сказки Африканск. нар. голубка, шакал и цапля. *27. 6. Ազգագր. հոդվածներ. Գայլ և գայլի պատահարներ. Մ Աբեղյան (Գայլը Թակարդում)»: Մեկ սևագիր պատառիկ պահվում է ԳԱԹ ԹՖ №141(10բ) :*

ԹԹԳԳ1079/26-1-ում պահվում է մեզ հասած Գ ինքնագրի շարունակությունը՝ արտագրված Աշխեն Թումանյանի ձեռքով, Թումանյանի սևագրություններից: Գրված է արձակ երկխոսությունների ձևով: Վերջում Աշխենը ավել է հետևյալ բացատրությունը. «Արտագրել եմ հայրիկի ձեռագրից նույնությամբ՝ և թուղթը և թանաքը նույնն է, մատիտով գրածն էլ նույն գույնն եմ վերցրել: Արտագրել եմ 23 թվին, երբ մերոնք բոլորը Դիլիջան էին ամառը. ես մնացի մայրիկի հետ, Հովիկն էլ հետս էր:

1923

Աշխեն

Այս ձեռագիրը մի պորտֆելի մեջ էր, որը և վերջին փաթաթան է. ուզում էր «Անբան Կրկուն» գրել մեծերի համար, քաղաքական բնույթ տալ. ասում էր Գյոթեի «Ռեյնեկե Լիսի» նման:

Աշխեն»:

Երկրորդ հատվածն առաջին անգամ հրապարակել է Ս. Ինճիկյանը (տե՛ս ԲԵՀ, 1972, №2, էջ 161-168): ԹԹ-ում պահվում են հատվածին վերաբերող պատառիկներ, գրառումներ:

Գրականագետ Ս. Մուրադյանը, որ այդ ժամանակ ԲԵՀ-ի աշխատակիցներից էր, հիշում է. «ԲԵՀ-ում տպվել է գլավլիտի կրճատումներով. կռահել էին, որ Թումանյանի կերպավորած կենդանիները հիշեցնում են ժամանակի քաղաքական դեմքերին. աղվեսը՝ Լենինին, գայլը՝ Նիկոլայ ցարին և այլն: Անբուն կկուն հայրենազրկված հայ ժողովուրդն է, իսկ հանճարեղորեն մտածված դիպաշարն այլաբանորեն ակնարկում է ԽՍՀՄ կազմավորումը: Երբ Աղվեսը խոսում է ժողովուրդների բարեկամության մասին, կենդանիները համբուրվում են, և «մեկի գլուխը մնաց մեկելի բերանում»: Այսինքն՝ հայ ժողովրդի «գլուխը» մնաց Թուրքիայի և նորահորջորջ Ադրբեջանի բերանում»:

Բալլադի առաջին և երկրորդ մասերը (պայմանականորեն այդպես է համարակալված մեր կողմից) մեզ հասել են մշակման տարբեր աստիճանների վրա. առաջին մասը գրեթե ավարտված է՝ բացառությամբ մի քանի առանձին տողերի ու բառերի, իսկ երկրորդը շատ կողմերով դեռ անմշակ է: Նրանք միացվում են՝ ստեղծագործության ամբողջությունը պատկերացնելու համար:

Ստեղծագործության ձեռագրում բաց են թողնված մի շարք տողեր, որ հեղինակը չի հասցրել գրել: Դրանց փոխարեն գրվում են բազմակետերով տողեր, որոնք նույնպես համարակալվում են: Բաց թողնված տողերի քանակը որոշվում է ըստ չլրացված տողագծերի, ինչպես նաև բովանդակային և տաղաչափական հատկանիշներով:

Առաջին անգամ, առանց Աշխեն Թումանյանի արտագրած հատվածի, տպագրվել է Նք, 1923, №3, էջ 35, այնուհետև՝ Ար, Վիեննա, 1936, №7, էջ 601, №8, էջ 461, ապա՝ ԵԺԼ, 596-609:

Տպագրվում է Գ ինքնագրից, շարունակությունը՝ Աշխենի արտագրածից:

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Գեղարվեստական թարգմանությունները Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում: Սկսած 1890-ական թվականներից մինչև կյանքի վերջը՝ ավելի քան երեսուն տարի, մեծ կամ փոքր ընդմիջումներով, նա զբաղվել է չափածո և արձակ թարգմանություններով: Մեզ հասած ամենավաղ թումանյանական թարգմանությունը Մ. Յու. Լերմոնտովի «Իղձ» («Желание») բանաստեղծության փոխադրությունն է՝ կատարված 1889 թ., իսկ ամենավերջինը՝ Խաքանիի վեց քառյակները, որ թարգմանվել են 1922 թ. հուլիսին: Այդ բավական երկար ժամանակաշրջանում Թումանյանն ընդհանուր առմամբ ուրիշ ժողովուրդների պոեզիայից թարգմանել է շուրջ 80 ստեղծագործություն, որոնց թվում կան բանաստեղծություններ և մանկական ոտանավորներ, պոեմներ և բալլադներ, ժողովրդական վիպերգության նմուշներ: Քանակով ոչ այնքան շատ, բայց ինչպես ժանրային կազմով, այնպես էլ իրենց «աշխարհագրությամբ» բավական բազմազան այդ երկերը մեծ մասամբ տպագրվել են բանաստեղծի կենդանության ժամանակ՝ պարբերական մամուլում, ժողովածուների և դասագրքերի մեջ:

Թե ինչպիսի նշանակություն էր տալիս Թումանյանն իր չափածո թարգմանություններին, երևում է նրանից, որ նա դրանց միշտ տեղ է հատկացրել (երբեմն բավական ընդարձակ) իր բոլոր բանաստեղծական ժողովածուների մեջ: Բայց եթե 1890 և 1892 թթ. Մոսկվայում հրատարակված հատորյակներում եղած հատուկենտ թարգմանությունները (Պուշկինից, Լերմոնտովից, Ժուկովսկուց և այլն) տեղ են գտել այդ գրքերի տարբեր մասերում, ինքնուրույն բանաստեղծությունների կողքին խառը կարգով, ապա հետագայում թարգմանություններն առանձնացվում են հատուկ բաժինների մեջ: Այսպես, Թիֆլիսի 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի 300 էջից 80-ը հատկացված է թարգմանություններին: Բավական

ընդարձակ է թարգմանությունների բաժինը նաև Բաքվի 1908 թ. (60 էջ) և Կ. Պոլսի 1922 թ. (50 էջ) «Բանաստեղծություններ» ժողովածուների մեջ:

Թումանյանի չափածո թարգմանությունները նրա երկերի ներկա հրատարակության մեջ բաժանվում և տեղադրվում են ժանրային սկզբունքով. բանաստեղծությունները, բալլադներն ու մանկական ոտանավորները զետեղվում են 2-րդ հատորում, իսկ էպիկական երկերի ամբողջական կամ հատվածային թարգմանությունները (Բայրոնի, Ժուկովսկու, Լերմոնտովի, Լոնգֆելլոյի պոեմները, ռուսական և սերբական վիպերգերը, Ռուսթավելու պոեմի հատվածների գրական մշակումը և այլն) տեղ կգտնեն 4-րդ հատորում:

Ավելի մեծ է թարգմանությունների և փոխադրությունների տեսակարար կշիռը Թումանյանի գեղարվեստական արձակում. դրանք կազմում են գրողի կենդանության ժամանակ տպագրված արձակ գործերի ծավալի մոտ կեսը: Թումանյանը թարգմանել է մի քանի փոքր պատմվածք ռուս և եվրոպացի հեղինակներից, բայց արձակ թարգմանությունների հիմնական զանգվածը կազմում են տարբեր ժողովուրդների հեքիաթները: Նա հայերենի է վերածել Գրիմ եղբայրների մշակած գերմանական հեքիաթների մի մասը (ընդամենը ինը), որոնք 1914-15 թթ. տպագրվեցին երեք առանձին պրակով: Սկսած 1909 թվականից նա թարգմանել ու փոխադրել է նաև մեկ տասնյակից ավելի ուրիշ ժողովրդական հեքիաթներ, որոնց թվում կան ռուսական, իտալական, իռլանդական, հնդկական, ճապոնական, արաբական պատումներ: Հիշյալ բոլոր նյութերը, ինչպես նաև արձակ թարգմանական անավարտ ու սևագիր էջերը, կմտնեն սույն հրատարակության 5-րդ հատորի մեջ:

Թեև թարգմանական աշխատանքը ժամանակագրական առումով Թումանյանին զբաղեցրել է նրա գրական կյանքի բոլոր փուլերում, սակայն եղել են տարիներ, երբ դրան ավելի շատ ուժ և ժամանակ է հատկացվել: Այդ իմաստով առանձնանում են, օրինակ, 1890-ական թթ. կեսերը, երբ, հրապուրված դասական ռոմանտիզմի գաղափարներով ու գեղարվեստական սկզբունքներով,

Թումանյանը թարգմանեց և միաժամանակ՝ 1896 թ. առանձին գրքույկներով հրատարակեց Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» և Լերմոնտովի «Մծիրի» պոեմները: Թարգմանական ակտիվ աշխատանքի շրջան են եղել նաև 1910-ական թվականները, երբ, բացի հիշյալ ներքիաթներից, բանաստեղծը թարգմանում է նաև մանկական ընթերցանության համար նախատեսված ուրիշ չափածո և արձակ էջեր, սերբական էպոսի մի քանի հատված: Սակայն ասվածն ամենևին չի ստվերում ստեղծագործական կյանքի մյուս փուլերում կատարած թարգմանական աշխատանքի կարևորությունը: Բավական է ասել, որ նշված երկու շրջանների միջև ընկած տարիներին են վերաբերում Թումանյանի թարգմանական վաստակի թագն ու պսակը կազմող այնպիսի փայլուն էջեր, ինչպես Ա. Ս. Պուշկինի «Օլեգի երգը», «Ջրահեղձը», «Ձմեռվա իրիկունը», ինչպես նաև Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգի» հատվածները, ռուսական բիլինան և այլն:

Այսպիսով, թարգմանական որոնումները միշտ եղել են Թումանյանի ստեղծագործական աշխատանքի անբաժան մասը, նրա աշխարհզգացողության և գեղարվեստական սկզբունքների դրսևորման կարևոր ոլորտներից մեկը: Թարգմանությունը երբեք չի եղել «երկրորդական զբաղմունք»՝ կտրված հիմնական ստեղծագործական խնդիրներից: Եվ թարգմանությունների մեջ Թումանյանը դրել է իր տաղանդի ամբողջ ուժը՝ ղեկավարվելով այն համոզմամբ, թե «լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության» (տե՛ս Ն. Թումանյան, Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, Երևան, 1956, էջ 122):

Բավական բազմազան է Թումանյանի թարգմանած երկերի ազգային-աշխարհագրական «քարտեզը», որ ներկայացված են համաշխարհային գրականության շատ դեմքեր: Աչքի է զարնում Թումանյանի ստեղծագործական նկարագրի հետ կապված մի օրինաչափություն: Թումանյան թարգմանիչը չի սիրում կենտրոնանալ որևէ հեղինակի վրա, նրա ստեղծագործությունից հայացնել մեծ թվով երկեր կամ ամբողջական շարքեր: Նա սովորաբար բավարարվում է մեկ կամ մի քանի բնորոշ ստեղ-

ծագործությամբ, որոնց թարգմանությամբ հայ ընթերցողին է ներկայացնում և՛ տվյալ հեղինակի գեղարվեստական աշխարհի որոշ ցայտուն գծեր, և՛ իր սեփական ըմբռնումը նրա մասին: Այսպես, նույնիսկ Պուշկինից և Լերմոնտովից, որոնց սերն ուղեկցել է Թումանյանին ամբողջ գիտակից կյանքում, նա համեմատաբար քիչ է թարգմանել: Բացի հիշյալ երեք բանաստեղծություններից («Օլեգի երգը», «Ջրահեղձը», «Ձմեռվա իրիկունը») Թումանյանը թարգմանել է ընդամենը Պուշկինի ևս երեք գործ («Եթե իրավ է, որ գիշերները», «Ռոմանս» և մի հատված «Խնջույք ժանտախտի պահին» ողբերգությունից), մեկ քառյակ էլ «Ազատություն» ներբողից («Ատում եմ քեզ և քո գահը»): Իսկ Լերմոնտովը ներկայացված է «Մծիրի» պոեմով և ընդամենը երեք բանաստեղծությամբ («Ուղձ», «Ես չեմ ուզում մարդ իմանա», «Հրեշտակ»): 1890-ական թվականներին ջերմորեն երկրպագած մյուս բանաստեղծից Բայրոնից, Թումանյանը թարգմանել և տպագրել է երեք գործ «Շիլիոնի կալանավորը» պոեմը և հատվածներ «Չայլդ Հարոլդ» պոեմից («Չայլդ Հարոլդի երգը», «Ինեսին»): Բայրոնյան երկու հատվածների թարգմանություն էլ մեզ է հասել սևագիր վիճակում («Մնաս բարյավ» և մի տեսարան «Մանֆրեդ» ողբերգությունից):

Մյուս հեղինակները ներկայացված են ավելի փոքրաթիվ երկերով: Օրինակ, Թումանյանն ընդամենը մեկական բանաստեղծություն է թարգմանել այնպիսի ռուս հեղինակներից, ինչպես Ժուկովսկին, Կոլցովը, Նեկրասովը, Նադսոնը, Գորկին, Բլոկը, Մինսկին, Կորսակը, Ալլեգրոն (Պ. Ս. Սոլովյովա) և ուրիշներ: Եվրոպական այլ ազգերի հեղինակները Թումանյանի չափածո թարգմանությունների մեջ ներկայացված են այսպես. երեք բանաստեղծությամբ՝ Շիլլերը, երկուական՝ Գյոթեն և Հայնեն, մեկական բանաստեղծությամբ՝ Թոմաս Հուդը, Բյորնսը, Շելլին, Մյուսեն, Միցկևիչը, Ռյուկերտը, Հիմենսը և ուրիշներ: Թումանյանի թարգմանական ժառանգության մեջ տեղ է գտել նաև հարևան ժողովուրդների՝ վրացական (Ի. Ճավճավաձեի երկու բանաստեղծություն) և պարսկական (Խաքանիի վեց քառյակ) պոեզիան, մեզ հասել են նաև, մեծ մասամբ սևագիր և անավարտ

վիճակում, նմուշներ հնդկական և չինական գրականությունից, Արևելքի ժողովրդական բանահյուսությունից, հատվածներ Շեքսպիրի ողբերգություններից և սոնետներից:

Հետաքրքիր են նաև բանաստեղծի չիրականացված թարգմանական մտահղացումները: Հայտնի է, օրինակ, որ Թումանյանը մտադիր է եղել թարգմանել Շոթա Ռուսթավելու «հռչակավոր վիպերգությունը», որի մասին նա 1910 թ. բանակցություններ է վարել Կովկասի Հայոց հրատարակչական ընկերության հետ (տե՛ս ԵԺV, 336): Հետագայում էլ 1919 թ. մի զրույցի ժամանակ նա ասել է. «Մտքումս կա եթե ոչ բոլորը, գոնե մի քանի հատված թարգմանելու Շոթա Ռուսթավելուց և Ֆիրդուսու «Ռուստամ ու Զոհրաբից» (Նվարդ Թումանյան, էջ 208): Այդ ծրագրերը մնացին անկատար (միայն 1917 թ. «Լուսաբեր» դասագրքի համար Թումանյանը Թիֆլիսի բարբառից գրական լեզվի է վերածել, մասամբ էլ արձակ ձևով վերապատմել «Ընձենավորի» մի քանի հատված՝ Սարգիս Բասմաջյանի թարգմանության հիման վրա):

Եթե սրան ավելացնենք գեղարվեստական արձակի, մանավանդ հեքիաթի բնագավառում կատարած թարգմանությունները, ապա պարզ կլինի, թե իր համեմատաբար փոքր ծավալի մեջ ինչքա՛ն բազմազան ու բազմաշերտ է Թումանյանի թարգմանական ժառանգությունը: Ո՞րն է Թումանյան թարգմանչի այդ «բազմասիրության» հիմքը: Իհարկե, հայ բանաստեղծը նպատակ չուներ ընթերցողին ներկայացնել համաշխարհային պոեզիայի ինչ-որ ծաղկաքաղ: Թարգմանվող երկերի ընտրության չափանիշը նրա համար եղել է այն, թե նրանք ինչքանո՛վ են համապատասխանում բանաստեղծի խոհերին ու հույզերին, ընթերցող հասարակությանը որևէ նվիրական միտք կամ տրամադրություն հաղորդելու նպատակին: Ուստի և չպետք է զարմանալ, որ նրա թարգմանած բանաստեղծների շարքում կան նաև համեմատաբար քիչ հայտնի, «երկրորդական» անուններ: Նրանք գրավել են Թումանյանի ուշադրությունը շնորհիվ այն բանի, որ նրանց այս կամ այն կոնկրետ ստեղծագործությունը հարազատ և համահնչյուն է եղել հայ բանաստեղծի տրա-

մադրությանը և գեղարվեստական հոգեբանությանը։ Այդ երևույթը նկատվել ու գնահատվել է դեռևս բանաստեղծի կենդանության ժամանակ։ Արսեն Տերտերյանի գրքում այդ մասին ասված է. «Շատ քիչ հայ բանաստեղծների է հաջողվում թարգմանել օտար գրականությունից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբուխ և սեփական ստեղծագործություն։ Հովհ. Թումանյանը պատկանում է բախտավոր բացառությունների թվին։ Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու հույզերին» (Արսեն Տերտերյան. Հովհաննես Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, էջ 8)։ Այս առումով Թումանյանի գրչին պատկանող բոլոր թարգմանական էջերը որոշակիորեն «սուբյեկտիվ» բնույթ ունեն, նրանց ընտրությունը պայմանավորված ու թելադրված է թարգմանչի անհատական կենսափորձով և հուզաշխարհով։ Իրենց բովանդակությամբ, ոճով ու երանգներով դրանք խորապես թումանյանական են, նույնիսկ կարող էին տեղ գտնել նաև հայ բանաստեղծի սեփական երկերի շարքում։ Թումանյանի ինքնուրույն և թարգմանական գործերի միջև, ոգու իմաստով, որևէ տարբերություն, առավել ևս՝ հակադրություն չկա։ Առկա են միայն ազգային-պատմական և աշխարհագրական հանգամանքներից բխող տարբերություններ։ Սակայն Թումանյան թարգմանիչն ըստ ամենայնի օբյեկտիվ է, որովհետև միշտ հավատարմորեն պահպանում է բնագրի ազգային և անհատական ստեղծագործական նկարագրի էական հատկանիշները։

Ի՞նչ լեզուներից է կատարել Թումանյանն իր թարգմանությունները։ Հայտնի է, որ մայրենի լեզվից զատ հայ բանաստեղծն ազատորեն տիրապետում էր միայն ռուսերենին։ Ռուսաց լեզուն հաճախ միջնորդ է եղել նաև այլ ազգերի գրականության երկեր թարգմանելիս։ Սակայն շատ դեպքերում էլ նա չի բավարարվել միայն ռուսերեն տեքստով, դիմել է տողացի թարգմանության և լեզուների գիտակ մարդկանց օգնությանը։ Դժբախտաբար, մեզ չեն

հասել այն բոլոր նյութերը, որոնք կարող էին լրիվ պատկերացում տալ նման դեպքերում ռուսերենից և ռողացիներից օգտվելու չափերի ու ձևերի, առհասարակ՝ Թումանյան թարգմանչի ստեղծագործական աշխատանքի մասին: Սակայն մի քանի փաստ հայտնի է: Օրինակ, 1890-ական թթ. սկզբին Թումանյանն անգլերենի դասեր է վերցրել Թիֆլիսի անգլիական փոխհյուպատոս Մուրտագից: «Թե որքան առաջադիմեց նա այդ ասպարեզում - չգիտեմ,- գրում է Գևորգ Ասատուրը,- բայց գիտեմ, որ նա անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանա «Շիլիոնի կալանավորը» անմիջապես բնագրից թարգմանել: Այդ գործում նրան օգնում էր միստր Մուրտագը» (ԹԺՀ, 352):

Գեղարվեստական թարգմանության հարցերը զգալի տեղ են գրավել նաև Թումանյանի գրական-քննադատական գործունեության մեջ: Հատկապես 90-ական թթ. Շեքսպիրի «Համլետի» նոր հայերեն թարգմանությունների (Հ. Մասեհյանի և Հ. Բաբազյանի) և 1915-1917 թթ. բրյուսովյան «Պոեզիա Արմենիի» ժողովածուի առիթով գրած հոդվածները բազմակողմանիորեն ցուցադրում են նրա տեսական և գործնական ըմբռնումները թարգմանական աշխատանքի մասին: Այդ խնդիրներին նա անդրադարձել է նաև մի շարք այլ հոդվածներում, նամակների և զրույցների մեջ: Թարգմանական գործին Թումանյանը նայում էր հասարակական և գեղագիտական բարձր դիտակետից: Նա համոզված էր, որ թարգմանության շնորհիվ գրական արժեքների փոխանցումը մի գրականությունից մյուսին ոչ միայն հարստացնում է ազգային գեղարվեստական մշակույթը, այլև նպաստում է ամենավսեմ խնդրին՝ ժողովուրդների փոխադարձ ըմբռնման, բարեկամության և խաղաղության ամրապնդմանը: 1914 թ. մի ելույթի ժամանակ նա ասել է. «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արծարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է, որի մեջ հանդես են գալիս նրանց լավագույն զգացմունքները, նրանց ազգային հանճարն ու ոգին» (ԵԺIV, 462):

Թարգմանչի հիմնական խնդիրը Թումանյանը համարում էր

«բնագրի հարազատ բույրն ու հրապույրը» այլ լեզվի միջոցներով վերարտադրելը՝ զուգակցելով այն արտահայտության բնականության, ազատության և մատչելիության հետ: Նրա «թարգմանչական դավանանքի» յուրօրինակ խտացումն ու ամփոփումը կարող են համարվել 1916 թ. ասված հետևյալ խոսքերը. «Չէ՛ որ բանաստեղծության թարգմանությունը, էն էլ առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ ունեցող բանաստեղծության թարգմանությունը շատ է դժար ու հազվագյուտ բան: Բանաստեղծության նույնիսկ լավ թարգմանության համար ասված է, թե նա մի վարդ է, որ ապակու տակ է դրված: Այսինքն թե՝ ձևը կտեսնես, բայց բուրմունքը չես զգա: Ինչքա՜ն շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձևը ցույց տա, այլև ինքնուրույն բուրմունքը հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքա՜ն սեր...» (ԵԺVI, 152):

Ինչպե՞ս են մարմնավորվել այդ սկզբունքներն իր՝ Թումանյանի թարգմանությունների ու փոխադրությունների մեջ: Մեր գրականագետներն ու լեզվաբանները տարբեր առիթներով անդրադարձել են թարգմանության թումանյանական արվեստին, կատարել են ընդհանուր և մասնավոր կարգի արժեքավոր դիտողություններ: Սակայն Թումանյանի գրական ժառանգության այդ մասի ամբողջական գնահատականը դեռ տրված չէ, բացահայտված չէ այն ինքնատիպ և բացառիկ տեղը, որ գրավում է նա հայ թարգմանական մշակույթի պատմության մեջ: Դա թումանյանագիտության «բաց կետերից» մեկն է, որը դեռ սպասում է իր բազմակողմանի հետազոտությանը: Անհրաժեշտ է ոչ միայն ըստ ամենայնի բացահայտել Թումանյանի վարպետությունը, նրա նշանակությունը մեր օրերում, այլև ցույց տալ, թե թարգմանությունների մեջ ինչպե՛ս են դրսևորվել նրա ողջ ստեղծագործության հիմնաքարը կազմող ժողովրդայնության և ռեալիզմի ըմբռնումները:

Ստեղծագործական աշխատանքի սկզբունքների առումով Թումանյանի թարգմանությունները կարելի է բաժանել երեք մասի, որոնք շատ կողմերով տարբերվում են իրարից:

Նախ, պետք է առանձնացնել այն բանաստեղծությունները, որ

1907-1911 թթ. Թումանյանը պատրաստել է «Լուսաբեր» դասագրքերի, մասամբ նաև «Հասկեր» մանկական ամսագրի համար՝ օգտվելով օտար (մեծ մասամբ ռուսերեն) աղբյուրներից: Այս շարքի մեջ մտնում են այնպիսի հանրահայտ, հայ մանկական գրականության անբաժան սեփականությունը դարձած ոտանավորներ, ինչպես «Գիքոր», «Առաջին ձյունը», «Մարտ», «Ծաղիկները», «Փիսիկի գանգատը», «Ամենից լավ տունը», «Թռչունի մտածմունքը», «Բզեզի դպրոցը» և այլն: Դրանք իսկական և լիակատար իմաստով փոխադրություններ են, որոնց մեջ սկզբնաղբյուրը ելակետ է, խթանող գործոն, բայց չի կաշկանդում վերակերտողի ստեղծագործական ազատությունը, որը շատ է դուրս գալիս թարգմանչի սովորական «պարտականությունների» սահմաններից: Այս բանաստեղծությունների վրա աշխատելիս Թումանյանն ըստ էության վարվել է ճիշտ այնպես, ինչպես վարվում էր ժողովրդական բանահյուսության նյութերը մշակելիս. նմանության աղբյուր ծառայած տեքստից նա շատ բան կրճատել ու դուրս է թողել, որոշ հատվածներ ավելացրել է: Կարելի է ասել, որ հայացրել է ոչ միայն բառերը, այլև ամբողջ ոգին ու ոճական հյուսվածքը՝ դարձնելով հայ մանկան համար մինչև վերջ հարազատ ու հասկանալի: Այս առումով խիստ կարևոր է բանաստեղծի հետևյալ վկայությունը («Ոչ-գրական ոչնչությունները քննադատ» հոդվածից, 1909 թ.). «Լուսաբերը» կազմելու համար մենք ամենալայն կերպով օգտվել ենք ժողովրդական նյութերից և պիտի օգտվենք միշտ... Են էլ ոչ միայն մեր ժողովրդականից ենք օգտվում, այլև օտար աղբյուրներից՝ ռուսական, ֆրանսիական, գերմանական, լեհական, բայց մանավանդ անգլիական ու ամերիկական, հարկավ, մեր ինքնության ու մեր մտածողության եղանակին հարմարեցնելով» (ԵԺIV, 99-100):

Դժբախտաբար, մինչև այժմ դեռ լրիվ չեն հայտնաբերվել Թումանյանի համար հիմք ծառայած այն բոլոր աղբյուրները, որոնց հետ համեմատելով հնարավոր լիներ պատկերացնել բանաստեղծի կատարած աշխատանքն իր բոլոր մանրամասներով (հարցի վրա կարող էին լույս սփռել «Լուսաբերի» և «Հասկերի»

հետ կապված արխիվային նյութերը, որոնք, սակայն, չեն դրվել թումանյանագետների տրամադրության տակ): Բայց անկախ դրանից էլ պարզ է, որ այդ ոտանավորներն իրենց արժեքով և նշանակությամբ իրոք համազոր են ինքնուրույն ստեղծագործության և լիիրավ կերպով մտնում են հայ մանկական գրականության ոսկե ֆոնդը:

Ազատ փոխադրության և բուն իմաստով թարգմանության միջին տեղն են գրավում Թումանյանի հայացրած օտարազգի հեքիաթները: Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, այստեղ ևս Թումանյանը երբեք հնազանդորեն չի հետևել բնագրի տառին, այլ շատ բան փոխել է, ավելացրել և մանավանդ կրճատել ոչ քիչ դրվագներ և արտահայտություններ՝ ղեկավարվելով գեղագիտական և դաստիարակչական նկատառումներով:

Ակտիվ ստեղծագործական աշխատանքը ցայտուն է երևում հատկապես Գրիմ եղբայրների հեքիաթների թարգմանության մեջ: Հատկանշական է, որ նրանց գրի առած ավելի քան 200 հեքիաթներից Թումանյանն ընտրել ու թարգմանել է միայն ինը, թեև Կովկասի հայ հրատարակչական ընկերությունից պատվեր էր ստացել թարգմանելու բոլորը: Մոտիկից ծանոթանալով Գրիմների կազմած ժողովածուին (ռուսերեն թարգմանության միջոցով), Թումանյանը եկավ վճռական եզրակացության, որ 1913 թ. մի նամակում նա ձևակերպել է այսպես. «Ես ամբողջը չեմ թարգմանիլ: Կթարգմանեմ միայն էն հեքիաթները, որ ես հավանում եմ և կամ կարևոր եմ համարում» (ԵԺV, էջ 392): Մոտ տասը տարի անց, 1922 թ. Պ. Մակինցյանին գրած նամակում, մանրամասն անդրադառնալով այդ վաղեմի պատմությանը, Թումանյանը վկայում էր. «Նայեցի Գրիմի հեքիաթները և հայտնեցի, որ ես միայն մի քանիսը կթարգմանեմ... Էդպես էլ արի: Մի քանիսը թարգմանեցի, դեռ նրանց մեջ էլ - մի երկուսի մեջ - որոշ փոփոխություններ արի ու պատճառաբանված տվի իրենց: Իհարկե, տպեցին... Գրիմները հազիվ մի քանի հեքիաթ ունեն մշակած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղած ու փչացած» (ԵԺV, 471-472):

Ի՞նչ բնույթ ունեին Թումանյանի մտցրած փոփոխությունները:

Նախ, նա հրաժարվել է մի շարք այնպիսի մանրամասներից, որոնք, իր կարծիքով, խաթարում են դեպքերի ու կերպարների բնական զարգացումը կամ խորթ են ժողովրդական հեքիաթի ոգուն: Հիմք ընդունելով օտարազգի հեքիաթների ռուսերեն թարգմանությունները, նա հաճախ դիմել է ժողովրդական նյութերի մշակման մեջ իր նախասիրած սկզբունքին, որի էությունը հետևյալն է. ազատորեն օգտվել տարբեր պատումների լավագույն դրվագներից ու մանրամասներից, վերստեղծել մի նոր գեղարվեստական ամբողջություն: Գրիմ եղբայրների հեքիաթները հայացնելիս Թումանյանի համար հիմք է եղել Ա. Ֆեոդորով-Դավիդովի ռուսերեն թարգմանությունը, որը մոտ ու հավատարիմ է գերմաներեն բնագրին: Բայց նա առանձին դեպքերում օգտվել է նաև Վ. Գատցուկի ռուսերեն վերապատմությունից, որից քաղել է մի շարք արտահայտություններ ու դրվագներ: Որոշ բառեր և պատկերներ ճշտելու համար բանաստեղծը դիմել է գերմաներեն իմացողների օգնությանը (մանրամասները տե՛ս Ի. Սաֆրազբեկյան, Գերմանական հեքիաթները Հովհաննես Թումանյանի թարգմանությամբ, ՈՒՀ1, 60-84):

Ինչպես Գրիմ եղբայրների, այնպես էլ ուրիշ ազգային հեքիաթներ թարգմանելիս միշտ երևան է գալիս Թումանյանի զարմանալիորեն խոր և ճշգրիտ բնազդը, որի շնորհիվ նա կարողանում է անթերի զգալ ու վերարտադրել այլ ժողովուրդների ոգին ու մտածողությունը, բայց և միաժամանակ առավելագույն չափով հայացնել պատումի ոճական նկարագիրը, լեզվաարտահայտչական միջոցները: Հայացված են նույնիսկ որոշ հերոսների անուններ (Լուսերես և Վարդերես, Գոհար թագուհի, Մոխրոտ, Որոտ թագավոր, Հավատարիմ Օհան և այլն):

Ե՛վ իրենց կենսաբարոյական բովանդակությամբ, և՛ շարադրանքի միաձույլ ամբողջականությամբ Թումանյանի թարգմանած հեքիաթները նրա ստեղծագործության անբաժանելի մասն են կազմում: Միաժամանակ՝ դրանք կարևորագույն էջեր են հայ հեքիաթագրության պատմության մեջ:

Թումանյանի թարգմանական ժառանգության երրորդ (և ամե-

նամեծաքանակ) բաժինը կազմում են բուն իմաստով թարգմանությունները: Այս խմբի մեջ մտնում են մի քանի պատմվածք և արձակ բանաստեղծություն (Լ. Տոլստոյի, Տուրգենևի, Մամին-Սիբիրյակի, Ռասպեի և այլոց), ինչպես նաև չափածո թարգմանությունների մեծ մասը: Այս դեպքում արդեն թարգմանչի հիմնական խնդիրն է եղել տվյալ ստեղծագործության իմաստի և գեղարվեստական կառուցվածքի հավատարիմ (բայց ոչ երբեք ստրկորեն ճշգրիտ) վերարտադրությունը: Ինչքան էլ թարգմանվող երկերի ընտրությունը պայմանավորված էր նրա սեփական ստեղծագործական մղումներով, բայց Թումանյանը երբեք չի ձգտել բնագրի իմաստը փոխել՝ իր անձնական վերաբերմունքն ու ըմբռնումները արտահայտելու համար (բացառություն է կազմում, թերևս, միայն Լերմոնտովի «Իղձ» բանաստեղծության թարգմանությունը, որն այդ պատճառով էլ կոչել է փոխադրություն):

Սկզբից նեթ տարերայնորեն, իսկ 90-ական թթ. վերջից միանգամայն գիտակցաբար Թումանյանը դավանում էր ռեալիստական թարգմանության սկզբունքը: Իսկ դա ենթադրում է, ամենից առաջ, հավատարմություն բնագրին, նրա գեղարվեստական կառուցվածքի ճիշտ ըմբռնում ու վերակերտում մի այլ լեզվի միջոցներով: Թարգմանության ռեալիստական սկզբունքների լիարժեք տիրապետման Թումանյանը հասավ երկու դարերի սահմանագլխին: Դա կոնկրետ արտահայտություններից մեկն էր նրա ստեղծագործության մեջ ռեալիստական մեթոդի լիակատար հաղթանակի, որը, կարելի է ասել, 90-ական թթ. Թումանյանի գրական զարգացման հիմնական բովանդակությունն էր: Այս առումով ամենից ցայտուն օրինակները, անշուշտ, պուշկինյան երկու բալլադների («Օլեգի երգը», «Ջրահեղձը») և հռչակավոր «Զմեռվա իրիկունի» թարգմանություններն են: Բալլադների թարգմանության մեջ հայ բանաստեղծը զարմանալի հարազատությամբ վերստեղծել է պուշկինյան բնագրերի ազգային և պատմական բոլոր էական հատկանիշներն ու մանրամասները, ժողովրդական ըմբռնումներն ու պատկերացումները, ընդսմին թույլ չտալով բովանդակության և գեղարվեստական երանգների որևէ նկատելի

կորուստ (հարցի մանրամասն քննությունը տե՛ս Մ. Ջանփոլադյան, Պուշկինի բալլադները Թումանյանի թարգմանությամբ, ԲԵՀ, 1974, №1, էջ 131-139):

Առավել ևս սկզբունքային նշանակություն ուներ «Ձմեռվա իրիկունի» թարգմանությունը: Հայտնի է, որ այդ փոքրիկ բանաստեղծությունը Թումանյանը համարում էր Պուշկինի ազգային-ժողովրդական ոգու լավագույն խտացում և ամենակատարյալ դրսևորում, մի կաթիլ ջրի մեջ արտացոլված արեգակ: Անշուշտ, դրա մեջ կա սուբյեկտիվ ընկալման և վերաբերմունքի մեծ բաժին, բայց Թումանյանի համար «Իմ Պուշկին» հասկացությունը կապված էր ոչ թե «Եվգենի Օնեգինի» կամ «Պղնձե հեծյալի», այլ, ամենից առաջ, այս բանաստեղծության հետ: «...Նրա գրվածքներից գիտե՞ք որն եմ ամենից շատ սիրում, իսկի չեք կարող երևակայել.- «Зимний вечер»-ը,- ասել է նա մի զրույցի ժամանակ:- Սիրում եմ էդ բանը, որովհետև վերազանցորեն ռուսական է. շատ է սիրուն ու հաջող... Պուշկինը էստե՛ղ է կատարյալ բանաստեղծ: Կարդացեք ու տեսեք, թե ինչքա՜ն է սե՛ղմ, գեղեցի՛կ և ուժեղ. մի ավելորդ բառ չեք գտնի» (Նվարդ Թումանյան, էջ 137-138): Կարելի է ասել, որ այսպիսի բանաստեղծության թարգմանությունը Թումանյանի համար, բնականաբար, մի բարձրագույն քննություն էր, որը նա փայլուն կերպով է հանձնել: Լինելով բոլոր առումներով բնագրին համահավասար՝ դա լավագույնն է թումանյանական թարգմանությունների մեջ: Պուշկինի բանաստեղծությունն ասես հնչում է ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն, որովհետև բնագրի ազգային շունչն ու ոգին, նրա բոլոր յուրահատկությունները համարժեք կերպով պահպանված են: Իզուր չէ, որ երբ ուզում ենք նշել հայ գեղարվեստական թարգմանության մեկ ամենակատարյալ օրինակ, ապա առաջին հերթին հիշում ենք թումանյանական «Ձմեռվա իրիկունը»:

Ո՞րն է այս և Թումանյանի մյուս լավագույն թարգմանությունների ուժի և հմայքի գաղտնիքը: Այն, որ բնագրի վերակերտման ճշգրտությունն ու հավատարմությունը, թարգմանության մեջ գրեթե անխուսափելի իմաստային կորուստների նվազագույն աստիճանը

զուգակցվում է արտահայտության կատարյալ հայեցիության, անկաշկանդ բնականության հետ: Թումանյանը միշտ ձգտել է հաղթահարել թարգմանական ամեն մի պայմանականություն, խոսքը հնչեցնել հայկական լեզվամտածողության օրենքներին լիովին համապատասխան: Մի բնորոշ օրինակ: Ա. Կոլցովի «Գեղջուկի մտածմունքը» բանաստեղծության թարգմանության առթիվ նա մի նամակում (1900) հայտնում է, որ բնագրի առաջին տողը՝ «Сяду я за стол» ինքը փոխել-հայացրել է՝ «Նստել պատի տակ»: «...Եվ այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով,- շարունակում է բանաստեղծը:- Եթե սեղան թարգմանեի - նստել եմ սեղան - այդ հայերեն կնշանակեր նստել եմ սուփրա: Եթե գրեի սեղանի մոտ - տգեղ էր: Վերջապես բանաստեղծությունը հայերեն չէր լինի: Իսեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը պատի տակն է» (ԵԺV, 155, տե՛ս նաև էջ 158-159): Ճիշտ է, տպագրության հանձնելով այդ թարգմանությունը, Թումանյանը հրաժարվեց «պատի տակ» արտահայտությունից, փոխարինեց այն «Նստել եմ շվար» ձևով, որի մեջ ևս երևում է թարգմանական խոսքն ըստ հնարավորին հայացնելու և բնական դարձնելու սկզբունքը: Թե որքան հետևողական մոտեցում էր դա, երևում է նաև նրանից, որ «Զմեռվա իրիկունի» մեջ ևս բնագրի «У окна» արտահայտությունը նա դարձրել է «պատի տակ»:

Կարելի է ասել, որ, բացի թարգմանվող հեղինակի ստեղծագործական անհատականությունից կամ բանահյուսական նյութերի ազգային տարերքից, հայ մեծ բանաստեղծի թարգմանությունների մեջ մենք միշտ զգում ենք նաև թումանյանական, ավելի լայն՝ հայկական լեզվամտածողության ու ոճի վառ կնիքը: Կոնկրետ առիթով կատարված հետևյալ դիտողությունը մեծ կամ փոքր չափով վերաբերում է Թումանյանի բոլոր թարգմանություններին. «Էպոսից Թումանյանի կատարած թարգմանությունները չեն կորչում նրա անհատականության ետևում: Մենք երբեք չենք մոռանում, որ կարդում ենք հենց ռուսական բիլինա, հենց սերբական վիպերգ: Բայց և այնպես այդ բիլինաներն ու վիպերգերը Թումանյանի թարգմանություններն են: Նրա

ստեղծագործությանը շատ թե քիչ ծանոթ ընթերցողը դա զգում է անմիջապես...» (Մ. Ջանփոլադյան, Թումանյանը և ժողովրդական էպոսը, Երևան, 1969, էջ 84-85):

Սակայն բանաստեղծական կառուցվածքի ոչ բոլոր կողմերն է, որ Թումանյան թարգմանիչը ձգտում է պահպանել: Այն, ինչ չի համապատասխանում հայոց լեզվի և հայ բանաստեղծության ոգուն և սկզբունքներին, Թումանյանը չի էլ փորձում ներմուծել թարգմանության մեջ: Խոսքը վերաբերում է, օրինակ, ոտանավորի տաղաչափության ազգային յուրահատկությանը: Պուշկինին, Լերմոնտովին և մյուս ռուս բանաստեղծներին թարգմանելիս նա ռուսական վանկաշեշտային տաղաչափությունը ամենուրեք փոխարինում է հայկական վանկային ոտանավորի ավանդական չափերով: Առանց այդ փոփոխության հնարավոր չէր լինի հասնել հնչերանգի բնականության: Նույնիսկ «Ձմեռվա իրիկունի» մեջ, որն, ինչպես ասվեց, բնագրին հարազատ մնալու դասական օրինակ է, Թումանյանը չի պահպանել պուշկինյան քառոտնյա քորեյը՝ փոխարինելով այն 8 և 7-վանկանի վանկային ոտանավորով (հարցի մանրամասն քննությունը տե՛ս Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, 5-րդ հրատ., Եր., 1980, էջ 297-299): Նույն չափով են թարգմանված Պուշկինի «Ջրահեղձը», «Խրախճանք ժանտախտի պահին» ողբերգության հատվածը, Ժուկովսկու «Աքիլլեսը», որոնք բնագրում նույնպես գրված են քառոտնյա քորեյով: Թումանյան թարգմանիչը հատկապես հաճախ է օգտվում երկանդամ 10-վանկանի տողաչափից, նրանով փոխարինում և՛ ռուսական քառոտնյա յամբը (Լերմոնտովի «Մծիրին», Պուշկինի «Եթե իրավ է, որ գիշերները», «Ռոմանսը», Նեկրասովի «Մայրը»), և՛ եռավանկ, մեծ մասամբ քողաղոտային, ոտքերը (Պուշկինի «Օլեգի երգը», Լերմոնտովի «Իղձը» և «Հրեշտակը», Գորկու «Վալախական լեգենդը»): Նույն 10-վանկանի կանոնավոր տողաչափով են թարգմանվել նաև ռուսական բիլինաները և սերբական վիպերգերը, որոնք հորինվել ու գրի են առնվել ժողովրդական բանահյուսությանը բնորոշ տարբեր չափերով:

Թումանյանի չափածո թարգմանությունները նրա ստեղծա-

գործական կենսագրության մեջ տարբեր ճակատագիր ունեցան: Մի շարք թարգմանություններ առաջին տպագրությունից հետո այլևս չեն զբաղեցրել Թումանյանին ու երբեք չեն արտատպվել, կամ էլ հենց սկզբից երևան են եկել այնպիսի կատարյալ տեսքով, որ հետագայում փոփոխությունների կարիք չի զգացվել: Դրա կողքին կան թարգմանություններ, որոնք մեկ և ավելի անգամ վերամշակվել են, հրատարակությունից հրատարակություն բարելավվել:

Դրանցից է, օրինակ, անհայտ հեղինակի «Դեցիմ Լաբերիոս» բանաստեղծությունը, որի սկզբնաղբյուրի հարցն առայժմ մնում է չպարզաբանված: Հատկապես շատ փոփոխությունների են ենթարկվել վաղ տարիներին թարգմանած պոեմները, որոնք շուտով արդեն իրենց մակարդակով չբավարարեցին Թումանյանին: Հետագայում նա դրանց մեջ մտցրել է էական փոփոխություններ, երբեմն նաև բավական մեծ կրճատումներ: Օրինակ, Ժուկովսկու «Աքիլլեսի» թարգմանության հաջորդ տպագրություններում կրճատել է մոտ 50 տող, իսկ Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» մեջ՝ 100 տող (մեծ մասամբ ամբողջական հատվածներ): Այդպիսի դեպքերում Թումանյանը ղեկավարվել է ստեղծագործության գեղարվեստական ամբողջականության ու սեղմության սեփական ըմբռնումներով: Առաջին տպագրությունից հետո շատ փոփոխություններ են մտցվել նաև Լերմոնտովի «Մծիրի» պոեմի թարգմանության մեջ, բայց մինչև վերջ էլ Թումանյանը լրիվ բավարարված չէր արդյունքներով և մտածում էր նորից անդրադառնալ այդ թարգմանությանը (տե՛ս Նվարդ Թումանյան, էջ 239):

Թումանյանի չափածո և արձակ գեղարվեստական թարգմանությունները ցույց են տալիս, որ այդ հարցում ևս նա ղեկավարվել է ստեղծագործական հստակ և կայուն սկզբունքներով: Նրանց հետևողական կիրառության շնորհիվ Թումանյանը հայ գրականությունը հարստացրեց այնպիսի կատարյալ ու բարձրարժեք թարգմանություններով, որոնք մեկընդմիշտ մտել են մեր ժողովրդի գեղարվեստական գիտակցության մեջ:

1889

ԻՂՁ

(«Ինչո՞ւ չեմ թռչուն, վայրենի մի հավք»)
(էջ 235, 467) (ԵԼԺ 2, էջ 227, 455)

Փոխադրություն է Մ. Յու. Լերմոնտովի «Желание (1831) բանաստեղծությունից, կատարված է 1889 թ.:

ԹԱԹ Թֆ №243(159)-ում պահվում է մեկ ինքնագիր հանված ՄԵ-ի տետրակից, թվագրված 1889 թ., ապա ջնջում ավելացրած «1890, մարտի 19 ին, Տփխիս»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄՆ, էջ 70-71, «Լերմոնտովից փոխադրություն» ենթավերնագրով, ապա՝ ԵԺI, 351:

Արտատպվում է ԲՄՆ-ից:

Հետաքրքիր տեղեկություններ կան 1902 թ. հոկտեմբերին Աբասթումանից Յուրի Վեսելովսկուն ուղղված նամակում, որ բանաստեղծը խոսում է Պուշկինից և Լերմոնտովից կրած իր ազդեցությունների մասին. «Մինչև Ձեր նամակի ստանալը ես չէի մտածել այն մասին, թե ես որքան եմ եղած ռուսաց գրականության ազդեցության տակ: Ձեր նամակն ստանալով երկար մտածեցի և որոնեցի ռուսաց գրականության ազդեցությունը, բայց ոչ թե իմ ոտանավորների տողերում – որովհետև երբեք գիտությամբ հետևած ու նմանած չեմ ոչ մի բանաստեղծի – այլ իմ հոգու, գրական ճաշակի ու հայացքների վրա:

Բայց ավելին տեսա: Ռուսաց բանաստեղծները – գլխավորապես Լերմոնտովը և ապա Պուշկինը միշտ ինձ ավելի հարազատ են թվացել, քան թե մեր հայոց բանաստեղծները (խոսքս իմ նախորդ շրջանի մասին է)... Բայց այն էլ տեսա, որ ինձ զգում եմ փոքուց ազատված նրա ազդեցությունից. նրա ազդեցության տակ միայն սկսել եմ» (ԵԺV, 232-236):

Ինչպես նկատել է Տիգրան Փիրումյանը բանաստեղծի պատմածի հիման վրա՝ Լերմոնտովի «Իղձը» Թումանյանը թարգմանել է, որովհետև շատ է դուր եկել այդ բանաստեղծությունը (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Բանաստեղծությունը հայ ընթերցողներին ավելի մատչելի ու հարազատ դարձնելու համար, Թումանյանը փոխել է բնագրի որոշ տողեր, հատկապես գրանցում եղած աշխարհագրական անունները:

Այսպես տող 5 Ես դեպի Տարոն կսլանայի

На запад, на запад помчался бы я -

տող 13 Եվ Պարթևական լուծ քնարի
И арфы шотландской струну бы задел:

1890

«ԵԹԵ ԻՐԱՎ Է, ՈՐ ԳԻՇԵՐՆԵՐԸ»
(էջ 237, 467) (ԵԼԺ 2, էջ 229, 455)

Ա. Ս. Պուշկինի «Заклинание» (1830) բանաստեղծության թարգմանությունն է, կատարված 1890 թ. ապրիլի 4-ին: Թումանյանը բանաստեղծության վերնագիրը չի թարգմանել:

ԳԱԹ Թֆ №244(178)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄՊ, էջ 79-80, այնուհետև «Պուշկինից» ենթավերնագրով Դ, №6, Տզ, 1899, №18, էջ 423 «Եթե իրավ է» վերնագրով, ԲԹ, էջ 229 և ԲԲ, էջ 225, ապա ԵԺԻ, 352:

Արտատպվում է ԲԲ-ից:

1892

ԴԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ
(«Եվ խայտաճամուկ միմոսի շորով Կեսարի կանչին»)
(էջ 238, 467) (ԵԼԺ 2, էջ 230, 456)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: ԳԱԹ Թֆ №245(166)-ում պահվում է մեկ ինքնագիր, որի տողերը մասերով բաժանված են երկու մասի: Վերնագրի տակ գրված է «ռուսերենից» և հետո ջնջված: Տողատակ կա ծանոթագրություն. «Անցքը պատահել է Հուլիոս Կեսարի օրոք»:

Մինչև այժմ պարզված չէ, թե որոշակի ինչ ստեղծագործությունից է կատարված թարգմանությունը (կամ փոխադրությունը) և ինչ աղբյուրից է օգտվել հեղինակը: Հնարավոր է, որ Թումանյանը պարզապես չափածո վերարտադրել է հին հունական գրականության մեջ պահպանված պատմությունը Հուլիոս Կեսարի ժամանակներում ապրած հռչակավոր բանաստեղծ Դեցիմ Լաբերիոսի մասին:

Հին հեղինակների վկայությամբ, Լաբերիոսը աչքի է ընկել «խիստ ազատասիրությամբ»: Հայտնի է նրա թշնամական վերաբերմունքը Կեսարի և նրա կողմնակիցների նկատմամբ: Նա պատկանել է «հեծյալների»

դասին, բարձրացրել է քաղաքական սուր խնդիրներ, քաղաքացիական իրավունքների և ազատության հարցեր: Նրա մասին անեկդոտներ են հաղորդում պատմաբաններ Սվետոնիոսը և Մակրոբիոսը: Հիշարժան է հին պատմաբանների արձանագրած մի անցք, որը և Թումանյանի երկի բովանդակությունն է կազմում: 45 թվին (Ք. ա.) Հուլիոս Կեսարը քաղաքական պատերազմներում հաղթանակ տանելու կապակցությամբ կազմակերպում է զվարճություններ և կրկեսային ներկայացումներ: Այդ ներկայացումներից մեկի ժամանակ Կեսարը ստիպում է Լաբերիոսին մասնակցել բեմադրությանը ոչ միայն իբրև միմի հեղինակ, այլև իբրև դերասան: Ստիպելով նրան մրցության դուրս գալ ստրուկ Պուբլիոս Սիրիոսի հետ, Կեսարը վրեժ էր լուծում Լաբերիոսից, քանի որ բանաստեղծը դրանով զրկվում էր «հեծյալների» պատվավոր դասին պատկանելուց:

Վիրավորված Լաբերիոսը, հանդես գալով սիրիացի ստրուկի դերում, լեփ-լեցուն թատրոնի առաջ և ամենակարող դիկտատորի ներկայությամբ, բացականչում է. «Հե՛յ, կվիրիտներ, մենք կորցնում ենք ազատությունը» (տե՛ս «История римской литературы», М., 1954, с. 211-213): Այս տողը համընկնում է Թումանյանի երկի հատկապես նախնական տարբերակի ավարտին. «Քաղաքացինե՛ր, իրավունքներս կորցնում ենք, ելե՛ք»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄՎ, էջ 69-71, «Ռուսերենից» ենթավերնագրով, այնուհետև, վերամշակված՝ ԲԹ, էջ 243-245, ԲԲ, էջ 232-235 և ԵԺՎ, 356-357:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ՄԱՐԴ ԻՄԱՆԱ»
(էջ 241) (ԵԼԺ 2, էջ 233)

Մ. Լերմոնտովի «Я не хочу, чтоб свет узнал» բանաստեղծության (1837) թարգմանությունն է:

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄՎ, էջ 88, «Լերմոնտովից» վերնագրով, ապա՝ ԵԺՎ, 355:

Արտատպվում է ԲՄՎ-ից:

ՌՈՄԱՆՍ

(«Մի աշնանային մռայլ իրիկուն»)
(էջ 242) (ԵԼԺ 2, էջ 234)

Ա. Պուշկինի «Романс» (1814) բանաստեղծության թարգմանությունն է:
Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:
Ինքնագիրը չի պահպանվել:
Առաջին անգամ տպագրվել է ԲՄԴ, էջ 113-115, «Պուշկինից» ենթավերնագրով, ապա՝ ԵԺԼ, 353-355:
Արտատպվում է ԲՄԴ-ից:

1893

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ

(«Բարի գիշե՛ր.— ո՛, ո՛չ, երբեք, իմ անգին»)
(էջ 244) (ԵԼԺ 2, էջ 236)

Պ. Բ. Շելլիի «Good night» (1821) բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1893 թ. մայիսի 11-ին, Կ. Բալմոնտի ռուսերեն թարգմանությունից (բանաստեղծի անձնական գրադարանում պահվում է «Сочинения Шелли, вып. I, СПБ, 1893» գիրքը):
ԳԱԹ Թֆ №3010 (260)-ում պահվում է մեկ ինքնագիր, գրված օրիորդ Օ. Գ.-ի (Օվսաննա Գիրգիզյան) ալբոմում, թվագրված՝ 1893, V.11:
Առաջին անգամ տպագրվել է ԵԺԼ, 559:
Տպագրվում է ինքնագրից:

1894

ՄԱՅՐԸ

(«Լսելով կռվի արհավիրքների»)
(էջ 245) (ԵԼԺ 2, էջ 237)

Ն. Նեկրասովի «Внимая ужасам войны» (1854) բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1894 թ. հոկտեմբերի 8-ին:
Թումանյանի անձնական գրադարանում պահվող «Сборник стихов и

русских и западноевропейских» (Гусляр) գրքի վերջին էջին կա հետևյալ նշումը. «1894 X 8-ին Տեր-Հովնանի մոտ թարգմանեցի Նեկրասովի «Внимая ужасам войны №36 ոտանավորը»:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Նեկրասովից» ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1896, №6, էջ 91, ապա՝ ԵԺԻ, 359:

Տպագրվում է Տզ-ից:

ՀՐԵՇՏԱԿ

(«Կեսգիշերային լուսին երկնքում»)
(էջ 246) (ԵԼԺ 2, էջ 238)

Մ. Լերմոնտովի «Ангел» (1830) բանաստեղծության թարգմանությունն է:

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Լերմոնտովից» ենթավերնագրով տպագրվել է Հն, 1894, գիրք 1, էջ 111, ապա՝ ԵԺԻ, 358:

Տպագրվում է Հն-ից:

«ՄԵՌԱՎ ԻՄ ՄՈՒՍԱՆ… ՍԱԿԱՎ ԺԱՄԱՆԱԿ»

(էջ 247, 469) (ԵԼԺ 2, էջ 239, 458)

Ս. Նադսոնի «Умерла моя муза, Недолго она (1885) բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1894 թ.:

ԳԱԹ ԹՖ №246(172)-ում պահվում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ «Նադսոնից» վերնագրով տպագրվել է Հն, 1894, գիրք 1, էջ 112, ապա, վերամշակված՝ ԲԹ, էջ 241: Այնուհետև՝ ԲԲ, էջ 227 և ԵԺԻ, 360:

Տպագրվում է ԲԲ-ից:

Բանաստեղծի անձնական գրադարանում պահվում է Նադսոնի բանաստեղծությունների հատորյակը (С. Я. Надсон. Стихотворения, СПБ, 1888), որտեղ արված նշումներից երևում է, որ թարգմանությունը կատարվել է այս գրքից:

ԹԱՓԱՌԻ՛Ր

(«Երբ որ կինը քեզ կըթողնի»)
(էջ 249) (ԵԼԺ 2, էջ 240)

Հ. Հայնեի «Letzte Gedichte» (Վերջին բանաստեղծություններ) շարքի «Wandere!» բանաստեղծության թարգմանությունն է:

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Հայնեից» ենթավերնագրով տպագրվել է ՀՀ, 1894, գիրք 1, էջ 113, ապա՝ ԵԺ I, 361:

Արտատպվում է ՀՀ-ից:

1899

ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

(«Ելնում է ահա հըզոր Օլեգը»)
(էջ 250, 470) (ԵԼԺ 2, էջ 241, 459)

Պուշկինի «Песнь о вещем Олеге» (1822) երկի թարգմանությունն է կատարված 1899 թ., Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակի առթիվ:

ԳԱԹ Թփ №244(177)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Պուշկինից» ենթավերնագրով:

Առաջին անգամ նույն ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1899, №18, էջ 430, հետևյալ ծանոթագրությամբ. «Մի քանի բառեր փոխված են թարգմանության մեջ:

ՊԵՐՈՒՆ – Արևելյան սլավոնների որոտի և կայծակի աստվածն է, որին մարդազոհ էին անում»:

Այնուհետև տպագրվել է ԲԹ, էջ 34, ապա՝ ԵԺ I, 365:

Տպագրվում է ԲԹ-ից:

ՋՐԱՀԵՂՁԸ

(«Ներս վազեցին մանուկները»)
(էջ 254, 471) (ԵԼԺ 2, էջ 245, 460)

Ա. Պուշկինի «Утопленник» (Простонародная сказка) (1828) բանաս-

տեղծության թարգմանությունն է, կատարված 1899 թ., Պուշկինի ծննդյան 100-ամյակի առթիվ:

ԳԱԹ ԹՖ №247(176)-ում պահվում է մեկ ինքնագիր «Պուշկինից» ենթավերնագրով:

Առաջին անգամ «Утопленник» ենթավերնագրով տպագրվել է ԱՄ, 1899, №56, էջ 5-8, ապա վերամշակված ԲԹ, էջ 230: Այնուհետև՝ ԲՊ, էջ 297 և ԵԺԻ, էջ 362:

Տպագրվում է ԲՊ-ից:

Զապել Տեր-Գրիգորյանն իր հուշերում գրում է. «Թումանյանի մոտ հաճախ պատահել եմ նաև գեներալ-մայոր Ա. Պ. Կալերյակինին, որը զինվորական, ապա կորպուսի հրամանատար է եղել Կովկասյան ֆրոնտում, Վանի շրջանում: Նա միաժամանակ բանաստեղծ էր: Գրել է «Дверь Мгера» պոեմը և մի շարք բանաստեղծություններ «Отзвуки Вана» ընդհանուր վերնագրով... Մի անգամ Թումանյանը կարդաց իր թարգմանած «Ջրահեղձը», չհայտնելով, որ դա Պուշկինի «Утопленник»-ն է: Կալերյակինը, որ հայերեն չգիտեր, 2-3 տուն լսելուց հետո իսկույն ասաց. «Դա Պուշկինի «Утопленник»-ն է» (ԹԺՀ, էջ 109):

ԱՔԵՐՄԱՆԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

(«Լողում եմ գարնան դալարի ծովում»)
(էջ 257) (ԵԼԺ 2, էջ 248)

Ադամ Միցկևիչի (1798-1855) «Аккерманские степи» սոնետի կրճատ (բաց է թողնված 6 տող) թարգմանությունն է:

Ադամ Միցկևիչի «Սոնետներ» գիրքը լեհերեն առաջին անգամ տպագրվել է Մոսկվայում, 1826 թ.: Այնուհետև լույս է տեսել ռուսերեն թարգմանությամբ: Գրքում ամփոփված են հեղինակի «Любовные сонеты» և «Крымские сонеты» շարքերը: Վերջինիս մեջ է մտնում «Аккерманские степи»-ն:

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Միցկևիչից» ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1899, դեկտեմբերի 31, №50, էջ 1140, ապա՝ ԵԺԻ, 370:

Արտատպվում է Տզ-ից:

ԳԵՂՋՈՒԿԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

(«Նըստել եմ շըվար»)
(էջ 258, 472) (ԵԼԺ 2, էջ 249, 462)

*Ա. Կոլցովի «*Раздумье селянина *(1837) բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1900 թ. սեպտեմբերին, Շուլավերում: 1900 թվականի սեպտեմբերի 27-ին Թումանյանի՝ Փիլիպոս Վարդազարյանին գրած նամակում կարդում ենք. «...Անցյալ օրը տեղում (առավոտը) թարգմանեցի* Кольцов*-ի մի ոտանավորը – «*Сяду я за стол *– ուղարկեցի «Տարազին»:* Стол*-ը շինել եմ գիտես ինչ – պատի տակ, և այս ոչ թե հանգի համար, այլ ավելի լուրջ խորհրդով: Եթե սեղան թարգմանեի – նստել եմ սեղան – այդ հայերեն կնշանակեր նստել եմ սուփրա: Եթե գրեի սեղանի մոտ – տգեղ էր: Վերջապես բանաստեղծությունը հայերեն չէր լինի: Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը պատի տակն է» (ԵԺV, 154-155):*

*Նույն ժամանակ Փ. Վարդազարյանին գրած մեկ ուրիշ նամակում բանաստեղծը նորից է անդրադառնում այդ թարգմանությանը, բերելով բանաստեղծությունն ամբողջությամբ. «...Քեզ գրել էի, թե Կոլցովի «*Сяду я за стол да подумаю *– ոտանավորը թարգմանեցի-ղրկեցի «Տարազին»: Այժմ խմբագրությունից գրում են – թե ցենզորը բռնել է: Եկ ու բան հասկացիր: Ախար ինչ ցենզորի բռնելու բան է դա: Ուրեմն էլ ինչ անենք, ինչ մտածենք: Առաջուց գրել եմ, որ* за стол*-ը շինել եմ պատի տակ,– պատի տակը համարելով հայ գեղջուկի մտածմունքի տեղը – փոխադրել եմ... Ինձ հաջող է թվում: Գրիր – հավանո՞ւմ ես, թե չէ: Դու մի ժամանակ ինձ ասում էիր, որ Կոլցովից բան թարգմանեմ: Հանգերն ինչպես զանց են առնված բնագրում, այնպես էլ ես եմ արել» (ԵԺV, 158-159):*

ԳԱԹ Թ-ֆ №245(166)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Գեղջուկի մտորմունքը» վերնագրով և «Կոլցով» նշումով:

ԳԱԹ Փ. Վարդազարյանի ֆ. №413/7բ-ում պահվում է վերոհիշյալ նամակը և դրա մեջ՝ բանաստեղծության ինքնագիրը:

Առաջին անգամ «Գեղջուկի մտորմունքը» վերնագրով և «Կոլցովից» ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1900, №43, էջ 66. այնուհետև՝ «Գեղջուկի մտորմունքը» վերնագրով՝ ԲԹ, էջ 239 և ԲԲ, էջ 226, ապա՝ «Գեղջուկի մտածմունքը» վերնագրով՝ ԲԳ, էջ 305 և ԵԺI, 369:

Տպագրվում է ԲԳ-ից:

Թումանյանի անձնական գրադարանում պահվում է Կոլցովի բանաս-

տեղծությունների ժողովածուն (А. В. Кольцов, Стихотворения, изд. Г. Гоппе, СПб, 1892, էջ V):

ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՄԱՅՐԻ՛Կ

(«Հիվանդ եմ, մայրի՛կ, նստիր մոտ ինձ»)
(էջ 259, 473) (ԵԼԺ 2, էջ 251, 463)

Ֆելիցիա Հիմենսի (1793-1835) «To my mother» (Մայրիկիս) բանաստեղծության թարգմանությունն է ռուսերենից: Ռուսերեն բնագրի առաջին չորս տողերը Թումանյանը չի թարգմանել:

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

ԹԹԳԳ1038 №12 ծոցատետրում (էջ 24) պահվում է մեկ սևագիր ինքնագիր, «Հիմենսից» խորագրով:

ԳԱԹ Թֆ №248(162)-ում պահվում է ևս մեկ ինքնագիր:

Առաջին անգամ «Նստիր մոտ ինձ» վերնագրով և «Հիմենսից» ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1900, №50, էջ 764: Այնուհետև ԲԹ, էջ 228, ԲԲ, էջ 222, ապա՝ ԵԺԼ, 371:

ԳԱԹ Թֆ №3840(1355բ)-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանը կատարել է մեկ ուղղում:

Տպագրվում է ԲԲ-ի՝ հեղինակի ուղղած օրինակը:

1902

ԱՆՁՈՒԿ

(«Ա՛խ, փախնեի, սառն ու խավար»)
(էջ 260, 475) (ԵԼԺ 2, էջ 252, 464)

Շիլլերի «Sehnsucht» բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1902 թ., Ժուկովսկու ռուսերեն թարգմանությունից «Желание», «Романс из Шиллера» (1810): Բացակայում են ռուսերենի վերջին 12 տողերը):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Շիլլերի (Ժուկովսկուց)» ենթավերնագրով տպագրվել է Տզ, 1902, №15, էջ 102, այնուհետև ԲԹ, էջ 224, ապա՝ ԵԺԼ, 372:

ԳԱԹ Թֆ №3828(1354)-ում պահվում է ԲԹ-ի՝ հեղինակի սեփական

օրինակը, որի վրա կա Թումանյանի կատարած նշումը. «Երկրորդ տողը «էս անդունդի խորքերից»:

Տպագրվում է ԲԹ-ի ուղղած օրինակից:

1904 թ. օգոստոսի 17-ին Շուլավերից Փիլիպոս Վարդազարյանին գրած նամակում այս բանաստեղծության մասին Թումանյանը գրել է. «Շիլլերի «Անձուկն» էլ հաջող ես համեմատել այդ ոտանավորի հետ (խոսքը «Ընկերիս» բանաստեղծության մասին է – խմբ.): Բայց բանն այն է, և ցավը – որ իսկի նրա ազդեցությունը չի եղած, ինչպես և մյուս գրածներիդ. համանման զգացմունքների ծնունդներ են – «Եթե իրավ է», կամ, «Կարոտը» և «էյ աստղեր, աստղերն» ու «Брожу-ն» (ԵԺV, 276):

1903

«ԱՏՈՒՄ ԵՄ ՔԵԶ ԵՎ ՔՈ ԳԱՀԸ»
(էջ 261) (ԵԼԺ 2, էջ 254)

Ա. Պուշկինի «Вольность» (1817) բանաստեղծության այս քառատողը Թումանյանը թարգմանել է Ստ. Շահումյանի խնդրանքով 1903 թ. մայիսի 1-ին (տե՛ս ԹԺՀ, էջ 491-492, Ս. Երզնկյանի հուշերը):

Ժամանակակիցների վկայությամբ քառատողը տպագրվել և տարածվել է թռուցիկների ձևով: Այնուհետև տպագրվել է «Բանվոր» ամսագրում (Թիֆլիս, 1919, №1, էջ 25), «Մայիսի մեկը և Հովհաննես Թումանյանը» փոքրիկ հոդվածում, որ ստորագրված է Ս.: Հոդվածագիրը Սուրեն Երզնկյանն է: «1903 թվին,– պատմում է նա,– Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը որոշել էր կիրակի, ապրիլի 27-ին տոնել Մայիսի 1-ի օրը Բաքու, Թիֆլիս և Բաթում քաղաքներում միաժամանակ: Որոշված էր տպագրել և ցրել ռուսերեն, վրացերեն և հայերեն փոքրիկ թռուցիկներ Պուշկինի չորստողյա հայտնի ոտանավորով... Մի խումբ հայագետ սոցիալ-դեմոկրատներ, լարելով բանաստեղծական իրանց ամբողջ հանճարը, փորձում էին թարգմանել այդ չորս տողը հայերեն, բայց ժողովված սոցիալ-դեմոկրատների գրչի տակից բանաստեղծություն դուրս չէր գալիս: Հանկարծ, հանգուցյալ Ստեփան Շահումյանը դուրս վազեց, թռավ Հովհաննես Թումանյանի մոտ և բերեց գողտրիկ թարգմանությունը...

Թռուցիկը պատրաստ էր: Եվ Հովհաննես Թումանյանն էլ հասավ իր մուրազին: Հեռավոր անցյալի այս էպիզոդը, որ վերհիշեց մոտերս Արշակ Զուրաբյանը ընկերական շրջանում, հիշեցինք մենք այսօր, երբ տոնվում է մայիսի 1-ը, երբ տոնվում է նույնպես Հովհաննես Թումանյանի ծննդյան

հիսնամյակը»:

Այնուհետև տպագրվել է ԵԺ1, 565:

Արտատպվում է «Բանվորից»:

«ԿՈՒԶԵԻ ՀԱԼՎԵԼ, ՁՈՒԼՎԵԼ ԻՄ ԵՐԳԻՆ»

(էջ 262, 475) (ԵԼԺ 2, էջ 255, 465)

Գրության թվականը ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ №271(158)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Ըստ Ֆիրդուսու», ապա «Ֆիրդուսի» վերնագրով:

ԳԱԹ ԹՖ №3828(1354) և №3839(1355ա)-ում պահվում են ԲԹ և ԲԲ հեղինակի սեփական օրինակները Թումանյանի նշումներով և ուղղումներով: Երկուսում էլ ջնջված է «Ֆիրդուսի» վերնագիրը և մատիտով վրան ավելացրած՝ Ամմար*:

Առաջին անգամ «Ֆիրդուսի» վերնագրով տպագրվել է ԲԹ, էջ 223, այնուհետև ԲԲ, էջ 221, ապա ԵԺ1, 374:

Արտատպվում է ԲԲ-ից:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

(«Եկե՛ք, սիրուն իմ մանուկներ»)
(էջ 263, 475) (ԵԼԺ 2, էջ 256, 465)

Լոնգֆելլոյի «Children» (Երեխաներ) բանաստեղծության թարգմանությունն է (բնագրի ինը քառատողերից թարգմանված են 1-ինը, 3-րդը, 7-րդը, 8-րդը և 9-րդը):

Թարգմանության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ №248(162)-ում պահվում է մեկ ինքնագիր՝ «Լոնգֆելլոյից» ենթավերնագրով:

Առաջին անգամ, նույն ենթավերնագրով, տպագրվել է ԲԹ, էջ 227-228, այնուհետև՝ ԲԲ, էջ 223-224, ապա ԵԺ1, 373:

ԳԱԹ ԹՖ №3840(1355բ)-ում պահվում է ԲԲ-ի՝ հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը կատարել է մեկ ուղղում:

Տպագրվում է ԲԲ-ից:

---

*Ամմար – արաբի բանաստեղծ (XI դ. և V դ. միջև), Օմար խալիֆի ժամանակակիցը: Ունի մի ստանավոր վիպասանություն «Յուսուֆ ու Զուլեյխա» (Հովսեփ և Զուլեյխա):

1904

«ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ – ՈՉ ՑԱՐ, ՈՉ ԱՍՏՎԱԾ»
(էջ 264) (ԵԼԺ 2, էջ 257)

«Ինտերնացիոնալի» մի քառատողի թարգմանությունն է՝ կատարված 1904 թ.։

«Գարուն» ամսագրի խմբագրությանն ուղղված նամակում (1967, №11) Խ. Գյուլնազարյանն այն կարծիքը հայտնեց, թե թարգմանիչը Հովհ. Թումանյանն է։ Հին բոլշևիկ Ս. Խանոյանի հուշերը (հրատարակված 1969 թ.) հաստատեցին այս կարծիքը (ԹԺՀ, էջ 391 և 945)։

Առաջին անգամ տպագրվել է «Պրոլետարիատի կռվի թերթիկ», 1904, 14 հուլիսի, №10-11, այնուհետև՝ Խ. Գյուլնազարյան, Գրական հարցերը նախառևոլյուցիոն շրջանի հայ բոլշևիկյան մամուլում, Երևան, 1954, էջ 79։

Տպագրվում է «Պրոլետարիատի կռվի թերթիկից»։

1906

ՎԱԼԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

(«Դունայի ափին ապրում էր Փերին»)
(էջ 265) (ԵԼԺ 2, էջ 258)

Մ. Գորկու «Легенда о Марко» (Валашская легенда) երկի թարգմանությունն է։

Գորկու բանաստեղծությունն առաջին անգամ հրապարակվել է 1895 թ. և մտել «Փոքրիկ փերիի և ջահել չոբանի մասին» հեքիաթի բնագրի մեջ։ Վերամշակված տարբերակը, որ նա ստեղծել է կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի առաջարկով՝ «Рыбак и фея» վերնագրով, լույս է տեսել առանձին գրքույկով 1903 թ. և ապա 1906 թ.՝ «Легенда о Марко» վերնագրով։ Այդ ժամանակ էլ կատարվել է թարգմանությունը։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է «Երկիր», Թիֆլիս, 1906, №25, էջ 2, ապա ԵԺ1, 375-376։

Արտատպվում է «Երկիր»-ից։

ԷԼԵԳԻԱ

(«Լուսինն ազատ լույս է փռում»)
(էջ 267, 475) (ԵԼԺ 2, էջ 260, 465)

Իլյա Ճավճավաձեի (1837-1907) «Էլեգիա» բանաստեղծության թարգմանությունն է, կատարված 1907 թ. բանաստեղծի մահվան առթիվ (օգոստոսի 29-ին):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է «Արոր» թերթ, Թիֆլիս, 1907, 11 սեպտեմբերի, №7, այնուհետև «Իլյա Ճավճավաձեից» ենթավերնագրով ԲԲ, էջ 231, ԲԳ, էջ 303, ապա՝ ԵԺԱ, 377:

ԳԱԹ ԹՖ №3840(1355բ)-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը բանաստեղծի մեկ ուղղումով:

Արտատպվում է ԲԳ-ից:

ԳԱՐՈՒՆ

(«Կանաչ է նորից»)
(էջ 268) (ԵԼԺ 2, էջ 261)

Իլյա Ճավճավաձեի այս բանաստեղծության թարգմանությունը կատարված է նրա մահվան օրը՝ 1907 թ. օգոստոսի 29-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է «Արոր» թերթ, Թիֆլիս, 1907, 11 սեպտեմբերի, №7, ապա՝ ԵԺԱ, 376:

Արտատպվում է «Արոր»-ից:

ՎԱՐԴԸ

(«Փոքրիկ տղան մի վարդ տեսավ»)
(էջ 269, 476) (ԵԼԺ 2, էջ 262, 465)

Գյոթեի «Heidenroslein» (1817) բանաստեղծության թարգմանությունն է:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԼI, 1907, էջ 82, ապա ԼII, 1908, էջ 100: Նույն թվականին ԲԲ, էջ 230, որից հետո ԼIII, 1909, էջ 117, այնուհետև ԲԳ, էջ 307, ապա ԵԺI, 381:

ԳԱԹ ԹՖ №3840(1355բ)-ում պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը՝ բանաստեղծի ուղղումներով:

Տպագրվում է ԲԳ-ից:

1908

ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՏԸ

(«Մնաք բարով, դո՛ւք, արոտնե՛ր սիրուն»)
(էջ 270, 476) (ԵԼԺ 2, էջ 263, 466)

Հատված է գերմանացի բանաստեղծ Ֆ. Շիլլերի «Վիլհելմ Տել» դրամայի առաջին գործողության առաջին պատկերից (Lied des Hirter) (տե՛ս Собрание сочинений Шиллера в переводе русских писателей под ред. С.А. Венгерова, т. III, С. Петервург, 1901, էջ 81): Թումանյանը փոխադրել է ռուսերենից:

Փոխադրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԼII, 1908, էջ 6, այնուհետև ԼIII, 1921, էջ 6, ապա՝ ԵԺI, 411:

ԳԱԹ ԹՖ №3877(1794)-ում պահվում է ԼII-ի հեղինակի սեփական օրինակը՝ բանաստեղծի նշումներով. «(Թարգմ. Հովիվը ոչխար տանում է, լուս. 1.32)»:

Արտատպվում է 1921 թ. ԼIII-ից:

1909

ՁՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

(«Հողմը մեգով երկինքն առնում»)
(էջ 271, 476) (ԵԼԺ 2, էջ 264, 466)

Ա. Պուշկինի «Зимний вечер» (1825) բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1909 թվականին:

ԳԱԹ ԹՖ №250(179)-ում պահվում է մեկ ինքնագիր, հեղինակի սար

